Էջմիածին

АЖ 146

ՌՆ
Ը. ՏԱՐԻ

Հոմանիշ – Հարց

ԼԱՍՏԻՎԱԾՈՒ

Պաշտօնական ատսագիր
Հայրապետական ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

ПА-982

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը՝ Կոստանդնուպոլսի նորընտիր Պատրիարք Ամենապատիվ Տ. Տ. Գարեգին Արքեպիսկոպոս Խաչատրյանի հաստատման մասին	1
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ, Նոր հիսնամյակի շեմքին	3
ԳԵՈՐԳ ԵՊՍԿ. ՋՈՐԵՔՋՅԱՆ (Գեորգ Զ. Կաթողիկոս), Գործնական Քրիստոնեություն	6
ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ	10
ՌՈՒԲԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ, Վարդանանց անմահ հիշատակին	17
ՃԵՄԱՐԱՆՑԻ, Ղուկաս Կաթողիկոս Կարնեցի	29
ՎԱՀԵ-ՎԱՀՅԱՆ, Էջմիածին—Զվարթնոց	35
Ե. ՇԱՀԱԶԻԶ, Վահան վարդապետ Բաստամյանցը	38
ԱԿԱԴ. Հ. ԱՃԱՌՅԱՆ, Տիկին Սրբուհի Տյուսաբ	41
ՊՐՈՖ. Լ. ՍԵՄՅՈՆՈՎ, Սարկավագդիր տոմարը	46
Ս. ՔՈԼԱՆՋՅԱՆ, Բուխարեստի հայոց անցյալն ու ներկան	50
ԳՐ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Վավերագրեր Գաբրիել Սունդուկյանի ծնողների նորա լինելու մասին	54
Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի ընտրությունները և նրա առաջին սեսիան	58
ՌՈՒԲԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ, Սուրբ Էջմիածնի միաբանության մասնակցությունը Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի ընտրություններին	64
Լ. ԱՃԵՄՅԱՆ, Ալեքսանդր Մյասնիկյանի անվան Պետական հանրային գրադարանը	66
ԱՂԱՎՆԻ ՄԵՍՐՈՊՅԱՆ, Մեծ Վարպետին հետ դեպի Գեղարդ և Գառնի	71
ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ	75
Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի	81
Մեծի Տանն Կիլիկիո Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գարեգին Ա. Կաթողիկոսի ուղևորությունը դեպի Եվրոպա	89
Ուղերձ Ամենայն Հայոց Նորին Ս. Օծություն Գեորգ Զ. Կաթողիկոսին	92
Հայկական թանգարան Փարիզի մեջ	93
Հանդիսություն Գրիգոր Նարեկացիի հազարամյակի առթիվ	93
Հովսեփ Գրիգորյան	94
Գիտական և գեղարվեստական նոր հրատարակություններ	95

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин"

Redaction of the magasine „Etchmiadzin", Armenia, USSR

Պատվեր № 330

Հայպետհրատի № 2 տպարան, Կնունյանցի փողոց № 8, Երևան, 1951 թ.

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ԳԷՈՐԳԱՑ Զ.

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԴՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՎ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ՆՈՐԻՆ Ս. ԹԹՈՒՔՅՈՒՆ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ.
ՊԱՏԱՐԱԳԻ ԶԳԵՍՏԱՎՈՐՈՒՄՈՎ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ՝ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

ԳԼՈՐՔ ԾԱՌԱՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ՏԵԱՌՆ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՋԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱՋԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԽԱՉԱՏՐԵԱՆ ԵՒ ՊՈԼՍԱՀԱՅ ՍԻՐԵՑԵԱԼ ՀՕՏԻՆ ՄԵՐՈՒՄ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ, ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Կոստանդնուպոլսի Ընդհանուր ժողովի Ատենապետությունը հեռագրով և պաշտոնագրությամբ հաղորդել է Մեզ, որ Ընդհանուր ժողովը, ղեկավարվելով Թյուրքիո Պետությունից հաստատված և ժողովրդի աչքում հեղինակություն վայելող ու հնությամբ սրբազործված Ազգային Սահմանադրությամբ, ընտրել է Ձեզ Թյուրքահայության Պատրիարք, խնդրելով, որ Մենք Հայրապետական Կոնդակով հաստատենք և օրհնենք նորընտիր Պատրիարքիդ և Մեր սիրելյալ թյուրքահայ ժողովրդին:

Գոհությամբ լսեցինք այս հայտարարությունը և, ոնձամբ հանձնելով Ձեզ, խղճի հանգստությամբ և ամենայն վստահությամբ, հաստատում ենք Ձեզ՝ թյուրքահայ ժողովրդի ընտրյալիդ, Կոստանդնուպոլսի Պատրիարք, բաշխելով Ձեզ Ս. Լուսավորչի Գահակալի օրհնությունը և հայցելով Փրկչին, որ Մեր օրհնությունը պտղաբեր անե, հաջողություն պարգևելով Ձեր պատասխանատու նոր պաշտոնում կատարելիք ձեռնարկներիդ:

Օրհնում ենք նաև բյուրմահայ Մեր սիրեցյալ հոտը, որ միշտ հավատարիմ է եղել Ս. Լուսավորչի Գահին և նախանձախնդրությամբ ու սրբությամբ պահել և Հայ Եկեղեցու սրբազան ավանդները՝ դավանանքը, կանոնները, կարգերը, ծեսերն ու արարողությունները, մաղթելով Բարձրյալին, որ նրան Իր հովանու տակ առնե և հետ այսորիկ ազատ պահե ամեն փորձանքից ու գայթակղությունից:

Նորընտիր Պատրիարքիդ Մենք առաջին անգամ տեսել ենք վերահայ բեմի Մեր առաջնորդության շրջանում, երբ Դուք, 1922 թվին, եպիսկոպոսական ձեռնադրության ժողովրդական համախոսականով Թբիլիսիի վրայով պիտի անցնեիք Ս. Էջմիածին, Մեր հյուրը դարձած, Թբիլիսիի հայության կյանքը իր բոլոր կողմերով հանաչելու նպատակով:

Երկուսեք առիք եղավ շոշափելու բազմատեսակ եկեղեցական-պատմական, ազգային-պատմական, հին մատենագրության և հայ ժողովրդի անցյալ ու ներկա կյանքին վերաբերյալ, ինչպես և ընդհանուր բնույթ ունեցող հարցեր, որի հետևանքով Մենք հնարավորություն ունեցանք հանաչելու Ձեր բնավորությունը, կրթական պատրաստությունը և Ձեր լայն աշխարհայացքը: Մենք համոզվեցինք, որ Մեր առաջ կանգնած է մի երիտասարդ վարդապետ, ընդհանուր զարգացում ունեցող, լայն աշխարհայացքի տեր, գիտակ ազգային և եկեղեցական պատմության, գիտակ Ս. Գրքին և մեր ազգային մատենագրության, ժողովրդասեր, հայրենասեր և եկեղեցասեր, ուստի և ըստ ամենայնի պատշաստ՝ օգտակար լինելու Հայ Ժողովրդին և Եկեղեցուն վարչական, դրական, դաստիարակչական և այլ առպարեզներում, որ կարոտում է միայն կյանքի փորձառության:

Տասնհինգ տարի անցնելուց հետո, Մենք տեսանք Ձեզ Հարավային Ամերիկայի հոծ հայության ղեկավար, որպես Հայրապետական Պատվիրակ, ուր կարգվել էիք Մեր նախորդի՝ երջանկահիշատակ Տ. Խորեն Կաթողիկոսի Հայրապետական Կոնդակով, և ուր տասներեք տարի պաշտոն վարեցիք Մեր Տեղակալության և Հայրապետության օրով, նույն տիտղոսով և նույն իրավունքներով:

Այս շրջանում Մենք տեսանք նույն հոգևոր անձին, բայց արդեն տարիքով պատկառելի, պատրաստությամբ ավելի հոխացած, փորձառությամբ հասունացած, բնավորությամբ զուսպ և վարչականորեն ավելի մարզված: Մեր այս բնորոշումները Ձեր գործունեության ամփոփ եզրակացությունն են:— Վարչական առպարեզում ցուցաբերեցիք տակտ և կազմակերպչական շնորհք, որոնց շնորհիվ է, որ այսօր Հարավային Ամերիկայի անկազմակերպ համայնքները վերածված են չորս կազմակերպված Փոխանորդությունների, որոնցից երեքը ունեն մեր կողմից հաստատված կանոնադրություն, հար և նման Ս. Էջմիածնի բեմերի համար ընդունված և գործադրվող Հայրապետանաստատ հիմնական կանոնադրության:

Ձեր վարչական գործունեության շնորհիվ է, որ այսօր Փոխանորդությունները ունեն ամենատեսակ ընկերություններ և միություններ՝ երիտասարդների, կանանց, կրթական, տնտեսական և այլն, որոնք չափազանց կարևոր են, մանավանդ Սփյուռքի հայության համար, ազգային ինքնագիտակցության, ազգային դաստիարակության, տնտեսական և այլ տեղական կարիքների տեսակետով:

Ձեր գեղեցիկ և համոզիչ խոսքի և քարոզչական ընդունակության շնորհիվ է, որ Փոխանորդությունների կարևոր վայրերում հաջողեցաք կենտրոնածիգ

հաստատություններ՝ Եկեղեցիներ հիմնել, որոնք այնքան կարևոր են, մանավանդ Սփյուռքի հայության համար, տեղական հայությունը ամփոփ և կենտրոնացած պահելու, նոցա մեջ ազգային գիտակցություն զարթեցնելու, ազգային-եկեղեցական սրբազան ավանդները պահպանելու, մայրենի լեզուն պահելու և ազգի անցյալ ու ներկա ստեղծագործական ու հերոսական կյանքը իմանալու և մատաղ սերնդին ավանդելու համար:

Ձեր այս շրջանի վարչական պաշտոնավարության ընթացքում, Դուք ելաք տեղական գործունեության շրջանից և բնակոխեցիք եկեղեցական գրական ասպարեզ, տալով մեր ժողովրդին եկեղեցական պատմական անձանց և դեպքերի նկարագրությունների ժողովածու, որ այնքան կարևոր է կրոնական ու ազգային դաստիարակության տեսակետով, իբրև ազգային գիտակցության զարթուցիչ միջոց, ճանաչելու համար մեր ազգի պայծառող և հերոսական ոգին իր Հայրենիքի, ազգի և կրոնի ազատության ու անկախության պահպանման համար:

Հետևելով մեր մեծ ու պաշտելի նախորդներին՝ Ս. Սահակին ու Մեսրոպին, Դուք Նոր Կտակարանը աշխարհաբարի վերածեցիք, որպեսզի այսօր էլ հայ մարդը, անցյալի նման, Ս. Գիրքը մայրենի լեզվով կարդա և հասկանա ու ըմբռնե Փրկչի վեհ գաղափարները և, նրանով առաջնորդվելով, խաղաղ ու երջանիկ ապրի և իր մշակույթը ստեղծե ու զարգացնե:

Ձեր վերոհիշյալ գնահատելի բազմապիսի աշխատանքների ընթացքում չեք մոռացել նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածինը՝ մեր ժողովրդի Սրբություն-Սրբոցը, որի միաբանն եք Դուք եպիսկոպոսական ձեռնադրությամբ: Գիտակցելով Ձեր այս բարոյական պարտականությունը, Ձեր հնարավորության չափով, աջակցել եք նրան, փորձելով տնտեսապես հնարավորություն տալ նրան կատարելու իր պարտքը հանդեպ հայ ժողովրդի, պահպանելով իր կուլտուրական կարևոր ձեռնարկները, հատկապես Հոգևոր Ճեմարանն ու «Էջմիածին» ամսագիրը, որոնց կարիքը չափազանց մեծ է և որոնց պահպանության շաջակցելը նոցա գոյության խափանման առիթ կարող է հանդիսանալ, որի համար բարոյական խոշոր պատասխանատվություն կունենան Մեր Արտասահմանի բեմերի Առաջնորդներն ու հարուստները Ազգի ու Եկեղեցու առաջ:

Ձեր վերոհիշյալ գործունեությունը Մենք գնահատել ու գնահատում ենք, և ուրախ ենք ու ողջունում, որ Ձեր գործունեությունը գնահատել է նաև պոլսահայ ժողովուրդը, հրավիրելով Ձեզ բազմելու Կոստանդնուպոլսի պատմական Աթոռը: Դուք հրավիրվում եք չափազանց ծանր և պատասխանատու պաշտոնի, որ կարոտում է վերին օգնության:

Առաջիկա Ձեր ձեռնարկներից կարևորագույնը պիտի լինի՝ Ա. Արհեստական եղանակով հանդես բերված հայ համայնքի միտումնավոր պառակտումը վերացնել և հաստատել եղբայրական միություն. Բ. Անէացնել արհեստականորեն ստեղծված միտումնավոր ձգտումները, վերահաստատելով Եկեղեցու միասնականությունը և հաստատելով իր վաղեմի հավատարմությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և Հայոց Հայրապետության. Գ. Վերականգնել եկեղեցուց ժամանակավորապես ուծացած պոլսահայ ժողովրդի զայրակղված հավատը դեպի իր Սրբությունները և ուսուցանել՝ ակնածել ու հարգել իր պատմական եկեղեցու պաշտամունքը՝ խորհուրդները, ձեռերն ու արարողությունները:

Մաղթում ենք Ամենակալին, որ պարգևե Ձեզ կար և ուժ, պահպանե Ձեր եռանդն ու շնորհները, որպեսզի Հոգևոր Բարձր Իշխանության և ժողովրդի հույսերն արդարացնեք և, պաշտոնիդ բերմամբ, Ձեր խոշոր պարտքը կա-

տարել կարողանամ: Այլև զօրացնէ Ձեզ Ս. Հոգու շնորհներով, որպէսզի հաջողությամբ պսակվին Ձեր նոր ծառայակները և, ծառայության ժամանակ, Հայրապետության և Մայր Աթոռին տված Ձեր հավատարմության և նվազողության ոգիին, այս հեղհեղուկ ժամանակում, հավատարիմ մնամ և լինի՛ «մշակ առանց ամօթոյ»:

Օրհնում ենք թյուրքահայ մեր սիրելի հոտը, որ, ըմբռնելով ժամանակի լրջությունը, խոհեմություն, տակտ և հաշտարար ոգի հայտնաբերեց պատրիարքական ընտրության ընթացքում:

Օրհնում ենք նաև Պատրիարքական Տեղապահ՝ Ամենապատիվ Տ. Գեորգ Արքեպիսկոպոս Ասլանյանին, որ, իր տեղապահական պաշտոնավարության և հատկապես վերջին անիտրհուրդ և քայքայիչ պայքարի ընթացքում հավատարիմ մնաց Հայ Եկեղեցու ավանդական կանոններին ու կարգերին և թյուրքահայ Ազգային Սահմանադրության:

Շնորհք, ողորմություն և խաղաղություն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ և ընդ ամենեսեանդ, ամէն:



ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՎ ԾԱՌՐԱԳՈՒԻՇՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 12 մարտի 1951
Փրկչական ամի և ի Տումարիս Ռն,
յիսնքներորդ ամի Հայրապետութեան Մերոյ,
ի Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՆՈՐ ՀԻՍՆԱՄՅԱԿԻ ՇԵՄՔԻՆ

Վանդական սովորություն է, որ շրջադարձային նշանակություն ունեցող ամեն մի տարեթվի ժամանակ որոշ հաշվեհարդար է կատարվում անցյալ ժամանակաշրջանի՝ և բարեմաղթություններ արվում վերահաս ժամանակի նկատմամբ: Այդ անում են առանձին անհատները, հասարակական և քաղաքական առանձին կազմակերպությունները, այդ անում է նաև քրիստոնյա եկեղեցին, այդ լվում և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին:

Այժմ, երբ պատմության գիրկն է անցել քսաներորդ դարի առաջին հիսնամյակը և թևակոխել է արդեն երկրորդ հիսնամյակը, պիտի որ Հայաստանյայց եկեղեցին պատասխանի այն հարցին, թե ինչպե՞ս է ինքը գնահատում ընթացիկ դարի առաջին հիսնամյակը և ի՞նչ ակնկալություններ ունի վերահաս հիսնամյակի նկատմամբ:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, որ աշխարհի հնագույն եկեղեցիներից մեկն է և անաղարտությամբ պահպանել է քրիստոսավանդ սկզբունքները, նեղ դասակարգային մի հասարակություն չի եղել երբեք. նա ընթացել է իր ժողովրդի հետ և ապրել նրա ուրախ ու տխուր կյանքով: Հայոց եկեղեցու համար ամենակարևոր հարցերից մեկը — իր ժողովրդի հակատագիրն է եղել, նրա վիճակն ու հեռանկարը:

Փորձենք վերլուծել, թե ի՞նչ դրության մեջ էր հայ ժողովուրդն անցած հիսնամյակի սկզբում և ի՞նչ վիճակում է նա ներկա հիսնամյակի շեմքին:

Անցած հիսնամյակի ընթացքում դեռ չէին իրականացել ազատասեր հայ ժողովրդի նվիրական իղձերը՝ վերականգնելու իր կորցրած քաղաքական անկախությունը: Ազատասեր հայ ժողովուրդը դեռևս հեռում էր սուլթանական Թյուրքիայի և ցարիզմի ծանր լծերի տակ: Հայ ժողովրդի ազատության համար մաքառող ուժերը սուլթանական բանտերում էին շղթայվում և կամ Սիբիր աքսորվում:

Հայ ժողովուրդն այսօր ձեռք է բերել քաղաքական իր ազատ, անկախ պետականությունը և տեր դարձել իր սեփական ճակատագրին: Դարեր շարունակ հայ ժողովրդի փայփայած ազատությունը իրականություն է դարձել. նա այժմ ունի իր հայրենի ամենադեմոկրատական սովետական պետությունն ու իր հայ շնորհալի գործիչները:

Անցած դարի սկզբում բույլ էր հայ ժողովուրդը, անօգնական և անպաշտպան: Քրիստոնյա Արևմուտքը, որին բազմիցս դիմել էր հայ ժողովուրդը պաշտպանելու իրեն թյուրքական վայրագություններից, ամենաանխիղճ ձևով խաբում էր հայ ժողովրդին և ամենանենգ ձևով օգտագործում իր քաղաքականության համար:

Այլ է հայ ժողովրդի վիճակը ներկա հիսնամյակի շեմքին: Նա այժմ Սովետական Միության փառավոր ընտանիքի լիիրավ անդամներից մեկն է և եղբայրական այդ դաշնակցության մեջ իրեն ամուր է զգում վեմի նման: Նա այլևս չի դողում ո՛չ մի քամուց և փոթորկից և, հաստատակամ, մյուս եղբայրական ժողովուրդների հետ միասին, քայլում է իր նախագծած ուղիով:

Անչափ քիչ էին դպրոցները, շկային բարձրագույն ուսումնական հաստատություններ և ժողովուրդը խարխափում էր տգիտության խավարում: Եվ այդ իր մեղքով չէր: Հայ ժո-

ոլովուրդը, որը աշխարհի ամենահին ժողովուրդներից մեկն է և հանդես է եկել պատմության մեջ դեռևս այն ժամանակ, երբ մարդկային կուլտուրայի առաջին հիմնաքարերն էին դրվում Արևելքում և իր հանճար մտածումներն արել գիտության և կուլտուրայի ասպարեզում, միջին դարերում օտար հարստահարիչների լծի տակ ընկնելով, հետ էր պահվել ընդհանուր զարգացումի ընթացքից:

Նոր հիսնամյակի սկզբին անհանաչելիորեն փոխվել է հայ ժողովրդի զարգացման մակարդակը: Սովետական Հայաստանն այժմ, կարելի է ասել, մի ընդհանուր համալսարան է, ուր սովորում են մեծ ու փոքր բոլորը, փոքրերը՝ դպրոցում, երիտասարդները՝ մասնագիտական տեխնիկումներում, ինստիտուտներում և համալսարանում, մեծահասակները՝ ավելի խորանում նոր մասնագիտությունների մեջ: Փոփոխվոր միամիտ, խեղճ հայ գյուղացիները այլևս չկան: Աշխատասեր հայ ժողովուրդը փոխելով իր երկրի դեմքը, նրա հետ փոխվել է նաև ինքը: Նա այլևս նախկին դյուրահավատ և սահմանափակ աշխարհայացքի տերը չէ և ոչ ոք այժմ կարող է շահագործել նրա երբեմնի խեղճությունը և միամտությունը:

Անցած հիսնամյակի սկզբում աղքատ էր հայ ժողովուրդը, հոգսերի ծանրության տակ կքած և դժբախտ: Մի կտոր հացի համար հայ գյուղացին պայքարում էր դաժան բնության ուժերի դեմ՝ իր դժբախտ բնատեսքի գոյությունը պահպանելու համար: Սակայն նրա խենթոֆոնյան հեռամնաց գործիքներն անզոր էին ցանկալի արդյունքները տալու և հայ գյուղացին մի կերպ քաշ էր տալիս իր կիսաքաղց գոյությունը և կամ հարկադրված լինում մշակության գնալ քաղաք: Քաղաքներ՝ քաղաքներ չէին նրկա հասկացողությամբ: Պատահական չէ, որ Երևանը, մեր նրկա ծաղկուն մայրաքաղաքը, անցյալում հողե կնոցն է անվանվել:

Այլ է հայ ժողովրդի վիճակն այսօր: Փոխվել է և՛ գյուղը և՛ քաղաքը: Գյուղերի կոլեկտիվ տնտեսություններում եզներին փոխարինելու են եկել տրակտորները, սերմնացան, հնձող և կալսող մեքենաները: Հայաստանում սկիզբ առնող գետերը այլևս երեսները ծածկած չեն հոսում և հեռանում Հայաստանից, այլ պողպատակամ մարդկանց հարկադրանքով մտնում են ջրանցքները և գնում ոռոգելու գյուղերի երբեմնի պապակած դաշտերը: Ջարդացել են Հայաստանի քաղաքները ու գյուղաքաղաքները և Հայաստանն այժմ դարձել է աշխարհի առաջադեմ արդյունաբերական երկրներից մեկը: Գարնան վարդի նման բացվել է մեր անուշ երևանը:

Անցած դարի սկզբում հայ ժողովուրդը ի վիճակի չէր դրսևորելու իր ունակություններն ու բնածին տաղանդը: Հասարակական այն ժամանակվա ծանր պայմաններում ոչ միայն ենարավորություններ չկային զարգացման համար, այլև խեղդվում էին տաղանդները: Դրա լավագույն ապացույցը Խաչատուր Աբովյանի, Միքայել Նալբանդյանի, Կոմիտասի և այլոց կենսագրություններն են:

Այլ է դրությունը նրկա հիսնամյակի շեմին: Սովետական կենսաբեր արևի տակ ծաղկում են տաղանդները տնտեսության, մշակույթի, գիտության և այլ ասպարեզներում: Հայ ժողովուրդն իր ծոցից տվել է այնպիսի՝ տաղանդներ, ինչպիսին են ադմիրալ Իսակովը, գեներալ Բաղրամյանը, ֆիզիկոս Ալիխանյան եղբայրները, աստղաբաշխ Վ. Համբարձումյանը և այլ հազարավոր անձինք, որոնք իրենց շնորհալի աշխատանքով բարձրացնում են մեր ժողովրդի պատիվն ու հեղինակությունը:

Սրանք նշմարտություններ են, որոնք կույրերը միայն կարող են չտեսնել և Հայրենիքի նկատմամբ անզուսպ շարությամբ լցված թշնամիները:

Նոր հիսնամյակի շեմքում հայ ժողովուրդը գտնվում է իր պատմության ամենաբովանդակալից շրջանում, իր իսկական ոսկեդարում: Մեր նրկա սերունդն ամենաերջանիկ սերունդն է հայ ժողովրդի ողջ պատմության մեջ, որովհետև նա մասնակիցը հանդիսացավ այն խոշոր վերափոխումների, որոնք կատարվում են մեր աչքի առաջ, որովհետև նա ստեղծեց այնպիսի մի պատմություն, որն իր արժեքով, իր բովանդակությամբ հավասար է նախորդ ողջ դարերին միասին առած:

Ի՞նչ բարեմաղթություններ ունի Հայ եկեղեցին ընթացիկ հիսնամյակի նկատմամբ:

Նրա առաջին և հիմնական բարեմաղթությունը—աշխարհին խաղաղություն ցանկանալն է: Ամենաողորմած Աստված թող խաղաղություն պարգևի աշխարհին, սեր, եղբայրություն և միություն հաստատի ժողովուրդների միջև: Երկրորդ համաշխարհային պատերազմը մեծ տառապանքներ բերեց մարդկության: Միլիոնավոր մարդկանց արյունն ու արցունքը թողոքում է Աստծուն: Թող Տերը կրա մարդկությանը և խափանի պատերազմի հրձիգների չար դիտավորությունները:

Նոր հիսնամյակում թող ավելի սերտանան, ավելի ամրանան մեր Հայրենիքի փոխհարաբերությունները Սովետական եղբայրական ռեսպուբլիկաների հետ, մեր եղբայրական ժողովուրդների, առանձնապես ռուս վեհանձն և ազատասեր ժողովրդի հետ:

Նոր հիսնամյակում թող աճի, բարգավաճի մեր սիրելի, մեր նվիրական Հայրենիքը—Սովետական Հայաստանը: Թող արդյունաբերական նորանոր հսկաներ բարձրանան մեր քաղաքներում, տուփ քարի նորանոր շենքերով զարդարվեն մեր քաղաքներն ու գյուղերը, ավելի երջանիկ դառնա կյանքը մեր ժողովրդի համար: Թող ավելի վերասլաց թափով զարգանա մեր տաղանդավոր ժողովրդի մշակույթը:

Նոր հիսնամյակում Հայ եկեղեցու նվիրական իլձն է, որ արդարությունը բազավորի աշխարհում, որ Մայր Հայրենիքին վերադարձվեն նրանից անարդարացի խլված Արևմտահայ շրջանները և հնարավորություն ստեղծվի հայրենակարոտ Սփյուռքին գալ հավաքվել իր սիրելի Հայրենիքում:

Թող հաստատ մնա լուսո խորան Ս. Էջմիածինը. Ամենայն Հայոց Հայրապետությունն իր հանհարեղ գահակալով՝ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ.ով:

Թող անմար մնա լուսավորչի Ս. Ջաները:

ԳԵՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՁՈՐԵՔՁՅԱՆ

(Գեորգ Զ. Կարողիկոս)

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ[1]

«Զարմանային ժողովուրդնե ընդ վարդապետ-
բյուն նորա, զի իբրև իշխանությամբ ուսուցանէր
ոչ որպէս դպիրքն նոցա»:

ՄԱՏԹ., է 28—29:

«Զարմանալի է սուտ մարգարեներից, որոնք գալիս են արտաքուստ գառնազգեստ, բայց ներքուստ հափշտակող գայլեր են: Գործերից ճանաչեցեք նոցա. մի՞թե ճենարավոր է փշերից խաղող քաղել կամ տատասկից՝ թուզ. բարի ծառն է բարի պտուղ տալիս, իսկ չար ծառը՝ չար պտուղ: Այսպես և նոքա»:

«Ոչ բոլորը, որ ինձ Տե՛ր, Տե՛ր են անվանում՝ կմտնեն երկնքի արքայությունը, այլ միայն նոքա, որոնք կկատարեն իմ երկնավոր Հոր կամքը»:

«Ով իմ խոսքս լսե և կատարե, կնմանի այն իմաստուն մարդուն, որ իր տունը շինում է ապառաժի վերա. գալիս են անձրևներ, մեծանում են գետերը, փչում են քամիները և զարնվում տանը, բայց նա կայուն և անեկուն է մնում, որովհետև շինված է քարի վերա: Իսկ նոքա, որոնք լսում են իմ խոսքերը և չեն կատարում, նմանում են այն հիմար մարդուն, որ իր տունը շինում է ավազի վերա. գալիս են անձրևներ, ափերից ելնում են գետերը, փչում քամիները և զարնվում տանը, և նա փուլ է գալիս ու նորա կործանումը սաստիկ է լինում»:

«Երբ Հիսուս ավարտեց իր խոսքը, ժողովուրդը զարմացավ նորա վարդապետության վերա. որովհետև նա իշխանությամբ էր քարոզում և ոչ դպիրների նման»:

Հիսուսի վառված սրտից ելած խոսքեր, որոնք իշխանական և հուժկու շնչով ցնցում ժողովրդի զարմանքն են շարժում:

Ի՞նչ է պահանջը Հիսուսի խոսքի, նոր քարոզի: Հիսուս, խոսքի փոխարեն, գործ է պահանջում. նա պահանջում է գործնական քրիստոնեություն, որ է նաև երկայի նշանաբանը, այսօրվա նշանաբանը:

Քա՛վ է պայքարել ու վիճել այլևայլ տարաձայնությունների մասին. անօգուտ են այդ նյութաբանին վեճերը: Նոքա մոռացնում են գլխավորն ու էականը. գործով սեր դեպի մերձավորը, լայն սիրտ ու մարդասիրություն դեպի մարդը — անա էականն ու կարևորը:

Խորհեցե՛ք և ճավատացե՛ք ինչպե՞ս կլինի, բայց մի՛ մոռանաք, որ մեր գործերն են մեր բարի ու վարքը և մեր նիստ ու կացը վկայողը մեր քրիստոնյա լինելուն: Արտաքին բարեպաշտությունը՝ ձեռականորեն աղոթելը, եկեղեցի հաճախելը, բարեպաշտական ծեսեր ու արարողություններ կատարելն է էականը, այլ էականն է իրական կյանքը հասկանալ, ապրել նորա պահանջներով ու բավարարել նոցա:

Ի՞նչ խոսքեր, ի՞նչ պահանջներ և ի՞նչ հանգամանքներ է դնում ներկա ժամանակը յուրաքանչյուր քրիստոնեի և քրիստոնյա համայնքների առաջ: Թող քրիստոնյա մարդը, քրիստոնեական եկեղեցին ապացույց տան, թե ինչպես ընդառաջում են ժամանակն ու նորա պահանջները:

1. Խմբագրությունս սույն քարոզը տալիս է իբրև նմուշ՝ վերափոխելով Հայրապետի նորընծայի առթիվ նրա տարակվիր «Ազատ քարոզներ» վերնագիրը կրող քարոզգրքի:

Շա՞տ օգտակար կարող է լինել եկեղեցին ներկայի առաջադրած հարցերի լուծման նկատմամբ: Աճա գործունեության մի յայտնի առարկայ, ուր հանդես պիտի գա հավատացյալ մարդը անհատապես և քրիստոնեական եկեղեցին հավաքապես:

Միայն այսպես կարող է եկեղեցին հարգանք ազդել մեր ժամանակի սերնդին. միայն այս ճամբով կարող է եկեղեցին ու քրիստոնեական կրոնը կրկին իր բեռի տակ առնել ժողովրդական մասսաները, որոնք ներկայումս ուծացած են նորանից:

Ի՞նչ է ասում այս մասին Տերը. բո՛ղ ինքը խոսի. «Զգույշ եղեք սուտ մարգարեներից, որոնք գային են արտաքուստ գառնազգեստ, բայց ներքուստ հափշտակող գայլեր են»: Մարգարեները, որոնք իրենց Աստծուց ուղարկված ճշմարտության վկաներ են անվանում, տեսե՛ք թե՝ ի՞նչպես են ըմբռնում: Երբ հիրավի Աստծուց ուղարկված են, պետք է նոցա կյանքը Աստուծո շունչը ղեկավարե, նոցա գործերը՝ աստվածային կյանքի դրոշմը կրեն:

Այդպե՞ս էր հոգևորականությունը Փրկչի ժամանակ. այդպե՞ս է նա մեր իրականության մեջ:

Հեռու կացեք,— ասում է Տերը,— բարեպաշտ երևույթ: Տեր, Տեր անվանելով չէ, որ պիտի համարվիք իմ աշակերտ և ժառանգեք իմ թագավորությունը. այլ ձեր գործերն ու արդարությունը պիտի վկայեն, որ ես ձեր վարդապետն եմ: Շնչեցե՛ք այն հոգին, որ ինձ է վառում, ղեկավար ունեցեք Աստուծո կամքը, որի ծառան եմ ես: Միայն այն ժամանակ կլինեք իմ ճշմարիտ աշակերտը և այն կբացվեն ձեր առաջ Աստուծո արքայության դռները: Ով բարեպաշտական արտաքին ձևերով միայն կառաջնորդվի և կապրի, նա իր տունը ավազի վերա կշինե և կյանքի մեջ անհեցուկ ու անարժեք կլինի: Բայց ով իմ խոսքս կլսե ու կկատարե, ով Աստուծո կամքով կառաջնորդվի, նա իր տունը ապառաժի վերա կհիմնե և կյանքի մեջ հաստատուն և արժեքավոր կլինի:

Գործնական քրիստոնեությունն, աճա՛ Փրկչի քարոզի իմաստը. խոսքի փոխարեն գործ, աճա՛ Փրկչի աչքում արժեքավորն ու գնահատելին:

Երկու տարեց, բարի ռուս մարդիկ, մեկը գյուղացի, մյուսը արհեստավոր, վաղուց երդվել էին միասին Երուսաղեմ ուխտ գնալու և սուրբ տեղերին երկրպագելու, հավատալով Աստծուն հաճելի գործ արած լինել և իրենց հոգին փրկել:

Պատրաստվում են և հանապարհ ընկնում: Օրեր ճամբորդում են, ամեն տեղ սիրով նյուրընկալվում: Մի օր էլ գային են սովի երկիր, օրը տաք էր, ճամբորդները ծարավի. նոցանից մեկը, որ ավելի բուլակազմ էր, մտնում է գյուղի վերջին խրճիթը, ջուր խնդրելու ծարավը հագեցնելու համար: Եվ ո՞վ զարմանք, տեսնում է ամբողջ ընտանիքը սովի նիրանում և անռելի մանր դռանը կանգնած, զոհերին սպասում: Անխոս, անշարժ, անկեղծ ծնողները ու պառավ տատը սպասում են իրենց անխուսափելի բախտին. իսկ փոքրիկները լաց ու կոծով կպել են նոցա, անկյունում կծկված:

Ուխտավորը տեսնում է, որ այստեղ խրճելու տեղ չէ, այլ օգնելու, բացում պայուսակը և տալիս նոցա իր ճամբու պարենը: Ադրյուր է գնում, ջուր բերում. շուկա է գնում, մրերք բերում և արգանակ եփում ու կերակրում նոցա: Ապա մտածում է թողնել ու շարունակել ճամբորդությունը, կնշանակել ճաստատապես մանվան գոհ տալ նոցա. ուստի որոշում է դադարեցնել իր ուխտագնացությունը և խնամել ու փրկել նոցա մահից:

Անցնում են օրեր, շաբաթներ և մինչև իսկ ամիսներ, նոքա կազդուրվում և ոտքի են ելնում ուխտավոր ծերունու խնամքի շնորհիվ: Ծերունին, ընտանիքի կյանքը լիովին ապահովելու նպատակով, գնում և տալիս է նոցա գյուղատնտեսական պարագաներ՝ սայլ, ձի, կով և այլն, որով վերականգնում է նոցա քայքայված տնտեսությունը, ծախսելով սակայն իր ամբողջ խնայողությունը ուխտագնացության նպատակով արած:

Խղճի ձայնին լսելով, իր բարոյական պարտքը կատարելուց հետո, մի առավոտ էլ կանուխ, առանց իր ով լինելը ճայտնելու, առանց մնաս բարով ասելու, հանապարհ է ընկնում, բայց ոչ Երուսաղեմ, այլ տուն, հանի որ մնացած գրամով հագիվ կարող էր տուն վերադառնալ:

Մյուս ընկերը, երկար սպասելուց հետո, շարունակում է հանապարհը և իր նպատակին հասնում: Այցելում է սուրբ տեղերը, երկրպագում, աղոթում և զոհեր մատուցանում: Մի անգամ էլ սուրբ գերեզմանի վերա կառուցված Հարության տաճարում, երբ ինքը բազմության պատճառով տաճարի հետին մասում կանգնած էր մնացել, տեսնում է իր ճամբորդակից ընկերոջը լուսավոր դեմքով, բեմի վերա սեղանի առաջ կանգնած և քահանաների նման բազկատարած աղոթելիս: Անշարժ կանգնում է դռան մոտ և ներսի բոլոր աղոթավորներին զգուշությամբ թողնում է տաճարից ելնել, հուսալով տեսնել նոցա մեջ նաև իր ընկերոջը: Սակայն զուր հույս. նորան չի գտնում և սոիպվում է մենակ վերադառնալ տուն: Երբ հասնում է մեզ ծանոթ գյուղը և մոտենում հայտնի տանը, ուր թողել էր իր ընկերոջը, այնտեղից

մի պատանի է դուրս ելնում և ծերունի ճամբորդին տուն հրավիրում, իրենց շնորհակալությունը հայտնելու անձանոթ բարերարի համար: Նոքա անդադրում հիացմամբ պատմում են այն հրեշտակաբարո մարդու մասին, որի միջոցով նոքա Աստծուն հանաչեցին և մարդ դարձան:

Այս ո՞չ իրական, այլ մոացածին պատմության հեղինակը հայտնի ռուս գրող Լև Տոլստոյն է: Ի՞նչ է կամենում ասել մեզ Տոլստոյը վերոհիշյալ պատմությամբ: Այն, ինչ որ ասում է նորա անձնական կյանքն ու օրինակը: Նա քարոզում է գործնական քրիստոնեություն:

Լուռ ու մունջ, մարդոց աչքից ծածուկ սիրո գործ. ուր նորա կարիքը կա. սա ավելի լավ է, քան երուսաղեմ ուխտ գնալը. ավելի ընդունելի է, քան սուրբ տեղերում աղոթելը և գոներ մատուցանելը:

Հանդես եկե՛ք, հավատացյալ եղբայրնե՛ր և քույրե՛ր, հեռացե՛ք ծերուկ ուխտավորին, նվիրվեցե՛ք ամբողջովին օտարի ցավը մեղմելու, օգնեցե՛ք կարիքավորին այնպես, որ ձեր ձախ ձեռքը չիմանա աջի արածը: Կատարեցե՛ք այդ բոլորը անձնվիրությամբ, առանց շնորհակալության, առանց վարձի ակնկալության:

Գործնական քրիստոնեություն. ահա կարևորը, ահա էականը. ավելի լավ, քան պաշտամունքը, քան սովորական բարեպաշտական ձևերը:

Գործնական քրիստոնեություն. սակայն այն չի նշանակում երբեմն-երբեմն իր ավելորդը տալ այս ու այն տեղ. կամ երբեմն, զգացմունքի ազդեցության ներքո, ողորմածության նվիրվել, այս ու այն ընկերության մեջ բարեգործական նպատակներով աշխատել, ժամանակի, ույժերի և կարողության մի մասը նվիրել այդ նպատակին, իր քրիստոնեական պարտքը դեպի ընկերը գնելու նպատակով, գուցե և հետ էլ միասին անուն և փառք վաստակելու ակնկալությամբ: Ո՛չ. գործնական քրիստոնեությունը պահանջում է մեզնից նվիրվել ամբողջ անձով և կյանքով: Մանր և յուրջ պատասխանատվություն է առնում մեկը, որ աշակերտում է Քրիստոսին. նա հանձն է առնում իր եսական բնության հակառակ ընթանալ:

Ինչո՞ւ աշխարհը մի խեղճ մարդու հրապարակային գործունեության երեք կարճ տարիները չի մոռանում, չնայելով, որ 1900 տարի է անցել այն օրից: Ինչո՞ւ մարդկությունը նազարեթի բանվորի որդու պատկերը սրտից չի հանում:

Ինչո՞ւ. որովհետև այդ մարդը իր ամբողջ կյանքում, մի ակնթարթ անգամ չի ապրել իրեն համար. որովհետև իր հոգու ամբողջ հարստությունը զոհել է իր եղբայրներին. որովհետև ամենաբանկագիրը աշխարհում՝ իր բարի անունը, մարդկային արժանապատվությունը, վերջապես իր կյանքը զոհեց մի աշխարհի, որին նա արժանի չէր: աշխարհ, որ շրմբոնեց ու վտարեց նորան իրենից և իր տոֆերի տակ տորեց:

Գործնական քրիստոնեություն նշանակում է զոնե փոքր չափով նմանել նորան. ընթանալ նորա շավղով: Սակայն Հիսուսին նմանելու, նորա շավղով ընթանալու համար կարևոր է նորա հոգին ունենալ մեր մեջ:

Ո՞վ է նորա կյանքի և գործերի աղբյուրը: Երբ կարդում ենք ավետարանը, համոզվում ենք, որ նազարեթի խեղճ մարգարեին ույժ տվողը, իր օրհնված կյանքի և գործերի աղբյուրը ոչ ոք է, բայց եթե Աստված, որին կրում էր նա իր սրտում:

Այսպես նաև ես հավատում եմ, որ վերոհիշյալ պատմվածքի հեղինակը գործնական քրիստոնեության գաղափարին հասած չէր լինի, եթե քրիստոնեի Աստվածը հուզած չլիներ նորա սրտում սիրո հուրը դեպի մարդը:

Ահա այն հանապարհը, որ պիտի առաջնորդե մեզ դեպի գործնական քրիստոնեություն. ահա այն աղբյուրը, որից պիտի բխեն քրիստոնեական գործեր՝ սիրո Աստծուն կրել իր սրտում:

Մանկությունից սովորել ենք, որ կրոն չունեցող մարդիկ չար են. բարեպաշտությունն է, որ մարդոց բարի է դարձնում: Բայց իրական կյանքը այլ բան է ուսուցանում. նա ցուցադրում է մարդիկ, որոնք վարում են օրինակելի կյանք, կատարում են իրենց բարոյական պարտականությունները և օտարի բարեկեցության համար, մինչև իսկ պատրաստ են իրենց անձը զոհել. բայց հրապարակավ հայտարարում են, որ Աստուծո գոյության չեն հավատում:

Թվում է թե, եթե մենք էլ մեր ծանոթների շրջանում որոնումներ և պրպտումներ կատարենք, մենք էլ ստիպված կլինենք խոստովանել վերոհիշյալի ճշմարտությունը:

Ինչպե՞ս հասկանալ, ինչպե՞ս բացատրել այս երևույթը:

Այս երևույթը բացատրվում է այն հանգամանքով, որ նոքա ծնվել են քրիստոնեական աշխարհում, դաստիարակվել են քրիստոնեական գաղափարներով, մանկությունից ծծել են քրիստոնեական միջավայրի օդ: Քրիստոնեությունը մտել է նոցա մարմնի և արյան մեջ, քրիստոնեական հոգին իշխել է նոցա հոգուն, որից ազատվել անկարող են, որ սակայն նոքա չեն զգում և չգիտեն: Եվ ահա այդ քրիստոնեական հոգին է, որ ներքնապես դրդում է նոցա քրիստոնեական գործեր կատարել:

Մեր ներկա կյանքը լիքն է այսպիսիների օրինակներով, որոնք հայտարարում են իրենց ուրիշ դրոշակի երկրպագու, որոնք համարում են իրենց այլ կուսակցության հետևող, որոնք մինչև իսկ քրիստոնյա չերևալու համար հայհոյում են քրիստոնեությունը, բայց իրապես ղեկավարվում են քրիստոնեական գաղափարներով և քրիստոնեական գործով: Եվ այդ բացատրվում է նոցա դաստիարակությամբ և միջավայրի ազդեցությամբ:

Ճշմարիտ է սակայն, որ քրիստոնեական հավատը և քրիստոնեական կյանքը անբաժան են միմյանցից. մեկը առանց մյուսի չի կարող գոյություն ունենալ:

Այո՛, քրիստոնեական աշխարհի մեջ կարող են մարդիկ ծնվել և մեծանալ, որոնք՝ քրիստոնեական օգի ունենան, առանց այն զգալու և խոստովանելու: Բայց վա՜յ աշխարհին, ուր քրիստոնեական հավատը վտարվի և չհանա, նորա հետ իսկույն ևեր կչքանան նաև բարի հոգիները, առանց որոնց աշխարհը չի կարող ապրել:

Նոքա՝ այդ սիրո և ողորմածության, անձնվիրության և անձնազոհության հոգիները, գոյություն չէին ունենա աշխարհում, որոնց սուս ու փուս և գաղտնի կատարած մեծ գործերի վերա, մարդ հիացած ու զարմացած նայում է, եթե Աստուծո հավատը գոյություն չունենար աշխարհում, որ ամենատեսակ սիրո գործերի ծնողն ու անսպառ աղբյուրն է:

Սերը լավագույնն է աշխարհում և լավագույնը քրիստոնեության մեջ:

Եթե գործնական քրիստոնեությունը, որ նույնն է քրիստոնեական սերը, իր պարտքը պիտի կատարե, երբ նա պիտի լուծե մեր ժամանակի առաջադրած հսկայական խնդիրները, եթե պիտի բուժե մարդկության սոցիալական վերքերը, որով արյունահոս է լինում նա, և մարդկության առաջ բանա օրհնությունաբեր և երջանիկ կյանք, նա անդադար նոր ույժ պիտի ստանա քրիստոնեական հավատի հսկայական դավանանքից, որ «Կա Աստված և Աստված սեր է»:

Հավատացյալ եղբայրնե՛ր և քույրե՛ր, նա, որի սրտում առաջինը բռնկվեցավ սիրո և լուսո կրակը, ամեն ինչ մաքրող և լուսավորող, նա, որի սրտից ջերմ ցանկության և վառ հուսո կոչը դուրս թռավ՝ «Հուր եկի արկանել յերկիր՝ և զի՞նչ կամիմ, թէ արդէն իսկ բորբոքէր» (Ղուկ., ԺԲ 49), թո՛ղ նա հուզե և բորբոքե ձեր սրտերում սիրո կրակը, թո՛ղ նա կենդանի պահե ձեր հոգու մեջ քրիստոնեության հսկա դավանանքը՝ «Կա Աստված և Աստված սեր է», և դուք կհասկանաք թե՝ ի՞նչ է գործնական քրիստոնեությունը, դուք կանեք, ինչ որ պարտավոր եք, կգործեք՝ ինչ որ կթելադրե ձեզ ձեր սրտում ապրող Աստվածը, որով կհաստատվի Աստուծո բազավորությունը երկրի վերա:

Գործնական քրիստոնեություն. ահա քրիստոնեական եկեղեցու բարեհորոգության և կենդանության միակ աղբյուրը:

(Խոսված Թրիլիսի Քամոյան եկեղեցում, 1920 թ.):

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

ԱՄԱՆՈՐԻ ԵՎ Ս. ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ, ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ Ս. ԹԵՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ.Ի ԱՆՈՒՆՈՎ ՍՏԱՑՎԱԾ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐ ԵՎ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ՎԵՀԱՓԱՌ ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՑ

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՈՐԳ Զ.ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Ամանորի և Ս. Ծննդյան տոների առթիվ շնորհավորանքներ և լավագույն ցանկություններ:

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՊՈԼՍԻ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԳԵՐԱՊԱՏԻՎ Տ. ԳԵՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՑ

ԳԵՈՐԳ Զ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Ամանորի և Ս. Ծննդյան տոների առթիվ Ձերդ Վեհափառության կմատուցեմ մեր սրտագին շնորհավորությունները և կմաղթեմ առևշառություն, երկար տարիներ, Լուսավորչի գահուն վրայեն անպակաս բնելու Հայրապետական հովանին, հայ ժողովրդի բարօրության համար:

ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ՝
ԳԵՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Բեյրութ,
3 Հունվարի 1951 թ.

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱԿԱԼ
ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ԵՂԻՇԵ Ե. ՎԱՐԴԱՊԵՏԻՑ
ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՈՐԳ Զ.ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Նոր տարվա և Փրկչի Ծննդյան տոնի առթիվ Ձերդ Վեհափառության հայտնում ենք ջերմագին շնորհավորություններ, ցանկանում ենք երկար. երջանիկ կյանք, Հայրենիքին և Մայր Աթոռին՝ բարգավաճում:

Ձեղապահ՝
ԵՂԻՇԵ Ե. ՎԱՐԴԱՊԵՏ

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԱԼԵՔՍԻԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՎ ԾԱՅՐԱԳՈՒՅՑՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԳԵՈՐԳ Զ.ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՁԵՐԴ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ, ՍԻՐԵՑՅԱԼԴ Ի ՏԵՐ ԵՂԲԱՅՐ.

Ուրախանում եմ և փոխադարձ ողջունում Ձերդ Սրբությանը Քրիստոսի Ծննդյան և Հայտնության տոնի առթիվ: Աստված մարմնացավ, որպեսզի երկինքն ու երկիրը և երկրի վրա գոյություն ունեցող մասնատվածությունը միավորի և աշխարհին տա խաղաղություն և ուրախություն. թող այդ մեր անարժան բերաններով և սրտերով օրհնյալ լինի հավիտենապես:

Ըստ ավետարանական նշանավոր խոսքերի, Տեր Հիսուսի Ծննդյան լուրը ամենից առաջ «մարդ-հովիվ»ները լսեցին, «ծանեան վասն բանին» և գնացին Երկրպագելու ծնյալ Փրկչին, իսկ հետո՝ փառաբանելու Նրան:

Երանի՜ մեզ, եկեղեցու հովիվները լինելու արժանացածներիս, եթե մենք էլ, երանց նման, մեր փառատրությունների մեջ հավատարիմ ենք ընթանում դեպի Նա և քարոզում ենք մարդկանց Նրա երկիր իջնելը և միանում ենք Նրա մսուրի մոտ մեր աղոթքներով:

Ողջունեցեք իմ կողմից միաբանությանը և Ձեր պաշտոնեությանը: Ինձ հիշողները հիշյալ լինեն երանությամբ:

Շնորհք և խաղաղություն ամենեցուն, և Տիրոջ բարեհաճությունը լինի նորոգվող տարվա վրա:

Եղբայրական սիրով դեպի Ձեզ ի Քրիստոս՝
ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ՝

ԱԼԵՔՍԻ

ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ ԿԱԼԻՍՏՐԱՏԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՎ ԾԱՅՐԱԳՈՒՅՑՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԳԵՈՐԳ Զ.ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Ողջունում եմ Ձերդ Սրբությանը Ծննդյան և Հայտնության տոնների առթիվ և ցանկանում եմ Ձեզ և Ձեր եպիսկոպոսներին հաջողություն և երկար կյանք: Հարազատ Հայաստանում իմ գտնվելը՝ անմոռանալի կմնա իմ հիշողության մեջ:

Ձեզ անկեղծ հարգող՝
ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ՝

ԿԱԼԻՍՏՐԱՏ

ԿՐՈՒՏԻՑԿԻԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՆՈՐԻՆ ՍՐԲԱԶՆՈՒԹՅՈՒՆ ՆԻԿՈԼԱՅԻ ՀԵՌԱԳԻՐԸ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅՈՒՆ ԳԵՈՐԳ Զ.ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Խնդրում եմ ընդունեք ինձնից սրտագին ողջույններ Քրիստոսի Մենդյան և Աստվածորդու մարմնավորման ու ամանորի տոների առթիվ: Թող Տերը վերահաս տարում խաղաղություն պարգևի աշխարհին և հաճություն՝ մարդկանց: Ձեզ վեհափառություններ մաղթում եմ առողջություն և երկար կյանք:

Ուղիղական սիրով՝
ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՆԻԿՈԼԱՅ

ԼԱՏՎԻԱԿԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍԻ ՀԵՌԱԳԻՐԸ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՈՐԳ Զ.ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Պահելով լավագույն հիշողություններ Մոսկվայի խաղաղության կողմնակիցների կոնֆերանսի համատեղ աշխատանքից և այնտեղ ստեղծված փոխհարաբերություններից, ես խնդրում եմ Ձեզ Ս. Օծության և Ձեր ուղեկիցներին, բարեհաճիք Մենդյան և նոր տարվա առթիվ ընդունել իմ ամենալավագույն ցանկությունները՝ առողջության, երջանկության և երկար կյանքի բարեմաղթություններով:

Լատվիական Արքեպիսկոպոս՝
ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍ

ԱՄԱՆՈՐԻ ԵՎ Ս. ՄԵՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ, ՈՂՋՈՒՅՆԻ ԵՎ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՌԱԳՐԵՐ ՍՏԱՑՎԱԾ ԵՆ ՆԱԵՎ՝

Արենֆից.— Հունաստանի Հայոց թեմի Առաջնորդ՝
Գերաշնորհ Տ. Կարապետ Արքեպիսկոպոս Մազրմյանից,
Բաքվից.— Ադրբեջանի Հայոց թեմի Առաջնորդ՝
Գերաշնորհ Տ. Սուրեն Եպիսկոպոս Թորոսյանից,
Փարիզից.— Եվրոպայի Հայոց Կաթողիկոսական Պատվիրակ՝
Գերաշնորհ Տ. Արտավազդ Արքեպիսկոպոս Սյուրմեյանից,
Կահիրեից.— Եգիպտոսի Հայոց թեմի Առաջնորդ՝
Գերաշնորհ Տ. Մամբրե Արքեպիսկոպոս Սիրունյանից,
Նյու-Յորքից.— Հյուսիսային Ամերիկայի Հայոց Արևելյան թեմի Առաջնորդ՝
Գերաշնորհ Տ. Տիրան Եպիսկոպոս Ներսոյանից,
Ֆրեզնոյից.— Կալիֆորնիայի Հայոց թեմի Առաջնորդ՝
Գերաշնորհ Տ. Վարդան Արքեպիսկոպոս Գասպարյանից,
Բուխարեստից.— Ռումինիայի Հայոց թեմի Առաջնորդ՝
Հոգեշնորհ Տ. Վազգեն Ծ. Վարդապետ Պալեյանից,
Լենինականից.— Շիրակի թեմի Առաջնորդական փոխանորդ՝
Հոգեշնորհ Տ. Գարեգին Ծ. Վարդապետ Հակոբյանից,

ինչպես և Մայր Հայրենիքի, Սովետական Միության և Սփյուռքի այլ թեմական թեմական և եկեղեցական խորհուրդներից, հասարակական կազմակերպությունների և անհատ հավատացյալների կողմից:

Վեհափառ Հայրապետը, հայտնելով իր գոհունակությունը ստացված բոլոր ողջույնների առթիվ, տալիս է իր օրհնությունն ու փոխադարձ շնորհավորանքներ է հղում վերոհիշյալներին:

Անգամ Գերազույն Հոգևոր Խորհրդի՝ ՌՈՒԲԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐ

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՈՐԳ Զ.ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Մեր հանրապետական կառավարության բարեհաճ արտոնությամբ և համաձայն մեր սահմանադրական հնավանդ օրինաց, ժողովրդական ընդհանուր և գաղտնի քվեարկությամբ ընտրված Ընդհանուր ժողովը, փոխանորդաբար նախագահությամբ Գերաշնորհ Գրիգոր Եպիսկոպոսի, նանդիսավոր նիստ գումարեց աբոռանիստ Մայր եկեղեցվո մեջ և ստվար մեծամասնությամբ Պատրիարք ոնտրեց Ամենապատիվ Գարեգին Արքեպիսկոպոս Խաչատուրյանը:

Կխնդրենք Ձեր Սուրբ Օծությունը, որ հաճի յուր օրհնությունները շնորհել մեր համայնքին և մեր ազգընտիր Պատրիարքին՝ յուր նոր և նվիրական պարտավորության հաջողության համար:

Ատենապետ Ընդհանուր Ժողովի՝
ԳՆՂԱՄ ԳԱՎԱՌՅԱՆ

Բեյօղլու,
11 դեկտեմբերի 1950 թ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ

ՍՏԱՄԲՈՒԼ, ԹՅՈՒՐՔԻԱ

Ստամբուլի Ընդհանուր Ժողովի Պատրիարքի ընտրության առթիվ տրվելիք Հայրապետական Կոնդակը կուղարկենք, երբ մեր հարցին ի պատասխան կստանանք ընտրյալի համաձայնությունը:

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ՝
ԳԵՈՐԳ Զ.

ԳԵՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐՍԼԱՆՅԱՆԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ

ՍՏԱՄԲՈՒԼ, ԹՅՈՒՐՔԻԱ

Այսու հաղորդում ենք Ձեզ ի գիտություն Պատրիարքական ընտրության Ընդհանուր Ժողովի Նախագահության ուղարկած Մեր հեռագրի պատճենը.

«Ստամբուլի Ընդհանուր Ժողովի Պատրիարքի ընտրության առթիվ տրվելիք Հայրապետական Կոնդակը կուղարկենք, երբ մեր հարցին ի պատասխան կստանանք ընտրյալի համաձայնությունը»:

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ՝
ԳԵՈՐԳ Զ.

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ Ս. ԱԹՈՌԻՆ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ.ԻՆ

Ի ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Շնորհազարդ Ս. Հայրապետ,

Պոլսեն, Պատրիարքարանի Ընդհանուր Ժողովն առենապետեն ստացած եմ հեռագիր մը՝ որով կծանուցանե Թրքահայոց Պատրիարք ընտրվիլս:

Կսպասեմ Ձեր հրահանգին, եթե կարելի է հեռագրով:

Իմ կապը Մայր Աթոռի հետ պիտի մնա, ինչպես ցարդ, միշտ ամուր և անխախտելի: Աստուծո օգնությունը և Ձեր վեհափառության քաջալերությունը պիտի տան ինձ համարձակություն ընդառաջելու եղած հրավերին, երբ Պոլսեն կստանամ սպասված պատասխանը:

Նույն ատեն պիտի չանամ անհրաժեշտ կարգադրությունն ընել՝ այս վիճակն ալ չթողլու անգլուխ, և արդյունքը պիտի հաղորդեմ Ձեզ...

Ուղիղական սիրով և հարգանքով կմատչիմ Ս. և Օծյալ Աթոռն Վեհի Հայրապետիդ:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՀԱՅՈՑ՝

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

Ացեվեդո, 1353, Բուենոս-Այրես, Արգենտինա

Ողջունում ենք Ձեր մտածված ու պայմանական հրապարակային հայտարարությունը՝ Ձեր նոր պաշտոնի հրավիրման առթիվ:

Անհրաժեշտ է լսել Ձեր կարծիքը թեմիդ հերկա վիճակի մասին, Ձեր ծրագիրը նորա ապագա զարգացման և Ձեզ փոխարինող անձի մասին...

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ՝

ԳԵՈՐԳ Զ.

Էջմիածին,
4 փետրվարի 1951 թ.

Վ.ԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՈՐԳ Զ.ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Խառն ժողովը ակնածանոք և ժողովուրդը բերկրանոք ստացան Վեհափառ Հայրապետիդ հեռագիրը: Ազգընտիր պատրիարքը ընդունած է յուր պաշտոնը և կժամանե մարտի մեկին: Ժողովուրդն անհամբեր կսպասե Ձեր Սուրբ Օծության օրհնություններուն:

Ատենապետ՝
ԳԵՂԱՄ ԳԱՎԱՌՅԱՆ

Սամբոլ,
12 փետրվարի 1951 թ.

ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐ

ԳԵՐԱՇՆՈՐՀ ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ ԳԵՈՐԳ Զ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՈՐԳ Զ.ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Գարեգին Կաթողիկոսը հիվանդացել էր «Գոռոնների թրոմբոսիսով» („Coronary thrombosis"): Մինչև այժմ հիվանդանոցում է: Այժմ զգում է իրեն լավ և դանդաղորեն լավանում է:

ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Բեյրութ.
2 փետրվարի 1951 թ.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՊԱՏԱՍԽԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ

ԳԵՐԱՇՆՈՐՀ ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

ԲԵՅՐՈՒԹ, ԼԻԲԱՆԱՆ

Կիլիկիո Շնորհազարդ Գարեգին Կաթողիկոսի լուրջ հիվանդությունը Մեզ խոր ցավ և մեծ մտահոգություն պատճառեց: Սակայն Նորա աստիճանական ապաքինումը թեթևացնում է Մեր ցավը և մխիթարում Մեզ:

Գարեգին Կաթողիկոսը — Հայ ժողովրդի, Հայ Եկեղեցու և Մայր Հայրենիքի ճշմարիտ բարեկամը, Սուրբ Էջմիածնի հարազատ զավակը և հայ մշակույթի սիրահարն ու պաշտպանը, որ իրավամբ վայելում է Հայ ժողովրդի, հայ ինտելիգենցիայի, հայ հոգևորականության և, առանձնապես, Մեր սերն ու համակրությունը — արժանի է ամենայն ուշադրության և խնամքի, և Մենք վստահ ենք, որ Կիլիկիո Աթոռն ու միաբանությունը անթերի կատարում է իր բարոյական պարտքը:

Մաղթում ենք Փրկչին, որ Իր հովանի Աջը պարզե հիվանդի վերա և արևշատություն պարգևե Նորան, ի մխիթարություն Հայ հավատացյալ ժողովրդի և Մեզ:

Մեր կարգադրությամբ, Սուրբ Էջմիածնի միաբանությունը, երեկոյան ժամերգությունից հետո, հրապարակային աղոթք է վերառաքում առ Բարձրյալն՝ Մեր սիրելի հիվանդի շուտափույթ ապաքինման համար:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ՝
ԳԵՈՐԳ Զ.

Էջմիածին.
6 փետրվարի 1951 թ.

ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՐԵԳԻՆ Ա.Ի ՀԵՌԱԳՐԵՐԸ ԻՐ ԱՊԱՔԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՈՐԳ Զ.ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Շնորհակալ ենք Ձեզ եղբայրության մաղթանքների հետագրի համար: Առողջ ենք: Հայանում ենք՝ մի ընդարձակ հատորի հրատարակությունը Կաթողիկոսական Աթոռի փոխանցման նվիրված: Արդեն բազմաթիվ օրինակներ ուղարկված են Հայաստանի կուլտուրական հիմնարկություններին և Ձեզ:

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Ժալեղդիբ.
18 փետրվարի 1951 թ.

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՈՐԳ Զ.ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Շնորհավորում ենք Մեծ Տոնը: Ապահինումս դանդաղ է:

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Ժալնդիր,
26 մարտի 1951 թ.

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ԵՂԻՇԵ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՆՈՐԻՆ Ս. ՕԹՈՒԹՅՈՒՆ ԳԵՈՐԳ Զ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՈՐԳ Զ.ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Սրբոց Հակոբյանց Պատրիարքարանի Տնօրեն ժողովը ցանկանում է էջմիածին ուղարկել եպիսկոպոսության թեկնածուներ: Սպասում ենք Ձեր վեհափառության հրամանին այդ մասին:

Պատրիարքական տեղապահ՝
ԵՂԻՇԵ Ծ. ՎՐԴ. ՏԵՐՏԵՐՅԱՆ

Երուսաղեմ,
28 դեկտեմբերի 1950 թ.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՊԱՏԱՍԽԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ԵՂԻՇԵ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐՏԵՐՅԱՆԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ

ԵՐՈՒՍԱՂԵՄ

Համաձայն ենք ձեռնադրել: Հեռագրով հաղորդեցեք անունները, հայրանունները, ծննդյան թիվը և հպատակությունը Ձեր և մյուս եպիսկոպոսացուների, վիզա ստանալու համար: Մնացյալ նամակների առթիվ պատասխանը կստանաք փոստով: Ուղարկեցեք մանրամասն զեկուցագիր Երուսաղեմի կալվածքների վիճակի մասին:

ՊԱՏՐԻԱՐՔ ԿԱԹՈՂԻԿՈՍ՝
ԳԵՈՐԳ Զ.

էջմիածին,
23 հունվարի 1951 թ.

ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԱՐՏԱՎԱԶԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՈՐԳ Զ.ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Այսօր կատարեցինք հանդիսավոր ճիմնադրեմը Դիարբեքիրյան հարազատների բարեհաճությամբ կառուցվելիք Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցվո: Կխնդրենք Ձեր օրհնությունները:

ԱՐՏԱՎԱԶԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Միլան,
15 հունվարի 1951 թ.

ՌՈՒԲԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՎԱՐԴԱՆԱՆՑ ԱՆՄԱՀ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Հայ ժողովրդի և Եկեղեցու համար լինել-չլինելու տարիներ հանդիսացան 450 և 451 թվականները։

Սասանյան բռնապետությունն այդ թվականներին հավաքագրման ենթարկեց իր բոլոր ուժերը և գործադրեց ամեն տեսակի ճիգ ու ջանք, դիմեց անթիվ մեքենայությունների ու դավերի, որպեսզի հայ ժողովրդին պարտադրի արևի և կրակի պաշտամունքը և այդպիսով հետզհետե ձուլի հայությունը պարսից մեջ, վերացնելով հայ և Հայաստան անունները։

Դեռևս 415 թվականից սկսած պարսից արքունիքը վարում էր ձուլման քաղաքականություն, տանում էր նախապատրաստական աշխատանքներ իր այդ անարգ ծրագիրն իրագործելու համար։

Վարդանանց պատերազմի դրդապատճառները և հանգամանքները լիակատար կերպով պատկերացնելու և այն խորապես ըմբռնելու համար, անհրաժեշտ է մի հետադարձ հայացք գցել պատերազմին նախորդող այն անցուգարձերին, որ տեղի էին ունեցել Հայաստանում, քանի որ արմատներից են գալիս ապստամբության և հայոց մեծ պատերազմի արմատները։ Հինգերորդ դարի առաջին հիսնամյակում տեղի ունեցող անցքերն էին, որ դիմավառեցին Վարդանանց և համայն հայ ժողովրդին, վերաբարձոնքի կոչելով նրա ազգային դիտակցականությունը, նրա խիղճը և Հայ Հայրենիքը, նրա անկախությունը և ազատությունը պահպանելու հերոսական կամքը։

Ինչպես հայտնի է, 387 թվականը հայ ժողովրդի համար կործանարար եղավ։ 387-ին Արևելքում իշխող երկու բռնակալ պետությունները՝ պարսից Շապուհ Գ.ը և հունաց Թեոդոր կայսրը հաշտություն կնքելով, Հայաստանը բաժանեցին երկու մասի և միակցեցին իրենց պետություններին։ Մեծագույն մասը անցավ պարսից տիրապետության տակ։ Հայ ժողովուրդը ապրեց անասելի վայրիվերումներ, սկսվեց մասսայական գաղթ դեպի հունական մասը. գաղթողները հունական ազդիատոնեությունից հուսախաբ, կրկին վերադարձան պարսից մասը, այնուհետև սկսվեց հունաց մասից դեպի պարսից մասը, այստեղ կրկին հուսախաբ՝ դեպի հունաց մասը և այսպես տարիներ շարունակաբար։

Այս վայրիվերումներին և շահատակություններին զուգընթաց, երկու բռնատիրողներն էլ սկսեցին հայ ժողովուրդը ծվատել. իրենց տիրապետությունը ամրացնելու նպատակով հայ ժողովրդի հատվածներն իրար դեմ հանեցին նախարարական տների միջոցով, ոմանց կաշառելով, ոմանց պաշտոններ կոչելով, և ըստ մեծի մասին սուտ խոստումներ անելով։ Երկու բռնավորներն էլ ոչ մի միջոցի առաջ կանգ չառան հայ ժողովրդի միասնականությունը քայքայելու, որպեսզի իրենց դաժան և անարգ տիրապետությունը հեշտանա և հայ ժողովուրդը շունչ ու հոգի չունենա այս մղձավանջային վիճակից իրեն ազատագրելու միջոցառումներ խորհելու։

Այսպես էր դրությունը, երբ 389—390 թվերին կաթողիկոսական գահ բարձրացավ

Սուրբ Սահակ Պարթևը։ Եվ ապա նրա կողքին հայտնվեց հայ ժողովրդի լավագույն զավակներից մեկ ուրիշը՝ Սուրբ Մեսրոպ Մաշտոցը, Վռամշապուհ թագավորի քարտուղարը։ Հայ ժողովրդի զույգ և իմաստուն զավակները մարգարեական կանխատեսությամբ կարողացան թափանցել ստեղծված դրության ծալքերը և փրկության ելք որոնել։ Պետականությունը պահպանելու փորձերը իզուր էին. սակայն մի միջոց, մի զենք էր հարկավոր տալ ժողովրդին իր ինքնուրույնությունը, իր ազատությունը և անկախությունը պաշտպանելու համար։ Այդ կարող էր կատարել միայն հայ գրականությունը, մայրենի լեզուն, ազգային ավանդությունների ու սրբությունների պահպանումն ու քրիստոնեական ճշմարտությունների համոզեն տարածումն ու յուրացումը։ Բայց այդ բոլորի համար հարկավոր էր հիմնականը՝ հայ գիրը։

Չորս—հինգ տարվա քրտնաջան աշխատանքներից և դեգերումներից հետո, վերջապես 404—406 թվերին Մեսրոպ Մաշտոցին հաջողվեց ստեղծել հայոց տառերը։ Իսկույն կատարվեցին առաջին թարգմանությունները, բացվեցին առաջին դպրոցները։ Հայ ժողովուրդը գտավ իր հոգևոր զենքը գալիք ահավոր փոթորիկներին դիմագրավելու համար։

Եվ, հիրավի, Ս. Գրքի և այլ գրականության թարգմանությունը, գրչագրումը և տարածումը խոշոր հեղաշրջում առաջացրին հայ ժողովրդի մեջ։ Բացվեցին հայության մտքի և հոգու աչքերը. նա սկսեց ապրել հոգեկան և բարոյական իմացական կյանքով, նրա արժանապատվությունը և ազգային գիտակցականությունը նոր թափ ստացան։ Եվ, բնականաբար, հայրենի ազատությունն ու անկախությունը կորցրած, օտարների բռնի տիրապետության տակ ծվեն-ծվեն արված ժողովուրդը սթափվեց ու տեսավ օտարի գիշատիչ ժանիքները, իր սրբազան իրավունքների ոտնահարումը, իր երկրի կործանումը, տեսավ, սթափվեց և բռնկվեց անսահման ատելությամբ ու զայրույթով դեպի օտարը, լցվեց մարտնչելու և իր իրավունքները պաշտպանելու պայքարով և սկսեց իր սրտի և հոգու խորքերում մնացանել ու փայփայել իր վերածնության և ազատության ակնկալությունները, համապարփակ կերպով փարվելով հայ լեզվին ու գրականությանը, որպես ազատագրական զենքի։

Վռամշապուհի թագավորության 20-ամյա իրադաղ ժամանակաշրջանը ամեն հնարավորություն ընձեռնեց հայ ժողովրդին վերակառուցվելու և վերաղիտվելու բարոյական ու հոգեկան առաքինություններով, պահելու և զարգացնելու իր ազգային կերպարը իրեն հատուկ դրսևորումներով։ Համեմատաբար կարճ ժամանակում հայ ժողովրդին հաջողվեց կռել այն զենքերը, որոնք պիտի պաշտպանեին նրան հետագա ահավոր մարտերում ու փոթորիկներում, որոնց վերապահված էր նաև հայ ժողովրդի մարմինը ծվատող օտարի գիշատիչ ժանիքները ջարդ ու փշուր անելու վսեմ պարտականությունը։

Այդ ժամանակաշրջանում Ս. Սահակ Պարթևը և Մեսրոպ Մաշտոցը կազմակերպեցին Հայ Եկեղեցին ազգային և ժողովրդական սրբազան ավանդությունների և հավատալիքների հիմունքներով։ Արդեն Բյուզանդիայից վերադարձել էին ուսման գնացած հայորդիների առաջին կարավանները և համախմբված Մայր Աթոռում, զրաղված էին թարգմանություններով ու գրական արժեքավոր վաստակներով։ Հայ Եկեղեցին ստացել էր Սահակ-Մեսրոպյան կրթարաններում մարզված մի քանի հարյուրի հասնող պատրաստված եկեղեցականներ և առաջնորդներ։ Կազմվել և գործադրության էին դրվել մի շարք կանոնադրություններ և եկեղեցական օրենսդրություններ, որով և Եկեղեցին, որպես ազգային-հասարակական կազմակերպություն, ո՛չ միայն միս ու արյուն էր դարձել հայ ժողովրդի համար, այլև նրա ազատագրական պայքարի կարևոր հենարանը։

Ինչպես հայտնի է, համեմատաբար խիստ կարճ ժամանակում, Հայ Եկեղեցին ստեղծեց մայրենի լեզվի ու գրականության կաճառներ։ Մեր վանքերը դարձան բարձրագույն կրթական հաստատություններ, մագաղաթի բուրդերն սկսեցին բարձրանալ վեր ու վեր. գրչագրերի թիվն սկսեց եռապատկվել ու բազմապատկվել և գիրքն ու լույսը ներթափանցեցին հայ համայնքներն ու խրճիթները։ Ապշեցուցիչ արագությամբ զարգացավ թարգմանական և հայրենի գրականությունը իր լեզվական փարթամությամբ, գրական ճոխությամբ և քերականական անաղարտությամբ՝ միանգամայն մատչելի, դյուրըմբռնելի հայ ժողովրդի համար։

Թեև պարսից և հույների 387 թվի դաշնագրությունը Հայաստանը երկու պետությունների մեջ բաժանելու մասին մնում էր իր ուժի մեջ և բախումների առիթ չէր տվել, սակայն գաղտագողի պայքարը շարունակվում էր և ամեն մեկն աշխատում էր մյուսի մասի հայերի համակրությունն ու կողմնակցությունը շահել։ Քաղաքական պայքարը շարունակվում էր։

Հայության միասնականության գաղափարը ոչնչացնելու միտումով, պարսկական քաղաքականությունն է՛լ ավելի ակնառու և հրապարակային դարձրեց նիրքին պառակ-

տումներր նախարարների և իրենց կուսակից մարդկանց միջոցով։ Նախարարական տունը իրար դեմ հանելով և ժողովրդի միասնությունը խարխարելով, պարսիկները դիմեցին մի շարք դիվային միջոցառումների։

Այդ միջոցին էր, որ նախարարները շրջապատեցին Սուրբ Սահակ Պարթևին և պահանջեցին միանալ իրենց հետ և խնդրել արքունիքից Վռամշապուհի որդի Արտաշիրի դահրնկեցությունը։ Հեռատես կաթողիկոսը, որ ծանոթ էր ներքին դավերին ու կացության, կտրականապես մերժեց նախարարների առաջարկը, հաստատուն կերպով կանգնած մնալով հայրենի իշխանությունը պաշտպանելու դիրքերում։ Նա հայտարարեց. «Ես իմ ճիվանդ ոչխարը Երբ՝է չեմ փոխի օտարի առողջ գազանի հետ»։ Այս հակիրճ նախադասությամբ Սուրբ Սահակը ոչ միայն ընդրոշում էր օրվա կացությունը, հայ որոշ նախարարների տիրանենգությունը, այլև կոչ էր անում նախարարներին սթափվել և հետ կանգնել Հայրենիքի դեմ պայքարելուց ու դավելուց։ Այսպիսի դիրքավորումով նա կոչ էր անում հայ ժողովրդին կանգնել հայրենի իշխանության կողքին և պահպանել այն։

Սակայն խորագետ կաթողիկոսի խոսքերը ներգործություն չունեցան օտարին վաճառված նախարարների վրա և նրանք իրենց հետ վերցնելով Սուրմակ անունով մի երեցի, շտապեցին Տիզբոն, Վռամի արքունիքը, հայրենի իշխանությունը և կաթողիկոսությունը մեղադրելու դավաճանության մեջ։

Պարսկական սատրապների թույնով թունավորված նախարարները հայտնեցին, որ ինչպես Արտաշիրը, նույնպես և Սահակ կաթողիկոսը հույների հետ գաղտնի բանակցություններ են վարում՝ պարսից բաժնի Հայաստանը դնել հույների իշխանության տակ։ Նրանք խնդրեցին Արտաշիրին դահրնկեց անել և մի պարսիկ կառավարիչ նշանակել Հայաստանը կառավարելու համար, Սուրբ Սահակ Պարթևին ազատել կաթողիկոսությունից և դավաճան երեցին՝ Սուրմակին նշանակել կաթողիկոս։

Բնական է, որ Սուրբ Սահակի հեռացումով կասկածի տակ էին դրվում և նրա գործակիցները։ Այս բոլորը անհրաժեշտ էին պարսից արքունիքին, ոչնչացնելու համար արդեն իսկ լայն չափեր ընդունած ազգային միասնականության և վերազարթոնքի գաղափարները, որ սկսել էին մտնել հյուղ ու խրճիթ, գրականության, արվեստի, մայրենի բարբառի միջոցով։

Հինգերորդ դարի մեր պատմագիրների աշխատասիրությունների մեջ կարմիր դծով անցնում է այն գաղափարը, որ այդ օրերին հայ պետականության վերականգնումը և ժողովրդի ինքնուրույնության և ազատության պահպանումը համազգային երևույթ էր հանդիսանում, և արդյունք այն դրական շարժման, որ արդեն ծայր էր առել դրերի գյուտից հետո և հախուռն թափով առաջ էր տարվում կաթողիկոսության և հայ հոգևորականության ղեկավարությամբ, քրիստոնեական ճշմարտությունների լուսաբանմամբ և յուրացմամբ։ Այս արդեն ոչ թե պատմագրի կամ ուսումնասիրողի անհատական կարծիքն էր կամ մեջբերումը, այլ հասարակական կյանքի աննահանջ պահանջը, տիրող պայմաններից բխող երևույթ։

Պարսից արքունիքը աճապարեց օգտվել նախարարների ամբաստանությունից։ Տիզբոն կանչվեցին Արտաշիր թագավորը և Սուրբ Սահակ կաթողիկոսը։ Արտաշիրը դահրնկեց արվեց, հարթունիս գրավեցին թագավորի ինչքն ու ստացվածը, կալվածները ու ունեցած չունեցածը և նրան ուղարկեցին բանտ։ Սուրբ Սահակն ազատվեց կաթողիկոսական պաշտոնից, և նա պահվեց Տիզբոնում, աքսորական վիճակում և թույլ չտրվեց նրան վերադառնալ Հայաստան։ Դավաճան և փառամոլ Սուրմակը, որ դպիրավոր ամբաստանիչն էր Սուրբ Սահակի, նշանակվեց կաթողիկոս։

Դավադիրները հասել էին իրենց նպատակին, պարսից արքունիքն էլ իր ծածուկ դավերն էր իրագործում։

Սակայն ինչպես պարսից արքունիքը, նույնպես և դավաճան նախարարներն ու անպատկառ Սուրմակ երեցը խիստ ուշացել էին։ Սուրբ Սահակի և Մեսրոպ Մաշտոցի գործը հաղթանակել էր արդեն։ Նրանց սուեղծած գիրն ու գրականությունը կատարել էին իրենց պատմական դերը։

Սուրբ Սահակն ու Մեսրոպը, մինչ այդ, վերակառուցել էին և կազմակերպել Հայ Եկեղեցին ներքնապես և արտաքնապես, ապահովել էին եկեղեցին եկեղեցական բարձր և դիտակից պաշտոնեությամբ, տվել էին բանիմաց և կտրող, գաղափարական առաջնորդներ ու եպիսկոպոսներ, ապահովել էին ժամակարգությունը, կազմել էին եկեղեցական կանոնադրությունը և մեր վանքերը դարձրել էին հայ խոսքի ու լեզվի, հայ գրականության ու քրիստոնեական գաղափարների ամրոցներ։

Սուրբ Սահակին կաթողիկոսությունից մեկուսացնելը խիստ տխուր տպավորություն գործեց հայ ժողովրդի վրա, առաջացնելով զայրույթի նոր ալեկոծություններ ու փոթորիկներ։ Հայ հոգևորականությունը չվարանեց Սուրբ Մեսրոպ Մաշտոցի և եպիսկոպոս-

ների ղեկավարությամբ վարել Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը, առաջացնելով չտեսնված միաբանություն և խանդավառություն։

Դավաճան Սուրմակը իրեն չարդարացրեց և շուտով հեռացվեց նույն իրեն կաթողիկոսության հասցնող նախարարների ձեռքով։ Սա ի վիճակի չեղավ պարսից արքունիքի դավերը իրագործել, որովհետև հայ ժողովուրդը նրան չընդունեց և չճանաչեց։ Արդյոք ճիշտ չէ՞ր լինի նրան անվանել պարսից կաթողիկոս։ Այնուհետև հաջորդ կաթողիկոսներ նշանակվեցին Բրքիշո և Շմվել ասորիները, որոնք նույնպես ենթարկվեցին Սուրմակի անփառունակ վիճակին, և որոնք դարձյալ ժողովրդի կողմից չճանաչվեցին և չընդունվեցին։

Սասանյանների փորձը՝ Եկեղեցին լռելյայն նվաճել և իրենց դավերի գործիք դարձնել, կատարյալ անհաջողության հանդիպեց։ Ի պատիվ Հայ Եկեղեցու և հոգևորականության պիտի նշել, որ պարսիկներն ու դավաճան նախարարները երկրորդ Սուրմակ չկարողացան գտնել, չնայած իրենց բազում փորձերին։

Հայոց կաթողիկոսության վերաբերմամբ գործադրված այս փորձերն ու բռնությունները ինքնին իրենց մեջ պարունակում էին գալիք պատերազմների սաղմերը։ Միաժամանակ այս դեպքերը վկայում էին հայ հոգևորականության պատշաճ դիրքի վրա գտնվելը։ Նրանք վկայում էին նաև այն միասնականության մասին, որ ստեղծվել էր Հայ Եկեղեցու, հայ ժողովրդի և հոգևորականության միջև։ Պիտի սխալվենք, եթե ասենք, որ կրոնափոխության մարտակոչի ձեռնոցը նետված էր արդեն, որ անլուր բարբարոսությունների պիտի հասներ Վարդանանց օրերին։

Սակայն ինչո՞վ էր զբաղված Սուրբ Սահակ Պարթևը իր աքսորի 4 տարիներում։ Նա ջանում էր ամբաստանությունները հերքել և կաթողիկոսությունը վերականգնել։ Հանգամանքները որոշ չափով օգնեցին Սուրբ Սահակին։ Արքունիքի կողմից նշանակված կաթողիկոսները որևէ ձևով չկարողացան պարսից արքունիքի հույսերը արդարացնել և նա հարկադրված եղավ Սուրբ Սահակին ազատ արձակել։

432 թվականին Սուրբ Սահակը Հայաստան վերադարձավ, և որովհետև Վաղարշապատի կաթողիկոսարանը հանձնված էր Շմվելին, ինքը հաստատվեց Թագրևանդի Ուշքիլիսեի — Սուրբ Հովհաննու — վանքում և այստեղ հիմնեց իր կաթողիկոսարանը։ Սուրբ Մեսրոպ Մաշտոցին, որպես իր անմիջական օգնականը, թողեց Վաղարշապատում, Շմվելի գործունեությունը մոտիկից դիտելու համար։

Հիմնվելով Թագրևանդում, չնայած իր զառամյալ հասակին, նա ոգևորությամբ շարունակեց վերահսկողության տակ պահել հայ եկեղեցիները՝ հաճախակի շրջագայության ելնելով և հոգևոր այցելություն տալով իր ժողովրդին։

438 թվին Սուրբ Սահակը 90 տարեկան հասակում վախճանվեց և թաղվեց Տարոնի Աշտիշատում։ Կորուստը մեծ էր և վիշտը անտանելի։ Սուրբ Սահակի մահվանից վեց ամիս հետո, 439 թվին վախճանվեց նաև անզուգական կրոնավորն ու հայրենասերը, հայ ժողովրդի և հայ գրականության փառքը՝ Սուրբ Մեսրոպ Մաշտոցը։

Այս նույն օրերին կամ քիչ հետո Հայաստան վերադարձան Աղեքսանդրիա գնացած ուսանողները՝ Մովսես Խորենացին, Մամբրե Խորենացին, Դավիթ Ներգինացին, Եղիշե Պատմաքանը, Հովսեփ Պաղնացին, Եզնիկ Կողբացին, Արծան Արծրունին, Աղան Արծրունին, Մուշե Տարոնացին և ուրիշ շատերը։

Հայ Եկեղեցին այժմ ապահովված էր բարձրագույն կրթություն ստացած պաշտոնեությամբ։ Սուրբ Սահակն ու Սուրբ Մեսրոպը կարող էին համգիստ ննջել իրենց շիրիմներում, նրանք կատարել էին իրենց պարտքը Հայ Եկեղեցու, Հայ Հայրենիքի և ժողովրդի հանդեպ։

Սուրբ Սահակի և Սուրբ Մեսրոպ Մաշտոցի մահվանից հետո, նրանց աշակերտները ելան վանքերը և սկսեցին հայ ժողովրդի մանուկ սերնդի դաստիարակության և ուսուցման պատվավոր գործը։ Ջինավառված Սուրբ Սահակի և Սուրբ Մեսրոպի գաղափարներով, նրանք շարունակեցին բուռն պայքար հանում Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի անկախության և ազատության, մինչև Վարդանանց պատերազմը ընկնող կարճ ժամանակամիջոցում, ընդամենը 13—14 տարում նրանք նոր վերելքի հասցրին հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցությունը և սրբազան վերազարթոնքը։ Հայ ժողովուրդը պատրաստ էր և ի վիճակի դիմագրավելու պարսից արքունիքի բոլոր դավերն ու բռնությունները, որ պիտի գործադրվեին Վարդանանց օրերին։

Այսպես էր մեր երկրի իրադրությունը հայոց մեծ պատերազմի նախօրեին։

Մեսրոպի մահվանից հետո կաթողիկոսական գործերը վարեց նրա լավագույն աշակերտներից մեկը՝ Հովսեփ Հողոցմեցին, որը Մեսրոպի կենդանության ժամանակ նրա աշխույժ և կարող օգնականն էր և լավ ծանոթ էր ժամանակի իրադրության հետ։

Սուրբ Սահակի և Մեսրոպի մահվանից հե-

տո տեղի ունեցան մի շարք քաղաքական անցքեր, որոնք էլ ավելի թանձրացրին մթնոլորտը և հնարավորություններ ստեղծեցին Հազկերտ Բ.ի համար իր նախորդների դիվային քաղաքականությունը շարունակելու և հայերին, վրացիներին ու աղվանքներին կրակապաշտությունը պարտադրելու։

Հաջորդելով իր հորը՝ Վռամին, Հազկերտ Բ.ը անմիջապես պատերազմ սկսեց հույների դեմ և առաջ խաղաց, հասավ մինչև Մծբին։ Հունաց Թեոդոս Բ. կայսրը, որ թույլ անձ էր, Անատոլ զորավարի միջոցով հաշտություն խնդրեց։

Այս հաղթությամբ ամբարտավանացած, Հազկերտը որոշեց իր պետության հյուսիսարևելյան սահմանները ընդարձակել և ապահովել, ուստի արշավանք սկսեց հոների կամ քուշանների դեմ, որոնք ապրում էին Կասպից ծովի շրջակա երկրամասերում։ Պատերազմը տևեց երկու տարի՝ 440—441։ Պատերազմին մասնակցում էին հայոց, վրաց, աղվանից, հունաց, կորդվաց և աղձնյաց մարզպանությունների հեծելազորները։ Հպատակ ժողովուրդները պարտավոր էին իրենց հեծյալ զորամասերով օգնել պարսիկներին պատերազմի ժամանակ։ Այս պատերազմում Հազկերտը պարտվեց և հարկադրվեց ամրապնդել Դերբենտի լեռնանցքը (Ճորա Պահակ), հատուկ զորամասեր թողնելով այնտեղ և սկսեց կառուցել Դերբենտ քաղաքը, որի կառուցումը տևեց 7 տարի։

Պարսից արքունիքը նույն դավադիր քայլերն էր գործադրում նաև պատերազմների ժամանակ. թշնամիների դեմ որպես առաջապահ կռվող զորք ուղարկելով հայոց, վրաց և աղվանից զորքերին ու հեծելազորին, ամենավտանգավոր բերդերի ու տեղամասերի, սահմանների պաշտպանությունը դնելով նրանց վրա, այսպիսով միշտ կրկնվում էր նույն հանցապարտ գործելակերպը՝ թուլացնել երեք ժողովուրդների զինվորական ուժը, նրանց հալումաշ անել թշնամիների դեմ մղվող կռվում, կամ հեռավոր ձմեռանոցներում պահելով նրանց, կտրված պահել իրենց հայրենիքից և ժողովրդից։ Եվ նենգամիտ բռնավորն սկսեց իր այս ծրագիրն իրագործել ամենադաժան կերպով. նա նախ փորձեց հայ, վրացի և աղվան նախարարներին դայթակղեցնել և հրապուրել պաշտոններով, գյուղերով ու ագարակներով, ոսկով և արծաթով, որպեսզի նրանց ընդունել տա կրակապաշտությունը։ Բռնապետի այս միջոցառումները արդյունքի չեն հասցնում։ Նա կիրառում է բռնություններ, բայց այս ևս արդյունք չի տալիս։

Երեք ժողովուրդների զինվորներն ու հեծյալները շատ լավ գիտեին թե ինչի՝ համար են պայքարում և տակում այդ տառապանքներին։ Իրենց ժողովուրդների և հայրենիքների պաշտպանությունը, իրենց ազատությունը և անկախությունը գերիվերո համարելով ամեն բանից, նրանք զինված հերոսական խանդավառությամբ և մինչև վերջ պայքարելու անկուն կամքով, դիմադրավում էին բռնավորի բոլոր տեսակի մեքենայությունները։

449 թվի գարնանը Հազկերտը մի նոր խոշոր զորաբանակով վերսկսեց պատերազմը քուշանների դեմ։ Այս պատերազմում քուշանները պարտվեցին և նրանց թագավորը հազիվ ճողոպրեց մահից։ Այս հաղթանակը էլ ավելի ոգի ներշնչեց Հազկերտին, իր ծրագիրները քրիստոնեությունը վերացնելու նկատմամբ իրագործելու։ Նա այժմ արտաքին վտանգ չուներ. հույները պահպանում էին նրա հետ կնքած դաշինքը, քուշանները պարտվել էին, որով նա ժամանակը միանգամայն հարմար ու նպաստավոր համարելով, սկսեց նախապատրաստվել հայերին, վրացիներին և աղվաններին ի դեն մազդեզանց բերել և կրոնական միապաղաղ կայսրություն ստեղծել, նպատակ ունենալով հետզհետե նրանց ձուլել պարսից մեջ և ընտելացնել պարսից վարք ու բարքին, սովորություններին և հեթանոսական խավարապաշտությանը։

Արտաքին թշնամիներին սանձահարած՝ պարսից արքունիքը հույս ուներ իր ծրագրերի հաջողության վրա, քանի որ ինչպես հայերը, նույնպես վրացիներն ու աղվանները դրսից ու հարևաններից որևէ օգնություն չէին կարող ակնկալել, իսկ իրենց ուժերը նա արդեն պառակտել էր որոշ չափով, մեկուսացրել էր Ճորա Պահակում և տենդագին կերպով շարունակում էր պառակտման և քաղաքական ու տնտեսական ճնշման գործադրությունը։

Այս իսկ նպատակով, Հազկերտը հրամայեց. «Ամենայն ազգ և լեզուք՝ որ ընդ իմով իշխանութեամբ՝ դաղարեսցեն յիւրաքանչիւր մոլոր օրինացն, և միայնոյ եկեսցեն յերկրպագութիւն արեգական, սպաս ունելով կրակի, ի վերայ այսր ամենայնի և զմոգութեան ևս օրէնս կատարելով, զի մի՛ ինչ ամենևին պակաս առնիցեն։ Զայս ասելով քարող կարդայր ի մեծի կարաւանին և պատուէր սաստիւ դնէր ի վերայ ամենեցուն. և դեսպանս ստիպաւ արձակէր յամենայն ազգս հեռաւորս, զդոյն պատուէր հրամանի առ ամենեսեան արկանէր» (Եղիշե)։

Այս հրամանի հետ վրա է հասնում նաև Միհրներսեհ հազարապետի նամակը, որի մեջ պարսից արքունիքի ղեկավարը և Հազկերտի անմիջական օգնականը փորձում էր ցույց տալ մազդեզանց կրոնի առավելու-

թյունները և ճշմարիտ լինելը քրիստոնեության համհամառությամբ։

Այս նույն միջոցներին Հայաստան էր հասնում Դենշապուհ անունով պարսիկ իշխանը, որն ըստ իր ստահոդ հայտարարության, պետք է նոր աշխարհագիր կազմեր և թեթևացներ հարկերն ու տուրքերը, նաև հեծելազոր տալու պայմանները։ Աշխարհագիրը կազմվեց, ընդորում, այն 1) կաշկանդեց նեկեղեցու ազատությունը և այն դրեց հարկի տակ, 2) վանքերում ապրող միայնակյաց քրիստոնյաներին նույն աշխարհագրի տակ դրեց, 3) երկրի հարկը ավելի քան ծանրացրեց, 4) նախարարարներին բանսարկությամբ իրար հետ թշնամացրեց և ամեն մի տան մեջ խռովություն դցեց։

Պարզ է, որ այս հարկադրանքների տակ արքունիքը ձգտում էր ժողովրդին աղքատության և թշվառության հասցնել և այդպիսով ընդունել տալ կրոնափոխությունը։

«Հարկի ենթարկվեցին եպիսկոպոսներն ու քահանաները, հարկ նշանակեցին լեռների, դաշտերի և անտառների վրա և այն հավաքում էին ոչ թե պետական արժանապատվությանը վայել ձևով, այլ ավազակաբար հափշտակելով, մինչ այն աստիճան, որ իրենք էլ մեծապես զարմանում էին, թե մի տեղից, որ այսքան գանձ է դուրս գալիս, էլ ի՞նչպես է շեն մնում այդ աշխարհը» (Եղիշե)։

Իրար հաջորդող բռնատիրական այս կարգադրությունները, տնտեսական ճնշումը, կրկնակի, եռակի չափերով հարկերի դանձումը անասելի զայրույթի և պոռթկումների առիթ ծառայեցին։

Սակայն հայ նախարարներն ու հոգևորականները իրենց սառնասրտությունը չկորցրին և ամեն կերպ փորձեցին կանխել ստեղծված կացությունը, երկիրն ու ժողովուրդը խաղաղ ճանապարհով փրկել և մի կերպ լուծել այս ինքնին անլուծելի կնճիռը։

Տեղի ունեցավ Արտաշատի ժողովը, քննության առնելու ստեղծված դրությունը և պարսից արքունիքի նամակները։ Հովսեփ կաթողիկոսի նախագահությամբ տեղի ունեցած այդ ժողովում մասնակցում էին Հայոց նեկեղեցու գրեթե բոլոր մարզերի առաջնորդ եպիսկոպոսները։ Արտաշատ էին ժամանել նույնպես բազմաթիվ տեղերից քորեպիսկոպոսներ և երեցներ և անվանի մարդիկ։ Նախարարներից մասնակցում էին այս ժողովին 18 հոգի։

Ժողովի նպատակն էր՝ 1) պատասխանել Հազկերտի հրովարտակին, 2) պատասխանել Միհրներսեհի նամակին և 3) ամրապնդել Հայրենիքն ու նեկեղեցին պաշտպանելու իրենց ուխտը։

Հազկերտի հրովարտակի պատասխանը կարճ է և ազդու։ Հայերը, հիշեցնելով իրենց կատարած հավատարիմ ծառայությունները պարսից արքունիքին ինչպես անցյալում, այնպես Հազկերտի ժամանակ, խոստանում են իրենց հպատակության պարտավորությունները լրիվ կատարել և հայտնում են, որ «եռգու փրկությանն կամ կորստյանն գործը» թագավորի գործը չէ, որ այդ գործի համար ո՛չ թագավորի հոգածությանն են սպասում, և ո՛չ էլ այն թողնում նրա տնօրինությանը։

Նամակը ուսմբի նման պայթում է հետևյալ կտրուկ և փոթորկալից վերջաբանով. «Ասասիկ կամմ զբոլոր մարմին տուեալ ի ձեռս քո, վաղվաղակի առա զինչ և կամիս, ի քէն տանջանք և ի մէնջ յանձնառութիւնք, սուր քո և պարանոց մեր» (Եղիշե)։

Երկրորդ նամակը, որ դրված է Միհրներսեհին, հերքում է դրադաշտական կրոնի խավարամտությունը և անիմաստությունը և գովերգում քրիստոնեությունը որպես ճշմարիտ կրոն և աստվածահաճո առաքինի ճանապարհ ողջ մարդկության համար։ Այս նամակը ցույց է տալիս, որ հայ եկեղեցականությունը մարսել և յուրացրել էր քրիստոնեական հավերժական ճշմարտությունները, այն դարձնելով ոչ միայն խմաստասիրություն ու համոզմունք, այլև միս և արյուն։ Մեր նեկեղեցու պատմության մեջ այն կմնա որպես պայծառ փաստաթուղթ հայ հոգևորականության բարձր և վերաբացիկ գաղափարականության համար։

Ստանալով երկու մերժողական նամակները, պարսից արքունիքը իրար է խառնվում, չկարողանալով բացահայտել մերժման այդքան սուր և համարձակ հանդգնությունը։ Տեղի են ունենում խորհրդակցություններ։ Հազկերտը դիմում է իր վերջին նենգավոր խաղին, նա հրամայում է Տիզրոն կանչել այն նախարարներին, որոնց ինքն անձամբ ճանաչում էր, հուսալով նրանց միջոցով իր արյունարբու ոճիրը իրագործել։ Միաժամանակ կանչում են վրաց և աղվանից նախարարներին։ Այստեղ անհրաժեշտ է կանգ առնել երեք ժողովուրդների այդ օրերի փոխհարաբերության վրա։ Ինչպես տեսանք, պարսից բռնատիրական կարգերը հավասարապես տարածվում էին երեքի վրա էլ. երեք ժողովուրդները՝ վրացիները, հայերը և աղվանները կանգնած էին նույն վտանգի և սպառնալիքի առաջ. երեքն էլ ազնիվ և պարտաճանաչ կերպով կանգնած էին իրենց հայրենիքը, կրոնը և ազատությունը պաշտպանելու հերոսական դիրքերում։ Եվ երեք ժողովուրդները դաշնակցելով իրար հետ, որոշել էին միասնաբար դիմադրավել փոթորիկը և հողմացրիվ անել թշնամու պավարական ծրագրերը։ Երեք երկրներն էլ նույն հրովարտակն ու նա-

մակներն ստացան, երեքն էլ մերժեցին արված առաջարկը։

Հայ նախարարներից այրունի դուռն էին կանչվել Վասակ Սյունին, որ այդ օրերին վարում էր Հայաստանի մարզպանությունը, Ներշապուհ Արծրունին, Արտակ Ռշտունին, Գագիկ Խորխոռունին, Վարդան Մամիկոնյանը, Արտակ Մոկացին, Մանեհ Ապահունին, Վահան Ամատունին, Գյուտ Վահեունին, Շմավոն Անձևացին, վրացիներից՝ «Աշուշա բդեշխն և այլ տանուտեարք աշխարհին։ Կանչված էին նաև աղվանից ներկայացուցիչները։

Վրաց. աղվանից և հայոց նախարարները նախապես խորհրդակցելով, եկան այն համոզման, որ Տիզբոն շերթալը պիտի դիտվի որպես բացարձակ ապստամբություն, ուստի շարիքի փոքրագույնը համարեցին ներկայանալ արքունիքին, թերևս մի ելք գտնեն այս տագնապալից դրությունից դուրս գալու։ Իրենց ճանապարհորդական պատրաստությունները տեսնելուց հետո, իրենց հետևող հեծյալ թիկնապահներով ու գնդերով մեկնեցին Տիզբոն։

Ինչպես տեսնում ենք կանչված հայ նախարարների ցուցակից, ընտրված են ամենաազդեցիկ և ռազմականորեն ուժեղ նախարարությունները, որոնց մեծ մասը մասնակցել էր Արտաշատի ժողովին. այդ նշանակում է, որ պարսից լրտեսական ցանցը աշխուժորեն գործում էր, անշուշտ այդ նույն ցանցը հայտնել էր արքունիքին երեք ժողովուրդների եղբայրական միության և որոշումների մասին էլ, և միայն դրանով պիտի բացատրել, որ կատաղի լոնակալը իսկույն զենքի չդիմեց, լավ համարելով խաբեության և խարդախության մի վերջին փորձ ևս կատարել։

Նախարարներին Տիզբոն կանչելը շանթահարեց հայ հոգևորականությանն ու ժողովրդին. ստեղծվեց ողջ երկրում զայրույթի և մոլեգնության մի հուժկու ալեկոծություն. հայ ժողովուրդն սկսեց մասսայորեն ելք որոնել։ Արտաշատի որոշումները և պատասխան նամակները նոյանոր ոգևորության և իանդգվարության ազդյուրներ հանդիսացան, եկեղեցիներում կատարվեցին հանդիսավոր մաղթանքներ հոգ ժողովրդի մասնակցությամբ։ Հայ Եկեղեցին և հոգևորականությունը զգաստությունը չկորցրին, իսկույն ներթափանցեցին դավադրության խորքերը։ Քաղաքական այդպիսի տագնապալից օրերին հայ նախարարներին ժողովրդից կտրելը, փաստորեն Հայաստանը և հայ ժողովուրդը զրկում էին փորձառու և կարող ղեկավարներից. հայ ժողովուրդը դլխատվում էր, կորցնելով իր պաշտպանության ամենակարևոր հենարանները։ Արդեն նախարարներից և դորավարներից մի մասը արգելափակված էր Ճորա Պահակում և հեռաստանների բռնաշունչ ամրոցներում, մի մասը գտնվում էր Պարսկաստանում արքունի ծառայության մեջ, հիմա էլ տանում էին վերջին կարավանը։

Հայ հոգևորականությունը զգաց և տեսավ դրության լրջությունը, և նա լտատանվեց։ Համախորհուրդ և միասիրտ, եպիսկոպոս թե երեց, կաթողիկոս թե եկեղեցու այլ պաշտոնյայք, դուրս եկան և մեկնեցին գավառները, քաղաքներն ու գյուղերը, ամրոցներն ու վանքերը, և իրենց վառ հայրենասիրությամբ և կրոնասիրությամբ զինավառեցին հայ մարդուն, հայ գյուղերն ու խրճիթները, ամեն մի անկյուն դարձնելով ապստամբության և ըմբոստության ամրոցներ։ Հայ ժողովուրդը ամենուրեք երդվեց հաստատուն և անեղծ մնալ Հայ Եկեղեցու և Հայ Հայրենիքի սուրբ ուխտին, ինչպես որ երդվել էին Արտաշատի ժողովում իր հոգևոր և աշխարհիկ ղեկավարները։

Արտաշատի ժողովականների երդումն ու ուխտը՝ մինչև վերջ հաստատուն և հավատարիմ մնալ հայ հող ու ջրին, Հայ Հայրենիքին ու Սուրբ Եկեղեցուն նշանարան և առաջնորդող սկզբունք դարձավ համայն հայության համար։ Այս ազգարարությունը արվեց ամենքին։ Հայ մարդը սեղմեց իր բռունցքները և ձեռքը մեկնեց զենքին։ Հայաստանը դարձավ մի վիթխարի զորանոց։

Հայ կինը մեկդի նետեց իր ընտանեկան խաղաղությունը։ Նա մոռացավ իր մանուկին ու նրա օրորոցը և կանգնեց հայրենական իրավունքների պաշտպանության հողի վրա. նա սկսեց խոսել, քարոզել և հրահրել, դոտեպնդել և ոգևորել։ Նախարարական տները դարձան զորակոչի կայաններ, դուրս թափեցին մթերքը, դրամն ու ամեն ինչ հանուն ընդհանուրի։ Այլևս փափկասուն իշխանուհուն անկարելի էր տարբերել սովորական գեղջկուհուց, ամեն մեկի մեջ, ծեր թե մանուկ, երիտասարդ թե պատանի, խոսում էր Հայ Եկեղեցին, խոսում էր Հայ Հայրենիքը։

Խորամանկ Հաղկերտը երեք ժողովուրդների ղեկավարներին ընդունեց շատ սառն, նրանց ցույց չտրվեց ընդունելության սովորական պատիվը. անշուշտ նա նպատակ ուներ այս ձևով ընկճել նրանց հոգեկանը և կոտրել նրանց համառությունն ու ուխտը, որի մասին ի՞նչ խոսք. որ տեղյակ էր։

Նա նախ երեք ժողովուրդների պատգամավորներին հանդիմանեց թե ի՛նչպես են համարձակվել այդպիսի հանդուգն մերժո-

ղական պատասխան տալ արքայից արքայի հրովարտակին, ապա ազդարարեց, որ նրանց այնքան պիտի չարչարի ու տանջի, մինչև իր կամքը կատարեն։ Հազկերտն սպառնում է պատգամավորներին աքսորել Սագաստան, նրանց ընտանիքները ցրվել Խուժաստանում և ողջ երկիրը քանդել, ավերել, տակնուվրա անել։ Այս ծանր սպառնալիքից հետո հայոց, վրաց և աղվանից պատգամավորները մի քանի օր ժամանակ են խնդրում խորհրդակցելու համար, որին Հազկերտը համաձայնվում է։

Երեք ժողովուրդների ներկայացուցիչները թեև գտնվում էին ուժեղ հսկողության տակ, բայց այնուամենայնիվ կարողացան խորհրդակցել իրար հետ։ Բնական է, որ նրանց հետաքրքրում էր իրենց հայրենիքի և ժողովրդի բախտը։ Հիրավի, ի՞նչ վիճակ կընտեղծվեր փորձառու ղեկավարությունը կորցրած ժողովրդի համար։ Այդ նույն օրերին մի քրիստոնյա պարսիկ, որ արքունի ծառայության մեջ էր և ծանոթ Հազկերտի դավադրություններին, հայտնում է նախարարներին՝ ի՛նչ գնով լինի որևէ ելք խորհել և անպայման հայրենիք վերադառնալ։ Վերջապես գաղտնի երդմամբ երեք ժողովուրդների պատգամավորները իրենց ուխտը կրկին հաստատում են գրավոր և տալիս Վարդան Մամիկոնյանին, հայտնելով, որ հայրենիք վերադառնալով, պետք է Վարդանի կարգադրությունները կատարեն։ Որոշվում է առերես համաձայնություն տալ կրոնափոխության։ Որոշ մարդիկ գնում են կրակին երկրպագելու։ Պարսից արքունիքը ցնծում է, կազմակերպվում են հյուրասիրություններ, տրվում են պարգևներ։ Հազկերտը 700 մոգեր, մեկ մոգպետ և հեծյալների մի զորագունդ է գնում հայրենիք վերադարձողների հետ և կարգադրում երեք երկրներում էլ մեկ տարվա ընթացքում եկեղեցիներն ու վկայարանները փակել ու կնքել, կառուցել աստրուշաններ և կրակի ու մոգության պաշտամունքները ուսուցանել։

450 թվի ամռան սկիզբներին մոգպետն ու մոգերը իրենց զորագնդերով հասան Հաւաստան և բանակեցին Ծաղկոտն գավառի Անգղ գյուղաքաղաքի մոտ։ Ընդհանուր հուզումն ու փոթորկումը այս անգամ է՛լ ավելի ծավալվեցին, վարարելով ողջ երկիրն ու ժողովրդին։

Մոգերի հետ եկած նախարարները մի առ ժամանակ հետևեցին չեզոք քաղաքականության։

Մոգպետը տեսնելով, որ հայերի կողմից որևէ ընդառաջում տեղի չի ունենում, փորձեց շոշափել մտքերը և ուսումնասիրել դրությունը։ Մի կիրակի օր նա իր մոգերով և հեծյալներով մոտեցավ Անգղի եկեղեցուն, փորձելով այն փակել և կնքել, խանգարելով Սուրբ Պատարագը։

Այդ օրերին Անգղը իր շրջականներով ներկայացնում էր մի ծովածավալ զորանոց։ Այնտեղ էին հավաքվել երկրի բոլոր կողմերից իրենց իրավունքն հետապնդող մարդիկ՝ ազատներ և շինականներ, կանայք և ծերունիներ, երիտասարդներ ու պատանիներ։ Այնտեղ էր նաև Ղևոնդ երեցը՝ Սահակ-Մեսրոպյան դպրոցի լավագույն աշակերտներից մեկը։ Բագրևանդի Հայրապետությունը հիմնվելուց ի վեր Ղևոնդ երեցը, որպես Սահակ Պարթևի տեղակալ և մոտիկ աջակից, գտնվում էր կաթողիկոսի մոտ, կատարելով շատ պատասխանատու աշխատանքներ։

Երբ ժողովուրդը այս ներխուժումը նկատեց, Սուրբ Ղևոնդի ղեկավարությամբ խուժեց մոգերի վրա։ Նրանք քարերով ու մահակներով հարձակվեցին մոգերի և նրանց հեծելազնդի վրա։ Մոգերն ու հեծյալազորը, արյունաթաթավ, փախուստի դիմեցին։ Մոգպետը պաղատագին աղերսում էր իրեն ողջ և առողջ արքունիք հասցնել։ Ժողովրդական այս առաջին անզուսպ ապստամբությունը որոշեց հայ ժողովրդի բռնելիք դիրքը և ուղղությունը, և պայքարը դարձավ համաժողովրդական։

Այս դեպքից հետո, մոգպետը կանչելով մարզպան Վասակ Սյունիին, պահանջում է դրել արքունիք և խնդրել դադարեցնել արքունիքի պահանջը կրոնափոխության մասին, հայտարարելով, որ ո՛չ մի ուժ այս մարդկանց կրոնափոխ չի կարող անել։ Բայց Վասակը, որ խաղում էր երկու լարերի վրա և իր դերը կատարում էր խիստ վարպետությամբ, հայերին ցույց էր տալիս, որ հաստատ մտոք կանգնած է իր ուխտի և երդման վրա, և քանի որ Հազկերտին ու Միհրներսեհին խոստացել էր արքունի հրամանը կատարել տալ, նրանց հետ էլ վարվում էր ճիշտ այնպես, ինչպես կվարվեր մի մոգ կամ մոգպետ։ Անգղի դեպքից սարսափած, Վասակն սկսեց իրեն դցել եպիսկոպոսների և նախարարների ոտքերը, համաստիացնելով, որ ինքը նրանց հետ է։ Սակայն դավաճանները երբեմնի քայլե՞լ են ճշմարտության ուղիով, ինչպես Եռիշեն է ասում, «յամենայն հողմէ շարժին և յամենայն իրէ ողողեն»։ Անգղում նա հազիվ մազապուրծ եղավ քարկոծվելուց։

Դավաճան հայը, փառասերը և հայրենադավը, փոխանակ օգտվելու մոգպետի և մոգերի առաջարկից, այն հօգուտ իր ժողովրդի գործադրելու, ընդհակառակը խրախուսում է նրանց, խոստանալով իր օգնակա-

նությունը և կանգնելով նրանց թիկունքին իր նախարարական գնդով և համախոհներով։ Ընդորում, այսքանը բավական չհամարելով, լրտեսներ է սփռում երկրում, քարոզելով չընդդիմանալ պարսից արքունիքի կամքին։

Սակայն ժողովրդական հուզմունքները օրեցօր և ժամ ժամ ընդգրկում էին նոր խավեր, և ապստամբական ոգու համատարած ալիքները հեղեղում էին ամենքին։

Վերջապես ժողովուրդը դիմում է Վարդան Մամիկոնյանին, իր սպարապետին։ Վարդանը մի քանի նախարարների հետ ժողովի է հրավիրում Վասակին, որն այստեղ երդումով կրկին հաստատում է իր ուխտը։ Այս ժողովում որոշում են Բյուզանդիայից օգնություն խնդրել։ Բյուզանդիա մեկնած առաջին պատգամավորության տեղ հասնելը կուգադիպել էր Թեոդոր կայսեր մահվանը և պատգամավորությունը ձեռնունայն ետ վերադարձել։ Այժմ ուղարկվում էր երկրորդ պատգամավորությունը և հույներին ուղարկած նամակը կնքում էր նաև դավաճան մարզպանը իր մատանիով և սպասում հարմար առիթի, իր դավերը դրսևորելու և իրագործելու։

Ինչպես հայտնի է, Բյուզանդիան չօգնեց հայերին և անտարբեր դիտեց պարսից շահատակությունները։ Ավելին, նա նենգաբար իրազեկ դարձրեց պարսից արքունիքին հայոց դիտավորությունների մասին։

Այս նույն օրերին պարսիկները հարձակվեցին Աղվանից աշխարհի վրա, նեղը մնացած աղվանները հայերից օգնություն խնդրեցին։

Դավաճան մարզպանը հաջողեց Վարդանին իր զորաբանակով ուղարկել Աղվանից օգնության, հայոց ուխտի մասնակցությունը թուլացնելու համար։ Խաղխաղ քաղաքի մոտ Վարդանը ջարդուփշուր արավ պարսկական բանակը, նրանց մնացածները նետելով Քուռ գետի մյուս ափը։

Վարդանի բացակայության ժամանակ, դավաճանների դավաճանը և նենգավորների նենգավորը կարողացավ խոստումներով ու կաշառով, կեղծուպատիր միջոցներով, որոշ նախարարական տներ միացնել իրեն հետ, և անգամ սկսեց սուտ լուրեր տարածել՝ թե արքունիքը քրիստոնեությունը ազատ է թողնում, որ այլևս կրոնափոխության որևէ բռնադատություն կամ սպառնալիք չկա։ Այսպիսով, վատոգի հայը, որ արդեն պարսիկից պարսիկ էր և մոգից մոգ, փորձում էր թուլացնել ժողովրդի դիմադրականության թափը, վերացնել նրա ոգեբոստացումը, ալեկոծ մտքերը խաղաղացնել, դադարեցնել հուզումն ու վրդովմունքը, որպեսզի այդ իսկ կերպով թուլացնի ուխտապահների հաստատությունը և ժողովրդին ակամա թեքի դեպի պարսից քաղաքականությունը և ստեղծի համակերպություն բռնավորներից բռնավորի հանդեպ։

Այս լուրերն ու շշուկները հասան Վարդանին և նա շտապեց վերադառնալ Հայաստան։ Հայ ժողովուրդը և նախարարների բազմությունը հաղթական փառքով ընդունեցին իրենց սպարապետին, իրենց փրկությունը որոնելով նրա անկաշառ, ազնիվ և հայրենասեր դիտավորության մեջ։ Համբերելն այլևս ավելորդ էր. ժողովրդական ալեկոծությունները և ապստամբական շարժումներն ու բռնկումները ամենուրեք պոռթկացել էին իրենք իրենց։ Հայ ժողովուրդը արտահայտել էր կռվելու, դիմադրելու, իր եկեղեցին և հայրենական սրբությունը պաշտպանելու հերոսական կամքը։ Մնում էր շարժումներն ու տրամադրությունները ուղղել իրենց իսկական նպատակին, կազմակերպել տարբերյալներն առաջ եկող խմբումներն ու գործողությունները, և հպարտ ու անսասան բացորոշ պայքարի ելնել ընդդեմ անարդ իրավազրկության և բռնության։

451 թվի ձմեռը Վարդանն իր համախոհներով սկսեց նախապատրաստական աշխատանքները։

Դավաճան Սյունեցին օգտվելով Վարդանի բացակայությունից և իր վրա վերցնելով հայ բանակի ընդհանուր հրամանատարությունը, հաջողեց նախարարներից ոմանց քաշել իր կողմը, հայ ժողովրդի միասնությունը պառակտելով։ 8—10 նախարարներ իրենց զորագնդերով անցան Վասակի կողմը։ Այդ նույն ժամանակամիջոցում զանազան խոստումներով իր կողմը հրապուրեց ուխտապահ նախարարների երիտասարդներին, նրանց կենտրոնացնելով Սյունյաց աշխարհում, իհարկե, ըստ հարկին որպես պատանդ Պարսկաստան ուղարկելու։ Ամենուրեք քարոզիչներ ուղարկեց հայտարարելով, թե պարսից արքունիքը քրիստոնեությունը ազատ է թողնում և որևէ բռնադատություն չունի եկեղեցու հանդեպ։ Այս սև գործի համար կարողացավ որսալ նաև մի շարք քահանաներ, որոնցից մի քանիսի անուններն են միայն հիշում մեր պատմագիրները։ Հատուկ նամակներով և պատգամավորներով մոլորության ենթակեց հունաց բաժնի հայերին և միանգամայն չեզոքացրեց նրանց օգնությունը ուխտապահների։ Ինչպես տեսնում ենք, այս տիրանենգ մարզպանը ոչ մի միջոցի առաջ կանգ չառավ պարսից արքունիքի քաղաքականությունը իրագործել տալու։ Նամակներ գրեց արքունիքին և հայտնեց ուխտապահների

պատրաստությունները ապստամբության մասին։

Միհրներսեհ հազարապետը Հայաստան եկավ դրությունը հանգամանորեն ուսումնասիրելու, և երբ իմացավ ապստամբների թիվը մինչև 60,000-ի է հասնում, նա կարգադրեց մի ուժեղ զորաբանակ շարժել դեպի Հայաստան, մեկի դեմ 3—4 զինվոր ունենալու հաշվով։ Մուշկան Նիսալավուրտին նշանակեց ընդհանուր զորահրամանատար, դավաճանին էլ պատվիրեց համախմբել իր 40,000-անոց գունդը և ինքը վերադարձավ Տիզբոն։ 451-ի գարնան պարսից զորաբանակը հասավ Հայաստան և բանակեց Հեր ու Ջուրեանդ գավառներում, սակայն պարսից 200,000-անոց բանակի մուտքը Հայաստանի սահմանամերձ գավառները, ամենավին չթուլացրեց ժողովրդի պայքարելու տրամադրությունը, և ուխտապահ նախարարների ոգևորությունը։ Վարդան իր զորագունդն առած անմիջապես մեկնեց Արտազի գավառը և Ավարայրի դաշտում կենտրոնացավ, որպեսզի պարսից առաջխաղացումը արգելափակի։ Միևնույն ժամանակ Առանձար Ամատունին իր 300 ձիավորներով առաջ անցավ պարսից բանակը հետախուզելու։ Վարդան անմիջապես հրահանգեց ուխտապահ նախարարներին՝ Հայաստանի սեգ լեռների սիգապտակ արծիվներին, իրենց գնդերով հավաքվել Ավարայրի դաշտը։ Վարդանի հերոս զինակիցները, հայ ժողովրդի ազատագրության պայքարը լիակատար կերպով ըմբռնողները, իրենց գնդերով իրար հետևից իջան Արտազ։ Պատմական խորը երախտագիտությամբ հայ ժողովուրդը և եկեղեցին սրբացրին այդ վեհ անունները, որոնց մեջ խոսում էին Հայ Եկեղեցին, հայ ժողովուրդն ու Հայրենիքը։ Վարդանի գունդը արդեն դարձել էր առաջապահ գունդ, նրա հետևից հասնում էին պատերազմի դաշտ Ներշապուհ Արծրունին, Խորեն Խորխոռունին, Արտակ Պալունին, Վահան Ամատունին, Թաթուլ Դիմաքսյանը, Արշավիր Արշարունին, Շմավոն Անձևացին, Տաճատ Գնթունին, Ատոմ Գնունին, Խոսրով Գարեղյանը, Կարեն Սահառունին, Հմայակ Դիմաքսյանը, Գազրիկ Դիմաքսյանը, Ներսեհ Քաջբերունին, Փարսման Մանդակունին, Արսեն Ընծայենին, Այրուկ Աշկունին, Վրեն Տաշրացին, Ապրսամ Արծրունին, Խուրս Սրվանձտյանը և Շուհ ախոռապետը, իրենց հեծյալ և հետևակ գնդերով։ Բացի այս, եկել էին նաև Վահունյաց, Ռշտունյաց, Տրպատունյաց, Քոզյանց և Ակեացվոց գնդերը, որոնց գեկավարների անունները դժբախտաբար մեր պատմագիրները չեն հիշել։ Հաշվառումից պարզվեց, որ հայ բանակը կազմված է 66,000 մարտիկներից։ Մինչ այդ, պարսիկները նույնպես առաջ էին շարժվել և բանակել Արտազի դաշտում՝ Ավարայրում և այժմ հայերի ու պարսիկների միջև եղած անջրպետը Տղմուտ գետն էր։ Վասակը, որ իր 40,000-անոց գնդով գտնվում էր պարսից բանակում, դիմեց վերջին նենգավոր խաղին, ուխտապահների շարքերում լքում և իրարանցում առաջացնելու համար։ Մարդիկ ուղարկեց ասելու, որ քրիստոնեության դեմ այլևս արքունիքի կողմից բռնադատություն չկա, որ Եկեղեցին այսուհետև ազատ է և այլն, որ և հետևապես դիմադրությունը անմտություն է։

Սակայն Վարդանն ու նախարարները ըմբռնեցին իրենց շարքերը թուլացնելու այս վերջին դավն ու փորձը, և եկողներին անարգելով հետ վերադարձրին, վերհիշելով տիրանենգ մարզպանի տասնյակ անգամ ուխտ կնքելը և դրժումը։

451 թվի մայիսի 26-ին տեղի ունեցավ ճակատամարտը։ Ճակատամարտի նախորդ օրն ու գիշերը հայոց բանակը լուսացրեց աղոթքով և սաղմոսերգությամբ, մատուցվեցին բացօթյա Սուրբ Պատարագներ և բոլոր մարտիկները հաղորդվեցին, արժանանալով Փրկչի պատվական սուրբ մարմնին և փրկարար արյանը։ Կնքվեցին երեխաները։ Հովսեփ կաթողիկոսը և Ղևոնդ երեցը իրենց բոցաշունչ քարոզներով մեկնաբանեցին այս պատերազմի պատմական և ժողովրդական մեծ նշանակությունը։ Շրջագայեց բոլոր գնդերը նաև մեծ սպարապետը՝ Վարդանը, անձամբ ստուգելով մարտնչողների զինական կազմը և իր հորդորներով խրախուսեց ամենքին՝ վատոգի և ամոթապարտ չմնալ Հայ Եկեղեցու և ժողովրդի առաջ։ Բանակը նոր աշխույժով և ոգևորությամբ լցվեց։

Հայոց բանակը բաժանված էր 3 մասի և մի փոքրաթիվ վերջապահ գունդ էլ ուներ։ Միջին թևի հրամանատար նշանակվեց Ներշապուհ Արծրունին, օգնականներ առնելով Միհրշապուհ Մարդպետականին, Արշավիր Արշարունուն և Արտակ Մոկացուն։ Աջակողմյան թևի հրամանատարությունը վերցրեց Խորեն Խորխոռունին, Թաթուլ Դիմաքսյանի և Ներսես Քաջբերունու օգնականությամբ։ Ձախակողմյան թևի գեկավարն էր ինքը, պատերազմի ոգին ու փառքը՝ Վարդան Մամիկոնյանը, Փափագ Առավեղյանի օգնականությամբ։ Վարդանը վերցրել էր մարտնչել ամենաուժեղ թևի դեմ, ուր կենտրոնացել էր դավաճան Վասակը իր գնդերով։ Դավաճան Սյունեցին որոշել էր մտնել եղրայրասպան կռվի մեջ հօգուտ օտար արքունիքի շահերի։ Այս հանգամանքն էլ ավելի դայրույթ ու փոթորկում առաջացրեց Վարդանանց մեջ։ Վար-

դանի բանակի դեմ էր կենտրոնացրել Մուշկան Նիսալավուրտը իր ամենաընտիր զորագնդերը։

Մայիսի 26-ի առավոտին արևագակը իր արևավառ շողերը սփռեց Ավարայրի դաշտի ու լեռների վրա։ Տղմուտ գետն սկսեց փոթորկալից և խռովահույզ ալիքներով առաջ սողալ։ Տարերքից պոկված շանթալից փոթորկի նման հայ բանակն սկսեց հարձակումը։ Հայ հեծելազորները արծվային արագությամբ անցան Տղմուտ գետը և սկսվեց ահեղ ճակատամարտը։ Մուշկան Նիսալավուրտը իր Մատյան գնդով նահանջեց, Վասակ դավաճանը թաքնվեց փղերի արանքում, որ չճանաչվի, մինչդեռ Վարդանը, վրեժի ծարավը սրտին, որոնում էր դավաճանին, հայրենի զենքով նրա անփառունակ կյանքին վերջ տալու. և նա խոյացավ զորագնդերի մեջ։ Այդ նույն միջոցին, պարսից մյուս թեվերի զորագնդերը հարձակման անցան և հայ բանակի սպարապետը հերոսական մահ ընդունեց, փառաղարդելով հայ ժողովրդի պատմությունը և Մամիկոնյան տոհմը։

Վարդանի մահից հետո, նախարարները որոշեցին նահանջել, վերախմբավորվել, կազմակերպվել և հոգալ բանակի ղեկավարման՝ գլխավոր հրամանատարի խնդիրը։ Գաղափար կազմելու համար թե որքա՜ն շշմեցուցիչ և կործանարար էր հայոց հարվածը պարսիկներին, բավական է հիշել, որ պատերազմի դաշտում պարսիկները 3544 զոհ տվին 9 զորավարով, մինչ հայերի զոհերն էին 286 մարդ և 9 զորավար։ 1036 նահատակների թիվը կազմվեց Ավարայրի ճակատամարտից հետո, երբ հայերը նահանջելով, որոշ կորուստներ տվին նահանջի ճանապարհին և այն ինքնապաշտպանական կռիվներում, երբ նրանք ամրացան Հայաստանի բերդերում և ամրոցներում ու կռվի տակտիկան փոխեցին։ Նահանջից հետո կռիվները տեղական բնույթ ստացան ամրոցներում ու բերդերում և այնուամենայնիվ պարսիկները չհաջողեցին կոտրել հայոց ընդդիմությունը։ Հայ Եկեղեցին անմահացրեց Վարդանանց սուրբ գործն ու հիշատակը և 1036 վկաներին դասեց սրբերի դասն ու ամեն տարի մեծ շուքով և հանդեսով հայ ժողովուրդը նշում է Վարդանանց տոնը։

Դավաճան և փառամոլ Վասակը Հայաստանի դրությունը և հայ ժողովրդի տրամադրությունները ապստամբության և ինքնապաշտպանության դիմելու մասին, պարսից արքունիքից թաքցրել էր և ընդհակառակը, դրությունը ներկայացրել էր այնպես, որ իբր թե հայերը տրամադիր են կրոնափոխվելու և որևէ ընդդիմության հնարավորությունը չունին։ Որ հիրավի Վասակն աշխատում էր հայ ժողովրդի միաբանությունը ճեղքել և ընդդիմության ոգին մարել, մենք այդ տեսանք արդեն. որ այն կարողացավ որոշ չափով միասնությունը խախտել, այդ նույնպես փաստ է։ Դավաճանը չուզեց տեսնել ու խորանալ, որ ապստամբությունը համայնական է, որ ժողովուրդն ինքն է ոտքի կանգնողը և որ երբ ժողովուրդներն են կռվում, ոչ մի ուժ չի կարող նրանց ընկճել։

Մինչդեռ Հաղկերտը և արքունիքը այլ ճանապարհներով ստույգ տեղեկություններ էին ստանում, որ դեպքերը խիստ արագ զարգանում են, որ կրոնափոխության խնդիրը տեղից չի շարժվում, և որ համայն հայ ժողովուրդ բոցավառվել է ապստամբությամբ, և որ ամենուրեք քանդում և ոչնչացնում են Հայաստանում գտնվող պարսից զորակայանները և զորքերին կամ կոտորում, կամ դերեվարում իրենց ամուր ամրոցները, և այն՝ որ Մուշկան Նիսալավուրտի Ավարայրում մղած պատերազմը որևէ արդյունք չի տվել, այլ իր հետևանքներով խիստ կործանարար է եղել պարսից համար։

Սույն հանգամանքներն ի նկատի առնելով, Հաղկերտը մտադրվեց դրությունը մեղմել, փոխել մինչ այդ կիրառվող քաղաքականությունը և ձեռք քաշել կրոնափոխության ծրագրից։ Այս իսկ նպատակով դուրս հանեց Հայաստանից պարսկական բանակը և հրամայեց Մուշկան Նիսալավուրտին այդ բանակով արշավել հոների վրա։ Դավաճան Վասակին ազատեց Հայաստանի մարզպանության պաշտոնից և հրամայեց նրան ներկայանալ իրեն։ Հայաստանի մարզպանությունը հանձնեց Ատրորմիզդ անունով մի պարսիկ զորավարի և կարգադրեց ապստամբությունը ղեկավարողներին ուղարկել Տիզբոն։ Նախարարներից ոմանք հանձն առան մեկնել Տիզբոն։ Տիզբոն ուղարկվեցին նաև մի խումբ հոգևորականներ, որոնք Վասակի դավադրությամբ ձերբակալված էին արդեն. դրանց մեջ էին Հովսեփ կաթողիկոսը և Ղևոնդ երեցը։ Կազմվեց արքունի ատյան՝ մեղավորներին դատապարտելու համար։ Վասակ Սյունին որևէ կերպ չկարողացավ ատյանի առաջ արդարանալ ո՛չ իր գործունեությամբ և ո՛չ էլ իր սուտ ու պատիր տեղեկագրերով, և ենթարկվեց մահվան։ Նշելին այն է, որ դավաճանին մեղադրեցին իրենք՝ պարսից զորավարները, մոգերն ու մոգպետը և պարսից պաշտոնյաները։ Այստեղից էլ այն եզրակացությունը, թե այդ վատոգի անձը՝ որքա՜ն անագորույն է եղել դեպի իր Հայրենիքը և ժողովուրդը։ Նախարարները և հոգևորականները աքսորվեցին։ Նախարարներից ոմանք միայն հետագայում վերադարձան։

Ատրորմիզդին հրամայված էր ապստամ-

թությունը և ապստամբական տրամադրությունները ոչնչացնել և երկրի մեջ վերականգնել նախկին խաղաղ դրությունը։ Եվ այս նկատառումով նրա առաջին հրամանը պարսիկ գնդերին, պաշտոնյաներին ու ժողովրդին այս եղավ. «Զմարդիկն Հայոց չընդոստուցանել, այլ սիրով նուաճել և զպաշտօն քրիստոնէութեան համարձակապէս ունել ամենեցուն»։

Միաժամանակ ավերված գավառների հարկերը զեղչվեցին և հոգևոր առաջնորդներն ու եպիսկոպոսները ճանաչվեցին, որոնք և ազատությամբ դավանեցին քրիստոնեությունը։

Վարդանանք հաղթանակել էին և պատմությունը սրբագործել իրենց անմահ հիշատակով և արյունով։

Վարդանանց սկզբունքները և նրանց հիշատակը Հայ Եկեղեցին ու ժողովուրդը սրբագործեցին մեր ողջ պատմության ընթացքում, առաջնորդվելով այն լուսավոր ու սուրբ գաղափարներով, որ Վարդանանք առաջ քաշեցին և որոնց իրագործման համար զոհվեցին։

«Հանուն ժողովրդի և ժողովրդի համար, հանուն Հայ Հայրենիքի և հայության համար»։ Այս սրբազան և նվիրական պատգամով հայ ժողովուրդը կարողացավ դիմադրավել հետագա դարերում հայության գլխին կուտակված փոթորիկները։

Վարդանանց պատերազմի պատմական նշանակությունը խիստ մեծ է։ Այն մարտունակության ոգի ներշնչեց հայ ժողովրդին և նրան գոտեպնդեց ահավոր գալիքների դեմ պայքարելու։ Նրանց գաղափարական ուժը անպարփակելի է և անծավալ, ինչպես և այն պայծառ հայրենասիրությունը, որ նրանք հրապարակ բերին, այն դարձնելով ժողովրդի մեջ միս և արյուն, կենդանի գործ։

Փա՜ռք Վարդանանց անմահ հերոսներին, փա՜ռք նրանց սուրբ և խնկելի հիշատակին։

ԿՐՈՆԱ-ՊԱՏՄԱԿԱՆ

ՃԵՄԱՐԱՆՑԻ

ՂՈՒԿԱՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԱՐՆԵՑԻ[1]

X

Մի քանի տարվա կարճատև դաղարից հետո, Անդրկովկասը նորից ալեկոծվում էր։ Սոսկալի լուր է տարածվում, թե Պարսկաստանի նոր շահ Աղա-Մահմադ խանն արշավում է Անդրկովկասի վրա, դիմելով ուղղակի դեպի Թիֆլիս, ստիպելու վրաց Հերակլ թագավորին՝ ռուսաց հպատակությունից դուրս գալ և նորից Պարսկաստանի հպատակության տակ մտնել։ 1795 թվի գարնանն Աղա-Մահմադ խանը մեծ բանակով մտնում է Արցախ, Շուշին պաշարում, մի զորամաս էլ ուղարկում է Երևանի վրա, որի խանն ամրացել էր տեղական բերդում։ Կարնեցին, վերահաս վտանգից Մայր Աթոռի հարստություններն ու թանկարժեք հնություններն ազատելու համար, դրանք բոլորը 21 սայլով ուղարկում է Թիֆլիս կարծելով, թե այնտեղ ավելի ապահովություն կլինի։ Սայլերից վեցն ընկնում են Աղա-Մահմադ Խանի ձեռքը, հետն էլ գերի է ընկնում ուղեկցող Մարտիրոս եպիսկոպոսը։ Կարնեցին մեծագին ընծաներով ու դրամական փրկանքով կարողանում է Մայր Աթոռն ազատ պահել նոր բռնակալի ավարառությունից։

Բանակի մեծ մասն իր առաջնորդությամբ Աղա-Մահմադ խանն ուղղում է Թիֆլիս, ուր հասնելով 1795 թվի սեպտեմբերին, սարսափելի կոտորածներ ու վրիժառական դաժան գործողություններ է կատարում, բազմաթիվ եկեղեցիներ ու շենքեր հրո ճարակ դարձնում և մոտ 16,000 պատանի տղաներ ու դեռահաս աղջիկներ, թե՛ հայ և թե՛ վրացի, գերի տանում ու հետ քաշվում։ Իր երկիրը։ Ղուկաս կաթողիկոսը, իբրև գթառատ հոգևոր հայր, միջոցներ է ձեռք առնում և գերեվարությունից բազմաթիվ անձանց ազատում, անխտիր հայ թե վրացի։

Աղա-Մահմադ խանը վերադառնում է Պարսկաստան, ծանր մղձավանջի մեջ թողնելով ամբողջ Անդրկովկասը, ավելի ճիշտ քրիստոնյաներին՝ հայերին ու վրացիներին, որոնց գլխի վրա էր շարունակ թափվում բռնակալների ամբողջ զայրույթը։

XI

Հաջորդ 1796 թիվը կարճատև ուրախության, փրկության ու ազատության պատճառ է դառնում հայ ժողովրդի համար։ Վերջապես վաղուց ակնկալված փրկարար ռուս բանակն Անդրկովկաս է մտնում Կասպից ծովի արևմտյան ափով և սեպտեմբերին հաղթարշավ հասնում Գանձակ ու քաղաքն առանց պատերազմի վերցնում։ Ռուս բանակի հետ է լինում հայտնի Արղության Հովսեփ եպիսկոպոսը, որն իբրև տեղացի, անգնահատելի ծառայություններ է մատուցում ռուս բանակին, թե՛ պարենի հայթայթումը հեշտացնելով, և թե՛ իբրև ճանապարհներին տեղյակ, ռուս բանակի առաջխաղացումը դյուրացնելով։ Եվ ո՞վ չէր ուրախանա այս մեծ իրողության վրա, տեսնելով փրկարար ռուս բանակը համարյա Անդրկովկասի կենտրոնում՝ Գանձակում։ Կարնեցին էլ ցնծում է, տեսնելով վաղուց փափագած երազն իրականացած։ Նա կարծես Սիմեոն ծերունու պես ասելիս լիներ. «Արդ, արձակեա զծառայս քո, Տէր, զի տեսին աչք իմ զփրկութիւնս— այնքա՞ն դառնություններ կրելուց հետո։

Բայց շատ կարճատև է լինում այս ուրախությունը։ Եկատերինա Բ. կայսրուհին՝ Անդրկովկասի քրիստոնյաների ազատագրման չերմ պաշտպանը, նույն թվի նոյեմբերին հանկարծամահ է լինում, իսկ նրա հաջորդ Պավել կայսրը կարգադրում է Ան-

1. Շարունակված ամսագրի 1880 թվի սեպտեմբեր-հոկտեմբեր համարից։

դրրկովկասում գտնված ռուս զորքերը հետ քաշել Կովկասյան լեռների հյուսիսային կողմը։ Այսպիսով, Անդրկովկասը նորից մատնվում է տեղական մահմեդական մոլեռանդ խանների ձեռքը։ Թե ի՞նչ հուսահատություն է սկսում հայ ժողովրդի մեջ, դյուրին է երևակայել՝ ոչխարը դաձյալ գայլի բերանում։

XII

Այս հուսահատության ժամանակ, հանկարծ մի զարհուրելի գուժ էլ է հասնում, թե Աղա-Մահմադ խանը, խորին զայրույթով լցված, սրարշավ նորից հարձակվում է Հայաստանի ու Վրաստանի վրա, իր եղբորն էլ՝ Ալիզուլուն, ուղարկում Երևանի վրա։ Վերջինս շտապ հասնելով Երևան, տեղական Մահմադ խանին ձերբակալում է, աքսորում, իսկ ժողովրդի վրա անթիվ բռնություններ բանեցնում։

Ի՞նչ պիտի աներ խեղճ Ղուկաս Կարնեցին այս նոր բռնակալի, Աղա-Մահմադ խանի զայրույթը մեղմելու համար։ Պարսիկներին շատ լավ հայտնի էր Հովսեփ Արղությանի կատարած դերը ռուսական բանակում, ուստի և Կարնեցին միշտ կասկածում էր, որ ինքն ու իր միաբանությունը, ինչպես և շրջակա հայ ժողովուրդը, կարող են տուժել ռուսական բանակում Արղությանի գտնվելու պատճառով և վրեժն իրենցից առնվի։ Դրա համար որոշում է թանկագին ընծաներով (մարդ զարմանում է, թե այսքան կողոպտվելուց հետո էլ ի՞նչ արժեքավոր բաներ կարող էին մնացած լինել Մայր Աթոռում) երկու վարդապետ ուղարկել բրոնավորի մոտ, նրա սիրտը շահելու համար։ Վարդապետները ներկայանում են Աղա-Մահմադ խանին, կաթողիկոսի ընծաները մատուցում և փոխարենն ապահովության հրովարտակ ստանում։

Աղա-Մահմադ խանը 1797 թվին նորից մտնում է Շուշի, բայց այս անգամ նրա աստղը թեքվում է, ու մի գիշեր մարդախոշոր բռնակալը սրախողխող է լինում իր սպասավորների կողմից։

Թեպետ Պարսկաստանի կողմից ձեռնարկվելիք նոր արշավանքի երկյուղն առժամանակ անցնում է, բայց տեղական խանների ստեղծած տագնապալից դրությունը շարունակվում է։

Սպանված Աղա-Մահմադ խանի եղբայրը՝ Երևանում նստող Ալիզուլի խանը հեռացնում է Երևանից, փոխարենն աքսորված Մահմադ խանը, Երևանի նախկին բռնապետը, վերադառնում է Երևան և իր պաշտոնը նորից գրավում։ Շուշուց փախած Իբրահիմ խանն էլ նորից վերադառնում է Շուշի, և «վշտաւոր և լի ամենայն արհաւրօք» օրերը նորոգվում են, ինչպես գրում է Կարնեցին, և հետո ավելացնում. «Դուռն այցելութեան զարձեալ փակեցաւ, ռուսների հեռանալն ակնարկելով։

Այսպիսով, 1797 թվին երկրի ներքին խառնակ դրությունը շարունակվում է։ Կարնեցին այս առթիվ նույն թվի աշնանը գրում է. «Ի պէսպէս ծանր գործառնութեանց և ի սաստիկ սղութենէ ի յեռին դառնութիւն շքաւորութեան ժամանեալ եմք, և կասկածանօք ապառնի վտանգից թախծիմք առհասարակ»։ Ներքին պատերազմները շարունակվում են նաև ամբողջ հաջորդ 1798 թվի ընթացքում։ Թավրիզի, Խոյի և Երևանի խանները, միմյանց դեմ ելնելով, երկիրը ոտնատակ են տալիս ու ավերում։ Հարվածներից զերծ չի մնում նաև Մայր Աթոռը։ Խոյի Ջաֆարզուլի խանն իր մարդկանցով 14 օր մնում է Մայր Աթոռում։ Պետք է երևակայել, թե այդ հրոսակախմբի ներկայությունը Մայր Աթոռում ի՞նչպիսի նեղություններ ու խժդժություններ կպատճառեր էմիածնեցիներին։ Այդ խանը, տարագրված լինելով իր հայրենի Խոյից, իր և իր մարդկանց համար նոր ապաստարան է որոնում ու վերջնականապես հաստատվում Արագածի հարավային փեշերին, նոր ցավ ու պատիժ դառնալով հետին շքավորության դուռը հասած հայ ժողովրդի գլխին։

Դրությունը ընավ չի փոխվում նաև 1799 թվին, այլ, ընդհակառակն, ավելի է վատթարանում։ Այս թվի գարնանը Կարնեցին գրում է. «Երկիրն յաւեր դիմէ, և թէ երկրիս բնակիչքն ի նեղութեանց բնաւ պակասութիւն չունին», այսպիսով շեշտելով իրար հաջորդող նեղությունների առատությունը։

XIII

Այսպիսի դժնդակ պայմաններում շարունակ լարված դրության մեջ լինելով, Կարնեցին վերջնականապես համոզվում է, որ Պարսկահայաստանի փրկությունը կարող է իրագործել միայն ռուս բանակը, Ռուսաստանը, ուստի այս անգամ ավելի բացարձակապես է կանգնում այս տեսակետի վրա և 1797 թվի հուլիսին որոշում է Պավել կայսրի գահակալությունը շնորհավորել, նրա պաշտպանությունը խնդրել և հատուկ հրովարտակ ևս ստանալ, որպիսին առաջներում տրվել էր Սիմեոն Երևանցուն։ Բացի կայսրին շնորհավորական գրությունն ուղարկելուց, Կարնեցին գրություններ է առաքում նաև իշխան Ալեքսանդր Բեզբորոդկինին, Հովսեփ եպիսկոպոս Արղությանին, Հովհաննես Լազարյանին և Մարգար Մանուչարյանին, որպես ազդեցիկ մարդկանց,

խնդրելով նրանց աջակցել՝ կայսեր հովանավորությունը հայցելու խնդրում։

Պավել կայսրը գոհունակությամբ է ընդունում Կարնեցու շնորհավորությունը և հայցած հրովարտակը տալիս 1798 թվի փետրվարին։ Այս հրովարտակը որոշ ընծաների հետ միասին հանձնվում է Արղությանին Ս. Էջմիածին ուղարկելու համար։ Հրովարտակի առաքումն ինչ-ինչ պատճառներով ուշանում է, բայց Կարնեցին տեղեկանալով այդ մասին, շտապում է առանձին կոնդակով իր շնորհակալությունն անմիջապես կայսրին հայտնել, 1799 թվի հոկտեմբերի 15-ին այն ուղարկելով կայսրին։

XIV

Քաղաքական այսպիսի դարհուրելի պայմաններում միշտ Մայր Աթոռում լինելով և հայ ժողովրդի բազմապիսի հոգսերը քաշելով, բնականաբար, Կարնեցու առողջությունը պետք էր քայքայվեր. քար պետք էր լիներ, որ դիմանար մեր նկարագրած ժամանակաշրջանի դաժան պարագաներին. ամառ-ձմեռ նա չէր հեռանում Մայր Աթոռից։ Դեռ մի տարի առաջ, 1798 թվի դեկտեմբերին, Կարնեցին հայտնում է, թե «Հիանդութիւն ի շողահարութենէ ամարայնոյ դիպեալ՝ սաստկացաւ» իր վրա «և տագնապեցոյց մինչ ի Նոյեմբերի վերջին աւուրսն»։ Դեպետ այս անգամ առողջանում է, բայց հաջորդ 1799 թվին նորից հիվանդանում է և այս անգամ ավելի ծանր, այնպես որ մահճից այլևս չի վեր կենում և 1799 թվի դեկտեմբերի 28-ին վախճանվում է ու հաջորդ օրը մեծ հանդիսավորությամբ թաղվում Ս. Գայանեի վանքի դավթի արևմտյան մասում։ Ղուկաս Կարնեցու հայրապետությունը, ինչպես հիշել ենք, տևում է մոտ քսան տարի։

XV

Կարնեցու կաթողիկոսությունն այնքան է կապված այդ ժամանակաշրջանի քաղաքական իրադարձությունների հետ, որոնք ինչպես տեսանք, անչափ բարդ էին ու խառնակ, որ հարկ համարեցինք նրա կաթողիկոսության ներքին գործունեությանն առանձին վերադառնալ և մի առ մի հիշատակել։ Մենք զարմանալ միայն կարող ենք, թե նման պայմաններում Ղուկաս Կարնեցին ի՞նչպես էր ժամանակ գտնում Մայր Աթոռի ներքին շինարարությամբ ևս զբաղվելու։ Այսպե՛ս էր հայ ժողովրդի բախտը. բռնավորները միմյանց հետ պատերազմում, կռվում են, երկիրն ավերում, քանդում, կործանում։ Փոքր ինչ դադարից հետո, հայը նորից է կառուցում, շինում։ Նորից պատերազմներ են լինում, դարձյալ ավերած, ամայություն, կոտորած։ Մի փոքր հետո նորից շինարարություն, նորից վերանորոգություն։ Մեր ժողովրդի շինարար ոգին մենք ըստ արժանվույն պետք է գնահատենք։ Իր ընիկ հայրենիքից դուրս էլ, հայն ուր մրտնում է, իր շինարար ոգին հետը տանում է և կարճ ժամանակից հետո նոր հայրենիքը ծաղկեցնում. ապացույց՝ մեր բազմաթիվ դաղութները (Լեհաստանում, Նոր-Ջուղայում, Հնդկաստանում, Նոր-Նախիջևանում և այլն)։

Այդպես և Ղուկաս կաթողիկոսը. նրա աչքը չէր տանում, որ Մայր Աթոռը գեղեցկանիստ ու հարմարադուլն շենքեր չունենար, ավերակները հիմնովին չնորոգվեն, խարխուլները նորերով չփոխարինվեն։ Զեռներից ոգի ունենալով, իր բարձր դիրքով ու հեղինակությամբ, նա կարողանում է բարերարներ գտնել ու նրանց նյութական աջակցությամբ կառուցումներ կատարել։ Այդ բարերարներին նա որոնում է մայր երկրից դուրս, որովհետև ներսում, օրվա հացի կարոտ հայ ժողովրդի տնանկ դրությունը ամենևին չէր ներում որևէ նյութական աջակցություն ցույց տալ։ Այսպիսի բարերարների նվիրատվություններով, Կարնեցին կառուցում է վանքի ամառային սեղանատունը սրբատաշ քարերով և զարդարում շորս սյունի վրա հանգչող փոքրիկ կաթողիկեով, որի տակ բազմում էր հայրապետը միաբանների ու հասարակության հետ ճաշելու ժամանակ։ Այս սեղանատան վրա կառուցում է մի քանի սենյակներ և մի գեղեցիկ շտեմարան։ Ձմեռային սեղանատունն ընդարձակում է, վրան էլ ընդարձակ մի պահեստ շինում։ Մայր Տաճարի շուրջը սրբատաշ քարերից սալահատակ է քաշում։ Հին շենքերից մի քանիսը հիմնովին նորոգում է և շատերի վրա էլ նոր սենյակներ ավելացնում։ Կարնեցու կառուցած բոլոր շենքերն ունեն իրենց արձանագրությունները։ Ահա նրանցից մեկը.

«Ցաջողմամբ ամենակարողին Աստուծոյ և հոգածութեամբ Տեառն Ղուկասու Սրբազան Կաթողիկոսին Ամենայն Հայոց, նորոգեցաւ ի հիմանէ սեղանատունս և փոքր սրահս հանդերձ ամենայն վերնայարկօքն ծախիւք ջուղայեցի խալդարեանց ի Բաղդադ բնակեալ Մարգար աղային ի յիշատակ ինքեան և հոգելոյս ծնողացն իւրոց... ի ՌՄԼԷ (1788) թուականիս»։

Կարնեցին նորոգում է նաև վանքի քանքանը, որի ջրով էր սնվում և ապրում ինչպես Մայր Աթոռը, այնպես էլ ամբողջ Վաղարշապատը։ Կարնեցու աչքից չի վրիպում

նաև Սանահնի հեռավոր հնագարյան վանքը. այդ վանքն էլ հիմնովին նորոգության է ենթարկում և վայելուչ, բարեկարգ վիճակի մեջ դնում։

Բայց այս բոլորը շատ չնչին տեղ են բռնում համեմատած այն մեծ նորոգության հետ, որ նա կատարում է Մայր Տաճարի ներսում։

Ս. Էջմիածնում նստող հայրապետները միշտ առանձին սիրով են փայփայել Մայր Տաճարի պատկառելի շենքը, հանուրց հայոց այս բազմադարյան սրբավայրը և ուժերը ներածին չափ նորոգել ու գեղեցկացրել են այն։ Մայր Տաճարի վերջին նորոգությունը կատարել էր Աստվածատուր Համադանցին իր կաթողիկոսության սկզբի տարիներին՝ 1715—1720 թվերին։ Նրա օրոք նույնիսկ Տաճարի պատերը ստատկերազարդեցան ի տեղիս տեղիս և անհեթեթ ծաղկեցանս։ Բայց նրանից հետո այլևս նորոգություն չի կատարվում և Մայր Տաճարի շենքն սկսում է փչանալ ու նույնիսկ կաթել։ Սիմեոն Երևանցին սկսում է միջոցներ ձեռք առնել անհրաժեշտ ու անհետաձգելի նորոգության համար, բայց «անյաջողությունք, և պէսպէս նեղութիւնք և մանաւանդ ծանրագոյն վիշտք և հիւանդութիւնք» արգելք են հանդիսանում իր գեղեցիկ մտադրությունը կատարելու։ Նորոգության գործի վեհությունն ու ծանրությունն ամբողջությամբ բաժին են ընկնում Ղուկաս Կարնեցուն և սա, ինչպես կտեսնենք, պատվով դուրս է գալիս այդ պատասխանատու պարտքի տակից։

Կարնեցին «քաջարվեստ ճարտարապետ» Գասպար անունով մեկի հետ մանրամասն զննում է Տաճարի վիճակը և գալիք կործանման վտանգը զգում, եթե անհապաղ նորոգության չձեռնարկեն։ Պարզվում է, որ մեծ սյուները խախտել ու բեկբեկվել էին, այնպես որ կարիք կար Տաճարի նորոգությունը նրանցից սկսելու։ Երբ գործի են անցնում, երևան են գալիս «ի վաղնջուց ժամանակաց քակեցեալ տեղիքն, և հնագոյն բեկբեկեալ և ցախշախեալ քարինքն, և երկիւղալի փտութիւնքն», այնպես որ ճարտարապետն էլ «զարհուրեալ շփոթի վասն երկիւղի մահուան, զի մեծ կաթողիկէի գմբէթն ի վերայ չորից կամարացն էր շինեցեալ», իսկ կամարները գմբեթի «ծանրութենէն էին բեկոտեալք», և կարող էին ուղղակի փլել։ Օրը լուսարար Մարկոս եպիսկոպոսն այդ մասին հարցնում է Կարնեցուն, նա անմիջապես իջնում է Վեհարանից ու մտնում Տաճար անձամբ տեսնելու բոլորը, մինչև իսկ բարձրանում է սանդուղքի ծայրը և լաստակների վրա պտտելով, ճարտարապետին պետք եղած կարգադրություններն անում «իւրով աստուածազգեցիկ հանճարովն»— առաջ կամարները «մեքենայիւք նախապընդելը, և հետո ամիակ միակ զփշրեալ քարինսն հանելը», և տեղը «ընտիր ընտիր կամարաքարինսն շարելը»։ Սրանից մենք տեսնում ենք, որ Կարնեցին ճարտարապետության մեջ էլ բավականին հմտություն է ունեցել, որովհետև ճարտարապետ Գասպարն ևս միանգամայն համաձայն է եղել նրա նախագծումներին։ Այս եղանակով, Տաճարի գմբեթի, տանիքի, սյուների և պատերի նորոգությունը խնամքով, զգուշությամբ ու հիմնովին կատարվում է և Մայր Տաճարի կործանման վտանգի առաջն առնվում։ Այս մեծ նորոգությունը սկսվում է 1786 թվին և շարունակվում է մի քանի տարի, այն է մինչև 1791 կամ 1792 թիվը, որի ընթացքում տեղի է ունենում Մայր Տաճարի ներսի ծաղկանկարման ու նախշման մանրակերկիտ ու պատասխանատու ծանր աշխատանքը։

XVI

Կարնեցին չէր կարող Մայր Տաճարի ներսը սպիտակացրած մերկ պատերով թողնել։ Ինչպես հիշեցինք, Աստվածատուր Համադանցին արդեն մի փորձ արել էր Տաճարը ներսից զարդանկարել ու պատկերազարդել. բայց դա կատարված է բավական անճաշակ կերպով ու հասարակ եղանակով. մյուս կողմից ժամանակն էլ դրանք ավերել ու փչացրել էր։ Այժմ Մայր Տաճարի ներսը հիմնովին ամրապնդելով և ապահովելով, կարիք էր առաջ գալիս գեղեցիկ ճաշակով ու վայելչությամբ այն ներսից զարդարել։

Այդ ժամանակ Թիֆլիսում, վրաց Հերակլ թագավորի արքունիքում ծառայում էր նշանավոր հայ նկարիչ Հովնաթան Հովնաթանյանը։ Սա այն հռչակավոր Հովնաթանի թոռն էր, որը մեր պատմության մեջ հայտնի է «Նաղաշ» մականունով. վերջինս թե՛ երեվելի նկարիչ էր և թե՛ սքանչելի երգիչ, աշուղ։ Ահա սրա թոռանը, Հովնաթանին է հրավիրում Կարնեցին Ս. Էջմիածին, Մայր Տաճարի ներսի ծաղկանկարման ու պատկերազարդման համար։ Հովնաթանը սիրով ընդունում է Կարնեցու հրավերը և Հերակլ թագավորի թույլտվությամբ, մի քանի օգնականներ վերցրած, գալիս է Ս. Էջմիածին և Տաճարի ներսը դիտելուց հետո, մանրամասն ծրագիր կազմում իր ապագա անելիքի համար, այն ներկայացնում է Կարնեցուն և նրա հաճությամբ ու հավանությամբ գործի ձեռնարկում։ Ինքը՝ Ղուկաս հայրապետն էլ, «սիրատարփ սրբազանն, ոչ դադարէր յերթենեկս առնելոյ, և զլափ և զձն

ոսկեփայլ ծաղկանց, և խորհրդաւոր պատկերաց» դաղափարներն «ինչ յօրինէր, և ի ձեռն հանճարեղ խրատուց և պատուիրանաց իւրոց» գործին ղեկավարություն է տալիս։ Այսպես, ամբողջ Մայր Տաճարը ներսից գեղեցիկ ոճով ծաղկանկարելով գմբեթից սկսած մինչև ներքևի ամենացածր մասերը, միևնույն ժամանակ կտավի վրա պատրաստել է տալիս հարյուր քսանից ավելի մեծ պատկերներ, կենդանագրեր, որոնց նյութը վերցված էր Հին և Նոր Կտակարաններից ու ազգային պատմությունից։ Դրանք Տաճարի ներսում պատշաճ դասավորությամբ զանազան կողմերում կախում է։

Ահա այսպիսի սքանչելի գեղարվեստական հիշատակ է թողնում Կարնեցին հետնորդներին. և եթե նորից վերհիշելու լինենք այն խառնաշփոթ ու տագնապալից վիճակը, որի մեջ այդ ժամանակ գտնվում էին ամբողջ Արարատյան դաշտն ու մերձակա դավառները, առավել ևս պիտի զմայլվենք Կարնեցու կատարած այս հիասքանչ գործով։ Մեր այս հոդվածի համար անգնահատելի աղբյուր ծառայող Ազգապատումի հեղինակ Օրմանյան պատրիարքը, որն աշխարհ տեսած մարդ էր և Իտալիայում եղած ժամանակ դիտել էր իտալական նկարիչների արտադրած համաշխարհային հռչակ ունեցող նկարչական հրաշալի գործերը, Մակար կաթողիկոսի օրոք Ս. Էջմիածնում եղած ժամանակ հիացած է մնացել Հովնաթանի կատարած գեղարվեստական գործերից և իրավամբ մեղադրում է Խրիմյան Հայրիկին, որ հարյուր տարի պահպանված այդ գեղեցիկ նախշերն ու զարդարանքներն անհասկանալի պատճառով վերցնել է տալիս և պատերն ու սյուները հասարակ սվաղով սպիտակացնում 1896 թվին։ Բարեբախտաբար գմբեթի մասի զարդերին ձեռք չի տված, որոնցով կարող ենք դաղափար կազմել Հովնաթանի կատարած գործի աղնվության ու վեհության մասին։

XVII

Գալով Կարնեցու կրթական, լուսավորական գործունեությանը, պետք է ասենք, որ իր նախորդի՝ Սիմեոն Երևանցու թողած լուսավոր գործերը, տպարանն ու թղթի գործարանը, նրա օրոք ևս գործում են և մինչև 1791 թիվը մի քանի հրատարակություններ են լույս տեսնում. բայց այնուհետև այս գործը ժամանակավորապես դադարում է երկրի ընդհանուր խառնակ դրության պատճառով։ Մի՞թե կարող էին կուլտուրական այս մեծ գործերը, որոնք միանգամայն անհասկանալի էին ավազակաբարո մահմեդական իշխողների և խառնիճաղանճ ամբոխային զինվորականների համար, շտուժել այս բոլոր անցուդարձից։ Վերհիշենք, որ բոլոր այս բռնապետները շաբաթներով նստում էին Մայր Աթոռում և ագահաբար ամեն ինչ լափելուց հետո, մնացած բոլոր արժեքավոր բաները փչացնում էին։

Բայց Կարնեցու պես մարդը հուսահատվողը չէր. նա, ինչպես և ամբողջ հայ ժողովուրդը, հաշտվել էր այն մտքի հետ, թե բռնավորները պետք է քանդեն ու իրենք նորից շինեն. բայց նորոգելու համար անհրաժեշտ էր, որ ճանապարհները բաց լինեին և Եվրոպայից տպարանի ու թղթի գործարանի անհրաժեշտ պարագաները բերվեին. իսկ ճանապարհներն գողերի և ավազակների ոհմակներն իսպառ փակել էին։ Էլ ի՞նչպես կարելի էր դրանք նորոգել ու բանի դցել Մայր Աթոռում։ Սակայն ինչ որ ներսում անհնար էր անել, այն հնարավոր էր դրսում անել։ Եվ ահա Կարնեցու հորդորանքով. Արդուության Հովսեփ եպիսկոպոսը տպարաններ է հիմնում Նոր-Նախիջևանում և Աստրախանում, իսկ Շիրազեցին կամ Շմավոնյանը՝ Հնդկաստանի Մադրաս քաղաքում։ Կան տեղեկություններ, որոնց համաձայն Կարնեցին է միտք տալիս Շմավոնյան Հարություն քահանային Մադրասում հայերեն մի ամսագիր հրատարակելու, որը և իրագործվում է 1794 թվին. ինչպես հայտնի է, այս թվի հուլիս ամսին Մադրասում լույս է տեսնում անդրանիկ հայերեն պարբերականն «Ազդարար» անունով։

XVIII

Ղուկաս կաթողիկոսի անձի մի կողմի վրա ևս պետք է ուշադրություն դարձնենք, որով նրա դեմքն ավելի ճշգրիտ կպատկերանա մեզ։ Նա շատ համեստ մարդ էր և ընդհանուրի օգուտը, հայ ժողովրդի միասնությունն ու խաղաղությունն ամեն բանից վեր էր դասում։ Նրա անձի մասին հետևյալ նկարագրությունն ունենք. Նա էր «այր անձնեալ, փառացի, վայելչադէմ, ծանրաբարոյ, քաղցր ի կենակցութեան, և վարժ ի գրաւել զսիրտս այլոցն։ Այսպիսի բնավորության տեր մարդը չէր կարող համայն հայ ժողովրդին վերաբերյալ գործում գիջող չլինել, այլոց կարծիքն անտես առնել։

Ինչպես տեսանք, կոստանդնուպոլսեցիք և նրանց Զաքարիա պատրիարքը, չընդունելով Ղուկասի կաթողիկոսությունը, չորս պահանջ պարունակող մի գրություն են ուղարկում էջմիածնեցիներին, պահանջելով դրանք ընդունել և կիրառել։ Այդ պահանջներից մեկն այն էր, որ այսուհետև կաթողիկոսը խորհրդականներ պետք է ունենա ու նրանց հավանությամբ և համաձայնությամբ գործի,

ուրիշ խոսքով պահանջում են կաթողիկոսի միահեծան իշխանությունը սահմանափակել։ Տեսանք նաև, որ Զաքարիա պատրիարքի պաշտոնանկությունից հետո, նրա հաջորդ Հովհաննես Համադանցու օրոք կոստանդնուպոլսեցիք ընդունում են Ղուկասու կաթողիկոսությունը։ Զաքարիան, որ պատրիարքությունից հեռացվել էր 1781 թվի մայիսին, 1782 թվի մարտին նորից պատրիարքության է կանչվում։ Նա, իհարկե, այլևս չի հակառակում Ղուկասի կաթողիկոսությանը, ինքն էլ ընդունում է այն, բայց երևի թե հետագայում հետամուտ եղած կլինի, թե արդյոք իր պատրիարքության առաջին շրջանում իր և կոստանդնուպոլսեցիների կողմից ուղարկված պահանջները Ս. էջմիածնում կատարվո՞ւմ են, թե ոչ, հատկապես կաթողիկոսին կից խորհրդականներ ունենալու պահանջը։ Հայրապետական դիվանում այս մասին ուղղակի ցուցումներ չկան. բայց կա մի վկայություն Ներսես Ե. Աշտարակեցու գրվածքների մեջ, որով հավաստվում է, որ հիրավի 1783 թվին «կաթողիկոսն և ամենայն արքեպիսկոպոսք Ս. էջմիածնի, պատրիարքն և ամենայն հոգևորականք և ժողովրդականք Կոստանդնուպոլսոյ, հաստատեալ ստորագրեցին միաբանութեամբ, զի անդամք սինհոդին Ս. էջմիածնի, արքեպիսկոպոսք կամ եպիսկոպոսք, լիցեն պակաս քան զվեց»։ Սրանից պարզ երևում է, որ Զաքարիայի վերադարձի հաջորդ թվին, 1783-ին, խորհրդականներ ստեղծելու պահանջը դրական լուծում է ստանում և Կարնեցու կողմից կիրառվում։

XIX

Ղուկաս կաթողիկոսի քրիստոնեական լայն ոգին հասկանալու համար, մեզ մնում է նրա հոգևոր գործունեության մի կողմի վրա ևս ուշադրություն դարձնել, որով բազմաթիվ դեռահաս հայ աղջիկներ փրկվում են բռնավորի հարեմում հարճ դառնալուց։ Բանն այն է, որ Աղա-Մահմադ Խանի կողմից Երևան ուղարկված իր եղբայր Ալիղուլի խանը բնակություն հաստատելով այդտեղ, կարգադրում է իր հարեմի համար իր իշխանության ներքո գտնված գավառներից գեղեցիկ հայ աղջիկներ ժողովել, բացառություն անելով միայն ամուսնացածների համար։ Լսելով այս բոթաբեր լուրը, Ղուկաս կաթողիկոսն անմիջապես շրջաբերական հրաման է արձակում բոլոր ուխտ տարեկանից վեր աղջիկներին շուտափույթ ամուսնացնել, չնայած, որ մեծ պասն արդեն սկսված էր, երբ Հայ Եկեղեցու օրենքով պսակի խորհուրդն արգելված էր։ Իբրև Ամենայն Հայոց Կաթողիկոս, դրդված հարկադրական պահանջից, քաջ գիտենալով այն, որ «հարկք լուծանեն զօրէնսս», նա բարվոք է համարում մեծ պասին ու գալիք հինանց օրերին, երբ նույնպես արգելված էր պսակի խորհուրդ կատարել, թույլատրել պսակել։ Սրանով հարյուրավոր հայ աղջիկներ փրկվում են բռնի իսլամանալուց և հայության համար կորչելուց։ Անշուշտ այդ փրկվածների բազմաթիվ սերունդները ներկայումս ապրելիս կլինեն մեր Հայրենիքում և մեզ բոլորիս հետ միասին ստեղծարար աշխատանքի լծված։

Մենք տեսանք, թե Ղուկաս Կարնեցի կաթողիկոսը քաղաքական ի՞նչպիսի ծանր պայմաններում է դահակալում. տեսանք նաև, որ այդ դժնդակ վիճակում էլ ի՞նչպիսի շինարար գործունեություն էր ցուցաբերում և անշուշտ դա ավելի բեղմնավոր կլիներ, եթե երկիրը չափազանց խառնակ դրության մեջ չլիներ։ Ինքն էլ ցավելով է արձանագրում այս, երբ 1797 թվին գրում է, թե իրենց կյանքի համար անհույս են, «ուր մնաց որ շինարարությամբ էլ զբաղվեն։ Տեսանք նաև, որ նա ժողովրդի շահերն ամեն բանից վեր դասելով և նրա ցանկությանն ընդառաջ գնալով, իր գահին կից խորհրդակցական ժողով է հաստատում։ Տպագրական ու լուսավորության գործն էլ այն ժամանակվա քաղաքական հանգամանքներին ներածին չափ զարգացնում ու առաջ է տանում։ Տեսանք նաև, թե ի՞նչպիսի լայն հայացքով էր նայում եկեղեցական օրենքի վրա պսակի համար արգելված օրերի խնդրում, այն հարմարեցնելով ժամանակի ստիպողական պահանջին։ Ուստի այս բոլորը նկատի առնելով, պատմությունը Ղուկաս Կարնեցուն իրավամբ դասում է Մայր Աթոռի գահակալ բազմավաստակ հայրապետների շարքը։



ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌԻՑ

ՎԱՀԵ-ՎԱՀՅԱՆ

ԷՋՄԻԱԾԻՆ — ԶՎԱՐԹՆՈՑ[1]

րինական բոլոր ձևակերպությունները լրացուցած, անցագիրները մեր գրպաններուն մեջ, վերադարձանք պանդոկ... Եվ ահա կուգար սպասյակը, իմացնելու թե ինքնաշարժը մեզի կսպասեր։ Պիտի երթայինք Էջմիածին։

Անցնելե հետո Հապթանակի կամուրջը, բարակ անձրևի մը տակ կսուրար մեր ինքնաշարժը ասֆալտապատ ծառուղիեն, գրեթե առանց ելևէջի։ Մեր երկու կողմերուն աշունը իր ոսկին էր տվեր պարտեզներու և այգիներու անպարագիծ խճանկարին։ Կըսեին մեզի թե ճամբուն զուգ եզերքներուն վրա շարք շարք բարձրացող նորակառույցները պիտի հատկացվեին հողամշակ հայրենադարձներուն։

Հիմա, բաց տարածությունն էր արտերուն, կանանչի պզտիկ կղզիներով։ Քիչ վերջ, ծառերու խորապատկերի մը մեջեն, կուրվագրվեին սլացիկ կատարները Մայր Տաճարի գմբեթներուն։ Քանի մը դարձվածք էջմիածնի փողոցներեն, ու մեր ինքնաշարժը կմըտներ վանքին դարպասեն ներս։ Գեորգյան ճեմարանի նախկին սան և հայ ժողովրդի մեծ զավակ Անաստաս Միկոյանինն էր վարժարանի բակին մեջ կոթողված արձանը։

Պարանի պես իջնող անձրևը կստիպեր որ պահ մը ապաստան փնտռեինք գավիթին կամարներուն տակ։ Վերջացեր էր շաբաթ երեկոյան ժամերգությունը, մեկներ էին ժամվորները, և փակ էր դուռը տաճարին։ Անոր արևմտյան կողմը, կաթնագույնեն մինչև հաստակաքարի երանգներով մարմարիոնե կափարիշներու տակ, կհանդչեին աճյունները մեր հայրապետներուն։ Ոսկեզոծ կամ այլևս մաշիլ սկսած իրենց տապանագիրերով այդ քարերը կպահեին անունները նվիրական գեմքերու, որ իրենց շունչն էին տվեր հայ հոգիին պատմության։

Մերունի վարդապետ մը կբանար հիմա տաճարին դուռը, ուրկե ներս կառաջնորդեր մեզ Վարպետը, պատկառոտ ու լուռ։ Խոնարհած էին բոլոր ճակատները։ Զգացի այնտեղ անգամ մըն ալ, թե աստվածային երկյուղը չէ միայն, որ մարդերուն հոգին կվերածե հաղորդության բաժակներու։ Դարերու խորերեն եկած ի՞նչ հնքեր լսեր էին, մեր պապերուն շրթունքովը դրոշմված այդ քարերը, ու փաթթվեր էին անոր սյուներուն ի՞նչ նայվածքներ, որոնց լույսն հաճանչ մը կար հիմա մեր ալ աչքերուն մեջ։ Այդ խորաններուն առջև, մեջք ծռեր ու մրմնջեր էին իշխանն ու մշակը, ազատն ու ճորտը, տարբեր հույզերով, այլ նույն հույսերով առլցցված։ Խնկարույր անոր կամարներուն տակ ու դեպի երկինք սլաքված գմբեթներուն լռությանը մեջ, չէի՞ն ծփար տակավին ալիքները հին ու հարազատ ձայներուն։

Կիսամութ խցիկ մըն էր գանձատունը, ուր խնամքով կպահվեին սրբազան մասունքներ ու թանկարժեք սպասներ — ականակուռ խույրեր, գավազաններ, ոսկեսար վարագույրներ ու շուրջառներ և արծաթ կամ ոսկի բազմատեսակ իրեղեններ։ Աչքի լույսի պես պահեր էին զանոնք։ Վկաներ նաև շիջած փառքերե, որոնց մոխիրեն ծներ էր նորը, խորհուրդի մշուշին տեղ կյանքի արևը վրան։

Գանձատունեն ելած՝ խորանին առջևն էինք նորեն։ Ու ներքին ձայն մը կըսեր ինծի թե այդ տաճարը չէր միայն շենք մը քարե ու կիրե, հողին վրա հաստատված։ Անոր հիմերը կիջնեին մինչև խորերը մեր ժողովուրդին հավաքական կամքին, և անոր գոյությունը չէր պայմանավորված նյութեղեն իր կառույցովը, որ շքե՞ղ էր անշուշտ, տոկո՛ն, բայց

1. «ՀԱՅԱՍԵԶՆԵՐՈՒ ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆԸ» (հատված), «ԱՆԻ» ամսագիր, 1950 թ., մայիս և հունիս։

պիտի չդիմանար ժամանակին ու բարբարոսության կործանիչ հարվածներուն։ Պիտի չդիմանար, եթե ույժ մը՝ ավելի կարծր քան անոր որմերուն կրանիտները, ավելի անքակտելի քան զանոնք բռնող շաղախը՝ երաշխավորած չըլլար մշտնջենականությունը այդ կաթողիկեին, որ կխորհրդանշեր հայության հոգի՛ն իսկ։ Այդ ույժը կրխեր մեր ժողովուրդին ինքնուրույնության կամեցողութենեն։ Հոգեկա՛ն էր ուրեմն և անխորտակելի։

Շահ Աբբասը չհասկցավ այդ ճշմարտությունը, ինչպես չէին հասկցեր, չհասկցան ու չեն հասկնար՝ մեր «հոգիին փրկությանը համար» մեր միտքն ու բազումը սակարկող բոլոր տիտղոսավոր փերեզակները իրմե առաջ ու ետք, մինչև այսօր։ Բայց գիտե՛ զայն մեր ժողովուրդը, պանդխտության իր բոլոր կայաններուն մեջ, Կալկաթայեն մինչև Կահիրե, Նյու-Յորքեն մինչև Փարիզ, Բեյրութեն մինչև որևէ ծայրը աշխարհի։ Գիտե՛, որովհետև, ո՛ւր որ ալ նետած ըլլա զինք պատմության շարիքը, ճշմարիտ ամեն հայ կլսե էջմիածնի զանգերուն ձայնը իր սիրտին մեջ, կճանչնա զայն իբրև հարազատ ու հավատարիմ ուղեցույց ու կառաջնորդվի անկե։ Էջմիածինը հոգևոր տունն է հայության. և այցելու ամեն հայու մեջ կխոնարհի ուխտավոր մը իր իսկ հոգիին։

Վեհարանի բարապանը կհաղորդե՝ ահա, թե Վեհափառը բարեհաճեր էր մեզ ընդունելու։ Նոր դադրած անձրևեն ետք, Վեհարանին պարտեզն ու ծաղկանոցը կրանային մեր դեմ հմայքը կախարդական տեսարանի մը՝ ծառերուն ու ծաղիկներուն շուրջ զողդողացող անհամար ծիածաններով։

Պզտիկ սպասում մը նախասրահին մեջ, ու կմտնեինք ընդունելության դահլիճը, լայնածավալ գորգերով հատակված։ Պատերը զարդարող նկարները ելած էին վրձինեն մեր ականավոր վարպետներուն։ Թափուր էր հայրապետական գահը, ինչպես թափուր էին անոր երկու կողմերեն մեկնող կոր շարքերը բազկաթոռներուն։ Վեհափառին աշխատասենյակն էր այն մյուսը։ Այնտեղ էր՝ այլևս պատմական այն դաշնամուրը, որ եղեր էր վկան անքուն լուացված այնքան գիշերներու հրաշագործ մատներուն տակ Կոմիտաս Վարդապետին։ Հմուտ երաժշտագետ մը ինքն ալ՝ Վեհափառն էր զայն գործածողը հիմա։ Բայց պիտի չլսեինք նվիրական անոր հնչյունները, քանի որ պաղառություն մը ստիպեր էր զինք մնալ անկողնին մեջ։

Վարպետին առաջնորդությամբ, կմտնեինք ննջասենյակը։ Մահճակալին վրա ընկողմանած, մեծահասակ ու թիկնեղ, թանձր հոնքերու տակ ժպտուն աչքերով, Հայրապետը կտպավորեր մեզ իր առուգությամբ նախ՝ հակառակ իր վրա բարդված տարիներու բեռին։ Պատկառանք ու մտերմություն նույն ատեն — նահապետական իր դեմքեն եկած զգայնությունը ի ծնե։

Ամենեն առաջ ինք առնելե հետո Վեհափառին աչքը, Վարպետը կծանոթացնե մեզ կարգով։ Ես որ քիչ անգամ կհաջողիմ նոր ծանոթացումե մը ետք կրկնել խոսակիցիս անունը, առանց հիացումի չէր որ կլսեի ալևոր Հայրապետի հարցումները մեզի, անշըփոթ գործածությամբը մեր անուններուն։ Ինծի նույնքան զարմանալի կթվեր նաև թարմությունը իր տեղեկություններուն՝ կենսական հարցերուն մասին այն թեմերուն, որոնց կպատկանեինք ամեն մեկս, տարբեր երկիրներե եկած։ Իր հետաքրքրությունը ամենեն առաջ կերթար ժողովուրդին, անոր կեցության պայմաններուն, ու հետո միայն՝ մասնավոր խնդիրներու։ Անոնց ամեն մեկին մասին ուներ իր հստակ տեսակետը և կհայտներ զայն հայրական վեհանձնությամբ։ Լայնամիտ հոգի, սեր ու միասնականություն էր իր հորդորը։ Կուզեր որ արտաքսումը միշտ արժանավոր լրջությամբ մը դիմագրավեր մեր ժողովուրդին ու երկիրին համար ճակատագրական այն իրադարձությունները, որ ծանր պարտականություններու կկոչեին մեզ։

Չէինք ուզեր անհանգստացնել զինք ավելի երկար, բայց կարելի չէր մերժել ավանդական հյուրամեծարությունը, որ կբաղկանար մեծագին սպասներով մատուցված արևելյան սուրճե և անուշեղեններե։ Հայրապետական իր օրհնությունը եղավ կարճ, որքան հոգևոր՝ նույնքան և հայրենասիրական շունչով։ Շատ քիչ անգամ տեսած եմ ես մեծ մարդեր, բայց գիտեմ թե կարելի չէ չճանչնալ զիրենք, առաջի՛ն իսկ հանդիպումով։ Իրենց ներկայությենեն կծավալի անսովոր ույժ մը, որ կթափանցե քեզմե ներս, կներշնչե վստահություն, կընե քեզ ույսով ու հպարտ—կզորացնե քու կեցվածքդ՝ կյանքին ու մարդերուն հանդեպ։ Ամենայն Հայոց Հայրապետեն բաժնվեցա ես՝ հպարտ ավելի և զորացած։

Վանքեն շատ հեռու չէր Օշականի եկեղեցին։ Եվ ուխտավոր մեր հոգիներուն մեջ կթրթռար արձագանքը նվիրական ձայներու՝ մեր պատմիչներեն ու երգողներեն։ Համբուրե՛լ դամբարանը հայոց «գերագույն վարժապետի—պատանության առաջին օրերեն ի վեր փայփայած երազն է՝ հայ մեծցած ամեն մարդու։ Մերինը... պիտի մնար նորեն երա՞զը։ Ուշ էր ժամանակը, և անձրևը կսաստկանար հետզհետե։

Կրնայինք սակայն՝ այցելել նորաբաց Հոգևոր Ճեմարանը, վանքին շրջափակին մեջ։ Դասավանդությունները չէին սկսած տակավին։ Շենքին կարգ մը մասերը կենթարկվեին նորոգության, և աշակերտները նոր էին հավաքվեր։ Հոն էր տեսուչը, Պոլսո Robert

College-ի հին շրջանավարտներեն Մինաս Մինասյանը։ Խանդավառ էր իր գործով, երբ կբացատրեր կատարվելիք աշխատանքը, որուն ի նպաստ կարևոր մասնակցություն մը ունենալ էր արտասահմանը։ Կային դեռ պակասներ։ Թերի էր մանավանդ կահավորումը. բայց շնորհիվ մեր կառավարության ընծայած դյուրություններուն, պիտի լրացվեին անոնք շուտով։

Գիտե՞ր հարկավ, թե կաճապարեինք։ Բայց, ակարելի չէր մեկնիլ, առանց պահ մը հանգստանալու։ Ու կառաջնորդվեինք իր բնակարանը։ Նույն օրը, Երևանեն եկեր էր տիկին Մինասյանը։ Քանի մի վայրկյանեն՝ ահա կպատրաստվեր սեղանը—թեյ, թարմ կարագ, պանիր, հաց և առաջ պտուղ—քսան հոգինոց մեր խումբին համար։ Համաքաղաքացիներ էինք ընկեր Մինասյանին հետ։ Բեյրութի իր ազգականներեն տարեր էի պղտիկ նվեր մը իր տիկնոջ։ Հյուրամեծարի իր ոգևորության մեջ սակայն, քիչ ժամանակ կունենար ինձի հետ առանձին խոսակցության։ Կես ժամ մը հազիվ անցած, կրաժնվեինք Մինասյաններեն, մայրամուտեն առաջ տեսնելու համար Զվարթնոցը, վերադարձի մեր ճամբուն վրա։ Հաջորդ առավոտուն կստանայի նամակ մը իրմե։ Մեր մեկնումեն հետո միայն անդրադարձեր էր թե լավ կճանչնար մեր ընտանիքը, հայրս մանավանդ։ Կփափագեր որ անպատճառ տեսնվեինք կրկին։ Կփափագեի ես ալ։ Բայց այդ կիրակին մեր վերջին օրն էր... Երևանի մեջ։

Էջմիածնեն հազիվ քիչ մը հեռացած՝ մեր ինքնաշարժը կրներ մայր ուղիեն շեղում մը դեպի աջ։ Մառերով եզերված խճուղին կտեվեր կարճ, «Մասունցի Դավիթ» մը ծխելու չափ. ու կանգ կառնեինք խոնարհ բարձունքի մը առջև, որ հեռվեն տեսանելի քիչ բան ուներ՝ մեր ճարտարապետության ամենեն հին ու հանդուգն իրագործումին մնացորդները թելադրող։

Անձրևը չէր դադրած բոլորովին. բայց՝ արևմտյան հորիզոնի վերև բարյացակամ բացվածքե մը՝ արևը կղրկեր երանգավոր լույս մը, որ կարծեք կդողար ինկած տեղը։ Երկար մեր շուքերուն հետևելով, կկատարեինք պզտիկ վերելք մը ճամբուն ձախ եզերքին վրա։

Եվ ահավասիկ Զվարթնոցը։

Ամենեն առաջ, մեր նայվածքը պիտի մնար գամված՝ հրաշակերտ այն խոյակին որ իր ճակատին վրա կրոներ հպարտ կերպարանքը թևաբաց արծիվի մը... ջարդվա՞ծ գլուխով։ Այդ արծիվը չէ՞ր պատկերը մեր ժողովուրդին արյունոտ փառքին, անոր պատմությունը շինող անընկճելի՛ ոգիին։ Փշրվա՞ծ էր գլուխը, բայց ուղի՛ղ իր պարանոցը. ու թևերը կմնային բաց, արհամարհոտ տենչով մը թռիչքի։

Ջորյան գրագետին ներշնչյալ խոհերեն առաջնորդված, քալելով կարծես աճյուններուն վրայեն մեր նախնիքներուն, կշրջեինք հիմա ավերակին մեջ տաճարին, մեր վերև զգալով պահ մը հովանին անոր եռահարկ գմբեթին։ Ջանգվածեղ քարերով որմերու մնացորդներ՝ գետինեն հազիվ քանի մը տող բարձրությամբ, սյուներու լայնանիստ խարիսխներ, տարբեր մեծությամբ խոյակներ այս ու այն կողմ, կամարներու կամ քիվերու քանդակազարդ քարեր՝ ցավագինորեն տապալած, երբեմն հողին մեջ կիսաթաղ, ու մեծ լռություն մը՝ հինեն, խորունկեն եկող ձայներով լեցուն— ա՜յս էր Զվարթնոցը։ Ի՜նչ կորովամտություն, անխափանելի սերե մը ներշնչված, ի՜նչ հստակություն՝ Թորամանյան վարպետինը՝ որ կրցեր էր ցան ու ցրիվ սա քանի մը բեկորներեն վերակազմել հրաշքը մեր կառուցողական հանճարին...

Թե ո՛րքան տևեց թափառումը հետքերուն վրա հնության—չեմ գիտեր անշուշտ։ Բայց երբ վերադարձանք արծվաքանդակ մեծ խոյակին, անոր առջև գտանք նորեն Դեմիրճյանը, անշարժ ու սևեռուն, անցյալին հայեցողությանը մեջ կարծեք արձանացած։ Ա՜հ, մեր սքանչելի պապերը... Մեծագործության ի՜նչ կոթողներ են կտակեր մեզի, գեղեցկության ի՜նչ տեսիլքներ՝ որ մեր հպարտությունն են այսօր, մեր պարտավորություններուն հուշարարնե՛ր նաև։

Թող չփորձվի ինքնախաբեությամբ մխիթարել թշվառությունը մեր անժառանգ պանդխտության։ Ազգերը իրենց բնավայրի՛ն մեջ մանավանդ, իրենց նախնիքներուն ոգեշնչող ավանդներեն կընդունին ամենեն բեղուն սարսուռները, ինչպես և կորովը նո՛ր ստեղծումներու։ Ինչ որ հայտնագործեց Թորամանյանը՝ եղավ ներշնչարանը Թամանյանի վերանորոգ ստեղծումին։ Ու մեր Հայրենիքին մեջ այսօր շա՞տ են անոնք որ կգալեն մեծ այդ վարպետներուն ուղիեն։

Իսահակյան բանաստեղծն ալ իր խումբին հետ եկեր միացեր էր մեզի. ու երբ կպատրաստվեինք շարժիլ, այցելելու համար ավերակներեն քիչ հեռու կառուցված թանգարան տնակը, ծոեցավ ան և համբուրեց կուրծը արծիվին—որպես հրաժե՞շտ թե երախտագիտություն։ Որքան ալ սիրտս ուզեր, ես պիտի չկարենայի ըլլալ առաջինը այդ շարժումը կատարող, ուշադրություն գրավելու վախե մը նետ մղված։ Հիմա որ Վարպետը քակեր էր կաշկանդումը վարանումին, շրթունքներս համարձակորեն կհամենային փշրված գլուխին վրա արծիվին, իբրև ձեռքին՝ անանուն այն վարպետին, որ չկար, բայց կապրեր։

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ե. ՇԱՀԱԶԻԶ

ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԼՍՏԱՄՅԱՆԵՑԻ

(Իմ հուշերից)

Ես դեռ 9—10 տարեկան տղա էի, երբ մի անգամ մորս հետ գնացինք Երևանից Աշտարակ տատոնցս տունը մի առ ժամանակ մնալու և ժամանակ անցկացնելու համար։ Աշտարակն իրրև մեր հորենական գյուղը, մենք շատ էինք սիրում։ Երևանում էլ մենք ունեինք մեր սեփական տունը, այդին և պտղատու պարտեզը, բայց այդպես էր արդեն մեր սովորությունը հորս կենդանության օրերից։

Մենք սիրում էինք Աշտարակը, նրա օդն ու ջուրը, հացն ու կերակրեղենը, կյանքն ու սովորությունները, այգեկութն ու դրա հետ կապված ուրախությունները։ Սիրում էինք տատոնցս տունը իր կրկնակի «յազմաչյով», այսինքն իրար վերև շինված երկու պատշգամբով, վերին սենյակն իր պարսից ձևի լուսամուտներով, մեր թյուրքի իգին (այգին), այծերը, միջնահանդը։ Սովորաբար, մենք գնում էինք Աշտարակ օգոստոսի վերջերին, բայց այդ տարին շտապել էինք, որպեսզի Համբարձման տոնին արդեն այնտեղ լինենք և մերայնոց հետ Ծաղկեվանք ուխտի գնալինք։ Մայրս ուխտ էր արել ծաղկաքաղին Ծաղկեվանք գնալ Սրբուհի Վառվառե կուսի գերեզմանին, Մողնուխտներին էլ՝ Մողնի գյուղի Սուրբ Գեորգ վանքը՝ Սուրբ Գեորգի նշխարներին։

Ծաղկեվանքը վանք չէր, այլ մի այր, որի մեջ գտնվում էր Սրբուհու գերեզմանը, իսկ այրը գտնվում էր մեր աշխարհագրության մեջ հայտնի Արայի սարի մեջ, Արայի, որ Արագածի մի ոստն է։ Այդ Արայի սարը կոչվում է ըստ Ալիշանի՝ «Փորահերձ։ Եվ, իրոք, սարը հեռվից նման է մի փորը ճղված, թեվերը աջ ու ձախ տարածված հսկա մարդու։

Մենք հասանք Աշտարակ և գտանք մերոնց արդեն պատրաստություն տեսած։ Մյուս օրը, որ բուն ծաղկաքաղի օրն էր, մենք կանուխ վերկացանք և գնացինք Հրաշալի եղանակ էր, արև-արքայություն, սլսլալով փչում էր ախորժելի հովը։ Ճանապարհն էլ Աշտարակից հեռու չէր, գնում էինք ուրախ ուրախ, մատաղացու ոչխարն առաջներս ձգած և շրջապատված բազմաթիվ ուրիշ ուխտավորներով։ Փորահերձն առաջներս էր։ Տեղ հասանք, ներս մտանք աջ ու ձախ փռված թևերի միջով, սարի ստորոտը մի մեծ, հարթ տարածություն էր, որի կեսը բռնված էր թփուտով, հնում եղած անտառի մնացորդով։ Ամեն տեղ լիքն էր ուխտավորների վրաններով։ Մինչև որ մերոնք ուտել-խմելու պատրաստություն կտեսնեին, մենք գնացինք մեր ուխտը կատարելու։

Դեպի այրը տանող ճանապարհը մի նեղլիկ, քարքարուտ, դժվարակոխ շավիղ էր, որով ես ու մայրս չպետք է կարողանայինք բարձրանալ, եթե մեզ հետ եղած տղամարդկանց օգնությունը չլիներ։ Այրի մուտքի առաջ կանգնած էր հրացանն ուսին վանքի «թվանքչիներից մեկը, որ կարգ էր պահպանում, որ ուխտավորները հերթով մտնեն այրը, ու խառնաշփոթություն չլիներ։ Մենք էլ մեր հերթին մտանք այրը։ Ջորս կողմը մաքուր սրբված էր։ Գերեզմանի գլխավերևը նստած էր մի քաղցր երեսահարքով երիտասարդ վարդապետ։ Դա Լազարյան ճեմարանը ավարտած և Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետի ընթացքը վերջաց-

բած հայտնի Վահան Բաստամյանցն էր, որ ձեռնադրվել էր արեղա և Ս. Էջմիածնի միաբանության շարքը անցել։

Մենք կատարեցինք մեր ուխտը, չոքեցինք, համբուրեցինք գերեզմանը, գանձանակ գցեցինք։ Մայրս մոտեցավ վարդապետին, աջն առավ և հրավիրեց մեր վրանը՝ մեր մատաղն օրհնելու և հացկերույթին մասնակցելու։ Վերադարձանք։ Իշնելն ավելի հեշտ էր, բայց և այնպես տղամարդկանց օգնությունը տեղ տեղ անհրաժեշտորեն պետք էր լինում։ Հացի սփոռցն արդեն պատրաստ էր— կանաչին, պանիրը, խաշած ձվերը, խաշած ու տապակած ճուտերը շարված էին լավաշի հետ միասին։ Բոլորվեցինք վրանում սփռոցի շուրջը։ Տղամարդիկ բաց արին Աշտարակի կտրուկ գինու տճկորի բերանը, և դեռ «դիլակը տալու կամ «ընդունելի լինելու շնորհավորանքի մի մի բաժակ չխմած, երևեցան լինելիք փոթորկի նշանները։

Մի սառը քամի փչեց, երկինքն ամպեց, արևը մայր մտաւ, խավարեց և սկսեց զարհուրելի որոտ, կայծակների շանթոց։ Անձրևը մաղեց, հետո անձրևը փոխվեց ձյունի, ձյունը՝ կարկուտի։ Տարերքը խառնվեցին իրար և շուտով մի այնպիսի կացություն ստեղծվեց, որ մենք տեղերիցս կանգնեցինք և շվարած մնացինք, թե ի՞նչ պետք էր անել։ Փախափախը ընկավ ուխտավորների մեջ։ Մերը՝ մանուկը, ինչպես ասում են, ուրացավ։ Թփուտում կապված ձիերը կտրեցին իրենց կապերը և վազում էին դես ու դեն, ամեն բան ոտքի տակ տալով։

Հենց այդ ժամանակ, երբ ես մորս կպած դողում էի ցրտից և լալիս, հայտնվեց վարդապետը ձի նստած, իր ձիավոր թվանքչու հետ։

— Տվե՛ք, տվե՛ք ինձ երեխային, թե չէ կարող է բքախեղդ լինել,— ձայն տվեց նա։

Եվ մերոնք ինձ փաթաթեցին մի հաստ վերմակի մեջ, դրին նրա ձիու գավակը։ Նա մտրակեց ձին, քշեց, գնաց։ Թվանքչին նրա առաջն ընկած, մտրակով ճանապարհ էր բաց անում նրա համար փախչող ուխտավորների բազմության մեջ։

Դեռ մինչև Աշտարակ մի կես ճանապարհը չկտրած, մենք ընկանք պարզ արևոտ երկնքի տակ, գետինն էլ չէր թրջված։ Ասել է թե՝ փոթորիկն եղել էր միայն Ծաղկեվանքում և մոտակա լեռներում։

Հասանք Աշտարակ մեր տունը։ Վարդապետն ինձ հանձնեց տատիս, ասելով՝ «Նանի ջա՛ն, Նանի՛», երբ Սմբատին նամակ գրելու կլինես, ինձանից նրան բարևներ կգրես։ Ասաց ու ձիու գլուխը շուռ տվեց դեպի Էջմիածին։

Սրա վերա անցան տարիներ։ Ինձ Մոսկվա Լուզարյան ճեմարանն ուսման ուղարկեցին։ Ես այդտեղ սովորում էի և արդեն հասել էի երրորդ դասարանը։ Մեզ ամեն կիրակի օր եկեղեցի էին տանում, Սուրբ Խաչ եկեղեցին, որ գտնվում էր նույն «Հայոց փողոցում, ճեմարանի դեմ-դիմաց։ Ընդարձակ բակում կառուցված մի սիրուն, միջին մեծությամբ եկեղեցի էր։ Այդտեղ եկեղեցում աշակերտները բարձրանում էին վերնատունը, իսկ ես ճեմարանի վարչությունից պատվեր ունենալով, գնում էի դասը, որտեղ որոշ ծառայություններ էի կատարում— քշոց էի բռնում, գանձանակ շրջեցնում, նշխար բաժանում։

Մի կիրակի օր էլ ինձ կանուխ ուղարկեցին եկեղեցի, որտեղ իմացա, որ Սուրբ Էջմիածնից մի գիտուն վարդապետ է եկել և այդ առթիվ հանդիսավոր պատարագ պիտի լինի, քարոզ պիտի խոսի և Վեհափառ Կաթողիկոսի կողմից մի կարևոր բարի լուր հաղորդի ժողովրդին։

Դեռ ժամը չէր սկսվել, սպասում էին ավագ քահանային և վարդապետին, որ իջևանել էր նրա մոտ։ Առավոտը ժամը 11-ն էր, որ նրանք եկան և սկսվեց ժամը։ Վարդապետը մտավ խորան զգեստավորվելու։ Ես էլ ժամաշապիկը հագիս բարձրացա բեմը քշոց բռնելու։ Ես նկատեցի, որ նա ժամակարգությանն շատ վարժ էր և քարոզն էլ շատ պարզ և ոգևորված խոսեց։ Մի ածնի տեղից և կաթողիկոսի կողմից հոգևոր ողջույնը տալուց հետո, հաղորդեց, թե Վեհափառ Հայրապետը պատվեր ունի ավետելու, որ հայ ժողովրդի դարավոր ակնկալիքը կատարված է։

— Հոգևոր ճեմարանը պատրաստ է, դասատուները հրավիրված են և ամեն բանի պատրաստությունը վերջացել է։ Մեր ամենքիս Հայր Վեհափառ Հայրապետը սպասում է իր արժանավոր զավակներին գալու և վայելելու ուսման քաղցր պտուղները։ Եվ ես՝ տրուպս, Սուրբ Էջմիածնի հետին ծառաս, ահա եկել եմ հավաքելու այդ արժանավորներին։ Հայ ժողովո՛ւրդ, դուք գիտեք, որ մեզանում որտեղ եկեղեցին է, այնտեղ է դպրոցն է, որտեղ դպրոցն է՝ այնտեղ էլ լեզուն է, ազգը, ազգային գրականությունը, ազգային մշակույթը, որոնցից կախյալ է մեր ազգի գոյությունը, բախտը։

Ահա այսպես էր նրա քարոզը, նրա քարոզի բովանդակությունը կամ դրանց նմանը։ Վարդապետի քարոզն ամենալավ տպավորությունը թողեց ժողովրդի վերա։ Մինչև այդ ժողովուրդն սովորած, ընտելացած էր Սուրբ Էջմիածնից եկած հոգևորականների քարոզների մեջ լսել դրամ դանձելու խնդիրներ։ Այժմ ահա նույն Սուրբ Էջմիածինը հրավիրում էր ժողովրդի արժանավոր զավակներին՝ գնալ Սուրբ Էջմիածին, վայելելու ուսման քաղցր պտուղները։ Այդ մի վաղուց ի վեր լսված, չտեսնված երևույթ էր, որ է՛լ ավելի քաղց-

բանում էր գիտուն վարդապետի սիրուն քարոզով։ Դրա հետևանքով էր, որ ռուս հին մայրաքաղաքի հայ գաղութը պատվասիրեց վարդապետին մի շքեղ խրախճանքով Թիֆլիսի Մարիամյան-Հովնանյան օրիորդաց դպրոցի հիմնադիր Անանյանի տան շքեղ դահլիճում, որով նա, ի դեմս Մայր Աթոռի մի վարդապետի, կամեցավ պատված և հարգած լինել Սուրբ Էջմիածինը, նորաբաց Հոդևոր ճեմարանը և դրա հիմնադիր Ամենայն Հայոց Պատրիարք Կաթողիկոս Գեորգ Դ. Մեծագործին։ Իսկ Լազարյան ճեմարանի հայ աշակերտների բերանում ավանդ մնաց նրա քարոզի մի քանի խոսքերը. «Որտեղ հայ ազգն է, այնտեղ էլ՝ եկեղեցին, որտեղ եկեղեցին՝ այնտեղ էլ դպրոցը, որտեղ դպրոցն՝ այնտեղ էլ լեզուն, որտեղ լեզուն՝ այնտեղ էլ գրականությունն ու հայ մշակույթը»։

Բայց մենք չասացինք, թե ո՞վ էր այդ վարդապետը։ Ես ճանաչել էի նրան, իսկ նա ինձ չէր ճանաչել։ Պետք է կարծել, որ Մաղկեվանքի փոթորիկն իմ մանուկ հասակում իմ երևակայության ավելի էր ազդել, քան նրա, կամ գուցե ես ավելի էի փոխվել, քան թե նա։ Ես սպասում էի հարմար բոպեի և տեղի, որ հիշեցնեի։ Այդ տեղի ու բոպեի հարմարությունը գտա ես, երբ նա պատարագից հետո մտավ խորանը զգեստները հանելու, և ես օգնում էի նրան։

— Հայր սո՛ւրբ,— ասացի,— ես ձեզ ճանաչում եմ։ Ես այն տղան եմ, որին դուք Մաղկեվանքի փոթորկից ազատեցիք։

— Ուրեմն, դու Բելլու խանումի երվանդ որդի՞ն ես։ Հիշողությունդ ավելի թարմ է, ես չճանաչեցի։ Մեծացել ես, շատ փոխվել,— ասաց նա և գրկեց ու համբուրեց ինձ։

Վարդապետը՝ Վահան Բաստամյանցն էր, որը Սուրբ Էջմիածնի միաբանության մի այնպիսի հայտնի անդամն էր դարձել, որ նրան էր Վեհափառ Կաթողիկոսը արժանի համարել հիշյալ բարի հրավերն հաղորդելու Մոսկվայի հայ հավատացյալներին։

Այստեղ անտեղի չեմ համարում հաղորդել Վահան Բաստամյանցի անվան հետ կապված և մի ուրիշ զրույց, որ պահվել էր Ճեմարանում։ Պատմում էին, որ Վահան Բաստամյանցի աշակերտության օրերում Ճեմարանում ուսանելիս է եղել և գիտնական Մկրտիչ Էմինի միակ որդին։ Մի օր, պարտիզում այդ երկուսը միմյանց հետ խաղալու ժամանակ, Բաստամյանցի նետած քարը գալիս կպչում է Մկրտիչ Էմինի որդու քունքին և շարժում ուղեղը, որի հետևանքն այն է լինում, որ նա հիվանդանում և վախճանվում է խելագարների հիվանդանոցում։ Թե ո՞րքան, որչափո՞վ ճիշտ է այդ զրույցը, ես չեմ կարող ասել, բայց որ Էմինի միակ որդին վախճանվել է խելագարների հիվանդանոցում, այդ ես ստուգապես գիտեմ։

Ծանոթագրություն. *Սուրբ Էջմիածնի միաբան Վահան ծայրագույն վարդապետ Բաստամյանցի անունը հայտնի է և մեր գրականության մեջ։ Նա Սուրբ Գայանեի վանքի վանահայրն է եղել և այդտեղ նորաշեն սենյակներում տպարան է բաց արել և 1874—1876 թվերին հրատարակել «Դպրոց» անունով մանկավարժական ամսագիրը։ Սակայն նրա անունն է՛լ ավելի հռչակվել է։ Երբ 1879 թվին «Փորձում» բույս է տեսել նրա մի շատ ընդարձակ ուսումնասիրությունը մեր հին գրականության մեջ հայտնի Մխիթար Գոշի «Դատաստանագիրքի» մասին։ 1880 թվին նա տպագրել է նույն «Մխիթարի Դատաստանագիրքը» Սուրբ Կաթողիկե Էջմիածնի տպարանում, որին կցել է և իր ընդարձակ ուսումնասիրությունը։*

ԱԿԱԴ. Հ. ԱՃԱՌՅԱՆ

ՏԻԿԻՆ ՍՐԲՈՒՀԻ ՏՅՈՒՍԱԲ

(1841—1901)

(Մահվան 50-ամյակի առթիվ)



Հայ իգական սեռի առաջին անվանի գրագիտուհին եղավ տիկին Սրբուհի Տյուսաբ (ծնյալ Վահանյան)։ Նա ծնվեց Պոլսում 1841 թվականին։ Զարգացած ընտանիքի զավակ էր և ապրեց մի այնպիսի «բարձրը» շրջանում, ուր ամեն ջանք գործ էր դրվում «եվրոպականանալու» և ուր մայրենի հայ լեզուն արհամարհված ու մոռացված էր։ Մեծանալով մի այդպիսի շրջանում, Սրբուհին մանուկ հասակից սովորեց ֆրանսերեն, իտալերեն և հունարեն լեզուները, բայց հայերենի վերաբերմամբ նա ո՛չ միայն անտարբեր, այլև հեգնող ու արհամարհող էր։ Երբ նրա մոտ հայերեն էին խոսում, սկսում էր ծաղրել այդ լեզվի «կոպտությունը»։

Սրբուհու մայրը՝ տիկին Նազլու Վահանյան մի բարեկիրթ և ուսումնասեր հայ կին էր։ Նա առանձնապես հոգ էր տանում իր աղջկա կրթության և նրա երիտասարդ տարիների ղեկավարն էր։ Տիկին Նազլու հիմնել էր 1859 թվին Օրթագյուղի Հռիփսիմյան աղջկանց վարժարանը, որի խնամակալուհին էր ինքը։ Սրբուհին էլ մոր առաջնորդությամբ մասնակցում էր նույն դպրոցի խնամակալության և հետզհետե ավելի էր մոտենում հայկական շրջաններին։ Վերջապես նա ծանոթանում է Մկրտիչ Պեշիկթաշլյանի հետ։

Պեշիկթաշլյանը, ինչպես ծանոթ է, բանաստեղծ և ուսուցիչ էր միանգամայն։ Պոլսի զարգացած ընտանիքներում, կրթված շրջաններում սիրում էին նրան, ուր որ մտնում էր, սքանչելի տպավորություն էր թողնում։ Սրբուհին ծանոթանալով այդ երիտասարդ բանաստեղծի հետ, գրավվում է նրանով։ Նրա խոսքը, նրա երգը, նրա գաղափարները ամբողջապես կերպարանափոխ են անում մատաղ օրիորդին։ Եվ նա, որ օտարասեր շրջաններում արդեն կորչելու վտանգին էր մոտեցել, այժմ ոչ միայն ըմբռնում է մայրենի լեզվի նշանակությունը, այլև սիրում է այն։ Նա աշակերտում է Պեշիկթաշլյանին, հայերեն է սովորում և այնքան հիմնավոր կերպով, որ մեծ հմտություն է ցույց տալիս նույնիսկ գրաբարի մեջ։ Բանաստեղծի հոգին արձագանք է գտնում Տյուսաբի սրտի մեջ, հաղորդում է նրան իր քնքուշ թախիծը։ Հայերենը այնուհետև դառնում է Սրբուհու սրտի թարգմանը։

Հետզհետե ավելի մոտենալով հայկական կյանքին, Սրբուհին նվիրվում է հայ իգական սեռի կրթական գործին։ Երկար ժամանակ ատենադպրի պաշտոն է վարում իր մոր ջանքերով հիմնված դպրոցում։ Հետո, երբ նույն դպրոցն ավարտած մի քանի կանայք հիմնում են «Դպրոցասեր Հայուհյաց ընկերություն», դառնում է այդ ընկերության եռանդուն ղեկավարներից մեկը։

1871 թվին Սրբուհին ամուսնանում է երաժշտագետ Տյուսաբի հետ։

Սրբուհի Տյուսաբի առաջին գրական գործն եղավ իր սիրելի ուսուցչի՝ Պեշիկթաշլյանի մահվան առթիվ գրած ոտանավորը։ Իսկ առաջին ամբողջական աշխատությունը՝ «Աշխարհաբար հայ լեզուն» վերնագրով մի փոքր տետրակ էր, որը լույս ընծայեց 1880 թվին։ Այս տետրակի մեջ Տյուսաբը ցույց է տալիս իր առաջադիմասեր ոգին. նա պաշտպան է կանգնում աշխարհաբարի դատին. բայց պահանջում է, որ կազմվի հայագետ անձերից մի ակումբ, որ իրավունք և պաշտոն ունենա

կանոնավորելու աշխարհաբարը։ Տետրակը հրատարակված է Դպրոցասեր Հայուհյաց ընկերության օգտին և նվիրված է նույն ընկերության աղջկանց, այսպիսի ձոնով. «Հայ կուսանք, չքնաղ ծաղկունք հայ դարնան. ձեզ կը նուիրեմ այս դուզնաքեալ զիմ էջերս։— Հայ կուսանք, դո՛ւք յոյսն էք, դո՛ւք ապագան էք, ձեզ աշխատութիւնը, ձե՛զ պատիւը։

Տիկին Տյուսարի գրական անունը հորինող գործերը նրա վեպերն են, թվով երեք, որ իրար հետևից լույս տեսան պոլսում 1883 թվականից սկսած՝ «Մայտա», «Սիրանոյշ», «Ամոսիա»։

«Մայտա» (տպ. Պոլիս, 1883 թ., էջ 249)։ Սա տիկին Տյուսարի առաջին վեպն է, հյուսված 75 նամակներից, որոնց մեծ մասը երկու տիկինների՝ Սիրայի և Մայտայի փոխադարձ թղթակցությունն է։ Այս նամակների մեջ պատմում է մի դժբախտ կնոջ՝ Մայտայի կյանքը։ Մայտա, ծնողների մահից հետո, սնանկացած ամուսնուն էլ կորցնելով, մնում է այրի, իր միակ աղջկա՝ Հուլիանեի հետ։ Շուտով բախտը ժպտում է նրան վերստին։ Իր աղջիկը սիրո ամուսնությամբ կապվում է Լևոնի հետ. իսկ սրա հեռավոր աղգականը՝ Տիգրան, սիրում է Մայտային։ Տիգրանի աղգականներից է տիկին Հերիգա, սքանչելի գեղեցկությամբ մի կին, որ, գերի դարձրած իր ամուսնուն, միայն իր կրքերին է ծառայում։ Ապօրինի սիրով նա աշխատում է հրապուրել նաև Տիգրանին, և երբ չի հաջողում, ուխտում է վրեժ լուծել Մայտայից։ Գաղտնի դավերով նա հաջողում է Մայտային ցույց տալ իբրև Տիգրանի սիրույն դավաճան և Տիգրանը՝ որ արդեն Եվրոպա էր գնացել, մերժելով Մայտային, ամուսանանում է մի ուրիշի հետ։ Բայց ամուսնությունը չի կարողանում ջնջել Մայտայի սերն իր սրտից. իսկ Մայտան, դավաճան սիրահարի հիշատակներով միայն ապրում է հուսահատ, մերժելով իսպառ ամուսնության ամեն նոր առաջարկություն։ Տիկին Հերիգան կարողանում է գժտություն դցել նաև Լևոնի և Հուլիանեի մեջտեղ, բայց շուտով դավը երևան է ելնում, Հերիգան բռնվում է անհավատարմության մեջ և բանտարկվում։ Տիգրանի ամուսինը վախճանվում է և նախկին սիրահարները միանում են վերջապես, ամուսնության կապով։ Հերիգան փախչում է բանտից և իր վերջին վրեժ, սպանության փորձ է կատարում Մայտայի վրա։ Տիգրանը վրա է հասնում և սուրը կորզելով, Հերիգայի սիրտն է մխում։ Այս արկածը և Տիգրանի կարճատև բանտարկությունը սարսափ են ազդում Մայտայի վրա, որ հիվանդանում է և մեռնում։

«Սիրանոյշ» (տպ. Պոլիս, 1885 թ., էջ 408)։ Այս վեպով Տյուսարը նկարագրում է սիրով և անսեր ամուսնությանց հետևանքը, առաջնի տված երջանիկ կյանքի դեմ՝ երկրորդի դառն ու տաժանելի կացությունը։ Զարուհի և Հրանտ՝ երկու աղքատիկ անձեր, սիրում են միմյանց և իրենց սերը պսակվում է ամուսնությամբ։ Ամուսնական հարկի տակ տիրում է անդորրություն և սեր։ Հրանտին օգնում է Զարուհին՝ երաժշտության տնային դասերով, և ընտանիքի երջանկությունը անվրդով է։ Զարուհու ընկերուհին՝ Սիրանուշ՝ հարուստ Հայնուտի զարգացած ու ազատամիտ աղջիկը, սիրում է Զարուհու եղբոր՝ Երվանդին, որ նույնպես մի աղքատ երիտասարդ է, բայց հանճարեղ արվեստագետ, մաքուր բարոյականի ու դաստիարակության տեր։ Սիրանուշի մայրը, որ նույնպես զարգացած կնոջ տիպարն է ներկայացնում, տեղյակ է նրանց սիրուն և քաջալերում է։ Երվանդը գնում է Հռոմ, նկարչություն սովորելու, և մեծ հաջողություն է ունենում։ Նույն միջոցին Դարեհյանը պատահելով Սիրանուշին, սիրահարվում է նրա վրա և նրա ձեռքն է խնդրում հորից։ Սիրանուշի հայրը, առանց աղջկա, առանց գոնե իր կնոջ հավանությունն առնելու, անչափ ուրախությամբ ընդունում է առաջարկությունը, որովհետև Դարեհյանը ո՛չ միայն տերության նշանավոր պաշտոնյա է, այլև մեծահարուստ կարողության տեր։ Ի՜նչ փույթ թե Դարեհյանը անրարոյական կյանքի տիպար է։ Նրա կարծիքով, ոսկին այն միակ առարկան է, որ կարող է տալ մարդուն մեծագույն երջանկությունը։ Սիրանուշը և նրա մայրը երբ լսում են Հայնուտի որոշումը, հակառակվում են։ Հոր գազանությունը անկարագրելի է, երբ նա լսում է թե Սիրանուշը քաղցած Երվանդին է սիրում։ Նրա համար անըմբռնելի է թե ի՛նչպես մի աղջիկ կարող է հոր կամքին հակառակել։ Նա պահանջում է անպայման հնազանդություն։ Ընտանեկան փոթորիկները ծանր հիվանդացնում են Սիրանուշի մորը և նրա մահվան անկողնու առաջ աղջիկը ուխտ է անում զոհել իր սերը, եթե Աստված կյանք տա իր սիրեցյալ մորը։ Հիվանդը լավանում է և խեղճ Սիրանուշը պսակվում է Դարեհյանի հետ, մարմինը տալով նրան, իսկ սիրտն ու սերը Երվանդի համար պահելով։ Մանր է Սիրանուշի վիճակը։ Կարճատև հանդարտ կյանքից հետո, Դարեհյանը ձանձրանում է կնոջից, որովհետև ապականակիր անձի մի ընտանեկան ճաշակներն երկար ժամանակ չէին կրնար տևել։ Նա դրսումն է որոնում հաճույքներ. բացակայությունները հետզհետե երկարում են և նա նորից անձնատուր է լինում անառակ կյանքի։ Սիրանուշը ապրեցավ մաքուր, հուսահատ, թշվառ կյանքով։ «Սիրանոյշ կը նայէր իւր խաւարապատ սրտին մէջ և հո՛ն կը տեսնէր սիրոյ գերեզմանը. շուրջը կը դիտէր՝ և կը հանդիպէր ամուսնական լքման

Կեանքն ահագին դատարկութիւն մ'էր զոյ, սրրանուէր յիշատակ մի առաւել ևս կ'ընդլայնէր։ Իր վիշտն հոգւոյն խորը կը թաղէր ու անցեալ երջանկութեան աւերները վրայէ վրայ դիզելով՝ իւր հոգին այդ ցաւոց կոյտին կը յենուր։ Սուգն էր իւր ընկերը, ինչպես և ընթերցումն իւր միակ մխիթարութիւնը։ Կը կարդար այն պարբերութիւնները, որոնց վրայ սքանչացած էր երբեմն Երուանդին հետ։ Կը բանար այն էջերն ուր անոր նշանակած մասնաւոր տեղերը կը տեսնէր տակաւին, կը յիշէր, կը յուզուէր, ու կը սովորէր արիանալ կենաց հարուածոց դէմ մարդկութեան երևելի մարտիրոսութեանց առջև։ Երբեմն տանը ծովեզերքին վրայ նստելով մանկամարդ կինը կը նայէր ջուրերուն խորութեան ու կը մտածէր թէ նոյնչափ անյատակ էին և իւր վիշտերը։ Կը նայէր հեզասահ ալեաց որք լուսոյ փրփուրներ թաւալելով կ'անցնէին կ'երթային. և կը յիշէր թէ նոյնպէս անցած էին իւր երջանկութեան պայծառ օրերը։ Երբեմն միայն կառքով լերանց շրջագայութեան կ'երթար, ու ծառի մի ներքև կ'առանձնանար. շուրջը կը նայէր՝ ամայութիւն. հոգւոյն մէջ կը նայէր՝ ամայութիւն. «Ոչինչ, ոչինչ կ'ըսէր, իմ վշտերուս արձագանք տալու համար։... Կու լար անմխիթար տարաբաղդ կինը, և ոչինչ արձագանք կու տար արտասուացը։ Իւր աղէտիցն էին վկայք միայն այն ծանրագին կարասիներն որք գինքը կը շրջապատէին. ցուրտ ոսկւոյն վրայէն կը սահէր սրտին ջերմ արտասուքը։

Երվանդը դարձաւ Հռոմից, բայց չկարողացաւ մուտք գործել Դարեհյանի տան մեջ։ Ու ծաղիկ հասակի մեջ մեռաւ Սիրանուշը, իր մահվան անկողնի վրա միայն սեղմելով նրան իր կրծքին։

«Ակաֆսիա կամ Վարժուհին» (տպ. Պոլիս, 1887 թ.)։ Սա տիկին Տյուսաբի երրորդ և վերջին վեպն է։ Արաքսիան՝ Վարսամյան ընտանիքի միակ զավակն է։ Հայրը, բորսային խաղերի զոհ գնալով, կորցնում է իր ամբողջ հարստությունը և կաթվածահար լինում։ Նրա կինը, թեև աղքատ ծնողների զավակ, բայց իր մեծամիտ ու ամբարտավան բնավորությամբ չի կարողանում տանել աղքատության դառնությունը և իր նախատինքներով չարչարում է միշտ իր կաթվածահար ամուսնուն։ Արաքսիան ընտիր դաստիարակությամբ, զարգացած աղջիկ է։ Նա որոշում է սեփական աշխատանքով պահել իր ընտանիքը։ Արաքսիան լավ հաշվապահ է, գիտության զանազան ճյուղերին և մաթեմատիկային հմուտ, բայց գործունեության ասպարեզը փակ է նրա առաջ, որովհետև իգական սեռին է պատկանում։ Միակ ասպարեզը, որ մնում է նրա համար, տնային վարժուհու պաշտոնն է։ Այս պաշտոնը սիրով հանձն է առնում Արաքսիան, բայց մեծամիտ մայրը համարելով այդ մի շատ ստորին գործ, մերժում է։ Միայն իր հանկարծական հիվանդությունը և ընտանիքի դառն վիճակը ստիպում է վերջապես ակամա հավանիլ և Արաքսիան տիկին Արգարյանի երկու աղջիկներին վարժուհի է դառնում։

Տիկին Արգարյանը ներկայանում է մեզ իբր մի հրեշ կին, փառասեր, մեծամիտ և հեշտամոլ։ Իր զվարճության և ուրիշների մոտ փրքվելու համար, նա չի խնայում իր բարի ամուսնու մեծ հարստությունը։ Վարժուհուն նա ընդունում է իբր հասարակ աղախին, որին արհամարհում է միշտ։ Արաքսիան իր ծնողների սիրույն համար ստիպված է տանել ամեն նախատինք։ Այդ դժվար կացության մեջ Արաքսիայի առաջ է գալիս տիկին Արգարյանի խորթ որդին՝ Ներսեսը, որ ազնիվ երիտասարդի ամեն արժանավորություններն ունի, համակրում է նրան և խնդրում վարժուհու ձեռքը։

Արաքսիայի ազգականներից է փաստաբան Սիսակը, որ գեղեցիկ, բայց ապականված մի երիտասարդ է։ Արաքսիայի մտերիմ ընկերուհին՝ Վարդանուշ սիրում է նրան։ Արաքսիան զուր է աշխատում հեռացնել իր ընկերուհուն նրանից, բայց երբ տեսնում է, որ այդ անկարելի է, այն ժամանակ աշխատում է մի կողմից դարձի բերել երիտասարդին և մյուս կողմից հարթել նրանց ամուսնության խոչընդոտները։

Տիկին Արգարյանը բուռն ատելությամբ լցվում է, երբ լսում է թե Արաքսիան աշխատում է Վարդանուշի համար և խլում է իր ձեռքից Սիսակին, որի վրա այլ ոմեր նաև ինքը։ Այդ ատելությունը հասնում է իր գագաթնակետին, երբ գաղտնի լրտեսությամբ իմանում է թե Ներսեսը սիրում է Արաքսիային և թե այդ հասարակ վարժուհին ազնվական տիկնոջ հարսը պիտի դառնա։ Այդ գազանային ատելությամբ նա դավեր է սարքում, սարսափելի զրպարտություններ է բարդում Արաքսիայի վրա, վռնտում է նրան տնից և հաջողվում է երկու սիրահար զույգերը հեռացնել միմյանցից։ Բայց շուտով խարդախությունը երևան է գալիս, Վարդանուշը ամուսնանում է Սիսակի հետ, և Արաքսիան՝ Ներսեսի հետ, իսկ տիկին Արգարյանը խայտառակվում է։

Տիկին Տյուսաբի վեպերի մեջ արծարծված խնդիրը կանանց իրավունքների և ազատագրության հարցն է։ Նա բողոքում է ընկերական անիրավությունների դեմ, բաց է անում կնոջ սիրտը, ցույց է տալիս նրա տանջանքները և այն պայմանները՝ որոնցից առաջանում են նրա տանջանքները։ Դարերից ի վեր ճնշված է կինը, նախապաշարմունքների

տակ ընկնված, հասարակական ու ընտանեկան թյուր հասկացողությունների գերի։ Տղամարդը զրկել է նրան ազատությունից, համամարդկային իրավունքներից, նույնիսկ գործելու ասպարեզից։ Տյուսաբը պահանջում է, որ կինը հասկացվի, որ նրան թույլ տրվի ազատ լինել իր զգացմունքների մեջ, թող նրան չդատեն հին նախապաշարմունքների տեսակետից, որոնց պատճառով կնոջ ասպարեզը միայն և միայն տան մի սենյակն է։

«Կինն ընկերության ողորմելի զոհն է,— ասում է Տյուսաբը,— կ'ամաչէ նա սիրելու՝ այսինքն սիրտ մ'ունենալը խոստովանելու. կ'ամաչէ արդարություն բառը հնչելու՝ այսինքն իրավունք մ'ունենալը հայտարարելու. կ'ամաչէ կրոնից և օրինաց զեղծմունքը յայտնելու՝ այսինքն խիղճ և բանականություն ունենալը ապացուցանելու. վերջապէս կ'ամաչէ իր բարոյական հանգամանքն ամբողջապէս ի հանգէս հանելու, «Ե՛ս եմ. ե՛ս ևս ի հաշիւ կրնամ մտնելը ըսելու։ Ուստի գլխիկոր, ափ ի բերան կ'ապրի, կ'անցնի աշխարհէս անձայն և անշշուկ. և որչափ անշմարելի ըլլայ ընթացքն, ա՛յնչափ գովելի է։»

«Կինք ստրուկ է,— գոչում է տիկին Տյուսաբ,— նա շղթաներուն շաչիւնը լսելով ապրեցաւ մինչև ցարդ առանց երբեք զանոնք խորտակելու փորձ ընելու. նա կը ծնանի ստրուկ, կը մեռնի ստրուկ։ Մինչ ծաղկահառակ աղջիկ՝ անմեղության մ'է զոր կը պաշտեն խարելով։ Մինչ ամուսին՝ շղթաներն ստանալ ևս կը ծանրանան իրեն համար. ամենահզոր տէր մ'ունի. նա գերի է, խիստ օրինաց խարազանն իր գլխուն վերև կը շաչէ անընդհատ։ ...Բնությունը գեղեցիկ և ընտիր հանգամանքով օժտած է կինը. բայց բռնությունն և օրէնքն այս հանգամանքը խանգարեցին։ Ֆիզիքական ոյժն՝ այսինքն անասնական առաւելությունը գերի ըրաւ կինը, և օրէնքը հաստատեց անոր շղթաները։ Իրօք ի՞նչ կ'ընէ օրէնքը։ Օրէնքը կնոջ վիզը չուան մի կ'անցունէ, զոր կը սեղմէ և կը թուլցնէ ըստ հարկին։ Եվրոպայի ամէնէն քաղաքակրթեալ ազգին օրինաց առջև ի՞նչ է կինը, եթէ ոչ ամուսնոյն ստացուածքը։ Ոչ նախաձեռնության իրաւունք ունի, ոչ կամք, ոչ իշխանություն, ոչ ալ բողոքելու թոյլտություն՝ երբ սիրտը կ'արիւնի, երբ միտքը կ'ապստամբի։ Ամենայն բողոք յաչշտակուած իրաւանցը նկատմամբ՝ ոճիր մ'է. իր բաժին է լռությունն։

Տյուսաբը պահանջում է ապահարզանի ազատություն անբարոյական ամուսնությանց մեջ։ Երկու ներհակ բնություններ իրարու պատուհասն ըլլալով իրենց ամուսնական լուծին ներքև, արձակուելով՝ երկուքն ալ երջանիկ կ'ըլլան։ Ի՞նչ բարիք կրնայ արտադրուիլ գժտության, անհամաձայնության ընթացքի մէջ։ Սիրանուշը գոչում է իր ամուսնուն. «Ազատությունս բռնաբարած ես, երիտասարդությունս կը թարշամի. կ'ղղամ թէ կը մարի լիս ինչ որ մասուրական հուր է, և կ'իմանամ թէ կ'սպառի լիս ինչ որ սիրոյ հանք մ'էր։ Այդ ամէն բանի կը հանդուրժեմ, կը համակերպիմ, վասնզի ընկերությունն ինձ իրաւունք չտար ընդդէմ վարմունքիդ բողոք բառնալու, վասնզի իրաւունք չտար ինձ քեզմէ բաժնուելու. կնոջ հպատակող հանգամանաց հակառակ չգործելու համար։ Եւ սակայն ընկերությունը չ'ուզեր հաշուել հոգւոյս ներքին կոիւը, պատրանքս, լքումս, դառնությունները, և քեզմէ կրած մարտիրոսությունները... Դու ի լուր աշխարհի գայթակղական կեանք մը կը վարես, և սակայն ընկերությունը քեզ դատախազ չ'կանգնիր, ամէն ուրեք պատուով կ'ընդունուիս ու կը մեծարուիս։

Տյուսաբը բողոքում է նաև կնոջ դաստիարակության մասին, որ առանց որոշ ուղղության, առանց սկզբունքի է։ Պետք է նախ վճռել թէ ի՞նչ դիրք պիտի բռնե կինը և նրան սալիք կրթություն ըստ այնմ պատշաճեցնել։ «Ի՞նչպէս կ'ուզեն զինքը տեսնել, տանտիկի՞ն թէ ուսումնական, գերի՞ թէ ազատ. ընկերությա՞ն կին թէ քաղաքացի կամ մայր։ Ցայսմանա՞ծ է թէ ի՞նչպէս բաղձալի է որ նա ըլլայ, ո՛չ։ Կնոջ ընդունած դաստիարակությունն ո՞ր նպատակին կը համապատասխանէ, առ ի՞նչ կը ձգտի։ Անոր միտքը կը խանգարեն, սիրտը կը մոլորեն, առանց որևէ հաստատ և ուղիղ սկզբունք և դաղափարներ ուալու անձնական կառավարության համար, որով նախապաշարմունքէ կ'առաջնորդուի և կ'ըլլայ նահատակ միայն։

Ցանկալի նպատակին հասնելու համար Տյուսաբը առաջարկում է հայ իգական սեռին երկու միջոց, կռիվ և աշխատություն։ Կանայք պիտի կռվին, պիտի մաքառին ձեռք բերելու համար իրենց զլացված իրավունքները. չպիտի ընկճվին, չպիտի նահատակվին նրանք հասարակության սահմանած կարգերից։ Կնոջ ազատարար ուժը աշխատությունն է, անկախ և ազնիվ աշխատանքը, որ պիտի ապահովե նրա անկախությունը, պիտի ազատե նրան ստրկական հպատակությունից և պիտի տա նրան պատվավոր դիրք հասարակության մեջ։

Տիկին Տյուսաբը լինելով առաջին հայ գրագիտուհին, որ դարերի ընթացքում առաջին անգամ խզել էր կնոջ լռության կապը, նրա վիպերը կարդացվեցին մեծ հետաքրքրը-

թյամբ, անկախ այն հանգամանքից թե ի՞նչ գրական արժանիք ունեն նրանք։ Այս կողմից լավագույնը պիտի համարել «Միրանոյշը», որի մեջ ոճի մաքրությունը, պատկերների գեղեցկությունը և բանաստեղծական փայլը գերազանցում են մյուսներից։ Թեև խոսակցությունները շատ անգամ անբնական, բայց վեպը սահասարակ հուզիչ և հետաքրքիր է։ Այսպիսի հետաքրքիր հյուսվածք ունի նաև «Արաքսիան», բայց «Արաքսիան» ուրիշ բան չէ, եթե ոչ գրական արժանիքից զուրկ մի ֆրանսիական ռոման։ Միջին տեղ է բռնում «Մայտան»։

Տիկին Տյուսաբի վեպերի ընդհանուր թույլ կողմը այն է, որ չափազանց շատ տեղ է տրված բարոյական խորհրդածությանց, այնպես որ կարծես թե նրանք վեպ չեն, այլ բարոյախոսական քարոզներ։ Այս բանը դուցե արդարանա այն տեսակետով, որ Տյուսաբը նպատակավոր (տենդենցիոզ) որոշ է. Նրա միտքը պաշարված է շարունակ մի դապափարով՝ կանանց ազատագրության հարցը, որ ուզում է պաշտպանել ամեն դնով։ Վեպը նրա համար ձեռական բան է միայն։

Տյուսաբի լեզուն ժամանակի աշխարհաբարն է, գրաբարի տարրերով բավական խառնված, որ ներկա ճաշակի համար դուրեկան չէ։

Տյուսաբի վերջին գործն է եղել մի մենախոսություն, որ արտասանել է Ադամյանի հոբելյանի առթիվ տրված ներկայացման ժամանակ։ Այդ մենախոսությունն էր «Մրդեկորոյս ծնողք մը», որի մեջ սգավոր մայրը ներկայացնում է իր աղջկայ անփոխարինելի կորուստը և ծնողական տառապանքները։ Այս մենախոսությունը կարծես մի շարագուշակ մարգարեություն էր իրեն համար։ 1891 թվին նա կորցնում է իր ծաղկահասակ աղջկան՝ Տորինին։ Այս մեծ վիշտը խորապես հուզեց տիկին Տյուսաբին և նա ընդմիշտ ձեռք քաշելով գրականությունից, այրեց իր բոլոր գրական գործերը, կտրեց իրան աշխարհից, ու տան մեջ փակված, վարել սկսեց առանձնակյացի կյանք։

1901 թվի հունվարի 4-ին նա մեռավ և թաղվեց իր սիրական աղջկայ մոտ։



ՊՐՈՖ. Լ. ՍԵՄՅՈՆՈՎ

ՍԱՐԿԱՎԱԳԱԴԻՐ ՏՈՄԱՐԸ

ոմարի հետ կապված հարցերը միշտ հետաքրքրել են հայ մատենագիրներին։ Հին հայկական ձեռագրերում մեծ տեղ են գրավում տոմարական աշխատությունները։ Հին և միջին դարերում Հայաստանում տոմարագիտությունը զարգացել է լայն ծավալով։ Հայ իրականությունը գիտե մի շարք հմուտ տոմարագետներ՝ Աթանաս Տարոնեցի (VI դ.), Անանիա Շիրակացի (VII դ.), Հովհաննես Սարկավագ (XI—XII դ.), Հովհաննես Կոզեռն (XI դ.), Հակոբ Ղրիմեցի (XV դ.), Ազարիա Ջուղայեցի (XVI դ.), Սիմեոն Կաթողիկոս Երևանցի (XVIII դ.) և ուրիշները։ Բացի թվարկված այդ տոմարագետներից, եղել են հարյուրավոր հեղինակներ, որոնք միջանկյալ ձևով նույնպես զբաղվել են տոմարական հարցերով։ Եվ նրանց աշխատանքն իզուր չի կորչել, քանի որ մինչև օրս էլ հայ գյուղացին, առանց դժվարության, կարողանում է հաշվել ու գտնել լուսնի ամսաթիվը, տոները, հաշվել լուսնի ծագելու և մայրամուտի ժամանակը և այլն։ Այդ ապացուցում է, որ հայ տոմարագետները կտրված չեն եղել ժողովրդից և իրենց գիտցածը մասսայականացրել են ու բոլորին մատչելի դարձրել։

Նախքան Սարկավագադիր տոմարի մասին խոսելը, համառոտ կերպով կանգ առնենք հին Հայկական տոմարի զարգացման գլխավոր էտապների վրա, քանի որ առանց դրան տոմարական որոշ հարցերը անհասկանալի կլինեն։

Հին Հայկական տոմարը, իր կառուցվածքով, շատ նման է եղել եգիպտական արեգակնային տոմարին, որից եգիպտացիք օգտվել են մեր թվարկությունից շատ առաջ։ Սակայն հայկականը եղել է եգիպտականի միայն նմանը, բայց ոչ նրա պատճենը։

Նման տիպի տոմարի գործածությանը հայերն անցել են, մոտավորապես 450—460 թվականներին մեր թվարկությունից առաջ, Աքեմենյան հարստության ժամանակ։ (Այդ բազմաթիվ փաստերի հիման վրա ապացուցվել է մեր կողմից)։ Հին Պարսկաստանում, մինչ Աքեմենյանների աշխարհակալ պետության կազմակերպությունը, պարսիկները համեմատաբար դեռ գտնվում էին կոլեկտիվական ցածր աստիճանի վրա, և ինչպես բոլոր անասնապահությամբ զբաղվող ժողովուրդները, օգտվում էին պարզ լուսնային օրացույցով։ Սակայն Աքեմենյանների շրջանում, երբ երկրի սահմանները ընդարձակվեցին և Պարսկաստանը տիրապետեց մի շարք կոլեկտիվական բարձր զարգացման աստիճանի վրա գտնվող երկրներ՝ Բաբելոն, Եգիպտոս, Անդրկովկաս և այլն, այդ նախնական օրացույցով ղեկավարվելը դարձավ անհնարին։ Դարեհ Վշտասպյանը իր բարեկարգումների ժամանակ՝ ճանապարհների կառուցում, դրամների, քաշի ու կշռի միավորների միատեսակություն և այլն, ստիպված եղավ ուշադրություն դարձնել և տոմարական խնդիրներին։ Պարսիկներն այդ ժամանակ պատրաստված տոմարագետներ չունեին։ Բացի այդ, նոր տոմարական սիստեմ ստեղծելու կարիք էլ չկար, քանի որ գոյություն ունեին երկար դարեր գործածվող և կատարելագործված բաբելոնական և եգիպտական տոմարները։ Նրանց մնում էր ընտրել գործածվողներից որևէ մեկը։ Բաբելոնականը բարդ էր, նա լուսնա-արեգակնային էր, ուստի և առաջնությունը տրվեց եգիպտականին։ Եգիպտական տոմարն ուներ այն առավելությունը, որ նրա բոլոր տարիները իրար հավասար էին՝ 365 օրից, և եգիպտական պանթեոնում գլխավոր դերը

պատկանում էր լուսապայծառ աստված Ռեային (Արեգակ), իսկ պարսիկները կրակապաշտ էին։

Երբ պարսկական լայնածավալ պետության մեջ սկսեցին օգտվել եգիպտական տիպի տոմարով, կախյալ ժողովուրդներն ևս՝ հայերը, վրացիները, աղվանները և այլն, կամա-ակամա օգտագործեցին այդ տոմարը և ընտելացան նրա հետ։

Եգիպտական տոմարով տարին ունի 365 օր և բաժանվում է 13 ամսի, որոնցից 12-ը ունեն 30-ական օրվա տևողություն, իսկ 13-րդը՝ միայն 5 օր։ Ստացվում է՝ 12×30+5=365 օր։

Բայց այդ տոմարն ուներ և պակասություն. նրա թերի կողմն այն էր, որ նա իր տևողությամբ կարճ էր տարվա իսկական տևողությունից. նա հավասար էր ոչ թե 365 օրվան, այլ՝ 365 օր, 5 ժամ, 48 րոպե և 46 վայրկյանի։ Հետագայում այդ, որոշ չափով, ուղղվեց Հուլիոս Կեսարի ժամանակ, երբ տարին համարեցին 365 օր և 6 ժամ։ Բայց այդ էլ պարունակում էր որոշ սխալ։

Եգիպտացիք, նահանջ տարի չունենալու պատճառով, 4 տարին մեկ օրով հետ էին մնում և նրանց նոր տարվա օրը՝ ամանորը անընդհատ շարժվում էր դեպի հետ, 4 տարին մեկ օրով։ Այսպես, օրինակ, ընդունենք, որ այսինչ թվականին նրանց ամանորը տեղի է ունեցել հունվարի 1-ին (օրինակի համար 1900 թ.), 4 տարի հետո նա տեղի կունենար դեկտեմբերի 31-ին (1904 թ.), նորից 4 տարի հետո դեկտեմբերի 30-ին և այլն։ 2100 թվականին նա հետ տեղաշարժված կլիներ 50 օրով և տեղի կունենար նոյեմբերի 11-ին...։ Դրա հետևանքով, տոմարական նման սիստեմները կոչվում էին շարժական։ Ամանորը կվերադառնար իր նախկին տեղը միայն՝ 4×365=1460 տարուց հետո՝ ապակատաստազի տարին։ Հին Եգիպտոսում նոր տարվա օրը սկզբնական շրջանում կապված է եղել Նեղոս գետի հորդելու հետ, որից կախված էր Եգիպտոսի ամբողջ տնտեսական կյանքը և III հազարամյակում մեր թվարկությունից առաջ նա լինում էր հուլիսի 19-ին։

Աստղաբաշխական տեսակետից եգիպտացիք դիտել էին, որ այդ օրը երկնակամարի ամենափայլուն աստղ Սիրիուսը (հայերեն՝ Շնաստղ, իսկ եգիպտական լեզվով՝ Սոտիս աստղ) առաջին անգամ դիտվում էր արևածագից առաջ (հելիակտիկ ծագում)։ Եգիպտացիք գիտեին իրենց տոմարի թերի կողմը, բայց և այնպես քուրմերը դիմադրություն էին ցույց տալիս բոլոր տեսակի առաջարկված բարեփոխություններին։ Նրանք գիտենալով տարվա իսկական տևողությունը, կարող էին ուղղել իրենց տոմարական սիստեմը, մտցրնելով նահանջ տարվա գաղափարը՝ 4 տարվա մեկը հաշվել 366 օրից, 365 օրվա փոխարեն, ինչպես այդ հետագայում կիրառեց Հուլիոս Կեսարը։

Նահանջի գաղափարը նրանց, իհարկե, ծանոթ էր, բայց նրանք ընդունել էին հետևյալ սկզբունքը. 1460 տարուց (սոտիսական շրջան) հետո, նրանք հետևյալ 1461-րդ տարին ամբողջովին հայտարարում էին նահանջ տարի և նրան հերթական համար չէին տալիս։ Աստղաբաշխական տեսակետից այդ սխալ չէ, բայց միայն հարմար չէ։ Տարին, ինչպես վերևում հիշատակեցինք, բաժանվում էր 12 հավասար ամիսների՝ յուրաքանչյուրը բաղկացած 30 օրից և 13-րդ ամիսն ուներ 5 օր։ Պարզ է, որ նման տոմարական սիստեմում 7-օրյա շաբաթի գաղափար լինել չի կարող. նրանք ամիսը բաժանում էին կա՛մ 3 տասնօրյակի (դեկադա) կա՛մ 6 հնգօրյակի (պենտադա)։

Հին պարսկաստանում, եգիպտական տոմարի ձևը աննշան չափով փոփոխված էր, նրանց մոտ նահանջ տարվա գաղափարը ստացավ այլ ձև. նրանք չէին սպասում, որ ամբողջ շրջանը վերջանալուց հետո ավելացնեին մի ամբողջ նահանջ տարի, այլ 120 տարի հետո (30×4=120), 121-րդ տարվա վրա ավելացնում էին նաև մի 30 օրական ամիս և այդ տարին համարում նահանջ տարի։

Հին հայերը ընդունելով այդ ձևի տոմարը, մտցրեցին որոշ փոփոխություններ.

ա) Սիրիուս (Սոտիս) աստղի հելիակտիկ ծագումը փոխարինեցին երկնակամարի փայլուն ու գեղեցիկ Օրիոնի համաստեղության հելիակտիկ ծագումով, որը տեղի էր ունենում օգոստոսի 11-ին։ Հայաստանում Օրիոնի համաստեղությունը հնում նվիրված էր Հայկ նահապետին և կոչվում էր Հայկի Համաստեղություն։

բ) 1460-ամյա սոտիսական ժամանակաշրջանը անվանվեց Հայկյան շրջան։

Այսպիսով, հայերը ընդունելով եգիպտական տիպի տոմար, միաժամանակ մտցրեցին բավականին զգալի փոփոխումներ. ա) ամանորը հուլիսի 19-ից տեղափոխվեց օգոստոսի 11-ը և բ) փոփոխվեց ապակատաստազային տարվա տեղը։ Եթե եգիպտականը կատարվեց 139 թվականին մեր թվարկությամբ, ապա հայկականը տեղի ունեցավ 428 թվականին և այդ պատճառով 429-րդ թվականը, որպես նահանջ տարի (կամ ինչպես կոչում էին հնում՝ նահանջից նահանջ տարի) հերթական համար չպիտի ունենար և միայն 430 թվականը պիտի համարվեր որպես 429-րդ թվական։ Սակայն

այդ հանգամանքը ժամանակին աչքաթող էր արել Աթանաս Տարոնեցին և միայն 1083 թվականին այդ գրավեց Հովհաննես Սարկավագի ուշադրությունը։

Հայաստանում քրիստոնեություն ընդունելուց հետո, եկեղեցին օգտվում էր Հուլյան տոմարով։ Բայց ժողովրդական մասսաների կողմից Հուլյան տոմարը չճանաչվեց։ Երկրում միաժամանակ օգտվում էին երկու տոմարական սիստեմներից, եկեղեցին՝ Հուլյանից, իսկ ժողովուրդը՝ հին Հայկական տոմարից։ Տոմարագետների առջև դրվեց նոր պահանջ՝ կազմել աղյուսակներ, որոնք հնարավորություն տային պարզ ու մատչելի եղանակով Հուլյան տոմարի ամսաթվերը վերածել կամ արտահայտել Հայկական տոմարի ամսաթվերով։ Օրինակի համար, ասենք թե հաշված է, որ Զատկի տոնը պիտի տեղի ունենա ապրիլի 10-ին ըստ Հուլյան տոմարի, անհրաժեշտ էր ապա այդ արտահայտել Հայկական տոմարի ամսաթվով ու կոնկրետ տալ թե ո՛ր ամսին ու ամսաթվին է համապատասխանում այդ։ Իհարկե, այդ հանգամանքը առաջ էր բերում դժվարություններ և եկեղեցին աշխատել է եղած նման տարաձայնությունները հեռացնել։ Առաջին անգամ Անաստաս կաթողիկոսը VII դարում (մոտ 660 թ.), հանձնարարում է Անանիա Շիրակացուն նախապատրաստել նյութեր, հին Հայկական շարժական տոմարը անշարժ դարձնելու նպատակով։ Անաստասի մահվան պատճառով աշխատանքները մնում են թերի, իսկ Անանիա Շիրակացու կատարած աշխատանքները մեզ չեն հասել։

Շարժական եգիպտական տոմարն անշարժ դարձնելու հարցը քննվել է և ուրիշ երկրներում, բայց այդ երկրներում հարցը գիտական հիմքերի վրա չի դրվել։ 24 թվականին մեր թվարկությունից առաջ Օգոստոս կայսրը հրամայում է եգիպտական ամանորը՝ նոր տարվա օրը, որը տեղի էր ունենում թավթ ամսվա 1-ին, ամրացնել օգոստոս ամսի 29-ին։ Դրան հետևում են վրացիները, աղվանները և մի շարք այլ ժողովուրդներ, բայց հայերը շարունակում են տանել իրենց տոմարական հաշիվներն ինքնուրույն կերպով։

1083 թվականին լրանում են Աթանաս Տարոնեցու կազմած 532-ամյա աղյուսակները (տե՛ս մեր հոդվածը «Էջմիածին» ամսագրի 1950 թվականի IX—X №-ում) և հարց է առաջանում կազմել նոր 532-ամյակի համար աղյուսակներ։

11-րդ դարում Հայաստանում կային շատ հմուտ տոմարագետներ, որոնք կարող էին այդ աշխատանքը բարեխիղճ ու փայլուն կերպով կատարել, ինչպես, օրինակ՝ Հովհաննես Կոզեռն, որը մեծ հռչակ էր ձեռք բերել։ Բայց այդ պատասխանատու աշխատանքը կատարում է Հովհաննես Սարկավագը, որը հմուտ տոմարագետ էր և բազմակողմանի զարգացած գիտնական։

Հովհաննես Սարկավագը նեղ նպատակ չի դնում՝ կազմել միայն աղյուսակներ Նոր 532-ամյակի համար, այլ նա առաջարկում է բարեփոխել հին Հայկական շարժական տոմարը ու դարձնել անշարժ՝ ելնելով զուտ գիտական տեսակետից։

Նրա առաջարկները կարելի է բաժանել երկու մասի.

ա) Նա առաջարկում է մտցնել հին Հայկական տոմարում նահանջ տարվա դաղափարը շատ պարզ եղանակով. 13-րդ ամիսը, որն ուներ միայն 5 օր, չորս տարին մեկ համարել 6 օրից։ Այդպիսի պարզ մեթոդով հին Հայկական տոմարը դառնում է անշարժ, ամանորը միշտ կլիներ անխափան միևնույն ամսաթվին և նա արդեն հետ և առաջ չէր շարժվի։ Շատերը կարող են ենթադրել, որ այդ նման է Հուլյան տոմարին, որտեղ նույնպես չորրորդ տարին համարվում է նահանջ, բայց չպիտի մոռանալ Հուլյան տոմարի թերությունները, ինչպես օրինակ՝ ամիսների անհավասար լինելը և այլն։

Նման տիպի տոմար մենք երկրորդ անգամ հանդիպում ենք Ֆրանսիայում՝ երբ հեղափոխությունից հետո (5 հոկտեմբերի 1793 թ.) Կոնվենտի կողմից ընդունվեց դեպուտատ Ռոմմի առաջարկությունը օրացույցը փոխելու վերաբերյալ և նրանց տարին էլ ունեցավ 12 ամիս՝ յուրաքանչյուրը 30 օրից բաղկացած և 5 կամ 6 օրից՝ 13-րդ ամիսը։ Վերջինս անվանում էին «սանկյուոտիդներ» („sans culotides"), որպիսի անունը պիտի նշեր այդ տոների պրոլետարական բնույթը։ Հետագայում այդ օրերը կոչվեցին՝ լրացուցիչ օրեր (jours complémentaires)։ Շաբաթվա դաղափարը տոմարական հաշիվներից դուրս շպրտեցին և սկսեցին հաշվել տասնյակներով (décades)։ Բայց պիտի ասել, որ հաշիվը շաբաթներով չի եղել նաև հին Հայկական տոմարում. այդ ապացուցվում է նրանով, որ շաբաթվա օրերի հայկական անունները ոչ մի առնչություն չունեն մյուս ժողովուրդների անունների հետ, որոնք նվիրված են՝ արեգակին, լուսնին և աչքով տեսանելի հինգ մոլորակներին։ Հայկական անունները պարզ թվարկություն են. միաշաբաթ (որը հետագայում կոչվեց կյուրակե), երկուշաբաթ, երեքշաբաթ...։

Հնում մոլորակների անուններով կոչվում էին 13-րդ՝ ավելացած ամսի օրերը։

Հին Հայկական տոմարը Հովհաննես Սարկավագի բարեփոխած ձևով անվանվեց

Սարկավագադիր տոմար։ Այդ շատ հաջող տոմարական սիստեմ էր, որն ուներ նույն ճշտությունն, ինչպես և Հուլյան տոմարն էր, բայց կազմությամբ ավելի հաջող։

Հետագայում փոքրիկ փոփոխություն մրտցընելով, կարելի էր տալ նրան ավելի մեծ ճշգրտություն, ինչպես և նոր տոմարինը (Գրիգորյան)։

բ) Հովհաննես Սարկավագի երկրորդ առաջարկն էր ուղղել Աթանաս Տարոնեցու թույլ տված սխալը ապակատաստազի տարու վերաբերյալ, և արդեն անշարժ ամանորը տեղափոխել և ամրացնել օգոստոսի 11-ին, Հայկի համաստեղության հելիակտիկ ծագման օրը։

Սարկավագադիր տոմարը, Գրիգոր Վկայասեր կաթողիկոսի հրամանով, սկսեցին օգտագործել, բայց քանի որ մինչ այդ Հայաստանում ընդունված ձևն է եղել նախորդ նման հարցերը քննել ժողովներում, ապա պատմիչների ու աշխարհիկ գրողների մի քանիսի կողմից նա ճանաչություն չըստացավ և որով շարունակեցին թվականներն ու ամսաթվերը նշանակել՝ հետևելով հին Հայկական շարժական տոմարին։

Այսպիսով, Հովհաննես Սարկավագի գործնական ու խելացի առաջարկությունները, որոնք պետք է վերացնեին հին տոմարի թերությունները, անհետևողական կիրառման պատճառով, ավելի բարդացրեցին հաշիվները։ Իհարկե, այդ Հովհաննես Սարկավագի հանցանքը չէր։

Սարկավագադիր տոմարի դրական կողմերից մեկն այն էր, որ նրանից հետո հնարավոր դարձավ անսխալ գիտենալ՝ թե ո՛ր հայկական ամիսը ո՛ր ամսին է համապատասխանում։ Օրինակ, Նավասարդին՝ օգոստոսը, Հոռիին՝ սեպտեմբերը, և այլն, իսկ մինչ այդ հնարավոր չէր, քանի որ ամանորի փոփոխման հետ միասին փոփոխվում էր և Նավասարդ և, հետևաբար մյուս ամիսների տեղը և համապատասխանության կարգը։

Սարկավագադիր տոմարն օգտագործվեց անփոփոխ մինչև 1317 թվականը, երբ Ադանայի 44-րդ ժողովում միայն, նկատի ունենալով, որ հին Հայկական տոմարի ամանորը այդ տարին համընկնում էր հունվարի 1-ի հետ, որոշվեց անցնել Հուլյան տոմարի։

Այսպիսով, հին Հայկական տոմարով Հայաստանում դեկավարվել են մոտ 18 դար՝ 460 թվականից (մեր թվարկությունից առաջ) մինչև 1317 թվականը։

ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅ ԳԱՂՈՒԹՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Ս. ՔՈԼԱՆՋՅԱՆ

ԲՈՒԽԱՐԵՍՏԻ ՀԱՅՈՑ ԱՆՑՅԱԼՆ ՈՒ ՆԵՐԿԱՆ[1]

Բուխարեստի հայերը XIX դարու առաջին կիսուն կշարունակեին առևտուրը Տրանսիլվանիո հետ[2]։ Այս շրջանին ևս մեծ է եղած Վալակիո և ի մասնավորի Բուխարեստի հայոց և Դանուբեն անդին գտնվող իրենց ազգակիցներուն միջև եղող կապը։ Մեհմեդ Սելիմ փաշա՝ Սիլիսդրեի մուհաֆըզը 1861 թվին, Վալակիո Գրիգորե Գհիկա իշխանին մոտ կդիմե 1,000 պիաստր գումարի մը համար, զոր պարտական էր Ռուջուկցի Գրիգորը Բուխարեստի իր ազգակից առևտրական Պապիկին[3]։ Այս շրջանին ու ասկե ալ առաջ կարևոր թիվ մը կկազմեն Բուլղարիայեն կատարված հայերու գաղթերը դեպի Բուխարեստ, գաղթեր, որոնք մեծ մասամբ առևտուրի պատճառով են կատարված։ Այս շրջանին ևս Վալակիո հայ առևտրականները որոշ դեր մը խաղացին երկրին առևտուրին մեջ, պահելով տակավին իրենց առևտրական կապը Թյուրքիո հետ։

Հայ արհեստավորներն ու առևտրականները, Ռումինիայի այս վայրին մեջ, ինչպես տեսանք, հաճախ արտոնություններ վայելեցին և մասամբ ալ սեղմումներու ենթարկվեցան։ Ռուսական արշավանքի ընթացքին, 1828 սեպտեմբեր 5 թվակիր և 3518 համար գրությամբ, ռուս բանակի ընդհանուր հրամանատարությունը կծանուցաներ ռուսական բանակի հայազգի զորավար Խաչիկ Հովսեփյանց Լազարյանցին (որ այդ ժամանակ պաշտոնով երկու իշխանապետությանց՝ Վալակիո և Մոլդավիո մեջ կգտնվեր), որ ընդառաջ երթալով անոր մեկ դիմումին, հրամանագրեր էր ուղարկեր երկու իշխանապետություններու խորհուրդներուն, որպեսզի վերացնեն այդ վայրերու մեջ ապրող հայերու իրավունքներու վրա եղած սեղմումները։ Ռուսական հրամանատարության կողմե կատարված հայերու իրավունքներու վերահաստատումը շատ կարևոր նշանակություն ուներ հայերու համար, մանավանդ, որ երկու իշխանապետություններու մեջ Ֆանարիոդ հույն իշխաններու շարունակական տիրապետության շրջանը (1711—1821) շատ ծանր էր այդ վայրերու և հատկապես Մոլդավիո մեջ ապրող հայերու համար, որոնք հետզհետե կորանցուցեր էին իրենց դարավոր իրավունքները, զրկվեր էին հող գնելու իրավունքեն, և հույն մոլեռանդ կղերականության միջոցով իրենց դեմ տարածված առատ թիվով առասպելներով շարունակ խծբծանքի էին արժանացեր։

Սակայն Վալակիո հայերը, և հետևաբար նաև Բուխարեստի հայերը, ավելի շատ արտոնություններ ունեին։ Այս բանը հայտնի կերպով կերևի մանավանդ Մոլդավիո հայոց՝ երկրին իշխանին հղած մեկ աղերսագրին մեջ, ուր անոնք կխնդրեն, որ Մոլդավիո մեջ բնակող հայոց համար ալ վերահաստատվի ի նպաստ կարգադրություն, իբր օրինակ հիշելով Վալակիան, որ անհիշատակ ժամանակներե ի վեր կվայելեր իրավունքներ[4]։

1857 հոկտեմբեր 25-ի «Դիվան ադ-հոկտի նիստին մեջ, ռումեն մեծ դեմոկրատ և նշանավոր դիվանագետ Միհայիլ Կոգըլնիչեանուն

---

1. *Սկիզբը 1949 թվի* III—IV *և 1950 թվի* I—II *և* VII—VIII *համարներում։*

2. N. Iorga, Ist. Comertului Românesc, Vol. II, p. *144.*

3. Arhiv Statului, Doc.Turc, № 449.

4. *Ռումեն Ակադեմիայի ձեռագիր* № *4664,* Documente Bujucliu, f. 70—71.

իր արտասանած ճառին մեջ կըսեր. «Ցայսր Ռոմբընեասկրի (Վալակիո) մեջ ոչ Մի միայն դավանանքի արտոնություններ ավելի մեծ են, այլև քաղաքական իրավունքներն ալ ավելի ընդարձակ են, օրինակ՝ հայերը իրավունք ունին հող գնելու...»[6]

Բուխարեստի հայոց առևտուրը սկսավ կամաց-կամաց երկիր հասնող հրյա և հույն վաճառականներու մրցակցության պատճառով, և միայն ավելի վերջ նորանոր գաղթերու շնորհիվ էր, որ Բուխարեստի հայերը կրկին դեր մը ունեցան քաղաքին ճարտարարվեստի ու առևտուրի ասպարեզներուն մեջ։

ՄԵԼԻՔԻ ԵՎ ՎԱՆԻԿԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՏՈՒՆԵՐԸ

Ռումեն բանասերներու և ճարտարապետներու կողմն իրրև Բուխարեստի ամենահին և հետաքրքրական բնակարաններեն մին կնկատվի հայոց եկեղեցիեն քիչ հեռու Սպրտարուլույ փողոցին վրա գտնվող Մելիքի տունը, որ ներկայիս հայ գաղութին ծերանոցն է։ Ինչպես ճիշտ կերպով կնկատե դոկտ. Ն. Վրտըմանու այս տան մասին գրած իր մեկ հոդվածին մեջ, Մելիքի տունը գտնելու համար պետք չկա հասցեի, քանի որ ան քաղաքին այդ մասին մեջ միակն է իր լավ հավասարակշռված վաղեմի դիմագծով, դեպի բակը նայող իր դեղեցիկ և մեծ գլամլրկաով (ապակեփեղկ), իր կրկնակի լուսամուտներով և հին կղմինդրե ծածկույթով։

Ռումեն նշանավոր ճարտարապետ Գհիկա Բուդեշտ, որ ուսումնասիրած է նաև հայ արվեստի հետքերը ռումեն հուշարձաններու վրա, Մելիքի տան մասին կգրի հետևյալը. «Բուխարեստի մեջ քիչ թիվով հին տունները, որոնք մնացեր էին մինչև մեր օրերը, քանդվեցան իրարու ետևեն։ Սպրտարուլույ փողոցի Մելիքի տունը, կառուցված 1760-ին և վերանորոգված 1920-ին ճարտարապետ Սմբրընտեսկուի կողմե, մեր ասկե առաջ նկարագրրած տուններեն ուրույն հատակագիծ մը ունի, իր անկյունը հաստատված ջամլրկով, ներքին սանդուխով, ճակատները զարդարված դորեական ոճով դասական քառանկյուն սյուներով, ճոխ քիվերով ու ծեփով ծածկրված։ Ներքին մասը կներկայացնե քանդակված փայտյա առաստաղ մը, որ կզարդարե հյուրանոցը։[6]

Այս շենքը վերանորոգող ճարտարապետ Պ. Սմբրընտեսկուն իր թողած մեկ քանի ուշագրավ նոթերուն մեջ, որոնք գրած է Ռումինական պատմական հուշարձաններու կոմիտեի Տեղեկագրի համարներեն միույն մեջ, կըսե թե Մելիքի տունը կառուցված է 1760-ին, բայց հայտնի չեն անոր հատակագիծը պատրաստող և զայն կառուցող ճարտարապետի ու վարպետի անունները, ինչպես որ հայտնի չէ նաև անոր առաջին տանուտերին անունը, որուն համար կառուցվեցավ այս շենքը։ Սակայն հավանական կգրտնե, որ ան կառուցված ըլլա «Սպրտարբի[7] մը համար և հետագային անոր անունով կոչված ըլլա նաև ամբողջ թաղը. անուն, որ անփոփոխ մնացած պետք է ըլլա XVIII դարեն մինչև այսօր։ Իր հոդվածի շարունակության մեջ, վերոհիշյալ ճարտարապետը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ այդ տունը կգտնվի Սպրտարուլույ փողոցին վրա և որ շատ մոտ է հայկական փողոցին և հայկական եկեղեցվույն, կենթադրե որ այդ շենքը կառուցված ըլլա փարթամ հայ առևտրականի մը համար։ Ան շինված է XVIII դարու ռումինական ոճով, հատկանշական ակոսաձև փորված քառանկյուն սյուներով, որոնք հաստատված են բարձր պատվանդանի մը վրա, քաղորող քիվով, տանիքի փայտյա խողովակով, կղմինդրե ծածկույթով, մեծ պատշգամբով մը, որ հավանաբար նախապես բաց եղած էր և հետո ավելի ուշ է, որ ձևափոխված է ջամլրկի։

Սակայն 1820 թվականեն, այսինքն ավելի քան 100 տարի, այս տունը կպատկանի Ռումինիա հաստատված հայազգի Մելիքը ընտանիքին։ Այս տունը արմատապես նորոգված է 1822-ին, թվական, որ քանդակված է դեպի մառան տանող մուտքի դռան կամարին վրա։

1848 թվականին այս տունը կպատկանի ճարտարապետ Հակոբ Մելիքին, որ ճարտարապետությունը ուսած էր Փարիզ, աշակերտելով Լաբրուստի։ Ճարտարապետ Մելիքը Բուխարեստի մեջ բազմաթիվ շենքեր կառուցած է, որոնց մեջ նաև Մալմեզոնի զորանոցը։ Երկու անգամ զինքը հիշատակված կգտնենք կարգ մը հաղթական կամարներ կառուցելու պարտականության մեջ, անգամ մը փաստաթուղթերու մեջ կոչվելով իբրև „architecton", իսկ ուրիշ անգամ մըն ալ „arsitect„։

1848—1857 թվականներուն Հակոբ Մելիքի բնակարանը անբնակ ու բոլորովին ամայացած կգտնենք, քանի որ ինք ևս իբրև ռու-

[6]. «Դիկան ազ-հոկտը խորհրդակցական մեծ ժողով էր, որ հրավիրվել էր Վալակիո և Մոլդավիո իշխանությունների միացման համար։

[6]. N. Ghika Budesti. Evolutia Arhitecturii in Muntenia si in Oltenia, in Buletinul Comisiunii Monumentelor Istorice, An. XXIX, p. 117.

[7]. «Սպրտարբը հին տաճն Թիկնապահն էր իշխանին և նաև բանակին հրամանատարը։

մինչև 1848-ի բուրժուական ռևոլուցիայի մասնակից, փախեր էր Կոսսանդնուպոլիս ու Փարիզ։ 1857-ին վերադառնալով Բուխարեստ, կրկին վերանորոգեց այս տունը, պահելով անոր նախնական ոճը, ու ատկե հետո մինչև 1920 թվականը կարևոր նորոգություն մը չեղավ։ Հակոբ Մելիքի մահեն հետո այս տունը կանցնի իր կնոջ՝ Աննա Մելիքի հովանավորության տակ, որու կտակով կորոշվի ծերանոցի վերածել «Աննա Մելիք ծերանոց» անվամբ։

Մելիքի տունը, սակայն, հայտնի է այն բանով, որ ճարտարապետ Հակոբ Մելիքի հավանությամբ, այդ շենքի ձեղնահարկին մեջ թաքնվեցան 1848-ի Վալաքիո ռևոլուցիայի պարագլուխներ՝ Հելիադե Ռըդուլեսկուն, Կ. Ա. Ռոսետին և մյուս ռևոլուցիոներները, քանի որ ճարտարապետ Մելիքը անոնց շատ մոտ ու գործակից ընկերն էր, և անոնց ռևոլուցիոն նույն գաղափարներուն կծառայեր։ Այս առթիվ ավելցնենք, որ վերոհիշյալ Կ. Ա. Ռոսետին, ռևոլուցիայեն հետո թյուրքերու կողմե աքսորվելով, արտասահմանի մեջ տակավին մոտ դար մը առաջ լույս ընծայեց «Ռեպուբլիկա Ռոմընը» (Ռումինական Հանրապետություն) թերթը։

Պրոֆ. Յորգան 1848-ի վերոհիշյալ ռևոլուցիայի մեջ կհիշե բազմաթիվ հայեր, որոնք գործնականորեն մաս առին ժողովրդական շարժման, և որոնց մեջ կհիշե նաև ճարտարապետ Մելիքի անունը։ Նույնիսկ օտար թերթերու մեջ ևս հիշված կգտնենք իր անունը, 1848-ի Բուխարեստի մեջ կազմված դեմոկրատ խմբակցության մը իբր քարտուղար։ Ու հեղափոխական պարագլուխներու հետ իր կապը այնքան սերտ է եղած, որ արտասահմանեն անոնց դրկած նամակներուն մեջ կարելի է հանդիպիլ նաև Մելիքի անվան հիշատակության։ Հակոբ Մելիքի այս քաղաքական գործունեությունը պատճառ պիտի



Մելիքի տունը

ըլլար, որ իր աներ հայրն ալ տառապեր։ Պենդապետ Լրկուատյանուն իր հուշերուն մեջ կպատմե թե ինչպես հրաման ստացավ ձերբակալել Մելիքի աներ հայրը[8]։ Հակոբ Մելիք կապված էր նաև հայ կյանքին հետ։ Ռումեն բուրժուական ռևոլուցիան, որուն ինք ևս մաս էր առեր գործոն կերպով, իր մեջ արթնություեր էր իր պատկանած ժողովրդի ազատագրումը ևս տեսնելու շերմ փափագը։ Հետաքրքրքրական է այս առթիվ գիտնալ թե Ն. Յորգայի հրատարակած պատմական ստվարաթիվ հոդվածները պրպտելու ժամանակ, կրցա գտնել նաև հիշատակություն մը, ըստ որուն ճարտարապետ Հակոբ Մելիք 1856-ին Ֆրանսերեն լեզվով հատոր մը լույս էր ընծայեր, «Արևելքը Արևմուտքի առաջ», „L'Orient devant l'Occident" անունով, ուր բազմաթիվ աղբյուրներու հիման վրա նյութեր էր զետեղեր ռումենները հետաքրքրող, և նոթեր 1848-ի ռևոլուցիայի մասին։

Հակոբ Մելիք շատ մոտեն կհետևեր հայ կյանքին։ 1856-ին Փարիզ հիմնված և ապա 1862-ին Թեոդոսիա փոխադրված «Մասեաց

[8]. Dr. Vătămanu, „Universul"-ի մեջ, արտատպված «Ararատ»ի 1940 տարվա № 179-ի մեջ։

Ազատիր» պարբերաթերթին մեջ հրատարակված բաժանորդներու շարքին Բուխարեստին միայն իր անունը կտեսնենք հիշված իբր բաժանորդ, մինչ Մոլդավիան իր ամբողջ հայաշատ քաղաքներով բազմաթիվ բաժանորդներ ուներ։ Հակոբ Մելիքի գրադարանեն որոշ մաս մը ճարտարապետական գրքեր, ալբոմներ, նախագծեր և գծագրություններ կպահվին ներկայիս Բուխարեստի «Հայ մշակույթի տան» մեջ։

Վերջերս Երևանի Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարանի ճոխ արխիվին մեջ կրցա գտնել 1845 թվականով Բուխարեստեն Էջմիածին ղրկված նամակ մը, ուրկե մեզ հայտնի կդառնա թե Հակոբ Մելիք Բուխարեստի հայկական վարժարանին մեջ ուսուցչական պաշտոն ալ կվարեր։

***

Բուխարեստի մեջ պատմական տուն մը ալ եղած է անցյալ դարուն Անտոն Վանիկ անուն հայուն շենքը, որ ներկայիս փլված ու հետևաբար ալ բոլորովին մոռցված է։ Բուխարեստի ամենագլխավոր պողոտաներեն «Կալեա Վիկտորիեյի» վրա կգտնվեր այդ տունը, այնտեղ՝ ուր իր հողամասին վրա բարձրացած էր երբեմն «Դրադոմիր Նիկուլեսկու» կոչված հսկա շենքը։ Անցյալ դարուն Վանիկի տան մեջ էր «Տիմպուլ» թերթի խմբագրատունը, ուր աշխատեցավ նաև Ռումինիայի մեծագույն բանաստեղծ Միհայիլ Էմինեսկուն (1850—1889), որուն ևս հայ ծագում կվերագրվի։ Հոն է որ դրիչ շարժեցին ռումեն լրագրության նշանավոր դեմքերեն ոմանք։ «Կասա Վանիկոյի (Վանիկի տան) գլխավոր մուտքը «Կալեա Վիկտորիեյենն էր և որ նեղ ու մութ սանդուխ մը ուներ։ Ակամատես մը կպատմե թե ոչ մեկ անդամ այդ սանդուխներեն չէր համարձակեր վեր ելլելու լրագրողներու շարքին այնտեղ կհանդիպեին նաև ռումեն վաղեմի քաղաքական դեմքեր և այլն։ Վանիկի տան հետքն ու անունը այսօր բոլորովին կորսված ու մոռացության է մատնված։

Բուխարեստի հայ կարևոր ընտանիքներեն մին էր Վանիկ գերդաստանը. տեղվույն հայոց գերեզմանատան մեջ առանձին դամբարան-մատուռ մը կա, որ կկրե Վանիկ ընտանիքի անունը։

***

Դժբախտաբար գրեթե տեղեկություններ իսպառ չկան Բուխարեստի և Վալաքիո հայ ստորին արտադրող խավերուն մասին. ինչպես պետք է ենթադրել՝ անոնք մեծ մասամբ գտնվեր են հայկական արհեստակցական միության մեջ մտած զանազան արհեստավոր վարպետներու մոտ իբրև ծառայողներ։

Բուխարեստի հայոց մոռացության մատնված սույն համառոտ պատմությունը ուրվագծելու մեր այս փորձի առթիվ, պետք է ըսենք նաև, որ հատկապես հետաքրքիր է ուսումնասիրել Բուխարեստի հայոց մշակութային կյանքը։ Տալ հակիրճ պատմությունը անցվույն հայ եկեղեցվո և հայ վարժարանին ու թեմին, գետեղել կենսագրություններ երևելի անձերու ու առհասարակ ամփոփումը տալ անցյալի և ներկայի Բուխարեստի հայ կյանքին,— կնշանակե փրկել գաղութի մը պատմությունը, որ կհանդիսանա մեկ էջը ցարդ չգրված հայ ժողովուրդի ընդհանուր լիակատար պատմության, և կնշանակե չմոռնալ գաղութ մը, որ միշտ հավատարիմ է մնացեր ու կմնա իր թանկագին Հայրենիքին։

ԳՐ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

(Հայկ. ՍՍՌ Պետ. կենտ. արխիվի ավագ գիտաշխատող)

ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ԳԱԲՐԻԵԼ ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆԻ ԾՆՈՂՆԵՐԻ ՃՈՐՏ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*)

Բերում ենք ստորև այդ գրությունը։

Վիճակային կոնսիստորիին Վրաստանի

Ըստ հրամանի Նորին Կայսերական Մեծութեան, ի Սիմֆերոպոլս, լուսաւոր զայսատարարութիւն կանխատորիդ, յ2 դեկտեմբերի անցեալ 1839 ամի համար 954 ի մասին հարկաց աթոռապատկան սարկաց Սանդուկեանց և Խանոյեանց, և զտեղեկութիւն ի գործոց Սիմֆերոպոլսոյ, յորոց երեսի 1) թէ տեսանելով Սիմֆերոպոլսոյ՝ թէ չնշանակի ի գործս իւր ինչ ի մասին այսմիկ, վասն որոյ համաձայն 27-րդ աւուր դեկտեմբերի անցելոյ օրագրական եղբակացութեան իւրոյ ի 29 նոյն դեկտեմբերի համար 1847, հրամայեաց փոխանորդի վիճակաւոր առաջնորդին երևանայ ի պատճառս լինելոյն նորայ նախկին կառավարիչ հոգևոր գործոց Վրաստանի մատուցանել լրնթացս երից աւուրց զրաքատարութիւն՝ առ այն՝ թէ, զի՞նչ յականէ յանուանէ հարկս տային եկեղեցական ստրուկքն Խանոյեանք և Սունդուկեանք մինչեւ 1832 ամն... մինչև ցմտանելն ի քաղաքական պօլիցիայն Թիֆլիզոյ ի նախկին հոգևոր կառավարութենէ Վրաստանի առաջին պահանջման յաղագս ստիպելոյ զնոսին ի հատուցումն հարկին. և 2) ի ցուցակին բոլոր ստրկաց պատկանելոց էջմիածնի և եկեղեցեաց յառաջի արարելոյ Սիմֆերոպոլսոյ ի կոնսիստորիդ ըստ յայտարարութեան յ30 յուլիսիս 1838 ամի համար 319, նշանակեալք են ի 29-րդ համարի Գէորգն Զանդուկեանի, այրի Բարբարէն, որդիք սորա Սողոմոն, Նիկողայոս, դստերքն Մարիամ, Եւփիմիայ, Էկատերինէ, յ30 յոգուածի Թովմայ Դաւթի որդի Զանդուկեան կնաւ, մարդ և որդւովք իւրովք, յ31 յոգուածի Պետրոսեան Ցովսէփ Զանդուկեան կնաւ իւրով, ի 103 յոգուածի այրի Թինաթին Սանդուկով 2 ուստերաց և 1 դստերք և կոյր Սիմէոն Եղբայր Սանդուկովի, ի 105 յոգուածի Դաւիթ Սանդուկով կնաւ իւրով և երկու ուստերքք, ի 109 յոգուածի Ցակովբ Ցովհաննէսեան Սունդուկեան կնաւ, մարդ, և երկու եղբարքք, ի 106 յոգուածի Օհանէս Զօրապի որդի Բայեազեանց լորս եղբարքք, գրելով ի ծանօթութեան թէ նշանակեալքն ի 29 յոգուածի նախկին հոգևոր կառավարութեան չեն ինչ վճարեալ ի պատճառս չքաւորութեան և այժմ ևս աղքատք են։ Նշանակեալքն յ30 յոգուածի հատուցեալք են ի տարւոյ նախկին կառավարութեան ոչէս լիտր յստակ մոմ և այժմ կարեն տալ երեք մանէթ, նշանակեալքն յ31 յոգուածի տուեալ են ղ1 մանէթ և այժմ կարեն տալ ղ30 շահի, նշանակեալքն ի 103 յոգուածի չեն ինչ վճարեալ յառաջ, և այժմ կարեն տալ զ4 մանէթ, Նշանակեալքն 105 յոգուածի չե՛ն ինչ վճարեալ և այժմ կարեն տալ ղ1 մանէթ, նշանակեալքն ի 109 յոգուածի չե՛ն վճարեալ ինչ և այժմ կարեն տալ ղ3 մանէթ և նշանակեալքն ի 106 յոգուածի տուեալ են ղ-ինչ, և այժմ կարեն հատուցանել ղ5 մանէթս ի տարին։ Հրամայեցին ստուգագրութեամբ տեղեկութեանցն ի գործոց առաքեալ զհրաման ի կոնսիստորիայդ պատուիրել դմին, անյապաղ ժամանուցանել քաղաքական պօլիցիին Թիֆլիզոյ ի պատասխանի գրութեան արտորիկ յ31 հոկտեմբերի անցեալ 1839 ամի համար 11,860, թէ յիշեալ ստրուկքն էջմիածնի Խանոյեանք (որք կոչին և Բարեալեանք) և Սունդուկեանքն յառաջ քան զայս հատուցեալ են եկեղեցոյ զհարկս մոմով, այլ ի պատճառս անյայտութեան որքանութեան այսր արդեանց, գիտութեամբ ժայրագոյն իշխանութեան Վրաստանի, նոքա ի թիւս այլոց եկեղեցական ստրկաց պարտաւորեալք են այժմ հատուցանել դրամատոր հարկաւ, այսինքն Թովմայն Սնդուկեանց մին մանէթ 50 կոպէկ, Թինաթինն Սնդուկեանց կին Մկրտումի Սնդուկեանց զլորս մանէթ, Դաւիթն Սնդուկեանց մին մանէթ, Ցա-

*). Սկիզբը ամսագրի 1950 թվի նոյեմբեր-դեկտեմբեր համարում։

կովքն Սնդուկեանց երեք մանէք յամի ամի, իսկ որքան մեռեալ Գէորգի Սնդուկեանց ի պատճառս աղքատութեան թողեալ առանց հարկի մինչև ցայլ տեղէնութիւն. իսկ Յովհաննէսն Բայեալեանց ընդ լորից եղբարց իւրոց հինգ մանէք արծաթոյ յամի ամի, ըստ այսմ վերադարձուցանել կոնսիստորիայդ զգրութիւն պալիցին համար 11,860, ի 5 յունուարի 1840 ամի, համար 2։

Անդամ Սիւնեաց դասի՝
ՎԵՀԱՊԵՏԵԱՆ Յովսէփ Աբրնպիսկոպոս
Յակոբ վարդապետ ՏԷՐ-ՄԱՐԳԱՐԵԱՆ
Քարտուղար՝ ՔԱՐՏԱՇԵԱՆ
Կատարող պաշտօնի օգնականի Ատենադպրի՝
ԷԼԻՄԻՐԶԵԱՆ[7]

Սինոդն ստանալով իսպոլնիտելնի էքսպեդիցիայի Սունդուկյանների վերաբերյալ արձակված վճիռը, բողոք է ներկայացնում Վրաստանի նահանգապետին, շարադրելով այն բոլոր փաստաթղթերը, որոնք հաստատում են էջմիածնի իրավունքները։

Սինոդը հետագայում ևս համառորեն շարունակում է դատ վարել Սունդուկյանների դեմ, աշխատելով հարկատու դարձնել նրանց։ Վերջինները տեսնելով, որ նրանց չի հաջողվելու շահել սկսած գործը, բռնում են բանակցությունների ուղին։ Նրանք Հովհաննես կաթողիկոսին խոստանում են ճորտական պարտականություններից ազատագրվելու համար որոշ գումար։ Սունդուկյանների այդ բանակցությունը վարում է դրամատուրգ Դարբիել Սունդուկյանի մայր Թինաթինը, իրեն հավատարմատար ու խորհրդակից ունենալով Զաքարիա Ակիմյանին։

Վրաստանի վիճակավոր առաջնորդին ուղղված կաթողիկոսի մի գաղտնի գրությունից երևում է, որ այդ բավականին երկար է տևել։

Հարցին վերջնական լուծում տալու համար, կաթողիկոսը հրամայում է Վրաստանի հայոց առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոսին, որ իր մոտ հրավիրի Թինաթինի հավատարմատար Զաքարիա Ակիմյանին և նրան ցույց տա իր կողմից ուղարկված երկու ծրարները՝ մեկը կուսակալի, մյուսը Թինաթինի անունով, ճորտությունից ազատելու մասին։ Վերջինիս անունով գրված տալ Ակիմյանին կարդալու և եթե նա հանձնառու կլինի վճարել խոստացած 300 հոլանդական ոսկիները, այն ժամանակ կնքել ծրարները և յուրաքանչյուրը հանձնել ըստ պատկանելության, իսկ ոսկիներն ուղարկել էջմիածին։

Բերում ենք Հովհաննես կաթողիկոսի գրությունը.

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՒ ՇՆՈՐՀԻՒ ՆՈՐԱՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԵՒ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՎԱՍՏԱԿԱՐՔ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

Բարձր. Սրբազան Կարապետի, վիճակաւոր Աբրնպիսկոպոսի Հայոց ի Վրաստան և սպասի յատկացեալ Ճարազատի մեռում խնդալ ի Տէր։

Առաքելով առ ձեզ ընդ այսմ բաց փակէքիս զերկուս գրութիւնս զմին յանուն տեառն կուսակալին, և զմիսն յանուն Թիֆլիզու քաղաքացի Մկրտում Սնդուկովի այրի Թինաթինին, գրեմք ձեզ յոյժ առանձին, զի կոչեսջիք առ ձեզ զազնիւ Զաքար Նիկիտիչ Հաքիմովն, և առանձնասջիք երկոքին դուք ի միասին ա՛յնպէս զի ոչ ի ձերայնոց ոք՝ կամ ի նորայնոց գտանիցի առ ձեզ, և ապա ցուցջիք նմա զերկոսին բաց փակէքիս գրութիւնսն զայնոսիկ, եթէ նա յետ ընթեռնոյ զայնս՝ յանձնառու լիցի, և շուտով բերցէ առ ձեզ զերեք հարիւր պանծալու ոսկիս, և տացէ ձեզ, յայնժամ դուք զփակէքսն զայնոսիկ կնքեսջիք ձերով կամ կոնսիստորիայի կնքով, ըստ սակայնմ հաստուսջիք ինքեան, և զայրի Թինաթինին տացիք նմա Հաքիմովին, և գրիչեալ ոսկիսն ամրացուցեալ ի ծրարի ձերով կնքով հաստուսջիք փութով ընդ գրութեան ձերոյ առ յուսաւորչեան հայոց Սիմեհոդոսն աստ ի սուրբ էջմիածին. իսկ եթէ նկատեսջիք, թէ նա ազնիւ Նիկիտիչ Հաքիմովն յամեցուցանել կամի զվճարումն ձեզ այնոցիկ ոսկւոց այլևայլ խարդաւանաց և պատճառանաց, յայնժամ ապա առանց միւս ևս սպասելոյ, զերկոսին վերոյիշեալ գրութիւնսն զայնոսիկ իւրեանց փակէքիւքն, և զայս գրութիւն մեր առ ձեզ եղեալ ի միասին ի միում պահարանի ընդ պատասխանագրութեան ձեր դարձուսջիք առ մեզ փութացիք, պահելով զամենայն իրրև զխորհուրդ ի ձերում առանձնութեան։

Բարեաղաչում ձեզ ի սրտէ միշտ՝

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՅՈՎՀԱՆՆԷՍ

№ 12
ի 21 մարտի 1841
ի Սուրբ էջմիածին[8]

Վրաստանի թեմի առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոսի պատասխան գրությունից իմանում ենք, որ Կաթողիկոսի պատվերի համաձայն իր մոտ հրավիրելով Ակիմյանին, բացատրել է եղելությունը, համաձայնության եկել և 1841 թվի մայիսի 29-ին ստացել է խոստացված 300 ոսկիները, նրան հանձնելով Թինաթինի հասցեով Կաթողիկոսից ուղարկված ծրարը։

Ահա և այդ երկտող գրությունը.

7. Հայկական ՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 53, գործ № 211, էջ 67—73։

8. Հայկական ՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 53, գործ № 279, էջ 78։

ՁԵՐՈՎ ՍՐԲԱԶՆԱԿԱՏԱՐ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԻՒՆ, ՈՂՈՐՄԱԾԱԳՈՅՆ ՑԷՐ

Համաձայն հրամանի Սրբազնագոյն Վեհափառութեան Զերում ի 21-ն մարտի ներկայ ամի համար 12, ես ի 29-ն ներկայ ամսոյ ստացեալ ի քարտեղատուն Զաքար Նիկիտիչ Ակիմեանցէ զերեքհարիւր պաճախլի ոսկիս յանձնեցի նմա զփակէթն գրեալ յանուն այրի Թինաթինի Սունդուկեանց, նոյնպէս առաքեցի և զփակէթ կուսակալին ըստ պատկանելոյն, և այժմ յիշեալ երեքհարիւր ոսկի սրբագրամն գտանի առ իս զոր ընդ հաստատիմ եկեալս առաքեցից առ լուսաւորչեան Սիմեհոդոսն։

ԿԱՐԱՊԵՏ Աբեղիսկոպոս

համար 135
յ30-ն մայիսի 1841 ամի
ի Ք. Տփխիս[9]

Վրաստանի հայոց վիճակային կոնսիստորը 1841 թվի հունիսի 6-ին ստստնում է Սինոդի արձակած հրամանագիրը Սունդուկյան ճորտերի ազատագրության մասին։ Այդ պատճառաբանվում է նրանով, որ տարիներ շարունակ այդ գործը գտնվելով զանազան դատաստանական ատյաններում, ձգձգվում է, որ հնարավոր չէ գտնել մի գործունյա գործակալ, որ տեղյակ լիներ գործող օրենքներին ու կարողանար հաջող և արագ վախճանի հասցնել այն, և վերջապես, որ Սունդուկյաններն եկեղեցական տեսչությունից ելնելով և արքունականը ընդունելով, եկեղեցին դրեթե ոչինչ չի կորցնում, քանի որ երկուստեք եղած տարբերությունները հավասարվել են, ուստի և էջմիածնի Սինոդը հարկ չի համարում դատ վարելու և բոլոր Սունդուկյաններին հանում է եկեղեցական տեսչությունից և թողնում արքունի մոկայքների մեջ։ Սինոդը միաժամանակ հանձնարարում է այդ մասին հայտնել Վրաստանի գլխավոր կառավարչին ի գիտություն և խնդրել, որ նա իր կողմից ծանուցանի Վրաստանի և Իմերեթի նահանգական կառավարությանն ու արքունական պալատին, որ նրանք ևս կարճեն այդ գործը։

Ստորև բերում ենք Սինոդի հրամանը.

ՀՐԱՄԱՆ ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՌՈՒՍԱՍ

Ի Լուսաւորչական Հայոց Սիւեհոդոսէ էջմիածնի Վիճակային Կոնսիստորիցէ Վրաստանի

Ի Սիմեհոդոսիս լուսոյ զգեկուցումն ի մասին աթոռապատկան սարկաց Սունդուկեանց։ Վասն որոյ ըստ հրամանի Նորին Կայսերական Մեծութեան հրամայեցին, թէպէտ սահմանադրութեամբն նախկին Վրաստանի իսպօլնիտելնի էկսպեդիցիայի, գծագրեալն ի գրութեան Նորին յանուն կոնսիստորիդ ի 13 դեկտեմբերի 1839 ամի համար 17,341, յանձն եղեալ է Աթոռոյս էջմիածնի համաձայն 2065 և 2155 յոդուածոց 10 հատորոյ Սվոդին քաղաքական օրինաց առնել խուզարկութիւն յիշյալ Սունդուկեանց դատաստանական կարդաւ, այլ ընկալեալ ի բաղդատութիւն թէ յիշեալ Սունդուկեանց, որպէս ազատեալք ի ստորադրութենէ էջմիածնի Աթոռոյս և գտանեցեալք այժմ յարքունական տեսչութեան վասն հատուցանելոյ նոցա զամս քանի մի զհարկս յարքունիս, ո՛չ կարեն այժմ վերադառնալ իշխանութիւն Հայոց եկեղեցւոյ մինչ ցվախճանական վճիռ վասն նոցայ գործոյն ի դատաստանական տեղիս, և մինչ ցայն վայր գործն գտանելով ի շարունակութեան ի զանազան դաս ատենից, պարտ է երկարել զժամանակ ինչ անսահման և ընդ նմին չունելով ի նկատման ի ներկա ժամանակիս զընդունակ գործակատարս, կարևորս ըստ օրինաց վասն երթևեկութեան ըստ գործոյն, ո՛չ նշմարի կարելութիւն առ չուտափոյթ աւարտումն գործոյն, ուստի որքան ըստ այսմ, ո՛չ սակաւ քան զայն և ըստ այնմիկ յարդանաց, զի յիշեալ Սանդուկեանքն դառնալով յեկեղեցական տեսչութենէ յարքունական, առաջինն չկորուսանէ ինչ, որովհետև կայք եկեղեցւոյ հաւասարեալ են ըստ օրինաց ընդ արքունական կայիցն։ Էջմիածնի Սիմեհոդոսս վարկանի ո՛չ սկսեալ զայսմանէ զնոր և զանօգուտ գործ ի դատաստանական առենի զնշանակեալ ի ցուցակս կայից Աթոռոյս էջմիածնի Թիֆլիզու մոգայաքան՝ զայրի կին Մկրտումի Սանդուկեանց զԹինաթինն հանդերձ որդովք նորին Գաբրիէլիւ և Միքայէլիւ և դստերքն՝ զայրին և զաւակունս Գէորգայ Սանդուկեան, զԹովմայ Դաւթեան Սանդուկովն, զՅովսէփ Պետրոսեան Սանդուկովն, զԴաւիթ Սանդուկովն և զմակոր Յովհաննէսեան Սանդուկովն, ընդ նոցին դերդաստանաց, նոյնպէս և զկոյր Սիմէոնն Սանդուկեան հանեալ ի յիշեալ ցուցակաց և յեկեղեցական տեսչութենէ, թողուլ զնոսայ համաձայն արարեալ վասն նոցայ տնօրէնութեան տէրութեան ի տեսչութիւն արքունական վասն հաշուելոյ պատշաճեալ կարդաւ ի թիւս Թիֆլիզու արքունի մօգայքացս կարճեալ այժմէն իսկ զամենայն խուզարկութիւն ի մասին նոցայ ի կողմանէ Հայոց լուսաւորչեան եկեղեցւոյ, զայսմ տնօրէնութիւնս հաստատանելով ի դիմաց Կաթողիկոսի Ամենայն Հայոց ի գիտութիւն տեառն գլխաւոր կառավարչին Վրաստանի, խնդրել զտնօրէնութիւն նոցայ յարդագս յանձնելոյ Վրաստանի և Իմերեթու նահանգական կառավարութեան զամենատեսակ գրագրութիւն ըստ յիշեալ գործոյն կարճել և զայն տալ յաւիտենական մոռացման և յաղագս առաջադրելոյ զայնմանէ իսկ Վրաստանի և Իմերեթու արքունի պալատան վասն պարտ ու պատշաճ ի նորին կողմանէ ըստ այսմ առարկայի տնօրէնութեան՝ զորմէ Վրաստանի վիճակատար

---

9. Հայկական ՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 53, գործ № 279, էջ 80։

Արքեպիսկոպոսին Կարապետի և կոնսիստորիդ տուեալ գիտել, յանձնել կոնսիստորիդ պահանջեալ ի Թիֆլիզու քաղաքական պոլիցիայէ համաձայն տուեալ նմին ի նախկին Վրաստանի Իսպոլնիտելնի Լկսպեդիցիայէն հրամանագրովն զգուանեցեալ ի պոլիցիային յայնմիկ վկայագիրս ըստ այսմ գործոյ զառաքեալսն յայն ընդ հրամանի նոյն Լկսպէդիցիայի ի 20 դեկտեմբերի 1833 ամի համար 18,966, առաջի առնել զայնս փութով Սիմեոնոսս, որովհետև ի յիշատակեալ վկայագիրս պարունակին իրաւունք և ի վերայ այլոց կայից էջմիածնի։

Անդամ Սիմեոնոսի՝
ՎԵՀԱՊԵՏԵԱՆ Յովսէփ Աւրեպիսկոպոս
Առեանդպիր՝ ՔԱՐՏԱՇԵԱՆ
Քարտուղարի օգնական՝ Մելիք ՍԵԼՈՒՄԵԱՆՑ

Ի 18 ապրիլի 1841 ամի[10]

Վրաստանի հայոց հոգևոր առաջնորդարանը Սունդուկյանների մասին էջմիածնից ստացած որոշման մասին իր 1841 թվի հունիսի 1-ի № 198 գրությամբ հայտնում է ի գիտություն էջմիածնապատկան ճորտերի վերատեսչին և հանձնարարում նրանց անունները դուրս հանել ճորտերի ցուցակից և հարկ չպահանջել նրանցից։

Ահա՝ և այդ գրությունը.

Ի 1-ն յունիսի 1841 ամի, համար 198
Վերատեսչի ստորակց էջմիածնի
Աւժանապատի Աեղրէաս քահանայի

Լուսաւորչեան Հայոց Սիմեոնոսն հրամանագրաւ ի 18-ն ապրիլի համար 701 ծանուցանէ ինձ թէ նա առ կարճել զբազմամեայ և զերկարատև վիճաբանութիւն որ յազգաց ստրկացն Սունդուկեանց, վախճան տուեալ ասեմ, խնդրեալ է ի տէր գլխաւոր կառավարչէն Վրաստանի յառաջարկել ում հարկն է համաթուել զնոսայ ընդ Տփխիսայ մոցալաքաց պատուիրել և ինձ հանել ի ցուցակէ ստրկաց էջմիածնի զայրի կին Մկրտումի զՍնգուկեանց զԹինաթինն հանդերձ որդովք նորին Գաբրիէլիւ և Միքայէլիւ և դստերքքն, զայրին և զաւակունս Գէորգայ զՍնդուկեան զԹովմայ Դաւթեան զՍնդուկովն, զՅովսէփ Գեորգեան Սունդուկովն, զԴաւիթ Սունդուկովն, և զՅակոբ Յովհաննէսյան Սունդուկովն, ընդ նոցին գերդաստանաց նոյնպէս և զկոյր Սիմէօնն Սունդուկեան։ Ուստի յառաջադրեմ ձեզ ո՛չ ես պահանջել ի յիշեալ անձանց զհարկ ինչ, եթէ հանեալ ունիք ի տանէ նոցա ինչ ի գրաւ, վերադարձուսջիք առ նոսայ։

ԿԱՐԱՊԵՏ Աւրեպիսկոպոս[11]

Ո՞վ է եղել այդ ազնիվ Զաքարիա Նիկիտիչ Ակիմյանը, որին մի կողմից կաթողիկոսն է հավատ ընծայել, մյուս կողմից էլ Թինաթին Սունդուկյանը։

Այդ հարցի պատասխանը գտնում ենք Վրաստանի Հայոց կոնսիստորի 1839 թվի սեպտեմբերի 6-ի արձանագրության մեջ։ «Թիֆլիսի բնակիչ Կոլեժսկի Սեկրետար Զաքարիա Ակիմյանը նույն թվի օգոստոսի 1-ին խնդրամատույց է եղել ծննդյան և մկրտության վկայագրեր տալու իր որդիներին։ Խնդրագրում մատնանշված է, որ իր ավագ որդու կնքահայրն է եղել Մկրտիչ Սունդուկյանը, իսկ կրտսերինը՝ Գաբրիել Սունդուկյանը։ Ահա այն մերձավոր կապը, որն ամուր թելերով շաղկապել է այդ անձնավորություններին միմեանց հետ։

Այսպիսով, նորահայտ վավերագրերը գալիս են անվերապահ հաստատելու, որ Սունդուկյանները էջմիածնապատկան ճորտեր են եղել և ճորտությունից ազատագրվել են Հովհաննես կաթողիկոսի կողմից 1841 թվին։

Այս ամենը Սունդուկյանի կենսագրությամբ զբաղվողների ուշադրությանն ենք ներկայացնում։

---

10. Հայկական ՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 53, գործ № 211, էջ 75—78. (Կոնսիստորիան ստացել է 1841 թվի հունիսի 6-ին)։

11. Հայկական ՍՍՌ Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ № 53, գործ № 279, էջ 85։

ՄԱԾՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱ ԱՌԱՋԻՆ ՍԵՍԻԱՆ

Այաստանի աշխատավորության ցնծալի օրերից մեկն էր 1951 թվականի փետրվարի 25-ը։ Այդ օրը մեր չքնաղ Հայրենիքի բնակչությունն ընտրում էր պետական կառավարման իր գերագույն մարմինը՝ Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի Գերագույն Սովետը։

Ընտրություններն սկսվեցին ամենուրեք առավոտյան ուղիղ ժամը 6-ին, Հայաստանի բոլոր քաղաքներում, գյուղերում, ավաններում միաժամանակ։ Ինչպես միշտ, այս անգամ էլ ընտրությունները վերածվեցին իսկական համաժողովրդական տոնի և ցնծության։ Վաղ առավոտից մինչև ուշ գիշեր՝ մինչև ընտրությունների ավարտումը, ընտրական բոլոր տեղամասերում չէր դադարում երգն ու երաժշտությունը, պարն ու խնդությունը։

Տղամարդ թե կին, երիտասարդ թե ծեր, գյուղացի թե մտավորական, բանվոր թե ուսանող, բոլորն անխտիր նախ և առաջ իրենց սրբազան պարտքն են համարում այդ օրը ժամ առաջ ներկայանալ ընտրական տեղամաս, կատարելու իրենց քաղաքացիական պարտականությունը, մասնակցելու քվեարկությանը։ Եվ ոչ միայն այդ։ Ամեն ոք ձգտում է ընտրությունների օրը նշանավորել որևէ մի նոր հաջողությամբ իր կատարած աշխատանքի բնագավառում։

Ընտրությունների այսպիսի համաժողովրդական բնույթն ունի իր խորը արմատները։ Այդ ընտրությունները տեղի են ունենում աշխարհում ամենադեմոկրատական կոնստիտուցիայի հիման վրա, որը նախատեսում է ընտրությունների կատարյալ ազատություն։ Մեր երկրում ընտրելու և ընտրվելու իրավունք ունեն բոլոր չափահաս քաղաքացիները, առանց սեռի, կրթական ցենզի, զուլքային ունեցվածքի խտրության, անկախ ազգային պատկանելիությունից, կրոնական դավանանքից, անցյալ գործունեությունից։ Այս սրբազան, իրոք մարդասիրական սկզբունքների շնորհիվ է, որ Սովետական երկրում ընտրությունները տեղի են ունենում չտեսնված հաջողության, ժողովրդական զանգվածների ամենագործուն մասնակցության, համաժողովրդական խանդավառության պայմաններում։

Օգտվելով Սովետական իշխանության ազգային իմաստուն քաղաքականության և սովետական ընտրական սիստեմի այս առավելություններից, հայ ժողովուրդը իր բուն Հայրենիքում տնօրինել է իր սեփական բախտը, իր երջանկությունը, ստեղծել իր պետականությունը, կերտում է իր կուլտուրան։

Պատկերացնելու համար, թե ինչպիսի դործուն մասնակցություն ունեցան ժողովրդական զանգվածները Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի ընտրություններին, բավական է ասել, որ քվեարկությանը մասնակցեցին ընտրական ցուցակների մեջ մտցված քաղաքացիների 99,99 տոկոսը։

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի ընտրությունները մի անգամ ևս դրսևորեցին հայ ժողովրդի բարոյաքաղաքական միասնությունը և անսահման նվիրվածությունը դեպի Սովետական Հայրենիքը։ Գերագույն Սովետի դեպուտատներ ընտրվեցին հայ ժողովրդի լավագույն զավակները, որոնք իրենց

աշխատանքով և հասարակական գործունեությամբ միշտ առաջավոր են եղել և այժմ էլ, որպես ժողովրդի ընտրյալներ, պատրաստ են անձնվիրաբար ծառայելու ժողովրդի շահերին, իրենց սոցիալիստական Հայրենիքի շահերին։

Ովքե՞ր են ժողովրդի այդ ընտրյալները։ Նրանք տարբեր զբաղմունքի տեր և տարբեր տարիքի մարդիկ են, սակայն մի ընդհանուր համոզմունքի, մի գաղափարի մարդիկ։ Նրանք համակված են մեկ ընդհանուր մղումով՝ ոչինչ լինայել հարազատ երկրի հետագա զարգացման ու վերելքի համար, ամեն ինչ ի սպաս դնել ժողովրդի ավելի երջանիկ կյանքի համար։ Նրանց մեջ կան բանվորներ և պետական գործիչներ, գյուղացիներ և գիտնականներ, ինժեներներ և գրողներ, արվեստի աշխատողներ և ուսանողներ։

Հետաքրքիր է ընտրված դեպուտատների շատ շատերի կենսագրությունը։ Նրանց, հատկապես երիտասարդ դեպուտատների կյանքի պատմությունը սերտորեն կապված է մեր Հայրենիքի վերածնության և զարգացման հետ։ Նրանք աճել են և կոփվել Սովետական Հայաստանի հետ միասին, սնվել նրա շահերով, հասարակական գործունեության փորձ ձեռք բերել իրենց երկրի վերելքի համար մղված պայքարում։

Ահա դեպուտատներից մեկը՝ 21-ամյա Նեղուշ Մելքոնյանը։ Թերևս նա ամենակրտսերն է բոլոր դեպուտատներից։ Ինչո՞վ է աչքի ընկել այդ երիտասարդ գեղջկուհին, որի նկատմամբ իր հայրենակիցները այդպիսի վստահություն են ցուցաբերել և արժանացրել այդ մեծ պատվին։

Նեղուշ Մելքոնյանը Հոկտեմբերյանի շրջանի իր հայրենի Փոքր Շահրիար գյուղի կոլխոզի շատ սովորական աշխատավորներից մեկն էր՝ օղակավարուհի։ Տարիներ ի վեր նրա ղեկավարությամբ աշխատում էին 10—12 բամբակագործ գեղջկուհիներ։ 1949 թվականին Նեղուշ Մելքոնյանի օղակը, շնորհիվ լավ խնամքի, իր մշակած 10 հեկտար բամբակի դաշտերից ստացավ 700 ցենտներ բերք, կամ յուրաքանչյուր հեկտարից 70 ցենտներ։ Այդպիսի բարձր բերք աճեցնելու համար Նեղուշ Մելքոնյանը, Հոկտեմբերյանի շրջանի մի քանի տասնյակ վարպետ բամբակագործների հետ միասին, ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության հրամանագրով արժանացավ Սոցիալիստական Աշխատանքի Հերոսի պատվավոր կոչման։ Նույն քանակությամբ բերք ստացավ Նեղուշ Մելքոնյանը նաև 1950 թվականին։ Պատկերացնելու համար, թե ի՞նչ են նշանակում այս թվերը, բավական է ասել, որ անվանի օղակավարուհու ստացած բամբակի մի տարվա բերքից կարելի է պատրաստել շուրջ կես միլիոն մետր գործվածքեղեն։

Անցյալ դեկտեմբերին, Հայկական ՍՍՌ Տեղական Սովետների ընտրությունների ժամանակ, Նեղուշ Մելքոնյանն ընտրվեց Փոքր Շահրիար գյուղի Սովետի դեպուտատ և ապա նույն Սովետի նախագահ։ Շահրիարցիները մեծ համակրանքով են խոսում Նեղուշ Մելքոնյանի կազմակերպչական ընդունակությունների մասին։ Նա արդեն մեծ աշխատանքներ է ձեռնարկել հայրենի գյուղի բարեկարգման, իր համագյուղացիների կուլտուրական և կենցաղային պայմանները էլ ավելի բարելավելու համար։ Այժմ, որպես Ռեսպուբլիկայի Գերագույն Սովետի դեպուտատ, ավելի են ընդարձակվում երիտասարդ գեղջկուհու հասարակական և պետական գործունեության շրջանակները։

Երեկվա գեղջկուհին դարձել է այժմ պետական գործիչ։ Մեր հայրենիքում ամեն ոք կարող է վայելել ժողովրդի վստահությունն ու սերը, եթե նա ազնիվ է և բարեխիղճ իր աշխատանքի մեջ, եթե նա չի խնայում իր ուժերն ու կարողությունները ընդհանուր, հասարակական գործի համար։

Նոր Բայազետի շրջանից Գերագույն Սովետի դեպուտատներ են ընտրված 7 հոգի։ Նրանց թվումն է Կարմիր գյուղի կոլխոզի վարչության նախագահ Սարգիս Վարդանյանը։ Նրա անունը հայտնի է շրջանում։ 8 տարի է ինչ Սարգիս Վարդանյանը ղեկավարում է այդ գյուղի տնտեսությունը։ Նա հանրային տնտեսության լավագույն կազմակերպիչներից մեկն է։ Նրա ղեկավարության օրոք, գյուղի կոլտնտեսությունը խոշոր հաջողություններ է ձեռք բերել, շնորհիվ գյուղատնտեսական գիտության առաջավոր ձևերի լայն գործադրման։ Գյուղում դաշտային աշխատանքների գրեթե 80 տոկոսը կատարվում է մեքենաների միջոցով։ Դաշտերը մշակվում են գիտության խոսքով։ Այս ամենը հնարավորություն է տալիս տարեցտարի բարձրացնել ցանվող կուլտուրաների բերքատվությունը։

Հետևելով գյուղատնտեսական գիտության խոսքին, Կարմիրի գյուղացիները, իրենց հմուտ նախագահի ղեկավարությամբ, ձեռք են բերել և բազմացրել ցորենի այնպիսի տեսակներ, որոնք հարմար են իրենց շրջանի կլիմայական պայմաններին և կարող են դիմանալ թե՛ ցրտին, թե՛ երաշտին։ Ներկայումս բոլոր դաշտերը ցանվում են այդ տեսակներին պատկանող ցորենների սերմացուով։ Ահա երկու տարի է ինչ հաջող փորձեր են կատարվում բազմացնելու փնջավոր հասկ ունեցող ցորեն։

Նոր Բայազետի շրջանը, կլիմայական խիստ պայմանների հետևանքով զուրկ է բուսականությունից։ Վերջին տարիների ընթացքում, գյուղացիք, պետության անմիջական օգնությամբ, լուրջ կերպով ձեռնամուխ են եղել ոչ միայն բուսականության, այլև պտղատու այգիների ստեղծման։ Այդ աշխատանքը տարվում է բոլոր գյուղերում։ Այս գործում ևս, շնորհիվ իրենց ձեռներեց նախագահի, լավ արդյունքների են հասել Կարմիրի կոլտնտեսականները։

Այս արժանիքների համար է, որ Կարմիրի և հարևան գյուղերի աշխատավորները Սարգիս Վարդանյանին ընտրել են իրենց դեպուտատ Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետում։

Ալավերդու Պղնձաձուլական գործարանի աշխատավորները Գերագույն Սովետի դեպուտատ են ընտրել ձուլող բանվոր Հարություն Նիկողոսյանին։ Նա մոտ 50 տարեկան է, որից 25 տարին անց է կացրել գործարանում։ Նա առաջադեմ, պիտակից մարդ է, ամբողջովին նվիրված իր գործին։ Ինչպե՞ս անել, որ իր ղեկավարության տակ գտնվող պղնձաձուլական վառարանը ավելի շատ արտադրանք տա. այս հարցը միշտ զբաղեցնում է Հարություն Նիկողոսյանին, ինչպես և շատ շատերին։ Քաջ գիտենալով իր գործը, նա օրինիրուն հետամուտ է վառարանի աշխատանքին, հայտնաբերում և վերացնում է ամենաչնչին թերությունը, որը կարող է խափանում առաջացնել։ Դեպի աշխատանքն ունեցած այսպիսի վերաբերմունքի շնորհիվ, Հարություն Նիկողոսյանի ղեկավարած վառարանը վերջին տարում տալիս է զգալի քանակությամբ ավելի արտադրանք, քան առաջ։

Կարելի է շարունակել դեպուտատների այս ընութագրումը և նրանցից ամեն մեկի կենսագրությունից բերել աշխատանքային սրխրագործության և հայրենասիրության բազմաթիվ վառ օրինակներ։ Այդպիսի բարձր արժանիքների համար դեպուտատ են ընտրվել և պետական գործունեության ասպարեզ մտել Երևանի Կաբելի գործարանի բանվորուհի Սիրանուշ Հարությունյանը, Ազիզբեկովի շրջանի Կեչուտ գյուղի կթվորուհի Մարգարիտ Մովսիսյանը, Երևանի Դաղգահաշվինական գործարանի փականագործ Հմայակ Դիլանյանը, Աշտարակի շրջանի Օշական գյուղի ուսուցչուհի Հրանուշ Անդրեասյանը, Լենինականի Դեպոյի շոգեքարշային մեքենավար Անդրանիկ Խաչատրյանը, ժողովրդական դերասանուհի Հայկանուշ Դանիելյանը, Արթիկ-տուֆի հանքերի քարհատ բանվոր Աղասի Ադամյանը, քիմիական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Արաքսի Բաբայանը և Ախուրյանի շրջանի կոմբայնավար Ալեքսան Պողոսյանը։

Գերագույն Սովետի դեպուտատների թվում կան գիտության, արվեստի և գրականության 22 ականավոր գործիչներ, այդ թվում մեծանուն բանաստեղծ Ավետիք Իսահակյանը, գրողներ Մովսես Հարությունյանը (Արազի), Նարիր Զարյանը, կոմպոզիտոր Հարո Ստեփանյանը, ժողովրդական նկարիչ Գաբրիել Գյուրջյանը, ժողովրդական նկարիչ-քանդակագործ Արա Սարգսյանը, ժողովրդական արտիստ-դիրիժոր Միքայել Թավրիզյանը, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի վիցե-պրեզիդենտ Մկրտիչ Ներսիսյանը, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Գուրգեն Բաբայանյանը, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Մկրտիչ Տեր-Կարապետյանը և ուրիշներ։

Սովետական կարգերի օրոք հայ ժողովուրդը հասել է իր պատմության մեջ չտեսնված վիթխարի հաղթանակների։ Այդ հաղթանակներից կարևորագույնն այն է, որ նա ձեռք է բերել պետականություն։ Գերագույն Սովետի ընտրությունները մի վառ արտահայտություն էին այն բանի, թե հայ ժողովուրդը ինչպիսի սեր և նվիրվածություն է ցուցաբերում պետական կառավարման իր գերագույն մարմնի տնօրինման գործում։

***

Մարտի 30-ին Հայկական ՍՍՌ նորընտիր Գերագույն Սովետը հավաքվեց իր անդրանիկ սեսիային։ Գերագույն Սովետի նիստերի դահլիճն էին հավաքվել ժողովրդի ընտրյալները՝ դեպուտատները, ինչպես նաև մեծ թվով հյուրեր։

Սեսիայի նիստը բացում է Գերագույն Սովետի ավագագույն դեպուտատներից մեկը՝ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, մեծանուն բանաստեղծ Ավ. Իսահակյանը։ Նա դիմում է ներկա եղողներին մի հուզիչ ճառով, որի մեջ ասում է.

—Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի երկրորդ գումարման չորսամյա շրջանը զուգադիպեց հետպատերազմյան ստալինյան հնգամյակի կենսագործման ընթացքին։ Սովետական Միությունը բուժեց պատերազմից ստացած իր անհամար վերքերը և դարձավ էլ ավելի հզոր։ Նա հանդիսանում է սոցիալիզմի առաջին մեծ Հայրենիքը և խաղաղության անխորտակելի ամրոցը ամբողջ աշխարհում։

Սովետական ողջ Միության հետ մեր ռեսպուբլիկան նույնպես մեծ հաջողություններ ունեցավ արդյունաբերության, գյուղատնտեսության ու ժողովրդական տնտեսության մյուս ասպարեզներում։ Կառուցվեցին շքեղ շենքեր Երևանում և շրջաններում, նոր խոշոր

գործարաններ, ֆաբրիկաներ, էլեկտրակայաններ։

— Սակայն, հիմա մեր բոլորիս, ամբողջ աշխարհի ողջ մարդկության ամենապիտավոր նպատակը խաղաղության պաշտպանությունն է,— ասում է Ավ. Իսահակյանը։ —Իմպերիալիստական երկրները հրահրում են նոր պատերազմը՝ ավելի մեծ չափերով, ավելի վայրագ։ Նրանք վերազինում են Արևմտյան Գերմանիան և Ճապոնիան, դինական պակտեր են կնքում բուրժուական պետությունների հետ, սպառազինում են և ֆինանսավորում այդ պակտերի ոճրամիտ դաշնակիցներին, պատրաստում են համաշխարհային նոր պատերազմ, հույս ունենալով հավերժացնել կապիտալիզմը, դաղութների շահագործումը, վտանգել Սովետական Միության գոյությունը, գանգնեցնել սոցիալիզմի առաջընթացը։

Սակայն, նրանց դեմ կանգնած են հարյուր միլիոնավոր ազնիվ մարդիկ, խաղաղության կողմնակիցները, սովետական ժողովրդի գլխավորությամբ՝ հանճարեղ և հզոր Ստալինի ղեկավարությամբ։ Սովետական Միությունը պատմության ասպարեզ մտնելու առաջին քայլերից հանդիսացել է խաղաղության դրոշակակիր և պատերազմի հակառակորդ։ Նա պատերազմը համարում է ամենամեծ ոճիրը։ Սովետական Միությունը, հանուն համաշխարհային խաղաղության, պայքարել և պայքարում է պատերազմի դեմ խաղաղության զենքով։ Նա պայքարել և պայքարում է լուսավորությամբ, ազգերի եղբայրությամբ, սոցիալիստական հումանիզմով։

— Հայ ժողովուրդը,— շարունակում է մեծանուն բանաստեղծը,— իր սրտի և մտքի բոլոր անկեղծությամբ դեմ է պատերազմին, նա իր դարերի պատմության բոլոր չարիքները, բոլոր աղետները ստացել է անարդարացի պատերազմներից։ Հայ ժողովուրդն անձնվիրաբար կանգնած է ռուս մեծ ժողովրդի, խաղաղասեր բոլոր ժողովուրդների հետ այն նվիրական դրոշի ներքո, որը գարձրացրել է մեծագործ Ստալինը՝ պայքարելու հանուն ժողովուրդների խաղաղության և անվտանգության։

Ավ. Իսահակյանն իր ճառը ավարտում է հետևյալ խոսքերով.

— Ամբողջ սրտով ցանկանում եմ ընկեր դեպուտատներին եռանդ, հաջողություն և անձնվիրություն՝ հանուն մեր ռեսպուբլիկայի նորանոր հաջողությունների, կատարելու այն հոյակապ խնդիրները, որ մեր ժողովրդի առաջ դրել է մեծ առաջնորդ ընկեր Ստալինը։ Կեցցե՞ Սովետական հզոր Միությունը։ Կեցցե՞ Ստալինը՝ մեր հաղթանակների կազմակերպողը և խաղաղության մեծ զինվորը։

Մեծանուն բանաստեղծի խոսքերը դահլիճում առաջ են բերում բուռն, երկարատև ծափահարություններ ի պատիվ ժողովուրդների սիրելի առաջնորդ Մեծ Ստալինի։

Բացման խոսքից հետո, սեսիան միաձայն կերպով Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի նախագահ է ընտրում դեպուտատ Սիմակ Սահակյանին, իսկ նախագահի տեղակալներ՝ դեպուտատներ Թալիր Մուսաևին և Աստղիկ Դրամբյանին։

Մանդատային հանձնաժողովի զեկուցումը լսելուց և հաստատելուց հետո, սեսիան ընտրում է մշտական գործող հանձնաժողովներ՝ օրենսդրական առաջարկությունների և բյուջետային հանձնաժողովներ, յուրաքանչյուրը 11 հոգուց բաղկացած։

Այնուհետև սեսիան, Գերագույն Սովետի նախագահության կողմից ընդունված Հրամանագրերը հաստատելուց հետո, անցնում է նոր նախագահության ընտրություններին։ Միաձայն կերպով Գերագույն Սովետի Նախագահության նախագահ է ընտրվում դեպուտատ Մ. Պապյանը, տեղակալներ՝ դեպուտատներ Ա. Վարդանյանը և Ս. Քարամյանը։ Նախագահության քարտուղար է ընտրվում դեպուտատ Ս. Ղևոնդյանը։

Գերագույն Սովետի սեսիան հաստատում է Հայկական ՍՍՌ կառավարության՝ Մինիստրների Սովետի նոր կազմը։ Մինիստրների Սովետի նախագահ է հաստատվում դեպուտատ Ս. Կարապետյանը, տեղակալներ՝ դեպուտատներ Ա. Փիրուզյանը, Ա. Զարյաջյանը, Բ. Աստվածատրյանը, Լ. Ստեփանյանը և Ս. Մովսիսյանը։

Այնուհետև Գերագույն Սովետն անցնում է Հայկական ՍՍՌ 1951 թվականի պետական բյուջեի քննարկմանը։ Այդ առթիվ զեկուցումով հանդես է գալիս ֆինանսների մինիստր Ա. Շեկոյանը։

Հակառակ կապիտալիստական երկրների, որոնց բյուջեները ծառայում են սպառազինման ու ագրեսիայի նպատակների, ծառայում են նոր պատերազմների ծավալման, Սովետական Միության, այդ թվում Հայկական ՍՍՌ պետական բյուջեն հանդիսանում է խաղաղության բյուջե։ Նրա հիմնական միջոցները հատկացվում են ժողովրդական տնտեսության հետագա ամրացման և ընդարձակման կարիքներին, հատկացվում են կուլտուրայի զարգացման, ժողովրդի նյութական բարեկեցության բարձրացման նպատակներին։

Ֆինանսների մինիստր Ա. Շեկոյանի զեկուցման մեջ բերված թվերը պերճախոս կերպով ցույց են տալիս Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության հսկայական վերելքը, նրա աննախընթաց ծաղկումը։

Իր զեկուցման սկզբում ֆինանսների մի-

Նիստը Շեկոյանը կանգ առավ Հայկական ՍՍՌ 1950 թվականի պետական բյուջեի կատարողականի վրա։ Անցյալ տարի Հայկական ՍՍՌ պետական բյուջեի եկամտային մասը փատարվել է 1 միլիարդ 179,2 միլիոն ռուբլով, կամ 105,6 տոկոսով, իսկ ծախսերի մասը՝ 1 միլիարդ 134,5 միլիոն ռուբլով, կամ 101,6 տոկոսով։ Այսպիսով եկամտային մասը 44,7 միլիոն ռուբլով գերազանցել է ծախսերին։

Անցյալ տարի պետական բյուջեից 323 միլիոն ռուբլի հատկացվել է արդյունաբերական ձեռնարկությունների ընդարձակմանը, բնակարանային-կոմունալ շինարարությանը, քաղաքների և շրջանային կենտրոնների բարեկարգմանը, գյուղատնտեսության, ջրային ու անտառային տնտեսության զարգացմանը։ Տարեկան բյուջեի 62,4 տոկոսը կամ 707,5 միլիոն ռուբլի հատկացվել է սոցիալ-կուլտուրական միջոցառումների ֆինանսավորմանը, ըստ որում մոտ 500 միլիոն ռուբլի կազմել է լուսավորության ծախսերը և ավելի քան 150 միլիոն ռուբլի՝ առողջապահության ծախսերը։

Հետպատերազմյան շրջանի հինգ տարվա ընթացքում, սկսած 1945-ից մինչև 1950 թվականը ներառյալ, միայն ժողովրդական տնտեսության զարգացման վրա ծախսվել է 1 միլիարդ 691,1 միլիոն ռուբլի։ Այսպիսի խոշոր ներդրումների շնորհիվ տարեցտարի զարգանում են ռեսպուբլիկայի արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը։ Բավական է ասել, որ անցյալ տարի Սովետական Հայաստանի արդյունաբերության համախառն արտադրանքի մակարդակը նախապատերազմյան 1940 թվականի մակարդակի հետ համեմատած, գերազանցեց 2,4 անգամ։

Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության և կուլտուրայի նոր, հզոր վերելքի փայլուն հնարավորություններ է ստեղծում 1951 թվականի պետական բյուջեն։ Գերագույն Սովետը իր ընդունած Օրենքով ընթացիկ տարվա պետական բյուջեն հաստատեց՝ եկամտային մասով 1 միլիարդ 158 միլիոն 862 հազար ռուբլի, ծախսային մասով՝ 1 միլիարդ 158 միլիոն 827 հազար ռուբլի։

Խիստ ուշադրավ է բյուջեի եկամտային մասը։ Այդ եկամուտների հիմնական մասը գոյանում է արդյունաբերության և ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի կուտակումներից։ Միայն արդյունաբերական ձեռնարկությունների շահույթներից կատարվող մասհանումները այս տարի կազմելու են ավելի քան 758 միլիոն ռուբլի, կամ ամբողջ եկամուտների 65,5 տոկոսը։ Այս թիվը վկայում է ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության նոր վերելքի, արդյունաբերական ձեռնարկությունների շահութաբեր աշխատանքի մասին։

Ընթացիկ տարվա բյուջեով խոշոր միջոցներ են հատկացվում ժողովրդական տնտեսության ֆինանսավորմանը։ Հիմնական ներդրումների գումարը նախատեսված է մոտ 223 միլիոն ռուբլի։ Բացի այս գումարից, մոտ 640 միլիոն ռուբլու հիմնական ներդրումներ են կատարվելու միութենական ենթակայության ձեռնարկություններում, ի հաշիվ Սովետական Միության պետական բյուջեի։

Նախատեսված 223 միլիոն ռուբլուց մոտ 66 միլիոն այս տարի հատկացվելու է բնակարանային-կոմունալ շինարարությանը և քաղաքների բարեկարգմանը։ Պետական և կոոպերատիվ մարմինները կառուցելու և շահագործման են հանձնելու 34,5 հազար քառակուսի մետր բնակելի տարածություն։ Բացի այդ շահագործման է հանձնվելու 4.600 անհատական բնակարան։ Խոշոր աշխատանքներ են կատարվելու փողոցների ասֆալտապատման և բարեկարգման համար։ Քաղաքներում գոյություն ունեցող ջրմուղների ցանցը կընդարձակվի ավելի քան 60 կիլոմետրով։ Շահագործման կհանձնվի Երևանի երկրորդ ջրմուղը։

Գյուղատնտեսության, ջրային և անտառային տնտեսության զարգացման համար հատկացված միջոցները կազմում են մոտ 117 միլիոն ռուբլի՝ 34,4 միլիոնով ավելի քան անցյալ տարի։ Խոշոր միջոցառումներ են տարվելու գյուղատնտեսական կուլտուրաների, առաջին հերթին ցորենի արտադրությունն ավելացնելու համար։ Ընթացիկ տարում ոռոգելի հողերի տարածությունը ռեսպուբլիկայում ընդարձակվելու է 4.000 հեկտարով։ Լայն աշխատանքներ են սկսված Սևանա լճի ափերն անտառապատելու համար։ Այս տարի անտառապատվելու է 1.000 հեկտար։

Տնտեսության հզոր վերելքը ստեղծում է բոլոր նախապայմանները ժողովրդական լայն իավերի նյութական բարեկեցության և կուլտուրական մակարդակի բարձրացման համար։ Սովետական Հայաստանի Պետական բյուջեից այս տարի 715,7 միլիոն ռուբլի կամ նախատեսված բոլոր ծախսերի մոտ 62 տոկոսը հատկացվելու է լուսավորության, առողջապահության և սոցիալական ապահովության կարիքներին։ Այդ գումարից 78 միլիոն ռուբլի հատկացվում է միայն ռեսպուբլիկայի բարձրագույն ուսումնական հաստատությունների և տեխնիկումների պահպանմանը, չհաշված այն հաստատությունները, որոնք պահվում են Սովետական Միության բյուջեի հաշվին։ Բարձրա-

գույն ուսումնական հաստատություններում սովորողների թիվը կկազմի 17 հազար մարդ։ Այս տարի այդ հաստատությունները կտան ավելի քան 3.300 շրջանավարտ։

Պետական բյուջեից մոտ 158 միլիոն ռուբլի հատկացվելու է առողջապահական հաստատությունների՝ հիվանդանոցների, բուժարանների, հանգստյան տների պահպանման համար։

Վերջապես խոշոր միջոցներ են հատկացվելու կուլտուր-լուսավորական հիմնարկների ցանցի ընդարձակման, գիտության, արվեստի, գրականության զարգացման համար։ Ընթացիկ տարում ռեսպուբլիկայում գործելու է 1.300 ակումբ և 1.700 գրադարան։ Պետական բյուջեով Հայաստանի գիտական հաստատություններին այս տարի տրվելու է 51 միլիոն ռուբլի, որից 34 միլիոն ռուբլի Գիտությունների ակադեմիային։

Սովետական Հայաստանի Պետական բյուջեն վառ կերպով ցույց է տալիս, թե ինչպես բուռն կերպով է աճում մեր չքնաղ Հայրենիքը սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում։ Մեջ բերված թվերը հայ ժողովրդի խաղաղ, ստեղծագործական աշխատանքի պերճախոս ապացույցներն են։ Այդ թվերը խոսում են այն մասին, թե ինչպիսի մեծ հոգատարություն է ցուցաբերում Սովետական կառավարությունը երկրի տնտեսության զարգացման, կուլտուրայի և գիտության է՛լ ավելի ծաղկման, ժողովրդական զանգվածների բարեկեցության նկատմամբ։

Հայ ժողովուրդը, լցված անհուն երախտագիտությամբ դեպի հարազատ Սովետական կառավարությունը, չանք չի խնայում իր ազնիվ, անձնվեր աշխատանքով է՛լ ավելի շենացնելու իր Հայրենիքը, ամրապնդելու խաղաղության գործը։

Մաղթենք մեր Ռեսպուբլիկայի նորընտիր Գերագույն Սովետին ամենայն հաջողություն իր գործունեության ընթացքում։

ՌՈՒԲԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Բացվում է փետրվարի 25-ի խաղաղ, ձմեռային պայծառ առավոտ։ Մայրաքաղաքի ժամացույցի վեց համաչափ զարկերը ազդարարում են Հայկ. ՍՍՌ Գերագույն Սովետի ընտրությունների սկիզբը։

Մտովի սլանում ես արևաշող Հայաստանի քաղաքներն ու գյուղերը, ավաններն ու շենները, մեր երիտասարդ ռեսպուբլիկայի նորակառույցները, քաղցրաժպիտ Սևանից մինչև Ղափանի գործարանները, Արարատյան ընդարձակ դաշտավայրի սիրուն, վարդագույն ու լուսակերտ չքնաղ Երևանից մինչև մեր խրոխտ ու վեհ լեռները, կոլտնտեսություններն ու դաշտերը, և քո առաջ բացվում է մի հիասքանչ վեհություն։ Քո հարազատ Հայրենիքի կենսատու սրտի բաբախյունն ես լսում ամենուրեք։ Վեհ է ու նվիրական փետրվարի 25-ի օրը. ժողովուրդը ընտրում է իր պետական բարձրագույն օրգանը։

Երբեմնի բազմաչարչար հայ ժողովուրդը, որը դարեր շարունակ երազել է ունենալ իր ամուր պետականությունը, երազել է ազատագրված տեսնել իր Մայր Հայրենիքը օտարների խժդժություններից, այսօր ամենայն իրավամբ ունի իր անկախ պետականությունը, ունի իր ազատ ու նոր, լուսազարդ Հայրենիքը, տերն է իր այսօրվա շքեղ ներկային և գալիք լուսակառույց ու պայծառ ապագային, իր սիրասուն զավակների բերանով իր ձայնն է տալիս իր հարազատ ընտրյալներին, քվեարկում է իր նոր պետականության օգտին։

Միանգամայն հավասարության սկզբունքների վրա հիմնված ընտրությունները հանդիսանում են երկրի աշխատավորների ուժերի ստուգատեսի օրը, ուր երևան է գալիս Հայրենիքի անձնվեր զավակների ուժերի համախմբվածությունն ու միասնականությունը։

Ձայն բազմաց՝ ձայն Հայրենիքի։ Ընտրում է ժողովուրդը նրանց, որոնք իր ծոցից են դուրս եկել, որոնք հավատարիմ են ժողովրդին և որոնք լավագույն արտահայտողն ու պաշտպանը պիտի լինեն ժողովրդի մաքուր ու սրբազան իղձերի։ Ով ծառայում է իր ժողովրդին, ծառայում է իր Հայրենիքին։

Ժողովուրդը լիիրավ տերն է իր իրավասությունների, նա կարող է հետ կանչել դեպուտատին, եթե նա իրեն չի արդարացնում։

Ահա թե ինչպիսի՛ դեմոկրատիկ սկզբունքների վրա են հիմնված Հայկ. ՍՍՌ Գերագույն Սովետի ընտրությունները։

Առավոտյան նշանակված ժամին սկսվել է ընտրությունը։ Խուռն բազմությամբ դեպի ընտրական տեղամասերն են շտապում ռեսպուբլիկայի քաղաքացիները, բազմազան պրոֆեսիաների տեր մարդիկ, սովետական երկրի մարդիկ, բոլորն էլ կյանքով ու եռանդով լի, պայքարի ու հաղթանակի երջանկավետ ժպիտը երեսներին, իրենց մաքուր խիղճն ու հոգին դրած ընտրական թերթիկների մեջ, գալիս են նրանք քվեարկելու գալիք մեծ օրվա համար, խաղաղության համար։

Նույնպիսի ուրախ եռուզեռ է տիրում նաև Ս. Էջմիածնում։ Մայր Աթոռի միաբանությունը այսօր արտակարգ ցնծության մեջ է։

Ժամն արդեն 11-ն անց է, Մայր Տաճարում սկսել է կիրակնօրյա Ս. Պատարագը։ Հավատացյալները Տաճարում ծնրադիր աղոթում են, տիրում է մի պահ խորհրդավոր լռություն, և հանկարծ այդ խորհրդավոր լռությունը խզում է պատարագիչ քահանայի հուզմունքից դողացող ու կերկերուն ձայնը.

— Խաղաղությի՛ն ամենեցուն։

Եվ այդ ձայնը ալիք առ ալիք տարածվում է Տաճարում, հասնում յուրաքանչյուրին և

ստիպում մտածել խաղաղության մասին։ Խաղաղության մեջ խտացված է միլիոնների սրտի բաբախյունը, տենչանքը, խաղաղասեր մարդության լավագույն ցանկությունը, կամքն ու աշխատանքը։

Դարեր շարունակ ազատատենչ, շինարար ու խաղաղասեր ժողովուրդների շրթունքին դրոշմված է եղել այդ սրբազան բառը՝ խաղաղություն։

Դրսում պարզ, արևոտ եղանակ է։ Օդը լի է մի բերկրալից և ցնծալի ուրախությամբ։ Լսվում է Մայր Տաճարի զանգերի ախորժալուր զողանջյունը, ձայները վետվետում են, ուրախ թրթռում օդում և տարածվում հեռավոր հորիզոններում։

Այդ ուրախ հնչյունների մեջ լսում ես Մայր Հայրենիքի հավերժության և խաղաղության սրբազան ձայնը։

Վերջանում է Ս. Պատարագը, Տաճարից արդեն լսվում են «Որ օրհնես զայնոսիկ...» վեհապանծ աղոթքի մրմունջները։ «Զխաղաղութիւն պարգևեա ամենայն աշխարհի...»,— շարունակում է պատարագիչը։

Որքա՜ն արդիական է հնչում այսօր Հայ առաքելականդ եկեղեցու Ս. Պատարագը։ Այն համայն խաղաղասեր մարդկության խաղաղասիրական, մարդասիրական վեհ ցանկությունն ու սրբազան իղձն է վերաոաքված Ամենաբարձրյալին։ Այն մի վեհ կոչ է ընդդեմ մարդատյացության, ընդդեմ ժողովուրդների եղբայրասպան պատերազմի, ավերի, սովի և թշվառության։

Ս. Պատարագից հետո, Մայր Աթոռի միաբանները հավաքվում են, և Հոգևոր Ճեմարանի ուսանողների և դասախոսների հետ թափոր կազմելով, հանդիսավոր կերպով ճանապարհ ընկնում դեպի ընտրական տեղամասի շենքը, որտեղ հասնելով, նույն հանդիսավորությամբ բարձրանում են վեր, վերցնելով քվեաթերթիկները, մտնում են շքեղորեն զարդարված սրահը, ուր դրված է քվեատուփը և նստած են հանձնաժողովի անդամները։ Մեկը մյուսի հետևից քվեատուփին են մոտենում միաբանության անդամները ըստ ավագության, և գցելով քվեատուփի մեջ իրենց թերթիկները, օրհնում են և գոհության ժպիտը երեսներին՝ դուրս գալիս։ Նրանց հետևում են Հոգևոր Ճեմարանի ուսանողները։

Մայր Աթոռի միաբանության և Հոգևոր Ճեմարանի ուսանողության հանդիսավոր թափորը արդեն հետ է վերադառնում։ Քայլում են բոլորը և խորհում այն մասին, թե որքա՜ն բարձր է գնահատվում մեր երկրում մարդը, որքա՜ն բարձրաթռիչ է նա իր հիասքանչ ձգտումներով, ամենօրյա աշխատանքի, պայքարի ու հաղթանակի տենչերով։

Հայ հոգևորականը, այսօր ամենից շատ, իր իրավունքների լիակատար տերն է, նա կանգնած է իր իսկական բարձրության վրա։ Այսօր նա երկրի հարյուր հազարների հետ ընտրում է իր Հայրենիքի գերագույն օրգանը, որպես իր Հայրենիքի լիիրավ քաղաքացի։ Պարտքի խորը և լրիվ գիտակցությամբ է կատարում նա իր քաղաքացիական սրբազան պարտքը։ Այսօր նա քվեարկելով ժողովրդի ընտրելիների օգտին, դիտե, որ քվեարկում է իր հարազատ պետության օգտին, իր Հայրենիքի տնտեսական հզոր վերելքի օգտին և համայն աշխարհի խաղաղության օգտին։

Հայ եկեղեցականի այս գիտակից մոտեցումը համաժողովրդական ընտրություններին լավագույն ապացույցն է այն բանի, որ նա ամուր կանգնած է իր հարազատ ժողովրդի կողքին, զորավիգ ու պաշտպան իր Հայրենիքին։

Հայ հոգևորականը իր մասնակցությունը ցուցադրելով հանդերձ, ոգևորվում է իր լուսաշող Հայրենիքի նորանոր նվաճումներով և անբիծ ու մաքուր հոգով օրհնում ու աղոթում նրա բարօրության համար։

Ուրեմն թո՛ղ օրհնյալ լինի ամենակարող Աստուծո սուրբ կամքը։

Թո՛ղ ծաղկի ու բարգավաճի մեր նվիրական Մայր Հայրենիքդ։

Լ. ԱՃԵՄՅԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ

աղքր է հայ մարդուն համար խոսիլ իր հայրենի ստացվածքներու մասին, առավել ևս քաղքը՝ հայրենադարձի մը համար, որ կորուստի ցավն ունի անվերադարձ անուրջին, և որ հիմա նորաստեղծ ազգային հիմնարկներուն է կապած իր բոլոր սերն ու բոլոր հույսերը։ Ու պատճառներ ունիմ հավատալու և հավատալու, թե քա՞ղքը, անհունորեն քաղքը է անոնց մասին լսել նաև մեր տարագիր բազմությունները, որոնք չեն կրցած տեսնել այն հրաշալիքները, որոնք մեր Հայրենիքի փառքը կկազմեն այսօր, և որոնք այնքան շատ ըան կխոսին ամեն հայրենասեր հայու սրտին ու մտքին։

Ու Մյասնիկյանի անվան Պետական հանրային գրադարանը, որու հիմնադրության երեսնամյակն է այս տարի, մեկն է մեր Հայրենիքի այդ փառքերեն, ոչ միայն իր նյութական շենքովը, այլև իր պարունակությունովը, իր կատարած սքանչելի դերովը մանավանդ։ Ան մեր Հայրենիքի այն հիմնարկներեն է, որ քեզ կմղե մտածելու և հիանալու ոգիին մասին, որ մեր ժողովրդին է, և որու համաձայն ամեն ատեն, որ քիչ մը հանդիստ է տեսեր մեր ժողովուրդը ու պատառիկ մը հաց՝ ստամոքսի քաղքը անցնելու չափ, իր հոգեկան, իր մտքի պահանջքներուն է աշխատեր բավարարություն տալ։ Կպատմեն թե՝ 1915—1918 ահավոր տարիներուն, արաբական անապատները նետված հայ մայրերը մատներով ավազի վրա այբուբեն գրելով մեր լեզուն կտրվեցնեին իրենց հոգեհատոր զավակներուն...։

Մեր Պետական հանրային գրադարա՞նը։ Անվանի ճարտարապետ Թամանյանի նախագծովն է կառուցվեր ան, վարդագույն տուֆե, հինգ հարկի վրա, ընդարձակ ու լուսավոր, Տերյանի անվան պողոտային ծայրը, այլ խոսքով, համալսարանական ոստանին մեջ, և որու մեջ է տեղավորված նաև Մատենադարանը, այսինքն Ձեռագրատունը, որ, ի մոտո պիտի ունենա իր առանձին շենքը։ Ներկա շենքի կառուցումեն առաջ, Գրադարանը տեղավորված էր Կուլտուրայի տունին մեջ, բայց այդտեղ իրեն հատկացված բաժինը անբավարար էր, անոր սրահը հազիվ 80 հոգի կրնար պարունակել, մինչ ներկա շենքը ունի 5 սրահ և կրնա պարունակել 300 հոգի միաժամանակ։

Անոր գրենական ֆոնդի սկզբնական տարրերը կազմած են Երևանի 1836-ին հիմնված Գավառական գրադարանի և Թիֆլիսի Բարեգործական ընկերության գրքերը, մոտ 40,000 կտոր։ Այսօր այդ թիվը բարձրացած է 2,500,000-ի։

1925 թվեն ի վեր ան մտած է միութենական նշանակություն ունեցող գրադարաններու շարքը և իրավունք ստացած Միության սահմաններուն մեջ լույս տեսած գրքերեն ստանալու մեկական օրինակ, իհարկե ձրի և պարտադիր կարգով։

Բայց մեր Գրադարանի գրքային ֆոնդը այլապես ևս աճման մեջ է անընդհատ։ Գրքեր կգնվին անհատներե և կարևոր նվերներ կստացվին առանձին հիմնարկներե։ Այսպես օրինակ, մեր Պետական հանրային գրադարանին են հանձնված Մոսկվայի Լաղարյան ճեմարանի 30,000 կտոր գրքերը, Թիֆլիսի հայոց Հոգևոր Սեմինարիայի գրադարանը՝ 7,000, Երևանի նախկին Օրիորդաց և Մանչերու գիմնազիայի գրադարանը՝ 18,000, Կովկասի հայոց Բարեգործական ընկերության գրադարանը՝ 5,000, Ալ. Մյասնիկյանի անձնական գրադարանը՝ 7,000, Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի — Երկայնաբազուկի գրադարանը՝ 12,000, երաժշտագետ Ղորղանյանի գրադարանը՝ 6,000 և Լեոյի գրադարանը՝ 4,000 կտոր գրքերով։ Նվերներ

ստացված են նաև արտասահմանեն։ Տեվեճ-լանը և Տոնապետյանը նվիրած են մոտ 5,000 արժեքավոր գրքեր։ Լոնդոնեն՝ պրոֆ. Ռումանյանեն ստացված է հայ պարբերական մամուլի շատ արժեքավոր հավաքածու մը։ Միայն 1946 թվին Գրադարանը նվեր ստացած է 30,000 կտոր գիրք Ֆրանսայեն, Ռումանիայեն և հեռավոր Մեքսիկայեն։ Անտեղվի հայ մտքի արտադրությունը, հայ ժողովրդի մտավոր հարստությունը։ Եվ արդեն Հայկ. ՍՍՌ Ժողկոմսովետի 1943 թվի որոշումի համաձայն, Գրադարանը կազմակերպած է գրքային անձեռնմխելի ֆոնդ մը, ուր պահած է հավաքվին հայերեն լեզվով հրատարակված և հրատարակվելիք բոլոր գրքերը, սկսած առաջին տպագիր գրքեն։ Հասկնալի է ուստանձնիր աշխատանքի շնորհիվ կարելի եղած է մեր Գրադարանին մեջ միատեղել հնատիպ և հազվագյուտ գրքեր, օրինակ՝ Պարզատումարը (տպ. 1512-ին), Ուրբաթգիրքը (տպ. 1513-ին), Հարանց վարքը (տպ. 1640-ին) և այլն։ Այսուամենայնիվ, Հանրային գրադարանը ցարդ կարողացած է ձեռք բերել հայերեն գրքի 60%-ը միայն. դեռ կպակսի ուրեմն 40%-ը, որպեսզի ամբողջանա և միանթեմն, որ արտասահմանը կարևոր դեր ունի կատարելիք այս մասին։

Հա՞րկ է շեշտել թե Գրադարանի գրքային ֆոնդի ստվարագույն մասերեն մին ռուսերեն է, որով գրեցին իրենց հրաշակերտները Պուշկինը, Լերմոնտովը, Տոլստոյը, Գորկին և այնքան ուրիշները։ Բայց, բացի ռուսերենեն. Գրադարանը հարուստ է նաև ֆրանսերեն գրքերով, մասնավորապես 16-րդ, 17-րդ և

Այեքսանդր Մյասնիկյանի անվան Պետական հանրային գրադարանը

18-րդ դարերուն պատկանող ճանապարհորդական և այլ հազվագյուտ հեղինակություններով։

Մեծ արժեք կներկայացնեն նաև Գրադարանի ձեռք բերած արխիվները, օրինակ Լազարյան ճեմարանի, «Կավկազսկիյ վեստնիկ»ի («Կովկասյան լրաբեր»), երաժշտագետ Ղորղանյանի և ուրիշներու արխիվները։

Առանձնապես կարժե հիշել նաև Հանրային գրադարանի հրատարակությունները, գործ Գրադարանի աշխատակիցներուն։

Երկուքուկես միլիոն գիրք ունեցող այս հսկա գրադարանը, որու գործունեության սահմանը այնքան ընդարձակ է, ունի բնականաբար համապատասխան պաշտոնեություն և բյուջե։ 127 է պաշտոնեության թիվը, որոնց 8-ը՝ հայրենադարձ մտավորականներ։ Ինչ կվերաբերի բյուջեին, լավ է, որ տամ քանի մը թիվեր, ավելի լավ բացատրելու համար անոր գործունեության։

Արդ, անոր բյուջեն եղած է 1923 թվին՝ 4,500 ռուբլի, 1930 թվին՝ 37,000 ռուբլի, 1940 թվին՝ 1,022,000 ռուբլի, 1947 թվին՝ 2,000,000 ռուբլի։

Գալով հաճախումներուն, Հանրային գրադարանը հաճախած են 1923 թվին՝ 35,600 հոգի, 1941 թվին՝ 117,000 հոգի, 1950 թվին՝ 200,000 հոգի։

Իսկ թե ինչքա՞ն գիրք է սպասարկված, կամ գրադարանային բացատրությամբ՝ ի՞նչ համեմատություն կներկայացնե «գրքերու տացքը», ահա՝ պատկերը. 1923 թվին՝ 43,000 գիրք, 1941 թվին՝ 219,000 գիրք, 1950 թվին՝ 351,000 գիրք։

Եվ այս թիվերը՝ երբ գրքերը տունը չէին տրվեր։ Իսկ այսուհետև, երբ նոր որոշման համաձայն, պիտի թույլատրվի, որ տուն ևս տարվին գրքերը, կարելի է հաշվել թե ինչքա՞ն պիտի փոխվին վերոհիշյալ թիվերը։

Եվ նախկին ուսուցչին ու միշտ գրքի բարեկամին համար վերին աստիճանի սփոփարար է պատկերը Գրադարանի այն ընթերցասրահին, որ ամեն վայրկյան, մինչև ուշ գիշեր, լեցուն է երկսեռ ուսանողներով, որոնք, խումբ-խումբ կամ առանձին, կկարդան ու կուսումնասիրեն, խոր լրության ու կարգապահության մեջ։ Ու դեռ պետք էր հիշել նաև մյուս բաժանումները, որոնք միշտ լի են գիտաշխատողներով, ամեն սեռի և ամեն տարիքի այն ուժերով, որ մեր մայրաքաղաքի մտավորականության ընտրյալ մասն է կարելի է ըսել։ Հանրային գրադարանին մեջ կարելի է հանդիպիլ նաև հայտնի գիտնականներու և արտասահմանեն եկած հայ կամ օտար ականավոր այցելուներու։

Բայց դեռ պետք էր հիշեի Պետական հանրային գրադարանի մեկ ուրիշ գործունեությունը՝ ցուցահանդեսները, որոնք կընդգրկեն պատմական թեմաներ, քաղաքական ընթացիկ հարցեր, նշանավոր տարեթիվեր և այլն։ 1944 թվին ան կազմակերպած էր «Հայրենական պատերազմի ճակատը», «Հայ նշանավոր զորավարները և անոնց արժանավոր ժառանգորդները», «Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմին» ցուցահանդեսները, և այլն։ 1946 թվին ան կազմակերպած էր «Հայ տպագիր գրքի ցուցահանդեսը», ուր ի հայտ էին բերված հայ գրքի տպագրության, ծագման և պատմության առանձին կեդրոնները, հայ գրքի հիմնական ուղղությունը և հասարակական-կուլտուրական դերը հանրային կյանքի մեջ։ Այս ցուցահանդեսը տևած է չորս ամիս և ունեցած է 20,000 այցելու։ Նյութին թարմությամբը և այժմեականությամբը նշանավոր եղած է նաև Կոմունիստական Պարտիայի մեծ ղեկավարներու և Սովետական Պետության հիմնադիրներու՝ Լենինի և Ստալինի կյանքին ու գործունեության նվիրված ցուցահանդեսը, որու օրական այցելուներուն թիվը եղած է 1,300 հոգի։ Ցուցահանդեսներու հատկացված ընդարձակ ու լուսառատ դահլիճին պատերը ներկայիս զարդարված են մեր երկրի մեջ Սովետական կարգերու հաստատման 30-ամյակին նվիրված ցուցահանդեսի պատկերներով։ Եվ այս ամենը Մյասնիկյանի անվան նվիրված այս հիմնարկը կդարձնեն լույսի փարոս մը, որուն նմանը չէ ունեցած մեր ժողովուրդը երբևիցե։

1913-ին, Հայաստանի ներկա տերիտորիայի վրա գոյություն ունեին ոչ ավելի քան 30 գրադարաններ, 120,000 գրքով։ Ներկայիս 2,141 է Հայաստանի մեջ գոյություն ունեցող գրադարաններու թիվը, 6,500,000 կտոր գրքով։ Ահա՝ թե ի՞նչ չափով է աճած մշակութային գործը մեր երկրի մեջ և ահա թե ի՞նչ կնշանակե ունենալ սեփական Հայրենիք, հարազատ ու ժողովրդանվեր կառավարություն, որ ապահովության ու բարօր կյանքի մեջ մտքի սնունդ հայթայթեր իր ժողովրդին։

Այս քանի մը տեղեկություններեն ընթերցողը կունա այժմ մոտավոր գաղափար մը

կազմել գրադարաններու այն վիթխարի թվի մասին, որ ամբողջ Սովետական Միությանն է։ Եվ երբ այսքան մեծ է գրադարաններու գործը ամբողջ Միության սահմաններու մեջ և այնքան կարևորություն կտրվի անոր, բնական էր, որ ստեղծվեր դրադարանագետներու կադր մը ալ, որ գիտականապես և օգտակար կերպով սպասարկեր այդ գործին։ Եվ այդ նպատակին կծառայե Մոսկվայի մասնագիտական դպրոցը, որմե 13 շրջանավարտներ ունի մեր երկիրը։ Հինգը այդ շրջանավարտներուն Պետական հանրային գրադարանի պաշտոնեության մաս կկազմեն, մինչ մնացյալները Հայաստանի մյուս գրադարաններուն մեջ կաշխատին։ Սակայն ներկայիս Երևանի համալսարանի Ֆիլոլոգիական բաժինն ևս ձեռնարկած է այդ մասնագիտական ուսուցման, հատուկ ճյուղի մը ստեղծումովը։ բացի այդ, ստեղծված են նաև գրադարանագիտական տեխնիկումներ, երկրի այդ հիմնարկները գործին լավապես ծանոթ ուժերով օժտելու համար։

Շատ մեծ է, ուրեմն, Պետական հանրային գրադարանի դերը մեր կուլտուրական կյանքին մեջ։ Այդ դերը օրեցօր ավելի կշեշտվի, ինչ չափով որ կավելնա մեր ուսանողներու և գիտաշխատողներու թիվը, ինչ չափով որ կավելնա հիմնարկի գրքային ֆոնդը։ Եվ արդեն ներկայիս տեսի անբավարարություն կզգացվի և որոշված է ընդարձակել Գրադարանը նոր մասերու կառուցումով, որոնք պիտի պարունակեն ընդարձակ ընթերցասրահներ, զանազան բաժիններ, առանձին աշխատասենյակներ, բաժիններու վարիչներու համար առանձնասենյակներ, բաժիններու ֆոնդերու համար գրապահոցներ, բաժիններու գրքերեն օգտվողներու, գիտաշխատողներու համար առանձին խցիկներ, նաև ընդհանուր նոր գրապահոցներ 3—4 միլիոն գրքի համար։ Նոր մասը պիտի ունենա նաև երաժշտական գործիքներու դահլիճ մը, այդ ճյուղով զբաղողներու համար իրը պարապմունքի վայր, որ, իհարկե, պետք է կազմված ըլլա մյուս բաժիններեն։ Այս նոր բաժնի նախագիծը կազմած է Ակադեմիկոս Թամանյանի որդին, երիտասարդ ճարտարապետ Գ. Թամանյանը, շարունակելով իր երախտավոր հոր գործը։

Ալեքսանդր Մյասնիկյանի անվան Պետական հանրային գրադարանի ընթերցասրահը

***

Եվ ամեն անգամ, որ ներս կմտնեմ մեր այս լուսո փարոսեն՝ Մյասնիկյանի անվան Պետական հանրային գրադարանեն ու կտեսնեմ կյանքոտ աշխուժը, որ կտիրե ներսը, հպարտանքի ու գոհունակության զգացում մը կհորդի ներսս, որովհետև մե՛րն է այդ շենքը, այդ հիմնարկը, մե՛նք ենք ստեղծող այդ, և ոչնչեւ Եվ անմիջապես հետո մտքիս մեջ կվերհառնու տխուր հիշատակներու շարքը մեր կորուստներուն, նյութական ու բարոյական կորուստներուն, մեր մտավոր հարստության կորուստներուն մանավանդ։ Բայց մտածումներուս այս թելը կկտրվի հանկարծ, երբ նայվածքս կանգ կառնե Ստալինի սա խոսքին վրա, որ իբր վերտառություն 30-ամյակին նվիրված ցուցահանդեսի սրահին ճակատը կզարդարե. «Միայն Սովետական Իշխանության գաղափարը Հայաստանին բերեց խաղաղություն և ազգային վերածննդի ճնարավորություն»։

Ու տրամադրությունս հիմնովին կփոխվի, երբ կզգամ քովես անցքը գեղադեմ և ուրախ պատանիներուն, որոնք, կարոտով, մանկական բաժինը կերթան կարդալու, մտքերնին ճոխացնելու, երամին պես մեղուներուն, որոնք դեպի բուրաստանները կդիմեն ուրախությամբ, անուշ բզզյունով։

ԱՂԱՎՆԻ ՄԵՍՐՈՊՅԱՆ

ՄԵԾ ՎԱՐՊԵՏԻՆ ՀԵՏ ԴԵՊԻ ԳԵՂԱՐԴ ԵՎ ԳԱՌՆԻ

Հումբ մը մտերիմներով, 1947-ի հուլիսի 14-ին Գեղարդի վանքը գացինք։ Մեզ հետ էր նաև մեր սիրելի բանաստեղծ Ավետիք Իսահակյանը իր տիկնոջ հետ։ Ավտոմեքենաներով զբոսապտույտի գացողները, ամբողջ ճամբու երկայնքին, մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանին պատվո ցույցերով կդիմավորեին։

Այդ օրը Վարդավառի տոնն էր։ Հայաստանի ամեն շրջաններեն հավատացյալներ հավաքվեր էին վանքի և շրջափակին մեջ։ Հեռավոր շրջաններեն, օրեր առաջ, ուխտի եկած էին այնտեղ։ Գեղարդի մայր տաճարը կշողշողար հավատացյալներու վառած հազարավոր մոմերեն։ Խունկի բույրն ու ծուխը տարածվեր էին ամեն կողմ։ Ս. Պատարագի երգեցողություններուն կխառնվեին հավատացյալներու աղոթքի մրմունջները։

Ս. Պատարագը վերջանալուն, տաճարի բազմությունը կրկնապատկվեցավ։ Մկրտությունները ծայր տվին։ Բազմաթիվ մանուկներու լացն ու ճիչերը կարձագանքեին տաճարի ամեն կողմերեն։ Դուրսը, շրջափակին մեջ, ավանդական մատաղի կաթսաները քով քովի շարված կեռային մատաղներու տեսակներով, իրենց բույրով ու շոգիի ամպերով լեցնելով օդը։ Մատաղի կաթսաներուն կհսկեին հայ մամիկներ և հարսներ, և իրենցմով հետաքրքրվողները կհրավիրեին իրենց մատաղի սեղանները պատվելու։

Քիչ հեռվեն, Գեղարդի վանքի մուտքին շրջակայքը բացված խնջույքի սեղաններեն երբ տեսան անվանի բանաստեղծը, ընդառաջ վազեցին, ամեն խումբ իր մեծ հյուրը պատվեց իր ունեցած ամենահամեղ մեկ պատառով։ Ի պատիվ անոր, խնջույքի սեղանները իրար միացուցին, գինիի բաժակները զնգզնգացին, առանց տարիքի և սեռի խտրության համբուրեցին անոր ձեռքերը։ Հուզիչ էր պատկերը և խոսուն։ Իսահակյանի վայելած ժողովրդականությունը պարզ ու ընտանեկան ձևով ի հայտ կուգար։ Բոլոր բաժակները կպարպվեին անոր կենացը։ Մտավորական ընկերներու խանդավառ բաժակաճառերը այնքան քաղցր հնչեցին, որքան Արտաշատեն, Դվինեն կամ այլ շրջաններեն եկած դյուղացիներու հարազատ ու անպաճույճ խոսքերը։ Բանաստեղծին սեղանը լեցվեցավ շամփրված խորովածներու տեսակներով, լավաշի մեջ փաթաթված ավանդական մատաղի մսով, Հայաստանի բազմապիսի պանիրներով ու մրդերով։ Այլ ու ոսկի գինիի շիշերը, Գառնիի հայտնի կեռասը, Գեղարդի քաղցր մեղրաթթուը, Շալախի ծիրանը զարդարեցին Հայաստանի քեֆի սեղանը։ Ակսավ հայկական երաժշտությունը, լսվեցան դհոլն ու զուռնան։ Խումբերն, իրար միացած, երգեցին բանաստեղծի բառերով հյուսված հայտնի «ՄաՀկայեսս», «Դարդս լացեք», «Սիրեցի, յարս տարան» և այլ երգեր։ Հայ ժողովրդական երգն ու պարը խանդավառեցին բոլորը։ Հայկական պարի անծանոթ վարպետներ և վարպետուհիներ մեջտեղ ելան, խանդավառեցին մյուսներն ալ, և բոլորը հանձնված ժողովրդական պարերգներուն, օրնիբուն պարեցին, Գեղարդի բարձրարերձ ժայռերը թրնդացնելով երգի շեշտերով։ Խանդավառվեցավ Ավետիք Իսահակյանը իր Հայրենիքի և ժողովրդի բարիքներուն ծոցին մեջ, կարմիր գինիի բաժակը ձեռքին, կանգնեցավ ամենուն դիմաց, իր սրտահույզ խոսքերով պատկերեց Սովետական մեր Հայրենիքի երջանիկ այս օրը։

Ուշ ցերեկին, բանաստեղծն առաջնորդեց մեզ դեպի Գեղարդի վանքի պատմական անկյունները։ Հայրենասեր Ավետիք Իսահակյանը, իր պատկառելի տարիքեն և արևի ճառագայթներեն լուսաշող դեմքով, Գեղարդի հնադարյան հուշարձանին մեջ անմահ նահապետի մը կերպարանքն ուներ։ Ան մեզի դիտել տվավ ժայռերու մեջ փորված երեք մեջընդմեջ բացված եկեղեցիները, որոնց միակտուր սյուները բազմաթիվ խոյակներով, զմայլելի քանդակներով, խաչքարերով հայ ժողովրդի անցեալի ճարտարապետական մարդ մը, գլխարկը հանեց, խոնարհեցավ բանաստեղծին առջև, համբուրեց անոր ձեռքերը, ըսելով. «Բսե՛ ինձի, նահապետ հայրի՛կ, ուրկի՞ց կուգաս և ո՞ւր կերթաս։ Հայրենասեր բանաստեղծը հուզվեցավ և արցունքներով պատասխանեց անոր. «Վերադարձա Հայրենիք քեզ նման սիրելի եղբայրներս տեսնելու, այլևս երթալիք տեղ չունիմ, իմ նոր տունս Սովետական իմ նոր Հայրենիքս է»։

Մերունի խաշնարածին հաջորդեցին երիտասարդ տղաներ և աղջիկներ, որոնք դալ-



Գեղարդի վանքը

արվեստի հրաշալիքներեն են։ Հասանք Գեղարդի վանքին երկրորդ հարկին վրա գտնըվող եկեղեցին, ուր մինչև օրս կտեսնվին դամբարաններ և խաչքարեր, որոնց շատերուն արձանագրությունները դեռ ընթեռնելի են։ Հայրենասեր բանաստեղծը իր բացատրություններուն ամենավերջը սրտահույզ ձայնով մը ավելցուց. «Հազա՞ր ափսոս, որ այս նվիրական տաճարին մեջ հիշատակի անկյուն մը չունին այս հոյակապ հուշարձանը հրաշավերտող վարպետները»։

Գեղարդի վանքեն մեր վերադարձին հուզիչ պատկերներ ստեղծվեցան։ Կողրի գյուղացի 80-ամյա խաշնարած Համոն եկավ մեզ մոտ, տեսավ մեծեն ու փոքրեն սիրված տային ծաղկեփունջներով, բլուրներն ի վար կթռչկոտեին։ Անոնցմե ոմանք բանաստեղծի սիրերգները շուրթներուն դեպի իրեն վազեցին, սեր ու հարգանք, խինդ ու երգ, գովանք ու համբույր շրջապատեցին դայն։ Երիտասարդուհի մը իր ընկերուհիներուն հետ ծաղկեփունջ մը կազմելով նվիրեց սիրելի բանաստեղծին, ըսելով. «Ի հարգանս մեր անթառամ դափնեպսակին, որ դուք եք, ի հիշատակ մեր այսօրվան հանդիպման...»։ Հուզվեցավ բանաստեղծը և խորին շնորհակալություններով ընդունեց ծաղկեփունջը, համբուրեց դայն տվողը և, բաղդը հայացքը երիտասարդության ուղղելով, ըսավ. «Մեր այսօրվան հանդիպման հիշատակը, ձեր այս

վառ ծաղկեփունջին նման, նվիրական կմնա իմ հոգվույն մեջ։

Հայրենասեր բանաստեղծի խորհուրդով, մեր վերադարձի ճամբուն վրա, հանդիպեցանք Գառնիի Տրդատ թագավորի ամրոց-հուշարձանը։ Այնտեղ Ավետիք Իսահակյանի գիտուն բացատրություններով լսեցինք, որ 1930 թվականին սկսյալ Սովետական Հայաստանի Հուշարձաններու պահպանման կոմիտեի անմահ ճարտարապետներ Թորամանյանի, Թամանյանի և Բունիաթյանի աննկուն ջանքերուն շնորհիվ, ժայռացած հողակույտերուն մեջեն հայտնաբերվեցան հայկական արվեստի արժեքավոր մնացորդներ՝ խոյակներ, սյուներ, որոնք 1900 տարի առաջ Գառնիի մեջ եղած հայ ճարտարապետական արվեստի մասին կխոսին։ Տրդատի հուշարձանին գլխավոր մուտքին 11 քարե սանդուխները համբելով, մեզ տարավ Տրդատ թագավորի տաճարը, որուն քարապատ ամբակուռ կառուցվածքը զարդարված է քանդակներով և խոյակներով։ Տրդատի ամրոցեն դիտեցինք բնության հիասքանչ տեսարանը, որ կպարզվեր սրբատաշ, ամեհի ժայռերուն ստորոտեն հոսող Ազատ և Գառնի գետերուն եզերքներուն փռված անծայրածիր, կանաչագեղ մարգագետիններն ու մրգառատ այգիները ընդգրկելով իր մեջ։

Հայրենի կախարդիչ բնության դիմաց, հայրենասեր բանաստեղծը հայացքը չորս

Բարձրամեղակ սյուներ Գեղարդում (Պռոշյանների զինանշանը)

կողմ պտտցուց և երկար լռութենե հետո, հուզումեն խեղդվող ձայնով մը ըսավ. «Հայրենի հրաշագեղ բնության դիմաց, մարդ չի կարող չհիշել այն սիրելիները, որոնք անոր ազատության համար թափեցին իրենց արյունը, անոր սիրուն նահատակվեցան։»

Տրդատի ամրոցեն հեռանալե առաջ, ամեն մեկս դարավոր պատերուն մեջեն աճած ծաղիկներ կհավաքեինք իրր հիշատակ։

Գառնիի ծառաշատ մարգագետնին վրա,

թթենիներու տակ քիչ մը հանգստանալե վերջ, ըստ վարպետի արտահայտության՝ «Վերջին անգամ վայելեցինք անոր քաղցրահամ սև թութը և սառնորակ ջուրը»։

Մեր բանաստեղծ առաջնորդը մեզի դիտել ավավ մայրամուտի վերջին շողերուն անհետանալը։ Գառնիի բարձրաբերձ սարալանջերը պարուրվեցան կապույտ և մանիշակագույն թանձր շղարշներով։ Երկու ժամ խինդ ու ծիծաղ, երգ և ուրախություն, ապա ամենքուսը մեզ հասցուց Երևան, Գնոնի և Ղուկասյան փողոցներու անկյունը (Բանաստեղծին նախկին բնակարանը)։ Խոմբեն հրաժեշտ առավ մեր թանկագին մեծ Վարպետը իր տիկնոջ հետ, և Գեղարդի մեծ փունջը գրկած, անհայտացավ Հայաստանի մայրաքաղաքին վրա իջնող մութին մեջ։

Այդ անմոռանալի օրը միշտ թարմ պիտի մնա մեր հիշողության մեջ...։ Մեծանուն բանաստեղծ Ավետիք Իսահակյանը մեկն է աշխարհի այն երջանիկներեն, որոնք իրենց հայրենի հողին վրա, իրենց կենդանության, արժանացան իրենց ժողովուրդի սիրույն։ Ան երջանիկ է նաև որպես ավագ սերունդի հայ գրող, իր հարազատ Սովետական Հայրենիքի ծնունդն ու բարգավաճումը տեսած ըլլալուն համար։ Թախտ մը, որուն կցանկանք որ հասնին Սփյուռքի հայրենաբաղձ տարագիր մեր եղբայրները։

ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

ՆՈՐ ՏԱՐՎԱ ՏՈՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍՆԵՐԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Նոր տարվա առթիվ հունվարի 1—3-ը Երևանի մասսայական բոլոր դպրոցներում, մանկատներում, մանկապարտեզներում կազմակերպվել են տոնածառի հանդեսներ, որոնց մասնակցել են ցածր դասարանների մի քանի տասնյակ հազար աշակերտներ ու նախադպրոցական հասակի երեխաներ։

Լենինի հրապարակում կանգնեցված համաքաղաքային մեծ տոնածառի շուրջը հանդեսներ են կազմակերպել քաղաքի բոլոր ռայոնների դպրոցականները։ Հրապարակում ամբողջ օրը գործում էր կարուսելը։ Բացված էր մանկական շուկան։ Գիշերները ամբողջ հրապարակը ողողված էր էլեկտրական բազմագույն, պայծառ լույսերով։

Քաղսովետի գործկոմի սոցիալական ապահովության բաժինն իր միջոցներով Հայրենական պատերազմի ռազմաճակատներում զոհվածների երեխաների համար, նրանց բնակարաններում, կազմակերպել էր տոնածառեր և երեխաներին նվիրել էր նոր տարվա նվերներ՝ միրգ, հրուշակեղեն, հագուստ և այլն։

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԵՐԵԿՈ՝ ՆՎԻՐՎԱԾ Ն. ԶԱՐՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 50-ԱՄՅԱԿԻՆ

Դեկտեմբերի 29-ին Երևանի Սունդուկյանի անվան Պետական թատրոնում տեղի ունեցավ սովետահայ տաղանդավոր բանաստեղծ Նաիրի Զարյանի ծննդյան 50-ամյակին նվիրված հանդիսավոր երեկո։ Այստեղ էին հավաքվել մայրաքաղաքի աշխատավորության, գրականության, արվեստի, գիտության ներկայացուցիչները, բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներ, դասախոսներ, ուսուցիչներ։

Հանդիսավոր երեկոն բաց արեց Դ. Դեմիրճյանը։ Ն. Զարյանի կյանքի ու գրական գործունեության մասին զեկուցեց ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Հ. Մկրտչյանը։ Զեկուցողը Ն. Զարյանին բնութագրեց որպես սովետական կարգերում աճած տաղանդավոր բանաստեղծի, որի երկերում արձագանք են գտել սովետական ժողովրդի մղած հերոսական պայքարը, նրա կյանքի իրադարձությունները։

Բանաստեղծի հիսնամյակի առթիվ ողջույնի խոսքով հանդես եկան մի շարք անձինք։ Վերջում տեղի ունեցավ համերգ։

Հ. ԲԱԴԻԿՅԱՆԸ ԲԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ

ՍՍՌՄ բարձրագույն կրթության մինիստրությանը կից բարձրագույն ատեստացիոն հանձնաժողովը հաստատեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի բույսերի գենետիկայի ու սելեկցիայի ինստիտուտի վեգետատիվ հիբրիդիզացիայի սեկտորի վարիչ Վ. Մ. Մոլոտովի անվան Պետական համալսարանի դասախոս Հրանտ Բադիկյանի դոկտորական դիսերտացիայի պաշտպանությունը։ Միաժամանակ շնորհված է նաև պրոֆեսորի կոչում։

Հ. Բադիկյանը բիոլոգիական գիտությունների դոկտորի կոչում ստանալու համար ներկայացրել էր «Բույսերի վեգետատիվ սեռական հիբրիդների ուսումնասիրությունը» աշխատությունը, որը, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի նախագահության որոշմամբ, հանձնված է տպագրության։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆՈՒՄ

1950 թվի դեկտեմբերի 20-ին Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության նախագահ Մ. Պապյանը պատվավոր կոչումների շնորհագրեր հանձնեց արվեստի մի խումբ աշխատողների, որոնք պարգևատրվել են ռեսպուբլիկայի արվեստի զարգացման գործում այլի ընկնող ծառայությունների համար՝ Հայաստանում սովետական իշխանության հաստատման 30-ամյակի կապակցությամբ։

Հայկական ՍՍՌ ժողովրդական նկարչի կոչման շնորհագրեր հանձնվեցին քանդակագործներ Ա. Սարգսյանին և Ս. Ստեփանյանին, ռեսպուբլիկայի ժողովրդական արվեստագետ Ս. Ամիրյանին, ռեսպուբլիկայի ժողովրդական արվեստագետ Ս. Ամիրյանին, ռեսպուբլիկայի ժողովրդական ար-

տիստի կոչման շնորհագրեր ստացան 19 մարդ, Հայկական ՍՍՌ արվեստի վաստակավոր գործչի՝ 7 մարդ և ռեսպուբլիկայի վաստակավոր արտիստի՝ 47 մարդ։

Հայկական ժողովրդական երգի ու պարի պետական անսամբլի և Սայաթ-Նովայի անվան դուստանական երգի պետական անսամբլի ներկայացուցիչներին հանձնվեցին այդ անսամբլները վաստակավոր կոչելու շնորհագրեր։ Պարգևատրվածների անունից հանդես եկած ժողովրդական նկարիչ, քանդակագործ Ա. Սարգսյանը, արվեստի վաստակավոր գործիչ, Լենինականի երաժշտական ուսումնարանի ու դպրոցի դիրեկտոր Վ. Ոմրշատը, վաստակավոր արտիստ, Անդրկովկասյան ռազմական օկրուգի երգի ու պարի անսամբլի գեղարվեստական ղեկավար Ս. Բաբլոևը և ուրիշները ջերմ շնորհակալություն հայտնեցին կառավարությունը սովետական արվեստի ծաղկման նկատմամբ ցուցաբերած բացառիկ հոգատարության համար։

Վերջում Մ. Պապյանը ջերմորեն շնորհավորեց պարգևատրվածներին և հետագա հաջողություններ ցանկացավ նրանց ստեղծագործական աշխատանքում։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐԻ ԶԱՅՆԱԳՐՈՒՄԸ

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի արվեստի պատմության ու տեսության սեկտորի երաժշտագիտական արշավախումբը, գիտական աշխատակից Վ. Սամվելյանի ղեկավարությամբ, վերջերս եղավ Հոկտեմբերյանի շրջանում և հավաքեց ու ձայնագրեց տարբեր ժանրի 165 մեներգ, խմբերգ, պար-եղանակ։

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում կոլտնտեսային երջանիկ կյանքը պատկերող ստեղծագործությունները, հատկապես բերքահավաքին վերաբերող երգերը, ինչպես նաև Հայրենական մեծ պատերազմի հերոսներին նվիրված, հայրենասիրական նոր կենցաղի ու սիրային երգերը։ Հավաքված նյութերն այժմ մշակվում են։

«ՊԵՊՈ»Ն ՈՒԿՐԱԻՆԵՐԵՆ

Ուկրաինայի «Միստեցտվո» («Արվեստ») հրատարակչությունը ուկրաիներեն լեզվով լույս է ընծայել հայ մեծանուն դրամատուրգ Գ. Սունդուկյանի «Պեպո» կատակերգությունը։ «Պեպոն» հայերենից թարգմանել է ուկրաինական ժողովրդական բանաստեղծ, Ստալինյան մրցանակի լաուրեատ Պավլո Տիչինան։

Գիրքը հրատարակվել է 5,000 օրինակով։

ՀԱՅԿԱԿԱՆ ՆՈՎԵԼՆԵՐԸ ԼԵՀԵՐԵՆ

Վարշավայում լեհերեն լեզվով հրատարակվել է «Հայկական նովելներ» ժողովածուն։ Ժողովածուում զետեղված են Գ. Զոհրապի, Ծերուխանի, Ռ. Զարդարյանի, Ե. Օտյանի, Հ. Պարոնյանի, Ալ. Շիրվանզադեի, Հովհ. Թումանյանի, Ատրպետի, Մ. Մանվելյանի, Ավ. Իսահակյանի, Դ. Դեմիրճյանի, Ստ. Զորյանի, Վ. Անանյանի և Հրաչյա Քոչարի նովելները։

Գիրքը լեհերեն է թարգմանվել Յու. Խաչատրյանի կազմած «Հայկական նովելներ» ժողովածուի ռուսական հրատարակությունից։ Ժողովածուում տրված են հեղինակների համառոտ կենսագրությունները։

255.000 ՕՐԻՆԱԿ ԹԵՐԹ ԵՎ ԱՄՍԱԳԻՐ

Ռեսպուբլիկայում տարեցտարի աճում է թերթերի և ամսագրերի բաժանորդագրությունը։

1951 թվականի համար ռեսպուբլիկայի աշխատավորները, ինչպես նաև արտադրական ու այլ ձեռնարկությունները, կոլտնտեսությունները, սովխոզները, ՄՏ կայանները, ուսումնական ու գիտական հաստատությունները և կուլտուր լուսավորական հիմնարկները բաժանորդագրվել են ավելի քան 255,000 օրինակ ռեսպուբլիկական և միութենական զանազան թերթերի, ամսագրերի ու ժուռնալների։

Անցյալ տարվա համեմատությամբ, թերթերի և ամսագրերի բաժանորդագրությունը ռեսպուբլիկայում աճել է 95,000 օրինակով։

ՕԼԳԱ ԳՈՒԼԱԶՅԱՆԻ ԲԵՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 50-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԵՐԵԿՈ

Հունվարի 11-ին Գ. Սունդուկյանի անվան Պետական թատրոնի դահլիճում տեղի ունեցավ հոբելյանական երեկո՝ նվիրված Հայկական ՍՍՌ ժողովրդական արտիստուհի Օլգա Գուլազյանի բեմական գործունեության 50-ամյակին։

Թատերասրահում ներկա էին արտիստներ, գրողներ, արվեստագետներ, ուսանողներ, մայրաքաղաքի ինտելիգենցիայի այլ ներկայացուցիչներ, բանվորներ, ծառայողներ։

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Արվեստի գործերի վարչության պետի տեղակալ Գ. Բորյանի բացման խոսքից հետո հոբելյարի կյանքի ու բեմական գործունեության մասին ընդարձակ զեկուցումով հանդես եկավ ժողովրդական արտիստ Վ. Վարդանյանը։

Օ. Գուլազյանը ծնվել է 1885 թվին Թբիլիսիում, արհեստավորի ընտանիքում։ Նախնական կրթությունը ստացել է Ս. Սարգսի ծխական դպրոցում, որից հետո ընդունվել է Ս. Նշանի երկդասյան դպրոցը։ Մեղոների չքավորության պատճառով հնարավորություն չի ունեցել շարունակել իր կրթությունը և իր ուսման պակասը լրացրել է համառ ինքնակրթությամբ։ Օ. Գուլազյանը առաջին անգամ բեմ է բարձրացել 1900 թվին։

Առաջին դերը, որով նշանավորվեց արտիստուհու առաջին ելույթը հայ բեմում— Սունդուկյանի «Էլի մեկ զոհի նատոն էր։

Նատալիայի և Կեկելի փայլուն դերակատարման համար Օ. Գուլազյանը արժանացել է մեր անմահ դրամատուրգ Գաբրիել Սունդուկյանի բարձր գովասանքին։

Դաստիարակված լինելով ռուսական թատրոնի լավագույն տրադիցիաներով, Օ. Գուլազյանը դարձավ Հայ թատրոնի փայլուն անուններից մեկը, իր ամբողջ ուժերը նվիրելով սովետահայ թատրոնի արվեստի բարձրացմանը։

Իր 50-ամյա գործունեության ընթացքում Օ. Գուլազյանը կատարել է 300-ից ավելի դեր՝ հայկական, ռուսական և արևմտաեվրոպական կլասիկ դրամատուրգիայից՝ Սունդուկյանից, Շիրվանզադեից, Գորկուց, Օստրովսկուց, Շեքսպիրից, Մոլիերից և ուրիշներից։

Սովետական շրջանում նա մեծ հաջողությամբ խաղացել է ժամանակակից պիեսներում, կերտելով սովետական առաջավոր մարդկանց մի ամբողջ պատկերասրահ։

Չնայած իր հասուն հասակին, Օ. Գուլազյանը մինչև օրս էլ հանդիսանում է մեր բեմի զարդը և երիտասարդ ավյունով շարունակում է խաղալ ինչպես կլասիկ, այնպես էլ արդիական պիեսներում։

Բարձր գնահատելով տաղանդավոր արտիստուհու վաստակն ու ծառայությունները, Սովետական կառավարությունը Օ. Գուլազյանին 1928 թվին շնորհեց վաստակավոր արտիստուհու, իսկ 1932 թվին՝ ժողովրդական արտիստուհու կոչում։

1945 թվականին Օ. Գուլազյանը պարգևատրվեց Լենինի շքանշանով, ինչպես նաև «Կովկասի պաշտպանության համար» և «Աշխատանքային արիության համար» մեդալներով։

Ողջույնի խոսքեր ասացին Մ. Դավթյանը (Արվեստի գործերի վարչություն), ժողովրդական արտիստ Ա. Ավետիսյանը (Գ. Սունդուկյանի անվան թատրոն), Ստ. Զորյանը (Հայաստանի Սովետական գրողների միություն), ժողովրդական արտիստուհի Տ. Սազանդարյանը (Սպենդիարովի անվան Լենինի շքանշանակիր օպերայի և բալետի թատրոն), ժողովրդական արտիստ Սուքրինինը (Ստանիսլավսկու անվան ռուսական թատրոն), Վրացական ՍՍՌ ժողովրդական արտիստ Բերոյանը (Թբիլիսիի հայկական թատրոն), ժողովրդական արտիստ Շ. Տալյանը (արվեստի աշխատողների անունից) և այլն։

Այնուհետև ընթերցվեցին ՍՍՌՄ Մինիստրների Սովետին կից Արվեստի գործերի կոմիտեից, Մոսկվայի, Լենինգրադի, միութենական մի շարք ռեսպուբլիկաների մայրաքաղաքների թատրոնների կոլեկտիվներից, ՍՍՌՄ ժողովրդական արտիստներ Յաբլոչկինայից, Տուրչանինովայից, Բարսովայից, ինչպես նաև Գ. Սունդուկյանի դուստր Թինաթինա Սունդուկյանից և շատ այլ անձանցից ու հասարակական կազմակերպություններից ստացված շնորհավորական հեռագրերը։

Երեկոյի վերջում հանդես եկավ հոբելյարը։ Նա չերմ շնորհակալություն հայտնեց և խոստացավ աշխատել ավելի մեծ եռանդով։

Գրական-գեղարվեստական մասում հանդես եկան հոբելյարը և մայրաքաղաքի թատրոնների լավագույն արտիստական ուժերը։

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԹԵՐԹԸ «ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՐՄԻՐ ԴՐՈՇ»Ի ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Կ(բ)Պ Կենտրոնական և Երևանի կոմիտեների ու Հայկական ՍՍՌ աշխատավորների դեպուտատների Սովետների օրգան «Սովետական Հայաստան» թերթը, իր աշխատավորներին դաստիարակելու ուղղությամբ կատարած հաջող աշխատանքի և ռեսպուբլիկայի տնտեսական ու կուլտուրական շինարարության ասպարեզում մատուցած ծառայությունների համար, լույս ընծայման 30-ամյակի կապակցությամբ ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության Հրամանագրով պարգևատրվել է «Աշխատանքային Կարմիր Դրոշի» շքանշանով։

ՍԳՈ ՆԻՍՏ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ս. Ի. ՎԱՎԻԼՈՎԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայում տեղի ունեցավ սգո նիստ՝ նվիրված ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ՝ ակադեմիկոս Ս. Ի. Վավիլովի հիշատակին։

Սգո նիստը բաց արեց Վ. Համբարձումյանը։ Ս. Ի. Վավիլովի կյանքի ու գործունեության մասին զեկուցեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Ն. Հարությունյանը։

ՆՈՐ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ԽԱՆՈՒԹ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Երևանի Ստալինյան ռայոնում, Օրջոնիկիձեի պողոտայի ու Թերիայի փողոցի անկյունում բացված է Երարգադի ունիվերսալ նոր խանութ։

Երեք հարկանի մեծ խանութն ունի պատրաստի հագուստեղենի, գործվածքեղենի, տրիկոտաժի, կոշկեղենի, գալանտերիայի, պարֆումերիայի, կահույքի, ամանեղենի, տնային գործածության իրերի, էլեկտրական, ռադիո և լուսանկարչական ապարատների, գլխարկների, մանկական խաղալիքների, գրենական պիտույքների, ապակեղենի, ոսկյա, արծաթյա իրերի, ակնեղենի, գորգերի, վաճառքի բաժիններ։ Առաջին օրը խանութում վաճառվեցին մի քանի հարյուր հազար ռուբլու արդյունաբերական ապրանքներ։

Երարգադի ունիվերսալ խանութը շուտով Մոսկվայից, Լենինգրադից, Ռիգայից, Կիևից, Թբիլիսիից և Սովետական Միության այլ քաղաքներից կստանա մեծ քանակությամբ զանազան ասորտիմենտի արդյունաբերական ապրանքներ։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՏԻՍՏ ՎԱՀՐԱՄ ՓԱՓԱԶՅԱՆԻ ԳԱՍՏՐՈԼՆԵՐԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Ներկայացումներ տալու համար Երևան էր ժամանել ժողովրդական արտիստ Վահրամ Փափազյանը, որը հունվարի 26-ից մինչև փետրվարի 9-ը հանդես եկավ Գ. Սունդուկյանի անվան դրամատիկ թատրոնում ներկայացվող «Օթելլո» ողբերգության մեջ՝ Օթելլոյի դերում։ Երևանի թատերասեր հասարակությունը ջերմությամբ ընդունեց իր սիրելի արտիստին։

Վ. Փափազյանը ելույթներ է ունեցել նաև Արտաշատի թատրոնում և Երևանի կայազորի մարտիկների ու հրամանատարների մոտ՝ հանդես գալով Օթելլոյի դերում։

Փետրվարի 9-ին Սունդուկյանի անվան դրամատիկ թատրոնում տեղի ունեցավ Փափազյանի հրաժեշտի ներկայացումը։

ԿՈՄՊՈԶԻՏՈՐ ԱԼ. ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՐԽԻՎԸ

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Արվեստի գործերի վարչությունը ձեռք է բերել հայ մեծանուն կոմպոզիտորի ճոխ արխիվը։ Արվեստագետի դուստրը, Տատյանա Սպենդիարյանը, Արվեստի գործերի վարչությանն է հանձնել «Ալմաստ» օպերայի հեղինակային ձեռագրերը (պարտիտուրան), սուիտաներ և ֆրագմենտներ համանուն օպերայից, կոմպոզիտորի «Ղրիմյան էսքիզներ»ի և «Երեք արմավենիներ»ի հեղինակային ձեռագրերը։ Ձեռք է բերված նաև Ալ. Սպենդիարյանի նամակագրության մեծ մասը (ավելի քան 1,000 նամակ)։

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԻԳՐԱՆՅԱՆ

Վախճանվեց հայ երաժշտական արվեստի կարկառուն ներկայացուցիչներից մեկը՝ ժողովրդական կոմպոզիտոր Նիկողայոս Տիգրանյանը։

Բազմավաստակ կոմպոզիտորի անունը լայնորեն հայտնի է հայ աշխատավորությանը, որը սիրում ու բարձր է գնահատում ժողովրդական երաժշտության ոգուն այնքան հարազատ և խորապես հուզական Տիգրանյանի ստեղծագործությունը։ Իր երկարամյա կյանքի մեծագույն մասը կոմպոզիտորը նվիրել էր հարազատ ժողովրդի երաժշտական կուլտուրայի զարգացման գործին։ Լինելով հայկական գործիքային, հատկապես դաշնամուրային երաժշտության հիմնադիրներից մեկը, Ն. Տիգրանյանը հարստացրել է հայ երաժշտական արվեստի գանձարանը մի շարք գողտրիկ ստեղծագործություններով։ Այդ գործերի թվին են պատկանում «Տուն արի», «Տուլ-տուլ», «Թարս պար», «Շահնազ», «Ֆինջան», «Գյումրվա պար», «Դուզ պար», «Ետ ու առաջ», «Ջեմ կրնա» և շատ ուրիշ ստեղծագործություններ, որոնց հիմքում ընկած են հայ ժողովրդական, հատկապես իր ծննդավայրի՝ Շիրակի շրջանի ժողովրդական հիանալի երգերն ու պարեղանակները։

Այդ գործերի հմայքը մելոդիկ հարստության, երաժշտական լեզվի պարզության ու հստակության, ժողովրդական մելոսի հետ ունեցած հարազատության մեջ է, հատկություններ, որոնք՝ խիստ ինքնագրական են Տիգրանյանի ամբողջ ստեղծագործության համար։

Ն. Տիգրանյանի անունը լայն ճանաչում ստացավ, իսկ նրա ստեղծագործությունը ժողովրդի սեփականությունը դարձավ միայն սովետական կարգերի օրոք, երբ նրա գործերը բազմիցս հրատարակվեցին ու տարածվեցին մեր մեծ Միության մեջ։ Սովետական Հայաստանի կառավարությունը, ըստ արժանվույն գնահատելով Ն. Տիգրանյանի ծառայությունները, նրան շնորհել է ժողովրդական կոմպոզիտորի և Աշխատանքի Հերոսի պատվավոր կոչումներ։

Ն. Տիգրանյանի ստեղծագործությունը միշտ սիրելի և հարազատ կլինի մեր աշխատավորությանը, իսկ նրա անունը վառ կմնա մեր սրտերում։

Ավ. Խաչատրյան, Դ. Դեմիրճյան, Ստ. Զորյան, Ն. Զարյան, Մ. Առազի, Հր. Քոչար, Գ. Սարյան, Վ. Համազասպյան, Ս. Կապուտիկյան, Հմ. Սիրաս, Ա. Դարբնի, Հ. Մկրտչյան, Վ. Մնացականյան։

ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՑՈԼՄԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Մ. Արեղյանի անվան դրականության ինստիտուտում բացվեց «Անդրկովկասի ժողովուրդների բարեկամությունը դրականության մեջ» ուշագրավ ցուցահանդեսը, որն արտացոլում է եղբայրական ռեսպուբլիկաների աշխատավոր ժողովուրդների դարավոր բարեկամական հարաբերությունները։ Այդ մասին են պատմում ցուցահանդեսի բազմաթիվ էքսպոնատները՝ գրքերը, լուսանկարները ու արդեն պատմական փաստաթղթեր դարձած նամակները։

Հայտնի է հայ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանի բարեկամությունն ու կապը Անդրկովկասի մյուս ժողովուրդների նշանավոր գործիչների հետ։ Ցուցահանդեսում ներկայացված է ադրբեջանցի նկարիչ Ա. Սալամզադեի աշխատանքը, որը Աբովյանին պատկերում է Միրզա Շաֆիի հետ զրուցելիս։ Այստեղ է նաև Աբովյանի հայտնի «Թուրքի աղջիկը» պատմվածքը։ «Վերք Հայաստանի» վեպի բացված էջերը ամենաանկեղծ վարակիչ պաթոսով խոսում են ժողովուրդների բարեկամության մասին։

Ցուցասենյակների վրա շարված են Լ. Մելիքսեթ-Բեկի «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», Գ. Անտոնյանի «Ինդամին և հայ դրականությունը», Հ. Ամիրխանյանի «Սովետահայ դրականությունը Ադրբեջանում» և այլ գրքեր, մեծ երգիչ Սայաթ-Նովայի երգերը հայերեն, վրացերեն և ադրբեջաներեն լեզուներով, Գեորգ Դոգոխյանի «Երկերը» Վրաստանի Պետհամալսարանի հրատարակությամբ (հայերեն և վրացերեն)։

Հայ ժողովրդի ամենասիրված բանաստեղծ Հովհաննես Թումանյանը եղել է ազգերի բարեկամության կրքոտ ջատագովը և հետևողական մարտիկը իր դրական-հասարակական լայն գործունեության մեջ։ Այդ մասին են վկայում նրա նամակները, «նվեր Վրաստանի պոետներին», «Բարաթաշվիլու

դամբանի վրա» և այլ բանաստեղծություններ, ինչպես նաև այն փաստը, որ նրա երկերը դարձել են Անդրկովկասի ժողովուրդների սեփականությունը։

Ահա և Անդրկովկասի պրոլետարական դրականության հիմնադիր Հակոբ Հակոբյանի բանաստեղծությունների հրատարակությունները տարբեր լեզուներով։

Առանձնապես հարուստ է Սովետական շրջանը ներկայացնող բաժինը։ Ցուցափեղկերում են սովետահայ գրողների ավագ սերնդի ներկայացուցիչ Դերենիկ Դեմիրճյանի «Նիգյարը», «Ռաշիդը» և այլ երկեր։ Եղբայրական վրաց ժողովրդի սովետական կյանքի մի քանի դրվագներ են նկարագրել Մագաթ Պետրոսյանն ու Տերուն Թորգոմյանը իրենց բազմաթիվ պատմվածքներում։

Սովետական կարգերի օրոք մեծ թափ առավ թարգմանական գրականության հրատարակությունը. այդ մասին են վկայում ցուցահանդեսի բազմաթիվ էքսպոնատները, Ջ. Ջաբարլու, Ս. Վուրգունի, Ս. Ռուստամի, Ի. Գրիշաշվիլու և եղբայրական այլ գրողների երկերի հայերեն թարգմանությունները և այլն։

Ա. Պ. ՉԵԽՈՎԸ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԹԱՏՐՈՆՆԵՐՈՒՄ

Երևանի Գ. Սունդուկյանի անվան Հայկական դրամատիկ Պետական թատրոնը պատրաստվում է առաջին անգամ հայ բեմի վրա բեմադրելու ռուս հանճարեղ գրող Ա. Չեխովի «Բալենու այգին» կոմեդիան (բեմադրում է ռեժիսոր, Հայկական ՍՍՌ ժողովրդական արտիստ Վարդան Աճեմյանը, ձևավորում է նկարիչ Ս. Արուտչյանը)։

Կ. Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկ թատրոնը պատրաստում է դարձյալ Չեխովի «Դյադյա Վանյա» պիեսը (բեմադրում է ռեժիսոր, Հայկական ՍՍՌ ժողովրդական արտիստ Մ. Սուղբինինը, ձևավորում է նկարիչ Կ. Մինասյանը)։

ՀՈՎԱԶԻ ՈՐՍ

Վեդու շրջանի «Զհաննամ դարա» կոչվող լեռներում հաճախ է պատահում հովազ։ Այնտեղ նրանք ունեն խոտածածկ որջեր և ենվում են քարայծերով և վայրի ոչխարներով։ Երբեմն վնասում են նաև տնային կենդանիներին։ Հովազները մեծ մասամբ լեռները շրջում են գիշերները։

Վեդու շրջանի Վարդաշատ գյուղի կոլտնտեսական անվանի որսորդ Աստուր Պողոսյանը հաճախ է գնում այդ արյունարբու գիշատիչներին որսալու և մեծ հաջողությամբ ոչնչացնում նրանց։

Վերջերս նա հարևան Ջնջոլու գյուղի Կարմիր լեռան բարձր լանջին, քառասուն մետր հեռավորության վրա, հանդիպում է հովազին և հրացանի երկու հաջող կրակոցով գետին դլորում գազանին։ Ելված հովազի երկարությունը կազմում է երկու և կես մետր, բարձրությունը՝ մեկ մետր։

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Որսորդական կամավոր ընկերության կոմիտեն որսորդ Ա. Պողոսյանին պարգևատրել է թանկարժեք նվերով։

ՅՈՒՅԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ՝

№ 37

ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

Թերթերը՝ 54։— Գրակները՝ 7, յուրաքանչյուրը 8 թերթից (որոշ մասուններից թերթեր են ընկած)։— Մեծությունը՝ 27×19,2×2,3 սմ։— Նյութը՝ սպիտակ ոզորկ թուղթ, տեղ տեղ չրի մեջ ընկած և դեղնած (չգրված թերթեր՝ 1—4, 43—54)։— Կազմը՝ կաշեպատ ստվարաթուղթ՝ ճնշումով։— Վիճակը՝ բավարար (որոշ թերթեր չրի մեջ են ընկել, կպել իրար, խունացել և դժվար են կարդացվում)։— Գրությունը՝ միասյուն։— Տողերը՝ 39։— Գիրը՝ նոտրի։— Զարդագրությունը՝ անարժեք գլխագրերը և թոշնագրերը։— ժամանակը՝ 1813 թ.։— Գրիչը՝ Հովհաննես նոտար։— Վայրը՝ Կոստանդնուպոլիս։— Պատվիրատուն՝ Աբրահամ վարդապետ Կոստանդնուպոլսեցի (Լիմ անապատի միաբան)։

ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՅԱԿՈԲ ՄԱՀՏԵՍԻ ԳԷՈՐԳԵԱՆԻ

(Համեմատվում է նախորդ՝ № 36 ձեռագրի բովանդակությանը)։

Թ. 5ա—բ.— Կանխաբանություն յաղագս օգտակարութեան կանոնագրոց... (Հեղինակի ներածությունը)։

Թ. 5բ—6բ.— Աստանօր յայտնին հեղինակի զոց կանոնաց... (Օգտագործված գրականության ցանկը)։

Թ. 6բ—7ա.—Ազգեցութիւն նշանակութեաց անուանց յայբուբենական կարգս զորս կրնատ եգամ ի լուսանցս։

Թ. 9ա—41ա.— Կանոնագրքի տեքստը։ Կանոնները դասավորված են այբուբենական կարգով՝ «Աբից մինչև «Օ»։

Սկսում է՝ «Ազատ լիցին եկեղեցականք ի հարկաց, եւ թէ իշխան ոք կամիցի առնել հարկս...»։

Վերջանում է՝ «Օր չարչարանաց Տեառն զկնի հասարակածին...»։

Թ. 41բ.— 1651 թվին Ամենայն Հայոց Փիլիպոս կաթողիկոսի, Սսի Ներսես կաթողիկոսի և Երուսաղեմի Աստվածատուր սպատրիարքի կողմից կազված կանոնները՝ 13 կետից։

Թ. 42ա.— Ձեկուցումն ի վերջոյ։ Յաղագս ինչ ինչ բանից գիտելի է։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 8ա.— Յակոբ դպիր յԱմասեացի մահտեսի Գէորգեան, ի 25 սեպտեմբերի 1800 եւ Ռմնթ, ի յԱմասիա։

Իսկ ի թիւ հայոց ՌՄԾԱ (1802 թ.) ի 20 յուլիսի, գաղափարեալ յիսկ գաղափարէ ի ձեռն Կարապետ եւեթ ընչին իբր դպրի՝ տիրացու Գէորգեան, ի յօգուտ եւ ի վայելումն իւր եւ համայն իւրայնոց, ի Միջագիտն մայրաքաղաքի Կոստանդնուպոլսոյ։

Իսկ ի ՌՄԿԲ (1813 թ.) թուականիս մերոյ յունիսի ԺԲ (12) գաղափարեցաւ ի յերրորդ գաղափարէ նախադրեցելոյ, ի վայելումն Լմայ սրբոյ անապատի միաբան Աբրահամ վարդապետի Կոստանդնուպօլսեցւոյ, ձեռամբ Յովհաննէս նուաստ նոտարիս։

№ 38

ԱՒԵՏԱՐԱՆ

Թերթերը՝ 246։— Գրակները՝ 20, յուրաքանչյուրը 12 թերթից։— Մեծությունը՝ 18,2×14,5×5 սմ։— Նյութը՝ դեղնած թուղթ։— Կազմը՝ արծաթապատ տախտակ, առաջին երեսին վրա նկարված են մեկ խաչ և բազմաթիվ հրեշտակներ։ Նույն երեսի վրա ամրացված են 7 կարմրագույն ակներ։ Ետեի կազմի վրա կա նույնպիսի մի խաչ հրեշտակներով՝ ամրացված 5 կանաչագույն ակներով։— Վիճակը՝ բավարար։— Գրությունը՝ երկսյուն։— Տողերը՝ 23։— Գիրը՝ բոլորգիր։— Զարդագրությունը՝ ունի խորաններ, կիսախորաններ, ժապավենագրեր, կենդանագրեր, թոշնագրեր և լուսանցազարդագրություններ։ Կան նաև զանազան նկարներ Քրիստոսի կյանքից։— Գրիչը՝ Գասպար երեց։— Գրչության վայրը՝ Շոշ։— ժամանակը՝ 1650 թ.։— Պանդանակները՝ մեկ թերթ առջից և մեկ վերջից՝ չգրված հասարակ թուղթ։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 243բ.— Փառք... Արդ, գրեցաւ սուրբ աւետարանս Ձեռամբ (յ)ոգնամեղ Գասպար երէց գրչի ի յերկիրս Շոշ, որ է Ասպահան, ի եզր Նարին Դալային, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին, ի հայրապետութեան Տեառն Փիլիպպոս Կաթողիկոսին, եւ առաջնորդութեան Տէր Յակոբ արհեպիսկոպոսի, ի թագաւորութեանն այլասեռի Շահապասի, ի թվականութեանս մերոյ ՌՂԹ (1650 թ.)։

Թ. 244ա.— Զոր ի վաղուց հետէ ցանկալր ոմն Դիլան անուն սուրբ աւետարանիս, ստացաւ զսա ի հալալ վաստակոց իւրոց յիշատակ իւր եւ ծնողաց իւրոց՝ Մարտիրոսին, Ուստիանին, որ եւ Աստուածն ամենայնի վարձահատուց լինի, ամէն։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՏիլանն, եւ զկողակիցն Հուրիխանն, եւ զորդիքն զՄնացական եւ զՄարտիրոսն, եւ զդստերքն՝ զՏունեայ, Մելիքներն. յիշեցէք եւ Աստուած ողորմի (ասացէք)։

---

1. Նարունակված ամսագրի 1950 թվի մայիս-հունիս, հուլիս-օգոստոս, սեպտեմբեր-հոկտեմբեր և նոյեմբեր-դեկտեմբեր համարներից։

Կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս զՏիլանն եւ զեղբարքն՝ զՀերապետն, զՏէրունն, զԱստուածատուրն, եւ զերկու Գալուստն, եւ զքուերքն՝ զՍառէն, զՄարիամն եւ զՍալլուկն. յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք։

Միւս անգամ յիշեցէք ի Քրիստոս զՏէրունն, եւ զկողակիցն՝ զՀէրիքն, եւ զորդին Ոսկանն, եւ զդուստրն Ան(ն)ային, յիշեցէք։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՏիլանն, եւ զպապն իւր՝ զՏէրտէրն, եւ զմօր հէրն զՎարդումն. յիշեցէք եւ Աստուած ողորմի (ասացէք)։

Յիշեցէք ի Քրիստոս զՈւստիանէն, զեղբայրն Նազարն, եւ զքոյրքն՝ Թուրվանդէն, Կոզալաղէն. յիշեցէք եւ Աստուած ողորմի (ասացէք)։

Դարձեալ յիշեցէք զՏիլանն, եւ զանեռն խէչումն, զնորայ կողակիցն Հոռոմն, եւ զորդիքն Պետրոսն, Յարութիւնն, Պալանտուրն. յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք։

Թ. 244բ.— Կրկին անգամ յիշեցէք զՄարտիրոսն, եւ զքուերքն իւր՝ Խաթոնն, Խանաղէն, Սալլուկն, Մարիամն, քեռիքն՝ Սուքիասն, Յովհաննէսն, Հօրեղբարքն՝ Մարն, Փաշէն, Պապէն. յիշեցէք եւ Աստուած ողորմի (ասացէք)։

Դարձեալ յիշեցէք զՄարտիրոսն, եւ զծնողսն զՏէրտէրն, զՍառէն. յիշեցէք եւ լի սրտիւ Աստուած ողորմի ասացէք, զի մեզ եւ ձեզ ողորմեսցի Քրիստոս ի միւս անգամ իւրոյ գալստեան, ամէն։ Հայր մեր...

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 192ա.— Վերջին ընտացող սուրբ ավետարանիս ողորմած հոգի Խէչատուրի դուստր եւ ողորմած հոգի Իսայրաչէ։ Կողակից Մանիշակս երկրորդ անգամ ընտացայ սուրբ ավետարանս ինձ յիշատակ։ Քանի որ ես կենդանի եմ սուրբ ավետարանս ինձ մօտ մնա(յ)։ Ինձանէ յետոյ սուրբ ավետարանս ողորմած հոգի Աղաբերի որդի Վարդանին եւ իւր քուր Վառվառին լինի, ոչ ով հախ թալաղ չունենայ, իմ թոռանցն լինի ինձանէ յետո։ Եվ որ զրկի, գողանայ, տայ ոչ իմ թոռներիս, ահեղ դատաստանին պարտական լինի ինձ։ Գրիս կեղծող եւ ավերողն ԳԾԺԸ (318) սուրբ հա(յ)րայրենաց բերանովն կապաց լինի։

Թվին ՌՄԿՈ (1811 թ.) արեմ ԺՌ (12) ի Զուղայ տարայ, կրկին նորոգեցի։

Թ. 244բ.— Դարձեալ յիշեցէք մարգայզարդ հեզայհոգի զՏէր Պետրոսն եւ կողակիցն՝ Փէրիխանն, յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք։

Դարձյալ յիշեցէք ի Քրիստոս զՏէր Պետրոսն, եւ կողակիցն Փէրիխան, եւ որդին Շա(հ)նայզարն, Աղայփիրին, Հոջայմանն, Տէր Պետրոսն, Թէվան, Թորոսն, Փիրիմանն, Ռունիաքն, Մուրատխանն, դուստրն Իփրիխանէն, Յերինէն. Աստուած ողորմի (ասացէք)։

Թ. 245ա.— Դարձեալ յիշեցէք զՏէր Պետրոսն, կողակիցն Փէրիխանն։ Աստուած ողորմի ասացէք որդին Շա(հ)նայզարն, կողակիցն Սասէն, որդին հանգուցեալ Ավաղն, միւս որդին Աղայփիրին, կողակիցն Աղիքն, հանգուցեալ որդին Նէրսէսն, Աստուած ողորմի ասացէք, ամէն։

Հանգուցեալ դուստրն Մարանն, Ուստիանէն, Յէրիքն, Թամամն յիշեցէք. Աստուած ողորմի ասացէք։

Հոջայմանն, հանգուցեալ կողակիցն Վարդէթուին, հանգուցեալ որդին Մուրատխանն, Աղայթուն, հանգուցեալ դուստրն Դուլինարն յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք, ամէն։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս Հոջայմանն, միւս կողակիցն Թուրվանդն, դուստրն Փէրին, Գուլինարն, Ուստիանէն. յիշեցէք եւ Աստուած ողորմի (ասացէք)։

Թ. 245բ.— Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս Տէր Պետրոսն, կողակիցն Նոյայերդն, դուստրն Դասայգուլն, Եթարն, հանգուցեալ դուստրն Մարանն, Փէրին. յիշեցէք եւ Աստուած ողորմի (ասացէք, ամէն։

Դարձեալ յիշեցէք Տէր Պետրոսն, կողակիցն Փէրիխանն։ Յիշեցէք եւ Աստուած ողորմի (ասացէք հանգուցեալ որդին Աղայփիրին, Թէվան, Թորոսն, Փիրիմանն, Մուրատխանն, յիշեցէք եւ Աստուած ողորմի (ասացէք։

Հանգուցեալ որդին Ռունիաքն, կողակիցն Դուլաքն յիշեցէք, Աստուած ողորմի ասացէք, ամէն։

Տէրունն, կողակիցն Հէրիքն, որդին Նազարն, դուստրն Թուխծամն, Թամիկն, Շարխաքուն յիշեցէք։ Աստուած ողորմի ասացէք։

Դարձյալ յիշեցէք Նազարն, կողակիցն Թուրվանդն, որդին Առազին, Աստուրն յիշեցէք, Աստուած ողորմի ասացէք, ամէն։

Դարձեալ յիշեցէք եւ դուստրն, կողակիցն Դախնաքաքին յիշեցէք։ Աստուած ողորմի ասացէք, ամէն։

№ 39

ԱԻԵՏԱՐԱՆ

Թերքերը՝ 215։— Գրագիները՝ 18, յուրաքանչյուրը 12 թերթից։— Մեծությունը՝ 21×16,5×7,5 սմ։— Նյութը՝ դեղձած հաստ թուղթ։— Կազմ՝ կաշեպատ տախտակ։ Առաջին երեսի վրա մի արծաթյա խաչ, կենտրոնում մի կանաչ ակն, յուրաքանչյուր թևի վրա երեքական ակներ (հյուսիսային թևի աջակողմինը ընկած է)։ Հարավային թևի վրա դրված է սմուրբ խաչ յիշատակ (է) Զարդ(ա)լ(ա)նին, կողակից՝ Թամամին, թվականին ՌՂԷ (1648 թ.)։ Արծաթյա չորս անկյունազարդեր, յուրաքանչյուրի վրա չորսական ակներ (ներքևից ձախակողմյան մի ակն ընկած է)։ Ցրված կան 37 արծաթյա քանոներ և երկու հատ քոնիչ։ Երկրորդ երեսի վրա ճնշված են ծաղկանման հյուսվածքաձև զարդեր։ Կան երկու մեխված քոնիչներ երկու կարմիր ժապավենով կապված։— Վիճակը՝ բավարար։— Գրությունը՝ երկլուսի։— Թիրը՝ բոլորգիր։— Տողերը՝ 23։— Ձարդարգրություն՝ ունի լուսանցազարդություններ, քանոնագրեր, գաղանագրեր, մարդագրեր, կիսախորաններ։ Ավետարանների սկզբներում նկարված են ավետարանիչների նկարները։— Ժամանակը՝ ԺԵ դար։— Գրիչը՝ Ստեփանոս։— Նկարող՝ Մահակ։—

Պատվիրատու՝ Ազարիա քահանայ— Պանդուկ՝ սկզբում և վերջում մի մի թերթ մաղադաթ՝ ուղղագիծ երկաթագրով (առաջինը Ղուկասի ԺԷ գլխից, իսկ վերջինը Հովհաննէսի Ժ գլխից)։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 58բ.— Ցիւռուս որդի Աստուծոյ եւ քան Հայր քո, սուրբ Մա(տ)թէոսեան աւետարանչիս բարեխաւսութեամբ ողորմեա անիմաստ մեղաւոր եւ փծուն գրչին, որ ութ տառիւ անուն գոչին, սէն առաջին եւ սէն յետին, որ համարով վերարերին, տասն եւ նաւթն հազար բոլորովին եւ չորս հարիւր եւ վեցին[1]։

Թ. 97բ.— Զմահակ սուտանուն արեղա(յ) եմ, սեւերես ամենայն կարդատրաց հ. պարտական բազում քանբարաց։ Նկարողս յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր ով սուրբ ընթերցողք եւ կարդացողք, հանդերձ ծնողաւքն իմովք, եւ Աստուած զձեզ յիշէ իւր միւս անդամ դալըստեանն, ամէն։ Եւ անմեղադիր լերուք։ Աղաչեմք զձեզ ով եղբարք, ընդ նմին եւ զստացող սորա զԱզարիայ քահանայն յիշեցէք։ Եւ Աստուած զձեզ (յիշ)է։

Թ. 214ա—214բ.— Փառք... Արդ, աղաչեմք զհանդիպողդ սուրբ աւետարանիս կարդալով կամ տեսանելով կամ աւրինակելով, յիշեցէք զԱզարիայ քահանայն, որ ստացաւ զսայ ի հալալ ընչից իւրոց յիշատակ իւրն եւ ծնողաց իւրոց, հաւրն իմոյ Ճանպուլին եւ մաւր իմ Մարթին, եւ եղբաւրն իմ՝ Կարապետին, Մարգարին, Մկրտչին, եղբաւր որդին իմոյ Ովանինին, Պետրոսին եւ որդոյն իմոյ՝ Ճանպուղին, Նաղաշին, Ներրիանոսին, եւ Ե (5) դստերացն՝ Մարգարտին, Ամպարին, Կուլմէլիքին, Սալթան Մէլիքին եւ հարսին իմ Նիրազին, եւ հաւրեղբաւր իմ Աղպուղին, Մարգարին եւ ինձ տառապեալ Աղարիայ իրիցոյս, եւ կենակցին իմոյ Խաթունին։ Ստացաք զսուրբ աւետարանս յիշատակ մեզ եւ ննջեցելոց մերոց, կենդանեաց եւ հանդուցելոց։ Աղաչեմք զձեզ սուրբ քահանայք եւ մանկունք սուրբ եկեղեցւոյ, որ լի բերանով Աստուած ողորմի ասէք եւ յիշէք զվերոյգրեալ, եւ Աստուած զձեզ յիշէ իւր միւսանդամ դալստեանն, ամէն։

Ընդ նմին եւ զիս՝ զնկարողս յիշեցէք, որ եմ պարտական եւ սեւերես ամենայն կարդաւորաց։ Նկարեցաւ ի թվականիս հայոց ՉԽԴ (1495 թ.), ի տանս Գեղամայ, ի դեաւղս, որ կոչի Դարանաքս, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս եւ աստուածառաք Սուրբ Նշանիս։ Յիշողդ աւրհնին ի Աստուծոյ եւ ամենայն սրբոց, ամէն։

1. Անկասկած, Ստեփաննոս անունն է (երկու «ն»ով), որի սկզբի և վերջի տառերը Ս են, և բառի թվագումարն է 17,406, բայց բառը բաղկացած է ոչ թե 8, այլ 9 տառից։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. Շա.— Սուրբ աւետարանս յիշատակ է Ծարդանանի որդոյ Աստուածատուրին եւ իւր որդոյն՝ Ազարկին եւ Թուանբրոմ՝ Կարապետին եւ Միհնասին, Գրվեցաւ յամի Տեառն 1852 յունվարի եւն։ Եւ՝ Տէր Սուրիաս վերոյ յիշատակին վկայեմ, բայց եկեղեցուն չեմ ծանայի, իրրեւ ի պահեստի եմ (յ)անձնի։ Եւ՝ Տէր Անտոն, Տէր Խաչատուրի ի վերոյ յիշատակի վկայեմ։ Եւ Դաւիթ Մկրտչիս, ի վերոյ յիշատակի վկայեմ։ Եւ՝ Սամուէլ Ծարուքիանի, վկայեմ։ Եւ՝ Յովանէս Գրիգորի, վկայեմ։ Եւ՝ Աբրահամ Օհանի, վկայ(ե)մ։

Թ. 59ա.— Զվերջին ստաց(ող) սուրբ աւետարանիս յիշեցէք ի Քրիստոս զբարեմիտ եւ զաստուածառէր տանուտէր Սահակն, որ ստացաւ ի հալալ եւ ի յարդար վաստակոց իւրոց։ Եւ նա վերըստին կազմել եւ նորոգել յիշատակ բարի իւր և ծնաւղաց իւրոց։ Հաւրն՝ Յովանէսին, եւ մօրն՝ Ազիզփաշին, եւ կողակցին իւրոյ՝ Խոռոմսիմին, եւ որդոցն Տէր Աստուածատուրին, Մուքայէլին, Տիրատուրին եւ դստերացն՝ Յուզիտին, Մարիամին, Էթարին, Աւդլանփաշին եւ ամենայն արեան մերձաւորացն յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք։ Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՏէր Աստուածատուրն եւ զկողակիցն իւր Աղախանն եւ զորդիսն՝ Մկրտչին։

Եւ առաւել դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զիս՝ զանարժան Մեսրոպ զպիր խիղանցիս, որ նորոգեցի եւ կազմեցի ի Քուականիս հայոց ՌՁԳ (1634 թ.) ամի ի վայելումն մանկանց Սիոնի։ Յիշեցէք եւ Աստուած զձեզ յիշէ իւր միւսանդամ դալըստեան, ամէն։ Հայր մեր...։

Թ. 214բ.— Զվերջին ստացող սուրբ աւետարանիս՝ Զարդալանն եւ կողակիցն՝ Թամամն եւ զորդին՝ Սարդիսն, եւ զհարսն՝ Գուլդաստէն, յիշեցէք ի Քրիստոս։

№ 40

ԱՒԵՏԱՐԱՆ

(Վերջում՝ Յայտնութիւն Յովհաննու)

Թերթերը՝ 386։— Գրակները՝ 32, յուրաքանչիւրը միջին հաշվով 12 թերթից։— Մեծությունը՝ 13,7×9×5,5 սմ.։— Նյութը՝ գեղնած բարակ թուղթ։— Կազմը՝ արծաթապատ, ոսկեշրած զարդերով տախտակ, գեղեցիկ մանրանկարչությամբ։— Գույությունը՝ միասյան։— Գիրը՝ բոլորգիր։— Տողերը՝ 19։— Վիճակը՝ բավարար։— Զարդագրությունը՝ չորս ավետարանիչների նկարները, շատ գեղեցիկ կիսախորաններ և լուսանցազարդություններ, թոչնագիր և գազանագիր։— Գրիչը՝ Միքայել Թոխատեցի։— Նաղդողը՝ Ղազար քահանա։— Պատվիրատուն՝ Մինաս վարդապետ Թեոդոսյանեցի։— Գրչության վայրը՝ Կոստանդնուպոլիս։— Թվականը՝ ՌԾԸ (1609 թ.)։— Պանդուկները՝ երկուական թերթ սկզբից և վերջից՝ գոթական գեղեցիկ մագաղաթյա նկարազարդ պատառիկներ։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 330բ—331բ.— Փառք... Գրեցաւ սուրբ աւետարանս ի մայրաքաղաքն Ստամպօլ ի դուռն Ատրանու Սուրբ Նիկողայոսին, թվին ՌՄԸ (1609 թ.), ձեռամբ Թոխատցի Միքայիլին, ի վայելումն Մինաս վարդապետին Թէոդուպօլսեցոյ։ Արդ, աղաչեմ զամենեսեանդ, որ հանդիպիք սմա կարդալով կամ յօրինակելով, մէկ հայր մեղայիւ մի, հիշեցէք զանարժան Միքայիլիս եւ զծնօղս իմ եւ զկենակիցս, զկենդանիս եւ զնընչ(եց)եալսն իմ, եւ Աստուած զիշող(ս)դ իւր միւս անգամ գալըստեանն, ամէն։ Հայր մեր...։

Այլ եւ յիշեցէք զՍուլու Մանասիրու Տէր Յովանէսն, եւ զՏէր Սարգիսն, եւ զՏէր Խաչատուրն, եւ զեկեղեցպան Շահրի Ցալապին, եւ զԱյլպաղի Տոլվաթավորքն որ ոչ գիտեմ զանուն նոցին, որ զուրինակն շնորհեցին մեզ. Աստուած իւրեանց ընդ երկայն աւուրս արասցէ եւ ի հանդերձեալն զերկնա(յ)ին ուրախութիւն պարգեւեսցէ, ամէն։

Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զանարժան եւ զանարհեստ եւ զյետնանկեալ, զհողս եւ զփոշիս, զՂազար գրիչս, որ լոկ անուամբ միայն եմ կոչեցեալ քահանա(յ) կամ սալմասաց եւ գ(որ)ծովս ոչ։ Աղաչեմ զձեզ, (յ)որժամ տեսանէք կամ ընթեռնուք կամ օրինակէք, մի բերան ողորմի ասացէք, որ ծաղկեցի զսուրբ մատեանս ըստ մերում տկարութեանս եւ անարհեստութեանս։ Որեսս անկեալ աղաչեմ զձեզ չմեղադրել պակասութեան բանից մերոց, զի կար մեր այս էր։ Եւ յաղօթս յիշողքն, յիշեալ լիցին առաջի անմահ գառին Քրիստոսի, ամէն։

Թ. 381բ—383բ.— (Փ)առք... Աստուածահաճոյիցն ցանկացողս Մինաս, անուամբ միայն վարդապետս Թէոդուպօլսեցոյ բաղում տարփանօք եւ տենչալի սիրով եւ յեռափափագ սրտիւ եւ այնչափ ըղձական մտօք ծրագրել եւս ըզսուրբ գիրքս, որ կոչի աւետարան, որ եւ յայսմ երանաւետ եւ կենսաշնորհ եւ լուսաբուխ եւ լուսաճաճանչ սուրբ աւետարանիս մեծապէս բաղձանօք ցանկացա(յ) Մինաս, անուամբս միայն վարդապետս Թէոդուպօլսեցի եւ բաղում տրփանօք ցանկացայ ընձեռել ի տուն Տեառն եւ ի դափթս Աստուծոյ մերոյ ի ձեռն մանկանց նորոյս լոյսընկալ լուսարն ի մօրս մերում սրբո(յ) Սիոնի։ Իսկ իմ ամենամեղ եւ թշուառացեալ ոգոյս Մինաս, անուամբս միայն վարդապետի եւ գործովս իբր ոչընչի եւ նախնի ծնօղացն իմ ըստ կարգի որք ի ժողովն են այժմ երկնի, հօրն իմո(յ) Խորշա(հ)ի եւ մօրն իմոյ Անն(ա)ի եւ եղբարցն իմոց Էրտօղտուն եւ ըՍտեփանեոսին եւ հոգեւոր մօրն մերում Կուլիսաանին որ բազում աշխատութիւնս աշխատեալ է ի վերայ մեր մայրական դթութ ...Եւ դարձեալ զհանգուցեալ որդին նորին զՅովհաննէսն, որ տարաժամ հասակաւ ԺԸ (18) ամաւ վասն ծովացեալ մեզաց մերոյ յանկարծամահ եղեւ, անբուժելի խոց եւ վէրս եթող մեզ եւ ծնօղաց իւրոց։ Ընդ նմին եւ զհանգուցեալ կինն նորին ըզՄելիքն, յիշեսջիք ի Քրիստոս Աստուած, ամէն։ Դարձեալ աղաչեմ, կրկին աղաչեմ յիշել ի Տէր զայժմս եղբարքն իմ զԱղազանն, եւ զՅովհաննէս զեռարոյս քահանայն, եւ զեղբօր թոռն իմ զԹրոս պատանեակն, եւ զեղբօր դուստրն իմ զԱննա, զհոգեւոր որդին իմ զՊազտասարն եւ զայլս ամենայն արեան մերձաւորքն մեր զկենդանիքն եւ զհանգուցեալքն...։ Դարձեալ յանգուցեալ աւարտեցաւ սուրբ աւետարանս որ լիացեալ կատարի թիւ համարի հայկական տոմարիս ի եւ մի (21) յորելենիս Ը (8) թիւ այլ աւելիս (21×50=1050+8=1508+551=1609 թ.), որ Ծ (50) թիւ մինչ յորելեան համարեսցիս, ի մայրաքաղաքս մեծ Կոստանդինուպօլիս, ի դուռն Սուրբ Աստուածածնիս եւ սուրբ Գէորգա(յ) սուրբ տաճարիս եւ այլ բազմահոյլ եւ անթուելի սրբոց, որ հաւաքեալ կան յայս քաղաքիս ի թագաւորութեանն սուլտան Ահմատին։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 384ա—385ա.— Քրիստոս Աստուած... արարածութիւն, ի մեղաց թողութիւն աստուածասէր եւ բարեմիտ խոջա Զիրաքն եւ իւր ծնողացն, հօրն Իսրայելին եւ մօրն Ջանազին, կողակցին, եղբարցն եւ քուերցն եւ մեծի եւ փոքու առհասարակ։ Եւ որ յիշեսանով եւ բոլոր սրտիւ ասէ զԱստուած ողորմիս։ Աստուած իւրն ողորմեսցի յաւուր դատաստանին, ամէն։

Եւ՝ աստուածասէր եւ բարեմիտ ծառայս Աստուծոյ խոջա Զիրաքս, որ մականուն Գոկոշ կոչեն, ցանկացա(յ) այսմ աստուածախոս սուրբ աւետարանիս եւ գնեցի զայս ցանկալի սուրբ աւետարանս եւ լուսաշուքաւոր մի եւ եւս ի դուռն տիրամայր սուրբ Աստուածածնին եւ Գաբրիէլ սուրբ հրեշտակապետին եւ ոսկէտուփ Աստուածաշունչ մի եւ տարեն գիրք մի եւս ի դուռն սուրբ Ծրուսաղէմայ լուսաբուխ Քրիստոսին սուրբ գերեզմանին եւ վառի խաչ մի վարագայ Սուրբ Նշանին եւ գանձարան մի սրբոյն Գոգոսի առաքելոյ անթրել յիշատակ հոգոյ իմոյ եւ ծնողաց իմոցն, հօրն Իսրայելի եւ մօրն Ջանազին։ Ով ծախէ կամ խեռաքանչ ի դրանէ սոցա, զանէծքն զկայենին առնու եւ զամսան Յուդային եւ զիսայ հանողացն առնէ, ամէն։

№ 41

ԱՂԱՄԱԼԵԱՆԻ ԱՂԲԻՒՐ ԹԱՅԵԱԼ

Թերթերը՝ 114։— Գրակերը՝ 15, յուրաքանչյուր միջին հաշվով 6 թերթից։— Մեծությունը

16,3×11×2,4 սմ.— Նյութը՝ *դեղնած բարակ թուղթ*— Կազմը՝ *կաշեպատ տախտակ*— Վիճակը՝ *բավարար, թերթերը թիչ կեղտոտված*— Գրությունը՝ *միասյուն*— Գիրը՝ *բոլորգիր*— Տողերը՝ *24*— Զարդագրություն՝ *կա մի Աստվածածնի եւ Հիսուսի տպագիր նկար և մի կիսախորան*— Գրիչը՝ *Ահարոնյան Կարապետ Արեւելցի*— Պատվիրատուն՝ *Ղազար վարդապետ միաբան Վարագա Սուրբ Խաչ վանքին*— Գրչության վայրը՝ *Վան*— Թվականը՝ *ՌՄԿԴ (1815 թ.)։*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գիրք որ կոչի Աղբիւր բացեալ եւ է մեկնութիւն առակացն աւետարանին Քրիստոսի: Աւարեալ Տէր Պետրոսի աստուածիմաստ վարդապետի Նախիջեւանցւոյ Աղամալեան, որ եւ ասի Փերբում օղլի:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 2ա.— Իսկ այժմ վերստին դաղափարեցեալ եղեւ ի խնդրոյ ի տեառն Ղազարու աստուածիմաստ եւ քաջաքարոզ հեզաբարոյ վարդապետի եւ հարազատ միաբանի Սրբոյն Վարագայ կենսատու Խաչին։

Զհռամբ անիմաստ գրչիս որդւոյ Ահարոնեան Արեւելցւոյ Կարապետ մեղսամած դպրիս ծրեցաւ ի թուականութեանս ՌՄԿԴ (1815 թ.) յուլիսի ԺԱ (11), ի Վան։

Նստար գրչի Կարապետս յիշեա։

Թ. 112ա—112բ.— Շնորհիւ ամենազօրին Աստուծոյ եղերեալ կատարեցաւ զգրեցուածս դրքոյս ի ՌՄԿԴ (1815 թ.) օգոստոսի Է.ումն (7), ի Վասպուրական քաղաքն ի Վան։ Ի վայելումն ի Տէր Ղազար հեզաբարոյ եւ աստուածիմաստ վարդապետի։ Վասն որոյ ի վաղեմի ամանակաւ ըղձալր եւ փափագէր այս յուսաստիւռ սուրբ դրքոյս, բայց ոչ հասանէր ի տենչանացն իւրոց։ Արդ, ամենազօրն Աստուած ելից գցանկութիւն սրտի նորա եւ կատարեաց զինդրուածս վաղվաղակի, զոր ի հանդիպիլ հեքոյս չերմ սիրով եւ եռափափագ յուսով եւտուր զայս ամենագով եւ ցանկալի դրքոյկս գրել վերստին, ի յոյս ածել առ ի վայելս բարեսէր անձին իւրոյ, որ է առակաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զոր իւր մեղրածորան բերանովն ասացեալ եւ ծրեալ ի մէջ ամենահրաշ սուրբ աւետարանին, որ եւ մեկնեալ ի Տէր Պետրոս իմաստնասիրէ վարդապետէ եւ քաջ հռետորէ, որ եւ Աղամալեան Փերթում օղլի ասի։ Անուն դրքոյս Աղբիւր բացեալ եւ անուշահամ ջուրն հոսեալ ի պասքեալ եւ ի ծարաւուտ յանդաստանս մեր՝ առ ի բուսուցանել զզանազան զանազան ծաղիկս եւ պտղաբերել զծառս եւ քաղցրահամ միրգս եւ զխաղողս եւ անուշահամ գինիս առ ի ախորժ յամենայն վայելողաց։ Խնդրեմ ի ձէնջ սուրբ հարցդ եւ նազելի եղբարցդ մերոց՝ ի հանդիպիլ կամ վայելել զայս յուսացնցուխ սուրբ դրքոյս, յիշեցէք ի մաքուր մախթանս ձեր զտէր Ղազար հեզաբարոյ վարդապետն, եւ ծնողացն եւ համայն իւրայնոցն եւ համասեռ ընտանեացն Աստուած ողորմի ասացէք, ամէն։ Նաեւ յիշեցէք զնուաստ ծառայ ձեր գրչի Կարապետս յԱրեւելցւոյ եւ ծնողացս իմոց։ Բայց աղերսեմ հարցդ եւ եղբարց իմոց զի սխալանացս ներումն շնորհեցէք եւ միով հայր մերիւ յիշեցէք, եւ զմեզ յիշողացդ Աստուած ողորմեսցի ի միւսանգամ գալստեանն եւ յաւուրն ահեղին, ամէն։ Հայր մեր...։

№ 42

ԱՒԵՏԱՐԱՆ

Թերթերը՝ 357։— Գրակները՝ 29, յուրաքանչյուրը միչին հաշվով 12 թերթից։— Մենությունը՝ 19×12,3×5 սմ.— Նյութը՝ դեղնած ողորկ թուղթ— Կազմը՝ արծաթապատ տախտակ, առաջին երեսի վրա նկարված է Քրիստոսի խաչելության պատկերը, երկրորդ երեսի վրա՝ Հոգեգալստյան պատկերը։ Վիճակը՝ բավարար։— Գրությունը՝ երկսյուն։— Գիրը՝ բոլորգիր։— Զարդագրություն՝ ունի խորաններ, բազմաթիվ յուսանցազարդեր, թուղնագրեր։ Ավետարանների սկզբներում նկարված են ավետարանիչների նկարները, իսկ տեքստը սկսում է կիսախորաններով։— Տողերը՝ միչին հաշվով 18։— Ժամանակը՝ ՌԿԶ (1617 թ.)։— Պատվիրատուն՝ Հակոբ եպիսկոպոս Քութահիացի։— Վայրը՝ Քութահիա։— Գրիչը՝ Գրիգոր վարդապետ Կեսարացի։— Պահպանակ՝ սկզբում և վերջում երկուական մագաղաթյա թերթեր, ուղղագիծ երկաթագրով (Ղուկասի ԺԸ և ԺԹ գլուխներից)։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 277ա.—Զողորմելի եւ զչարեաւք լցեալս, ո՜վ Տէր, յիշեա... Գրիգոր գրչիկ։

Թ. 348ա—353.— Փառք... Կերպացեալ այս բանիս, որդիք Սիոնի, քահանայք եւ մանկունք ընտրեալք յաշխարհի։ Զառաջնորդն ընտրեաց բանաւոր հաւատին Քրիստոսի զՏէր Յակոբ եպիսկոպոս Քաւթահեացի, որ եւ գրել երեսս զսուրբ աւետարանս յիշատակ իւր հոգւոյն, եւ հաւրն Տէր Պետրոս քահանային, եւ մաւրն Մարթային, եւ եղբաւրն Զաքարիային, եւ քուրջն Խալխաթունին, եւ մեծ մաւրս Ճաշիկին եւ այլ ամենայն արեան մերձաւորացս։ Գրեցաւ սուրբ աւետարանս ի մայրաքաղաքն Քաւթահիեա, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին եւ Սրբոյն Սարգսի զաւրավարին եւ Սրբոյն Թէոդորոսի զինաւորին։ Ի յաթոռակալութեան Սուրբ Էջմիածնա(յ) Տեառն Տէր Մելքիսեթ կաթուղիկոսին, եւ միւս այլ քաղաքին Կիլիկեա, որ կոչի Սիս, ի յաթոռակալութեան սորա Տեառն Տէր Յո-

վանէէս կաթուղիկոսին, եւ վարդապետին իմոյ Տէր Գրիգոր քաջ բարունապետին Կեսարիացոյ, զոր Տէր Աստուած յերկար ամաւք պահեսցէ զնոսա մինչեւ ի խորին ծերութիւն։ Ընծայ մատուցի զսա յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց. զվերոյգրեալս յիշեցէք ի Քրիստոս... Եւ արդ, յերես անկեալ աղաչեմ եւ ի դուռս ելեալ տատանմամբ մատամբս եւ աղերսահայց մաղթանաւք աղաչելով խնդրեմ ի սրբազունդ ժողովեալ եղբարցդ, որ աստ ժողովեալ էք յաղագս ամենայն աշխարհի աղաւթել։ Արդ, աղաչեմ զձեզ, ով սրբասէր քահանայք, յիշեցէք ի մաքրափայլ աղաւթս ձեր զյետինս եւ զանպիտանս, յամենայն բարեաց յումայնս, զՅակոբ եպիսկոպոսս, որ անուամբս եմ միայն եւ գործովս ոչ, եւ զհայրն իմ զՏէր Պետրոս քահանայն, որ երիտասարդ ամաւ փոխեցաւ ի Քրիստոս, զոր Տէր Աստուած զՁշմարիտ քահանայից դասին դասակից եւ պսակակից արասցէ, եւ զմայրն իմ զՄարթայն, (որ) եւթանասուն ամեա(յ) փոխեցաւ ի Քրիստոս, եւ զեղբայրն իմ Զաքարիայն, որ եւ ինքն ել գնաց ի վաճառս Եգիպտոս եւ անտի նաւեալ էր եւ ոչ գիտացաք թէ զինչ եղեւ եւ եթող զմեզ անմխիթար, զոր Տէր Աստուած հանգուցցէ զնա ի տեղւոջ լուսոյ եւ ի տեղի հանգստեան եւ լսել տացէ զերանաւետ զձայնն՝ «Եկայք ապրհնեալք Հաւր իմոյս, եւ այլ ազգականք իմ զվերոյգրեալսն։ Եւ դարձեալ կրկին անգամ աղաչեմ զձեզ, ով ընթերցողք սուրբ աւետարանիս, յիշեցէք զՅակոբ եպիսկոպոս եւ մեղաց թողութիւն հայցեցէք ի Քրիստոսէ, որ ելի ի հայրենի քաղաքէս Քաւթահիոյ, քսանամեա(յ) ուխտ եդեալ էի անձին իմոյ գնալ ի վանքն Կլակայ եւ անդ կացեալ ամս տասն։ Ի յառաջնորդութեանն սուրբ ուխտիս Տէր Յոհաննէս եպիսկոպոսին եւ երաժշտ Տէր Թումա վարպետին եւ ի փակակալութեանն Տէր Անտոն ծերունի քահանային եւ զՏէր Կարապետն Բազրեցի, որք բազում աշխատեցան ի վերայ իմ՝ ուսուցանելով եւ խրատելով հոդեւոր թէ մարմնաւոր շարականաւ եւ սաղմոսիւ, զոր Տէր Աստուած հատուցանէ։ Եւ անտի գնացի Սուրբ Էջմիածին, որ է աթոռ Սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին, եւ այլ բազում վանորայս տեսեալ եւ ուրախ եղաք. առաք զկարգ կրաւնաւորութեան ի յերնջակայ Սուրբ Կարապետին ի Գրիգոր եպիսկոպոսէն, յետոյ գնացի ի վանքն Տաթեւու եւ անդ կացեալ տարի մի եւ ամիս, յետոյ եկաք ի Նախչիվան եւ անդ առաք զկարգն հայրապետական Մելքիսեթ կաթուղիկոսէ. ժէ (17) ամ կեցեալ ի պանդխտութիւն եւ ապա եկեալ ի հայրենի աշխարհն իմ Քաւթահիայ։

Արդ, կրկին անգամ երես անկեալ աղաչեմ զամենեսեան, մանաւանդ զդասս քահանայից, որք վայելէք...։ Յիշատակ է սուրբ աւետարանս ինձ եւ իմ ննջեցելոց անջնջելի. խնամով պահողն արտնին Աստուծոյ, եւ որքան անփոյթ արասցեն, զհակառակն կրեսցեն։ Ո՞վ եղբարք, ոչ եթէ վասն մարմնաւոր ինչ լումայի գրել տուաք զայս ապրինակս, որ էր ստոյգ եւ ճշդարտիւ դրեալ Իսահակ Թարգմանչի ապրինակէն եւ ցանկացող եղա(յ) սուրբ աւետարանիս մեծաւ փափաքանաւք եւ ետու գրել յիշատակ ինձ եւ ամենայն արեան մերձաւորաց իմոց. ի դատն եւ ի նեղ ժամանակի, ի Թվին Հայոց ՌԿԶ (1617 թ.), որ էր հեծելաշարժ ի վերայ կարմիր կտակին։

№ 43

ԲԺՇԿԱՐԱՆ

Թերթերը՝ 28։— Մեծությունը՝ 21,5×16,8×0,4 սմ.։— Նյութը՝ սպիտակ գործարանային թուղթ։— Կազմը՝ առանց խավարարտի միաշերտ կաշի։— Վիճակը՝ բավարար (առաջից և վերջից պատռված են մի քանի թերթեր)։— Գրությունը՝ միասյուն։— Գիրը՝ նոր շեղագիր։— Տողերը՝ 14։— Զարդագրությունը՝ բոլոր էջերը ոսկեզօծ շրջանակների մեջ առած։— Թվականը՝ 1897 թ. մարտի 1։— Գրիչը՝ Ազաչան Մ. Բժշկյանց։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա—13ա.— Բժշկարան աշխարհագրի համար։ Գրեմ տեղերամի անունները, որոնցից կազմվում (են) հետեւեալ աշխարհները... 1. Ռուֆ, 2. Քաֆտարիս, 3. Կարտաշխանի, 4. Ռասուխ, 5. Սեւ տեղ, որը նվիրում է կուկուշումից եւ Բուխուրդից...։

Թ. 13բ—28բ.— Բժշկարան անձի հիւանդութեան։

§ 1. Կնոջ ծիծը որ ցաւի։— Մի մաս ասիտ բենիֆ, 8 մաս ջուրի հետ խառնիր իրար, ամենայն օր լուացիր եւ մի կտոր բաբան բրջիր դիր ծիծի վրայ՝ կ'օգնի։ (Նման հարյուր ռեցեպտներ)։

Բերում ենք մի քանի ռեցեպտների նմուշներ.

Թ. 14ա.— § 8. Քուն բերելու համար։— 4 նոխուտ բլոռատ հետեւաբէ լցրու 1/2 ստա. բան ջրի մէջ, խմիր, գլխացաւի եւ շատ գկոտալու համար էլ լաւ է։

Թ. 19բ.— § 50. Փորացաւի համար։— 5-ից 10 կաբիլ էբէռ շամարի վրայ կաթեցրու կեր։

Թ. 22բ.— § 75. Ականջի ցաւի համար։— Եթէ բամիից առաջացած լինէ, պռոմուռ դր փոքաս, 10-ից մինչ 16 նոխուտ լցրու կէս ստաքան շա(ր)բաթի մէջ, գիշերը քնելուց խմիր օրեկան մի անգամ եւ ականջումդ դմակից փելթա պատրաստիր դիր։

Թ. 28բ.— § 100. Քնելու համար։— 1/2 մսխալ պռոմուռ դր փոքաս 6 նոխուտ բոլե-

տար նիտրաթէ խառնիր, լցրու մէկ ստամանի շարաթում, 2 անգամում տուր խմի։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 12բ.— Այս տեղերայքը, որ գրել եմ, մենք բժիշկ ենք եւ բոլորը փորձել ենք, միամիտ եղիր։

Թ. 13ա.— Ցիշատակ է, ո՞վ այս տեղերը գործածող մարդ, եւ աշխատանքի աղրիւր է, մնամ Աղաչան Մ. Բժշկեանց։

Թ. 13բ.— 1897 թիւ մարտ 1։



№ 35 ձեռագիր ավետարանի մագաղաթյա պանդանակը, բ. 1բ, սոմարական բովանդակությամբ։

(Տե՛ս «Էջմիածին» ամսագիր, 1950 թ., սեպտեմբեր-հոկտեմբեր)։

№ 44

ԱՒԵՏԱՐԱՆ

Թերթերը՝ 252։— Գրակնոցը՝ 23, յուրաքանչիւրը 12 թերթից։— Մեծությունը՝ 18×14×7,5 սմ.։— Նյութը՝ դեղնած թուղթ։— Կազմը՝ կիսամաշ տպած կաշեպատ տախտակ։— Վիճակը՝ թերթերը պոկոտված, մատուցները խառնված են։— Գրությունը՝ երկսյուն։— Գիրը՝ բոլորգիր։— Ջարդազարդությունը՝ ունի լաջմաթիվ լուսանցազարդեր, մարդագրեր, գազանագրեր, թռչնագրեր։ Ավետարանների սկզբներում նկարված են ավետարանիչների նկարները (պակասում է Մատթեոս ավետարանչի նկարը)։ Տեքստերը սկսում են կիսախորաններով։ Ունի նաև լրիվ խորաններ։— Ժամանակը՝ 1607 թ., Մելքիսեթ կաթողիկոսի օրոք։— Վայրը՝ Բաղեշ, Գոմաց վանք։— Գրիչը՝ Հովսեփ եպիսկոպոս։— Պատվիրատուն՝ Ջուղայեցի խալա Մահսումն։— Նաղկոդ՝ Հովհաննես։— Պանդանակ՝ սկզբում և վերջում մագաղաթյա պատառոտված մեկական թերթ, բոլորգիր երկաթագիր։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 249ա—252ա.— Փառք անսկզբանն եւ սկզբանն ամենայնի...։

Եւ արդ, ես յետինս ի զրչաց եւ անպիտանս եւ անարժանս ի մանկունս սուրբ եկեղեցւոյ, բազմամեղս եւ անիմաստս ի դիրս գրչութեան եւ յանցաւորս ամենայն պատուիրանացն Աստուծոյ, Յովսէփ եպիսկոպոսս, որ անուամբ միայն եմ եւ ոչ գործով։

Շնորհիւ Տեառն սկսայ եւ ողորմութեամբ նորին կատարեցի զսուրբ աւետարանս։ Ի մեծ թուին Հայոց ի Ռ եւ ՄԶ (1607 թ.), ի քաղաքս Բաղէշ, ի վանքս Գոմաց, ի դրունս Սուրբ Աստուածածնին եւ սուրբ Գէորգեայ զաւրավարին, ի հայրապետութեան Տէր Մելքիսէթ կաթողիկոսի, եւ ի յառաջնորդութիւն սուրբ ուխտիս Տէր Կարապետ բարունապետին, որ խիստ հոգէբարձու էր մեզ ամենեցուն եւ սփոփէր զմեզ որպէս հայր զորդի եւ կամ հաւ զձագս իւր, կերակրելով, ըմպելով եւ հանդերձս տալով, զի էր լիասիրտ եւ առատաձեռն, զոր եւ Աստուած հատուցանէ յիւր հոգին, ամէն։ Եւ ի բռնակալութիւն քաղաքիս խանդիպանին, բայց այնպէս սղութիւն հղեւ, որ այլ ոչ մնաց շուն կամ կատու, կրիայ եւ այլ ինչ որ անսուրբ են կերան, զոր ոչ կարեմ ընդ գրով արկանել։ Արդ, աղաչեմ զամենասեան զմանկունս սուրբ եկեղեցւոյ, զի որք հանդիպիք սուրբ աւետարանիս, զաւելորդն բառնաք եւ զպակասն լնուք եւ խոշորութեան եւ սխալանացն անմեղադիր լինել, զի կար մեր այս էր, եւ միտքս ի զանազան ցնորս մեղաց մոլորեալ։ Վասն որոյ՝ երես ի գետին դնելով աղաչեմ զձեզ, զի լի սրտիւ եւ բոլոր հաւատով Յովսէփ անարժանիս Աստուած ողորմի ասացէք եւ մեղաց թողութիւն խընդրեցէք մեզ եւ ծնաւղաց մերոց Սիմէոնին եւ Գուլիստանին եւ Աստուած զձեր մեղքն թողու, ամէն։ Հայր մեր...։

Զստացող սորին զՃուղայեցի խոճայ Մահսումն յիշեսցիք ի Քրիստոս, ով հանդիպողք սրմին։ Որ ստացաւ զսուրբ աւետարանս ի

Բաղէշ քաղաքի, ի գծագրողէն ոմեմն Յովսէփ եպիսկոպոսէ։ Եւ բերեալ ի Համիթ ի ճանապարհի վաճառականութեանն հանդիպեալ մեղապարտ գրչիս Յովանիսի, եւ ետ լրնուլ զթերին՝ զգլխագրելն, զծաղկելն եւ զկազմելն, զոր եւ մեք շնորհիւ Տեառն, աւժանդակութեամբ ձերոց աղօթիցն, կատարեցաք ըստ կարի մերում ՌՄԷ (1608 թ.) թուիս, ի մայրաքաղաքս Համիթ, ընդ հովանեաւ Սրբոյ Սարգսի զօրավարին եւ այլ սրբոցս. որ կան ի պահպանութիւն հաւատացելոցս։ Վասն որոյ աղաչեմ զլուսածնեալ մանկունսդ սուրբ եկեղեցւոյ, զի յիշեսջիք առաջի անմահ զենմանն զստացող սորին զՀուղայեցի Մահսոսմն, եւ զծնօղսն իւր զՀայրն զՓիրոսն զոխեցեալն ի Քրիստոս եւ զմայրն զՈւստիանն եւ զեղբարսն իւր զՆուրոսն, եւ զՅովաննէսն, եւ զՄկրտիչն, եւ զԱբգարն, եւ զքրտերքն զՍալվարիխանն զփոխեցեալն ի Քրիստոս, եւ զԿուլվարիխանն, եւ զեղբաւր դուստրն զՍավրիխանն, եւ եղբօր որդին զԿոստանդիանոսն, եւ զկողակիցն իւր զԶլֆիխանն, եւ զորդին զՈսկանն, եւ զդստերքն, զՍափուհիքն, զփոխեցեալքն ի Քրիստոս եւ զամենայն արեան մերձաւորսն զկենդանիս եւ զհանգուցեալսն, ամէն։ Ընդ նոսին եւ ինձ մեղապարտ գրչիս Յովանիսի թողութիւն հայցեցէք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է արհնեալ յաւիտեանս, ամէն։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 56ա.— ԶՅովսէփ գրչակս զՏատկցիս ի Տէր յիշեա, ո՜վ բարի հանդիպողք եւ գուք վարձք առնիք յԱստուծոյ, ամէն։

Ո՜հ, ո՜հ, ի սուտ եւ ի սոպ եւ յանբարիշտ լրնկերացս, որ միշտ խոցոտեն զմեզ լեզուաւ։

Թ. 57բ.— Այս Մարկոսի ասի առիւծ,
Զի սիգաճեմէ լէ գծուծ,
Երագ որսալ ըմբռնէ բուծ,
Սոյնպէս արար զբանս իւր կծուծ։
Շաղկողս որ եմ մեղաւք ի բուծ,
Զմեզ աղաչեմ արտասուահոծ,
Զի թողութիւն հայցել իմոց,
Որ միշտ ի լաց կամ եւ ի կոծ։

Թ. 104բ.— ԶՅովսէփ գր(չ)ակս ի Տէրն յիշեա, ով բարի հանդիպողք սմա եւ Աստուած զձեզ յիշէ, ամէն։

Թ. 105բ.— Այս Ղուկասու եղն ասացին,
Որպէս նա իսկ Տերիկ զգեստին,
Կրկին անխոնճ վասն պտղին,
Սոյնպէս երկար ձն բանք սորին։
Եւ անարժան ծաղկող սորին,
Զմեզ աղաչէ արտասուագին,
Զի թողութիւն հայցել նմին
Ի ասել սրտիւ զՏէր ողորմին։

Թ. 184բ.— ԶՅովսէփ գրիչս զՏատկցիս ի Տէր յիշեա, ո՜վ բարի հանդիպողք սմա, եւ Աստուած զքեզ յիշէ, ամէն։

Թ. 185բ.— Այս Յովանէս արձուանման,
Թռեալ մտաւքն անհասական,
Առ ի պատմել որդոց մարգկան,
Զանճառ էիցս հանրական։
Եւ ես ծաղկողս անարժան,
Որ Յովանէս կոչիմ յանուան,
Ըզիս արէք յիշման արժան
Եւ զձեզ աւրհնէ անմահ արքայն։

№ 45

ՄԱՇՏՈՑ

Թերթերը՝ 119։— Գրակները՝ 7, յուրաքանչյուրը 15 թերթից, 4-րդ գրակը 20 թերթից։— Մեծությունը՝ 19×12,5×2 սմ.։— Նյութը՝ սպիտակ թուղթ։— Կազմը՝ կաշեպատ տախտակ։— Վիճակը՝ ոչ բավարար։— Գրությունը՝ միասյուն։— Տողերը՝ միջին հաշվով 17։— Գիրը՝ նոտր։— Զարդագրություն՝ ունի լուսանցազարդություններ։ Էջերն առնված են կարմիր թանաքով շրջանակի մեջ։ Կան թռչնագրեր։ 103ա—բ էջերում փակցված են տպագրված նկարներ։— Ժամանակը՝ ԺԸ դար։— Պատվիրատուն՝ Սարգիս վարդապետ։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 116բ.— Ով սիրելի հայրք եւ եղբայրք, խնդրեմք ձերայնոց մաքուր սուրբ աղօթիցն մին բերան ճիշեցեք իմ կողակից հանգուցեալ Վարդենուն։ Աղօթարար Տէր Սարգիս վարդապետ։

(Շարունակելի)

ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՊԻ ԵՎՐՈՊԱ

Մեծի Տանն Կիլիկիո Վեհափառ Հայրապետը դարմանվելու և Ս. Աթոռին վերաբերյալ գործեր կարգադրելու համար, մայիսի 12-ին, ուրբաթ, օդային ճամբով մեկնեցավ Փարիզ, Եգիպտոսի վրայով, ընկերակցությամբ Դպրեվանուց Տեսուչ Տ. Դերենիկ Եպիսկոպոսի։

Կահիրեի օդակայանը դիմավորության եկած էին Եգիպտոսի Հայոց առաջնորդը՝ Բարձրաշնորհ Տ. Մամբրե Արքեպիսկոպոս Սիրունյան, քահանայից դասը, Քաղաքական ժողովո անդամներ, մամլո ներկայացուցիչներ և ազգայիններ։

Մայիսի 13-ին, շաբաթ օրը, Վեհափառ Հայրապետը Մամբրե և Դերենիկ Սրբազաններու և Քաղաքական ժողովի ատենապետ դոկտ. Սողիկյան Բեյի հետ Արդինի պալատը գնաց. պաշտոնական այցելուներու տոմարին մեջ ստորագրեց և արձանագրություն մաղթեց Վեհապետին և բարօրություն՝ եգիպտական թագավորության։

Մայիսի 14-ին, կիրակի, Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցվո մեջ պատարագ մատուցց Դերենիկ Եպիսկոպոս։ Գիրքի ընթերցման ատեն Վեհը «Հրաշափառով եկեղեցի առաջնորդվեցավ։ «Հայր մերոյ ժամանակ՝ խոսքերամ բազմության մը ներկայության խոսեցավ սրտազեղ և շինիչ քարոզ մը։ Կոչ ըրավ ժողովուրդին կառչիլ հայ հավատքին, վերջ տալ ներքին վեճերուն և ապրիլ հաշտ ու համերաշխ։ Շեշտեց այն իրողությունը, որով հայ ժողովուրդը ամենուրեք հավատարիմ եղած է դինք հյուրընկալող երկիրներուն և ջանացած է օգտակար ըլլալ իր աշխատասիրությամբ, պարկեշտությամբ և ուղղամտությամբ։ Քարոզի վերջավորության զգալապես հայտնի եղավ, որ Վեհը չափազանց հոգնած էր և հանգիստի կկարոտեր։

Մայիսի 18-ին, հինգշաբթի, տեր և տիկին Շալճյաններու տան մեջ ի պատիվ Վեհափառ Հայրապետին տրվեցավ թեյասեղան մը։ Մոտ 70 հոգի ներկա էին։ Վեհը մեկ ժամեն ավելի խոսեցավ ներկաներուն իր կատարած և մանավանդ կատարելիք գործերու մասին, այսինքն՝ սատարել հայ լեզվի և մշակույթի զարգացման, պայծառացնել հայ դպրոցները, եկեղեցիները, հավատավոր և գիտուն եկեղեցականներ և ուսուցիչներ պատրաստելով։ Շատ ազդու էին Հայրապետին խոսքերը։ Հյուրեր ուշ ատեն մեկնեցան հմայված Իր խոսքերեն։ Երբ Վեհը առանձնացավ Իր սենյակը՝ հայտնեց որ հոգնած է և թույլ կզգա։

Մայիսի 19-ին, ուրբաթ առտու երբ հանդիպեցանք Առաջնորդարան հասած էինք, հեռաձայն եկավ թե Վեհը անհանգիստ է, անմիջապես եկեք։ Քանի մը վայրկյան վերջ երբ տուն հասանք, արդեն տիկին Շալճյան բժիշկ Գրլրճյանը կանչել տված էր։ Երեկվան հոգնութենեն հետո, դիշերը Վեհը չէր կրցեր հանգիստ քնանալ։ Բժիշկը հետ քննության հայտնեց թե Վեհին անհանգստությունը հոգնության հետևանք է, և թե վտանգավոր որևէ բան չկար։ Դեղեր տվավ և ասեղ զարկավ։

Հաջորդ օր, մայիսի 20-ին, շաբաթ, դոկտ. Գրլրճյան նորեն քննեց Վեհափառը և Իր առողջական վիճակը շատ լավ գտավ։ Ժամը 1-ին երբ Վեհին քով դացինք, զարմանքով նկատեցինք, որ անհանգիստ է։ Քանի մը վայրկյան ետք սկսավ սիրտի արագ տրոփյուն ունենալ։ Անմիջապես բժիշկ Գրլրճյանը կանչեցինք։ Մոտ կես ժամ Վեհը սաստիկ տագնապեցավ։ Դոկտորին հետ որոշեցինք անմիջապես սիրտի մասնագետ մը կանչել։

Աթանասիադես՝ հույն բժիշկը եկավ։ Հետ քննության հայտնեց, որ Վեհը սիրտի տագնապ ունեցած է կրեկ և այսօր, հավանորեն coronary thrombosis— սիրտի երակախցում։ Ավելցուց նաև, որ վիճակը շատ լուրջ է։ կատարյալ հանգիստի և խնամքի պետք ունի։ Ամենևին շարժելու, խոսելու և հուզվելու չի։ Բացարձակապես արգիլեց որևէ անձի մուտքը Իր ննջասենյակին մեջ։

Մայիսի 22-ին, երկուշաբթի կեսօրին, բժիշկներ Աթանասիադես և Գրլրճյան Վեհին սիրտի զարկերուն պատկերը առին և ստուգվեցավ թե Վեհափառ հիվանդը սիրտի երակախցումե կտառապի։ Դեղեր տվին և թելադրեցին, որ կատարյալ հանգիստ ընե, չհուզվի և լավագույն կերպով խնամվի։

Նույն օր գացինք Մամբրե Սրբազանի քով՝ իր տունը։ Առաջնորդ Սրբազանը անկողին էր և սաստիկ հոդացավե կտառապեր։ Հարմար նկատեցինք բժշկական կոնսուլտացիա մը ունենալ, ինչպես նաև խորհրդակցություն մը Ազգային իշխանության անդամներուն հետ, Վեհին առողջության մասին։

Մայիսի 23-ին, երեքշաբթի՝ կեսօրին, Շալճյաններու բնակարանին մեջ տեղի ունեցավ բժշկական կոնսուլտացիան։ Հրավիրված էին Կահիրեի լավագույն սիրտի մասնագետ բժիշկներեն՝ դոկտ. Մուհամմեդ Իբրահիմ Բեյը, իրեն հետ մյուս մասնագետ բժիշկն ալ՝ դոկտ. Աթանասիադես և դոկտ. Գրլրճյանը։ Բժիշկներ պաշտոնական գիրով մը հաստատեցին և հաղորդեցին մեզի թե Վեհը երակախցումե կտառապի և բացարձակ հանգիստի պետք ունի։ Իր առողջությունը վերագտնելու համար անհրաժեշտ է, որ հիվանդանոց փոխադրվի, պետք եղած խնամքը և դարմանը ստանալու համար։

Հաջորդ օրը կեսօրե վերջ ժամը 4-ին ambulance-ով Վեհափառ Հայրապետը փոխադրվեցավ Պապա Յոհաննու հիվանդանոց՝ Իրեն համար պատրաստված մասնավոր բաժինի մը մեջ։ Այս հաստատությունը կգտնվի քաղաքեն դուրս Գիզե արվարձանին մեջ։ Հիվանդապահուհիներ դերմաներեն կխոսին և Վեհին համար հարմարագույն վայրն էր։ Բժշկական հրահանգով բացարձակապես արգիլվեցավ որևէ մեկուն Հայրապետին այցի երթալ։ Մասնավոր հիվանդապահուհի մըն ալ վարձվեցավ ամեն գիշեր հսկելու համար Վեհին։

Մայիսի 24-են մինչև հունիսի 28-ը, Վեհափառը մնաց Պապա Յոհաննու հիվանդանոցի մեջ։

Հունիսի 13-ին, երեքշաբթի կեսօրե վերջ ժամը 5-ին տեղի ունեցավ բժշկական կոնսուլտացիան, որուն այս անգամ ներկա եղավ հիվանդանոցի տնօրեն բժշկապետը՝ Հոնի։ Հետ քննության հաղորդեցին մեզի թե Ս. Կաթողիկոսին վիճակը զգալապես բարելավված է, բայց դեռ տասը օր հիվանդանոց մնալու է, թե շաբաթե մը կրնա անկողինեն ելլել, աթոռի վրա նստիլ և սենյակի մեջ քալել բժիշկին և հիվանդապահուհիին հսկողության ներքև։ Հետո փոխադրվելու է առանձին տուն մը, ուր շաբաթ մը հանգստանալե ետք կրնա շոգենավով ճամբորդել։ Խորհրդակցության ներկա էին դոկտ. Սողիկյան Բեյ և պարոն Զարմայր Քեշիշյան, իսկ Մամբրե Սրբազանի կողմե իր փոխանորդը՝ Տ. Սահակ Հայրը։ Նախորդ և սույն խորհրդակցությանց արդյունքը նամակով հաղորդեցինք Անթիլիաս՝ Կաթողիկոսարան։

Հունիսի 23-ին, ուրբաթ, առաջին անգամ ըլլալով, բժիշկին և հիվանդապահուհիին հսկողության ներքև, Վեհը անկողինեն ելավ. քանի մը քայլ քալեց և աթոռի վրա նստավ։ Մինչև հունիսի 28, ամեն օր փորձեց քալել հիվանդապահուհիին օգնությամբ և առանձին։

Հունիսի 28-ին, չորեքշաբթի կեսօրե առաջ, Վեհը հիվանդանոցեն փոխադրվեցավ Միենհաուզ՝ բուրգերու ստորոտը կառուցված օդասուն պանդոկ մը։

Հուլիսի 1-ին, շաբաթ առտու, Վեհը պանդոկեն առաջնորդվեցավ Առաջնորդարան, ապա եկեղեցի, ուր սրտաբուխ աղոթք մատուցեց։ Ժամը 12,30-ի շոգեկառքով մեկնեցավ Աղեքսանդրիա, Մամբրե և Դերենիկ Սրբազաններու ընկերակցությամբ։

Աղեքսանդրիո մեջ Վեհը հյուրասիրվեցավ տեր և տիկին Կալծակ Բոգոսյաններու տունը։ Հուլիսի 2-ին, կիրակի, խուտներամ բազմության մը ներկայության Վեհը քարոզեց ժողովուրդին։ Ս. Պատարագը մատուցեց Դերենիկ Եպիսկոպոս։ Հավարտ Ս. Պատարագի, Առաջնորդարանի դահլիճին մեջ Վեհը դարձյալ խոսեցավ ժողովուրդին, հակառակ բժիշկի պատվերին։ Շատ մը ազգայիններ այցելեցին Վեհափառ Հայրապետին, մինչև Իր Ֆրանսա մեկնումը, և առին Իր հայրապետական օրհնությունը։

Հուլիսի 5-ին, չորեքշաբթի կեսօրե վերջ ժամը 4-ին, եկեղեցիին մեջ աղոթելե և ժողովուրդեն հրաժեշտ առնելե ետք, Վեհափառը Պաշե իտալական շոգենավով մեկնեցավ Ֆրանսա, Իրեն հետ ունենալով դարձյալ Դերենիկ Եպիսկոպոսը։ Մամբրե Սրբազան և Քաղաքական ժողովո անդամներ նավահանդիստ եկան հրաժեշտի։

Միջերկրականի վրա ճամբորդությունը շատ հաճելի անցավ։ Վեհափառ Հայրապետը ո՛չ մեկ նեղություն կամ անհարմարություն ունեցավ։ Շոգենավին մեջ շատ մը ճանապարհորդակից հայեր կային. անոնցմե մին՝

դոկտ. Փիլիպոսյան, Կահիրեեն՝ ծառայասեր և պատրաստակամ՝ հսկեց Վեհին առողջության։

Հուլիսի 10-ին, երկուշաբթի առավոտ, խաղաղության խորհրդանշանը՝ Պաշեն (պաշե=խաղաղություն) կմոտենա քարափին, ու իր հետ կերբե խաղաղության և սիրո Մեծ Քարոզիչը, Կիլիկիո Վեհափառ Հայրապետը։

Հասած ենք Ֆրանսայի նավահանգիստը՝ Մարսելլ։

Կաթողիկոսական պատվիրակ Գեր. Տ. Արտավազդ Արքեպիսկոպոսի ղեկավարությամբ կատարվեցավ խանդավառ ընդունելություն մը Մարսելլի մեջ։ Նավահանգիստ եկած էին քահանա հայրեր, Ազգային վարչության անդամներ, Թաղականության, հոգաբարձության, միության, հարանվանության և մամուլի ներկայացուցիչներ։ Մասնավոր պատվիրակություններ եկած էին նաև Փարիզեն, Գրենոբլեն, Նիսեն, Լիոնեն և Վալանսեն։

Հուլիսի 10—19, Վեհը մնաց Մարսելլ, նախ Սալանդիդ պանդոկ և ապա Երամյաններու դղյակը։ Հակառակ անոր, որ Վեհը կատարելապես ապաքինած չէր և բժիշկներ հրահանգած էին, որ միայն հանգիստ ընե Ս. Հայրապետը այցելությունները ընդունեցավ ազգայիններու, բարեկամներու, մամուլի և հարանվանության ներկայացուցիչներուն։ Վերապատվելի Գրիգոր Խայիկյան, Հայ բողոքական ներկայացուցիչներու հետ Վեհին տված այցին առթիվ սա հայտարարությունը ըրավ. «Վեհափա՛ռ Տեր, մենք կհավատանք, որ Հայաստանյայց Եկեղեցին մեր մայրն է և մենք անոր զավակներն ենք։ Սխալներ ունեցած ենք և ունինք, բայց ներեցեք մեզի։ Կուզենք և կաղոթենք, որ մեր մեծ սուրբերուն կյանքը մեր կյանքի օրինակը ըլլա։ Հավատքի տեր երիտասարդներ, մշակներ պատրաստեցեք մեզի և մենք Ձեզն ենք։ Մենք՝ Բողոքականներս հավատացած ենք, որ չենք կրնար հայուն սրբազան հավատքը և անոր անցյալի մշակույթը պահել. ատիկա միայն Հայոց Եկեղեցին կրնա ընել։

Հուլիսի 11-ին, Վենետիկի Մխիթարյան միաբանության աբբահայրը, Գերապայծառ Ոգուհոնյան այցելեց Վեհին և եղավ Անոր սեղանակիցը։ Այս հայրենասեր, զարգացած և ազատամիտ եկեղեցականը իր շատ հաճելի խոսակցության ընթացքին ցավ հայտնեց, որ Բելգրադի մեջ հրատարակվող ՄԱՍԻՍ շաբաթաթերթը իր անճահ և անհարիր հոդվածներով պատճառ կըլլա Կիլիկիո Կաթողիկոսարանի և Հայ Կաթոլիկ Պատրիարքարանի հարաբերությանց ցրտացման։

Հուլիսի 16-ին, կիրակի, Վարդավառի տոնին Արտավազդ Սրբազան պատարագեց Մարսելլի Սրբոց Թարգմանչաց եկեղեցվո մեջ։ Քարոզեց Վեհը՝ «Տէ՛ր, զի բացցին աչք մեր» նյութին շուրջ։ Ժողովուրդը խռնված էր ո՛չ միայն եկեղեցվո և ընդարձակ շրջափակին մեջ, այլ նույնիսկ փողոցները։ Վեհին կրոնաշունչ պատգամին վրա ժողովուրդին խանդավառությունը հասած էր իր գագաթնակետին։

Հուլիսի 19-ին, չորեքշաբթի, Վեհը մեկնեցավ Նիս։ Երեկոյան ուշ ատեն հասանք, նույնպես խանդավառ ընդունելություն մը կատարվեցավ Վեհին համար։ Հաջորդ օր Ֆրանսական ռադիոն ծանույց Վեհափառ Հայրապետին ժամանումը Նիս և տվավ Անոր կենսագրականը։

Հուլիսի 23-ին Դերենիկ Եպիսկոպոս պատարագեց։

Հուլիսի 25-ին ուղևորվեցանք Լիոն։ Հայոց նկեղեցիին մեջ խռնված հավատացյալներու ջերմեռանդությունը մեզի հիշեցուց հին օրերու սրտեռանդ հավատքը։

Հուլիսի 27-ին մեկնեցանք Փարիզ։ Հակառակ անոր, որ ամառվա արձակուրդի ատիթով շատեր մեկնած էին օդափոխության, մեծ բազմություն մը փութացած էր կայարան՝ դիմավորելու Վեհը և համբուրելու համար Անոր օծյալ Աջը։ Վեհափառ Հյուրը եկեղեցի չառաջնորդվեցավ՝ Իրեն հոգնություն չպատճառելու համար, այլ ուղղակի պանդոկ։

Օգոստոսի 2-ին, չորեքշաբթի երեկոյան, Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցվո վարչությունն ու հոգաբարձությունը ի պատիվ Վեհին տվին թեյասեղան մը։

Հուլիսի 27-են մինչև սեպտեմբերի 21-ը. Վեհափառը մնաց Փարիզ, Լինկոլն պանդոկի մեջ։ Այս երկու ամսվա ընթացքին, այս հյուրանոցը Փարիզի հայության ժամադրավայրը կարծես հանդիսացած էր։ Ամեն օր առավոտյան ժամը 9-են սկսյալ մինչև երեկոյան ուշ ատեն բանասերներ, գիտնականներ, արվեստագետներ, զանազան եկեղեցիներու, կազմակերպությանց, միությանց ներկայացուցիչներ, ազգայիններ, և ամեն սեռ ու դասակարգե հայեր այցի կուգային Վեհին։ Փարիզահայությունը չափազանց երջանիկ էր, որ պատիվը կունենար հյուրասիրելու Գարեգին Կաթողիկոսի նման մեծ մտավորական և հայրենասեր եկեղեցական մը։

Անգլիո հայությունը ջերմ փափագ հայտնած էր, որ Վեհափառ Հայրապետը իրենց ևս այցելե։ Բժիշկներ, մասնավորաբար դոկտ. Գոլոլյան, հարմար նկատեցին, որ Վեհը չճամբորդե՝ չհոգնելու համար, այլ հանգիստ ընե Փարիզի մեջ, կազդուրվի և ապա վերադառնա Իր Աթոռը։

Սեպտեմբերի 12-ին, Հայկական թանգարանի բացումը կատարվեցավ Փարիզի Հայոց Առաջնորդարանին մեջ, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ։ Հայ և օտար շատ

մը գիտնականներ և բանասերներ ներկա էին բացման հանդեսին։ Նույն օրը ցուցադրվեցավ Վեհին Հայ մանրանկարչության արվեստի վերաբերյալ հավաքածոն, որ մեծապես դնահատվեցավ պրոֆ. Գրապարի նման մեծ գիտնականներե։ Վեհափառը հայ և արաբ բժշկական գիտությանց հարաբերության մասին ալ դասախոսություն մը տվավ Փարիզի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցվո մեջ։

Սեպտեմբերի 21-ին, երեկոյան, Վեհը Արտավազդ և Դերենիկ Սրբազաններու ուղեկցությամբ՝ մեկնեցավ Մարսելլ։

Նույն օր կեսօրե վերջ դարձյալ Պաշե շոգենավով Վեհը կշարունակե իր ճամբորդությունը։ Արտավազդ Սրբազան, որ Վեհին Ֆրանսա ժամանումեն ի վեր միշտ ընկերակցած էր Անոր, մինչև շոգենավին մեջ Վեհին համար հատկացված հարկաբաժինը եկավ քահանա հայրերու և վարչության անդամներուն հետ և բարի երթ մաղթեց Անոր։ Արտավազդ Սրբազան, Մարսիլիո, Նիսի, Լիոնի և Փարիզի Հայ եկեղեցվո վարչությունները, ինչպես նաև հայ ազգայիններ ամեն ջիգ և աշխատանք թափեցին Վեհին հանգստության և կազդուրման համար և պետք եղած ծախքերը ավելիով ըրին։

Ծովային ճամբորդությունը տևեց ամբողջ շաբաթ մը, և անցավ շատ հաճելի։

Սեպտեմբեր 24-ին Նալուլի նավ ելավ նաև Հոգեշնորհ Տ. Շահե Արեղա, որ Վեհին հրահանդին համաձայն, կվերադառնար Անթիլիաս։

Սեպտեմբերի 29-ին, ուրբաթ առտու, Վեհափառը հասավ Բեյրութ ու ողջունվեցավ Իր սիրելյալ հոտեն, ջերմ խանդավառությամբ։

ՈՒՂԵԿԻՑ

(Քաղված է կրճատումով Կիլիկիո Կաթողիկոսության պաշտոնաթերթ «Հասկ» ամսագրի 1950 թվի սեպտ.–հոկտ. համարից)։

ՈՒՂԵՐՁ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ԹԹՈՒԹՅՈՒՆ ԳԵՈՐԳ Զ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

26 Նոյեմբեր 1950-ին

Մոտ երեք հազար փարիզահայեր, հավաքված Պլեյելի սրահին մեջ, Սովետական Սոցիալիստական Հայաստանի երեսնամյակի տոնակատարության առթիվ ընդունեցան հետևյալ ուղերձը.

Մենք այսօր ուրախությամբ կնշենք, որ Սովետական Հայաստանի 30 տարվա հոյակապ նվաճումներու հետ զուգընթաց, Հայաստանյայց Եկեղեցին զարգացավ և ամրապնդվեցան իր կապերը Սփյուռքի հայ ժողովուրդի և եկեղեցիներու հետ։

Ան զորավիգ հանդիսացավ Հայրենական պատերազմի ընթացքին Հայրենիքի պաշտպանության սուրբ գործին։

Ան նույնպես զորավիգ հանդիսացավ Ներդաղթի սրբազան գործին իրականացման։

Այժմ մենք սրտի անհուն բերկրանքով կնշենք Հայաստանյայց Եկեղեցվո Հայրապետին վճռական դերը և անոր վարած անխոնջ աշխատանքը ի նպաստ խաղաղության պաշտպանության, և մենք՝ հայրենակարոտ հավատացյալ փարիզահայերս, ներշնչված խաղաղասիրական զգացումներե, աշխարհի բոլոր խաղաղասեր ժողովուրդներու հետ միասնաբար կտանինք խաղաղության պաշտպանության նույն պայքարը մարդկության բարօրության համար, այսպե՛ս նպաստելով մեր վերածնվող Հայրենիքին և մեր Եկեղեցվուն։

Փա՜ռք բազմադարյան Հայաստանյայց Եկեղեցվուն։

Փա՜ռք Գրիգոր Լուսավորչի աթոռակալ ծերունազարդ Հայրապետին՝ Գեորգ Զ.-ին։

Փա՜ռք վերածնվող մեր Հայրենիքին և հայ անմահ ժողովուրդին։

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ ՓԱՐԻԶԻ ՄԵՋ

Սեպտեմբերի 12-ին Փարիզի հայոց եկեղեցվո խորհրդարանի մեջ (Ռյու Ժան Կուժոն) Նորին Ս. Օծություն Գարեգին Կաթողիկոսի նախագահությամբ կատարվեցավ բացումը «Հայկական գեղարվեստական թանգարանի։

Ցուցափեղկերու մեջ ներկայացված են հին մանրանկարչության շատ հաջող ջրաներկի վերարտադրություններ, 17-րդ դարու հովվական թուղթեր, սքանչելի ասեղնագործ բանվածքներ, սիրուն հախճապակյա զարդարուն պնակներ։

Նորին Վեհափառությունը որպես մասնագետ մանրանկարչության և հնություններու, մանրակրկիտ բացատրություններ տվավ ցուցադրված բոլոր իրերու մասին։

Համաձայն այս փոքրիկ թանգարանը հիմնողներու հայտարարության, ապագային պիտի ընդարձակվի այսօրվան գործը, որ սկիզբ է հետագային հիմնվելիք ավելի մեծ հայկական թանգարանի մը։

(«Ազատ խոսք», 21 սեպտեմբերի 1950 թ.)

ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻԻ ՀԱՋԱՐԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Գրիգոր Նարեկացիի ծննդյան հազարամյակի առթիվ, Բուխարեստի հայոց եկեղեցիին մեջ տեղի ունեցավ հանդիսավոր արարողություն՝ կիրակի, 10 դեկտեմբեր 1950, կեսօրե վերջ ժամը 4,30-ին, որու ընթացքին թեմիս առաջնորդ Տ. Վազգեն Մայրագույն Վարդապետ խոսեցավ, ուսմեն լեզվով, հայ մեծ բանաստեղծի մասին, ներկայացնելով անոր կյանքն ու գործը, թարգմանարար մեջբերումներ ընելով անոր «Ողբերգութիւն» մատյանեն։

Ապա տեղի ունեցան ընթերցումներ ռումեն լեզվով, Նարեկացիի գործերեն, որմե հետո եկեղեցվո երգչախումբը երգեց պատարագի մասեր։

Սույն հանդիսության ներկա էին Ռումեն Օրթոդոքս Եկեղեցվո պատրիարքական փոխանորդներ՝ Գերաշնորհ դոկտ. Անտիմ Սրբազան Եպիսկոպոս և Դիրաշնորհ Թեոկտիզ Սրբազան Եպիսկոպոս՝ Աստվածաբանական ֆակուլտետի ռեկտոր, Ռուս և Բուլղար Օրթոդոքս Եկեղեցիներու ներկայացուցիչներ՝ Արժանապատիվ Տ. Տ. Պավել Ստատով և Գլիմենտ, ակադեմիկոս պրոֆեսոր Կալա-Կալյագտիոն, հայագետ պրոֆեսոր դոկտ. Վլատ Բընբցեանու, Հայկական դեմոկրատ կոմիտեի փոխ-քարտուղար Տ. Տեր-Գրիգորյան և Աստվածաբանական ֆակուլտետի բազմաթիվ պրոֆեսորներ ու ռումեն հոգևորականներ, ինչպես նաև ազգային մարմիններու անդամներ ու հայ և ռումեն հասարակության հոծ բազմություն մը։

Գերաշնորհ դոկտ. Անտիմ Սրբազան Եպիսկոպոս խոսք առնելով, իր դոհունակությունն ու գնահատանքը հայտնեց հանուն Ռումեն Օրթոդոքս Եկեղեցվո, ջերմ բարեմաղթություններ ընելով Հայ Եկեղեցվո և հայ ժողովուրդին։

Հետ հանդիսության, բարձրաստիճան հյուրերը առաջնորդությամբ Տ. Վազգեն Մայրագույն Վարդապետի և Տեր-Գրիգորյանի, այցելեցին Սովետական Հայաստանի շինարարության նվիրված Հայկական դեմոկրատ կոմիտեի ցուցահանդեսը, Հայ մշակույթի տան մեջ։ Ապա տեղի ունեցավ հյուրասիրություն մը Առաջնորդարանին մեջ։

(«Նոր Կյանք», 17 դեկտեմբերի 1950 թ.)

ՀՈՎՍԵՓ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Սույն թվի փետրվարի 16-ին կնքեց մահկանացուն Ս. Էջմիածնի Գեորգյան Ճեմարանի բազմամյա վերակացու, հայտնի մանկավարժ Հովսեփ Գրիգորյանը։

Հանգուցյալը ծնվել է 1877 թվի դեկտեմբերի 3-ին Վրացական ՍՍՌ Սղնախի քաղաքում։ Իր սկզբնական կրթությունը նա ստացել է տեղի հայկական դպրոցում, իսկ միջնակարգը՝ Ներսիսյան դպրոցում։ 1896 թվին, փայլուն գնահատականներով ավարտելով Ներսիսյան դպրոցը, նա մեկնում է Էջմիածին և ընդունվում Գեորգյան Ճեմարանի լսարանական բաժինը, որն ավարտում է 1899 թվի մայիսին։ Այնուհետև նա երկու տարի ուսուցչություն է անում Կերչի հայոց դպրոցում։ 1901 թվի աշնանը նա հրավիրվում է Գեորգյան Ճեմարան՝ վերակացուի և ուսուցչի պաշտոնով։ Նա այստեղ պաշտոնավարում է մինչև 1918 թիվը, Ճեմարանի փակվելը։

Հովսեփ Գրիգորյանը Ճեմարանի ամենասիրված ուսուցիչներից մեկն էր։ Նա իր ամբողջ էությամբ ձուլված էր Ճեմարանի հետ։ Մոռացած իր անձը, իր հանգիստը, նա ապրում, շնչում էր այդ հաստատության կյանքով։ Ուսուցչական աշխատանքներում նա աչքի էր ընկնում իր զարմանալի ճշտապահությամբ, պարտաճանաչությամբ և պահանջկոտությամբ, միաժամանակ՝ իր անկեղծ ու ջերմ սիրով դեպի Ճեմարանի իր բոլոր կարգապահ, աշխատասեր, ուսումնատենչ սաները։

1919—1920 թվերին Հովսեփ Գրիգորյանն աշխատում է Լենինականում (նախկին Ալեքսանդրապոլում) որպես այդ շրջանի ժողովրդական դպրոցների տեսուչ։ 1924 թվականից նա վերսկսում է իր մանկավարժական գործունեությունը Վաղարշապատում, այնտեղի միջնակարգ դպրոցում և մանկավարժական ուսումնարանում։

1930 թվից սկսում է Հովսեփ Գրիգորյանի գրական բնույթի գործունեությունը։ Ավելի քան տասը տարի նա զբաղվում էր թարգմանությամբ։

Թարգմանչական աշխատանքներին զուգընթաց, Հովսեփ Գրիգորյանը զբաղվում էր և ինքնուրույն ուսումնասիրություններով, որոնք տպագրվում էին «Էջմիածին» ամսագրում «Ճեմարանցի» ծածկանվան տակ։ Նրա հոդվածներն ընթերցվում էին մեծ հետաքրքրությամբ։ Նրա դրած վերջին հոդվածը հանդիսացավ «Ղուկաս կաթողիկոս Կարնեցի»ն, որի առաջին մասը լույս տեսավ մեր ամսագրի 1950 թվի սեպտեմբեր-հոկտեմբեր համարում, իսկ շարունակությունը տպագրվում է ներկա համարում։

Հանգուցյալը օժտված էր բարոյական բարձր հատկանիշներով։ Նա շիտակ ընավորության տեր էր։ Անձնվիրությունը նրա էությունն էր։ Նա միշտ էլ օգնության էր հասնում իր մերձավոր և հեռավոր բարեկամներին և ծանոթներին։ Նա Էջմիածնի Գեորգյան Ճեմարանի իր նախկին ուսանողներին սիրում էր իր հարազատ որդիների նման և ուրախանում նրանց հասարակական–կուլտուրական կյանքում ունեցած հաջողության համար։

Այդ ազնիվ մարդու, բարեխիղճ ուսուցչի և համեստ հասարակական գործիչի կորուստը ողբում են իր բոլոր բարեկամներն ու ընկերները, իր բազմաթիվ աշակերտները, որոնք սփռված են ամենուրեք՝ Սովետական Միության մեջ և արտասահմանում։

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բաշինջաղյան Գևորգ, «Նկարչի կյանքից» (էսքիզներ, հոդվածներ, հայ գրողները Գ. Բաշինջաղյանին)։ Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 165 էջ, իլյուստրացիաներով, տիրաժ՝ 5.000։

«Հույն ողբերգակներ՝ Էսքիլես, Սոֆոկլես, Եվրիպիդես»։ Հին հունարեն բնագրից թարգմանեց և ծանոթագրություններով կազմեց Համազասպ Համբարձումյանը։ Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 395 էջ, տիրաժ՝ 3.000։

Գուսան Հավասի, «Բուրմունք» (բանաստեղծություններ)։ Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 72 էջ, տիրաժ՝ 3.000։

Դեմիրճյան Դերենիկ, «Ընտիր պատմվածքներ»։ Հայպետհրատ, Մանկա-պատանեկական գրականության բաժին, Երևան, 1950 թ., 333 էջ, տիրաժ՝ 8.000։

Սվիֆտ Ջոնաթան, «Սկզբում վիրաբույժ. ապա մի քանի նավերի կապիտան Լեմյուել Գուլիվերի ճանապարհորդությունները դեպի աշխարհի այլևայլ երկրներ»։ Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 596 էջ, բազմաթիվ իլյուստրացիաներով, տիրաժ՝ 10.000։

Անտոնյան Գուրգեն, «Նիզամին և հայ գրականությունը»։ Ազերնեշր, Բաքու, 1947 թ., 124 էջ, տիրաժ՝ 3.000։

«Հայ գրականության պատմություն», 2-րդ գիրք, դասագիրք միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի համար (ընդգրկում է հայ գրականության նոր շրջանը 1870 թվից մինչև հայ գրականության 20-րդ դարի սկիզբը)։ Հայկ. ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1950 թ., 484 էջ, տիրաժ՝ 15.000։

Պավլենկո Պ., «Տափաստանի արևը», վիպակ։ Հայպետհրատ, Մանկա-պատանեկական գրականության բաժին, Երևան, 1950 թ., 166 էջ, տիրաժ՝ 10.000։

Շիրվանզադե, «Երկերի լիակատար ժողովածու», հատոր 2-րդ։ Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 602 էջ, հեղինակի պորտրետով, տիրաժ՝ 10.000։

Խալեյան Ե., «Սովետական Միության հերոս Հունան Ավետիսյան», կենսագրական ակնարկ և փաստաթղթեր։ Հայկ. ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1950 թ., 104 էջ, տիրաժ՝ 3.000։

Իլյինա Ելենա, «Զորրորդ բարձունքը», վիպակ։ Հայպետհրատ, Մանկա-պատանեկական գրականության բաժին, Երևան, 1950 թ., 371 էջ, իլյուստրացիաներով, տիրաժ՝ 8.000։

Դաշտենց Խաչիկ, «Խոդեդան, մի ընտանիքի պատմություն»։ Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 266 էջ, տիրաժ՝ 5.000։

Ստաֆֆի Ռագրատ, «Փորձություն», վեպ։ Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 345 էջ, տիրաժ՝ 5.000։

Զարխչյան Դերենիկ, «Բանաստեղծություններ»։ Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 81 էջ, տիրաժ՝ 3.000։

Պրիլեժայևա Մ., «Քեզ հետ են ընկերները», վիպակ։ Հայպետհրատ, Մանկա-պատանեկական գրականության բաժին, Երևան, 1950 թ., 271 էջ, տիրաժ՝ 6.000։

Ժգանով Ն., «Մովային աղը», վիպակ։ Հայպետհրատ, Մանկա-պատանեկական գրականության բաժին, Երևան, 1950 թ., 144 էջ, տիրաժ՝ 6.000։

«Աշխատություններ Հայաստանի Պետական Պատմական թանգարանի», հատոր 2-րդ։ Հայկ. ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1950 թ., 278 էջ, տիրաժ՝ 700։ Բովանդակություն.— Խրմբագրի կողմից։ Շահնազարյան Ա., Սիսիանի շրջանի Սառնակունք գյուղի մոտ հայտնաբերված գանձը։ Աբրահամյան Վ., Միջնադարյան Հայաստանի զենքերի տեսակները։ Միրզոյան Ա., Հայ աղատագրական շարժումները Սյունիքում (1722—1730 թ. թ.)։ Մելիքսեթյան Վ., Զեյթունի 1862 թվի ապրստամբությունը։

Տերյան Վ., «Երկերի ժողովածու», հատոր 1-ին։ Հայպետհրատ, Երևան 1950 թ., 494 էջ, տիրաժ՝ 5.000։

Խաչիկյան Լ., «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» (Հայկ. ՍՍՌ գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտ, «Նյութեր հայ ժողովրդի պատմության», դիրք 2-րդ)։ Հայկ. ՍՍՌ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1950 թ., 756 էջ, տիրաժ՝ 600։

«Սովետական գրականության անթոլոգիա» (Հայաստանի սովետացման 30-րդ տարեդարձի առթիվ)։ Խմբագրական կոլեգիա՝ Ավ. Իսահակյան, Վ. Համազասպյան, Էդ. Թուխչյան։ Հայպետհրատ, Երևան, 1950 թ., 708 էջ, տիրաժ՝ 5.000։